

73845

891.71

S - 58

Ն. Ի. Կ. ՏԻԽՈՆՈՎ

ՊԱՏԵՐԱԶՄ



ՊԵՏՂՐԱՏ

891.71
S-58



891.71
5-58

պր.

ՆԻԿ. ՏԻՆՈՆՈՎ 19 NOV 2010

Պ Ա Տ Ե Ր Ա Ձ Մ

295



186
08

659 29/11 30

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏԶՐԱՏ

1938

Ն Ա Ռ Ա Բ Ա Ն

Խորհրդային գրականությունը կարծես թե խուսափում է մշակել այնպիսի թեմաներ, ինչպես «Դիտությունը և պատերազմը», «Տեխնիկան և ռազմական արվեստը», իսկ մինչդեռ պատերազմի գյուտագիտության ոլորտի, յերբ բուրժուական պետությունները՝ մեկը մյուսից առաջ ընկնելով, իրենց ռազմական հզորությունն ավելացնելու ցանկությամբ՝ զինվում են — այդ մասին պետք է հիշեք և գրականությունը:

Անհրաժեշտ է հիշել թեկուզ հենց մոտավոր անցյալի որինակաները և տեսնել, թե ինչպե՞ս եր առաջանում այդ տենդային վերապառազինումը, ինչ ուղիներով եր ընթանում զենքի զարգացման պատմությունը և ում մտքերն եյին անդադրում աշխատում պատերազմի համար:

Այդ դրություն թերազնահատումն արևմտյան պետությունների կյանքում, յերբեմն սպառնալիքի տակ է դրել հենց գոյությունը համաշխարհային սպանդանոցի նույնիսկ այնպիսի չեմպիոնների, ինչպե՞ս Անգլիան: Յեթե վերցնենք մասնակի մոմենտ — թեկուզ հենց պայքարի այնպիսի տեսակը, ինչպե՞ս սուղանավն է, ապա ըստ Պերսի Սկոտտի խոսքերի՝ պատերազմի ժամանակ գերմանական սուզանավերը քիչ մնաց ստիպելին անգլիացիներին տանուլ տալ պատերազմը: «Յեթե գերմանացիները, — գրում է այդ թունդ և հեղինակավոր իմպերիալիստը, — ունենային դարձյալ 50 սուզանավ, այն ժամանակ ամեն

1252
38

ինչ վորչափ հեշտ կաջողվեր: Հիմա նրանք կլինեյին աշխարհի հաղթողը, իսկ մենք կլինեյինք դերմանա-կան դադուր: Սարսափելի յե մտածել, վոր մեծ ազ-գի բախտը կախված էր մազից, մի փոքր, շատ փոքր սխալի համար»:

Խորհրդային ռազմական կոմենտատորները հիա-նալիորեն հաշվի յեն առնում, թե ինչ է նշանակում հակառակորդի զենքի թերազնահատումը: Գրականա-զետները պետք է զբաղվեն ռազմա-տեխնիքական հա-րուստ նյութով, թեկուզ հենց Խորհրդային Միության ղեմ պատրաստվող գալիք պատերազմի մերկացման նպատակով:

Արեմուտքի ռազմական հեղինակները լավագույն կերպով իլյուստրացիայի յեն յենթարկում տեխնիկա-յի նշանակութունը մոտ ասպագայում՝ կարգալով հենց «անցյալի գիրքը»:

«Նախապատերազմյան շրջանում տարածված և տեխնիկական գիտությունների անբավարարության վրա հիմնված կանխակալ կարծիքը՝ ուղղված տեխնի-կայի համարձակ յենթադրությունների դեմ՝ պետք է ընդմիջտ վտարել:

Պատերազմը հնարավորութուն տվեց տեխնիկա-յին ապացուցելու իր վիթխարի ստեղծագործ ուժը նյութական բնույթի խոչընդոտները վերացվելու դեպ-քում: Բավական կլինի բերել մի քանի որինակ. մըթ-նոլորտային ոգից ազդաթթվի ստացումը, քիմիական պատերազմի զարգացումը, գերհեռաձիգ հրանոթը, տանկը, սուզանավը, վորի գործողության շառավիղը տարածվում է մինչև Ամերիկայի արևելյան ափերը, Բուլղարիայից մինչև Սարտում գործողության շառա-վիղ ունեցող ողանավը, հսկայական ինքնաթիռները և փոքրիկ միտեղանոց կործանիչ ալերոպլանը, վորը մեկ վայրկյանում 60 մետր արագությամբ ճեղքում է ողը և ուղիղ մեկրոպետում համարյա ուղղահայաց բարձրա-նալով՝ հասնում է 1000 մետր բարձրության, և այդ-այն բանից հետո, յերբ 1914 թվին ինքնաթիռն ստիպ-

ված էր կես ժամ, դուցե և ավելի չարչարվել, վոր-պեսզի վերցնի իր համար այդպիսի գլխապտույտ բարձրություն: Յեթե պատկերացնենք տեխնիքական դիսկուսիան 1914 թվի պայմաններում, կարելի յե պնդել, վոր մեծամասնությունը հիշյալ նվաճումների՝ այժմ ինքնին հասկանալի և յերբմն արդեն զգալիորեն գերազանցված՝ միմիայն ներողամիտ ժպիտ կառաջաց-ներ շատ այսպես կոչված մասնագետների մոտ: Նրանց մտքերի ինտրոյի մոմենտն ամուր ձուլված էր յեղա-ծին և կտրվել դրանից չափից դուրս գծվար էր նրանց համար: Մենք պետք է զգուշանանք նման ժպիտից: Նա համառ կանխակալության և մտքի ճկունության պակասի արդյունք է հանդիսանում»:

Այդ տեսակի սյուժեների դիմելով՝ գրականու-թյունն իհարկե պետք է կանգ առնի չարադրման ձևերի ընտրության վրա: Նյութերի մշակումը մի կողմից դիտական Փորձացիայի, մյուս կողմից — ռազմական պրակտիկայի՝ ստիպում են պրոգային դառնալ առան-ձին տեսակի պրոգա:

Սյուժետային սոուսի մեջ ընկղմված դոկումենտը չպետք է սակայն կորցնի վոչ գծագրությունը, վոչ համը: Տեխնիկական մանրամասնությունները չպետք է ալլանդակվեն հոգուտ պատմվածքի հերոսների հոգե-բանական ապրումների, իսկ իրենք հերոսները՝ պատ-մականորեն վերցված մարդիկ՝ չպետք է սխեմայի վե-րածվեն:

Ծանոթանալով համաշխարհային պատերազմի դա-րաշրջանի առանձին փաստերին, վորոնք լուսաբանված են հատուկ գրականության մեջ, յես չգիմացա դայ-թակղությանը՝ միացնել վոչ մեծ պայմանական վե-պում, վոր հաճախ փոխվում է խրոնիկայի, մի քանի վողրերգական եպիգրոներ այսպես կոչված գաղային և հրանետային պատերազմի շրջանից, վոր համարյա անձանոթ է լայն ընթերցողին:

Պետք է ասեմ, վոր աշխատանքը նման առաջա-դրության վրա շատ դժվարին է և ռիսկով: Հարկ յե-

զավ անմիջապես կրճատել նյութը՝ անծայր պատժողականության մեջ չընկնելու համար, վոր հետաքրքրական է հեղինակի թեթևամտությամբ և վոչ թեմայի խորությամբ:

Միանգամայն ակնհայտ է, վոր ծավալելով համաշխարհային պատերազմի լրիվ պատկերը՝ չի կարելի չիստել համաշխարհային պրոլետարիատի մասին: Իմ առաջադրանքում, — հանգամանորեն ցույց տալ միմիայն պայմանները և հատկապես հրանետի ու ռադմական դադի զարգացման մանրամասնությունները, — յետ բնականորեն անկարող եյի վեր հանել աւ լուծել վերը հիշված ահագին թեման, քանի վոր դրա համար ինձ պակասում եյին թե գիտություն և թե իմ տաղանդի հնարավորությունները: Մշակման դժվարությունը բանակի տեխնիքական ուժերի նույնիսկ այնպիսի նեղ հաշվառման, ինչպես թունավոր նյութերի և այրող նյութերի համառոտ պատմությունն է, ստիպեցին շատ զգուշ մոտենալ խառտերի ցուցադրմանը:

Պացիֆիզմը չպետք է յերևա նման գրվածքի չեմքին անգամ: Վոչ մի պացիֆիզմի մասին խոսք չինել չեք կարող, ինչպես է պատմվածքը չպետք է յերևար «անտանտային», այլ ինքն՝ մերկացնող հանդիպ գերմանիայի, վորպես զազային և հրանետային պատերազմն առաջին սկսողի: Վողբերգական նյութի իսկական տարածություն վրա կենտրոնացնելն արդեն հեշտությունամբ կարող եր վողբերգությունը վերածել մելոգրամայի, վորը և տեղ-տեղ զգացվում է: Իհարկե, գրվածքը բավական դիսկուսիոն ստացվեց: Ձեռնարկելով այս փորձը՝ յես դնում եյի դեպի անհաջողություն, վորովհետեւ սովորել կարելի չէ միմիայն որինակների վրա, իսկ որինակներ չկային, կամ այնքան հեռավոր եյին, վոր նրանց դոյություն ուղտակար լինել չեք կարող:

Նոր նյութի դայթակղությունն ինձ ստիպեց իմ սեփական ռիսկով չափել և ուսումնասիրել համաշխարհային պատերազմի ստորջրյա հոսանքներից մեկը: Գու-

ցե իմ խորաչափը ցույց տվեց վոչ իսկական խորություններ, արձանագրեց միայն լայն ծանծաղուտը, վոր յես սխալմամբ ընդունել եյի վորպես վերջնական արդյունք:

Գրել գրվածք ոտարյերկրյա նյութի վրա, վորում հերոսները չեն կարող ոգտվել հեղինակի բնածին լեզվով, այլ խոսում են կարծես այն լեզվով, վորից թարգմանում է հեղինակը, նշանակում է աղքատացնել պատմվածքի խոսակցական լեզուն: Սֆորիստական Ֆրազներից ոգտվելը շատ հաճախ անհաջող է ստացվել: Յես կարծում եմ, վոր «Արեմուտքի գիտությունը և պատերազմը» մասում մտցրված տեխնիքական-ռազմական թեման՝ ներկայացված պրոֆեսոր Ֆաբերի կողմից՝ չի սպառել ժամանակակից արեմատյան գիտնականի տիպը՝ վերցնելով միմիայն անսկզբունք կամ սպանելու չափ իդեալիստական անհատապաշտին, վորին թվում է, թե ինքը շնորհիվ իր մտքի՝ հանդիսանում է աշխարհի կենտրոնը և արհամարհում է բուրժուական իմպերիալիստների իշխանությունը, ում նա սովորաբար հաճույքով և հլու ծառայում է իր «հանճարեղ» գյուտերով՝ ուղղված առաջին հերթին ընդդեմ աշխատավորների, վորոնք ներգրավվել են պատերազմի մեջ հանուն ֆինանսների և իմպերիալիստների ամբոխի համաշխարհային տիրապետություն:

Իհարկե պատմվածքը զգալիորեն ուժեղ կարող եր լինել, — բայց այստեղ վոչինչ չես կարող անել: Յես ուզում եյի աշխատանքի առաջին փորձով ցույց տալ նման «կողմնակի» նյութի վրա մի նոր մարդ, ուր խորհրդային գրականությունը պետք է հայտնվի և հսկողություն տակ առնի իրականություն փաստերը, ինչպես վոր նա այդ անում է՝ մասնակցելով սոցիալիզմի խաղաղ շինարարությունը ԽՍՀՄ-ում:

Պետք է խոստովանել, վոր մեծ ծառ է կտրված և յես չկարողացա նրան տապալել, տեղից շարժել մի փոքր — յես համենայն դեպս շարժեցի, — իհարկե աշխարհն այնպես զարմացած չի լինի, ինչպես վոր զար-

մացալ, յերբ ծաղրելով «Deutschland» սուղանավի
գոյության լուրը՝ անսպասելիորեն տեսավ ովկիանոսի
խորքից դուրս յեկնող և դեպի Բալթիկ ծովախորշն
ուղղվող նրա մոխրագույն կորպուսը:

Դա նշանակում է միայն, վոր առայժմ ռազմական
տեխնիկայի պատմության մերկ փաստերն անչափ ու-
ժեղ են գրական փաստերից, սակայն դա չի նշանա-
կում, թե գրողը պետք է միանգամ ընդմիջտ հրաժարվի
այդ տեսակ նյութից: Հենց ընդհակառակը: Նա պետք
է այնպես ըմբռնի պատմական փաստի քաղաքական և
ռազմա-տեխնիքական կողմը, այնպես վեր հանի նրան,
վոր այդ վերհանումը հանդիսանա նոր ձև: Դժբախ-
տաբար, յես ոգտվել եմ պատմելու սովորական ձևից՝
հաղորդելով հերոսների անձնական ճակատագրի
գործը (ընկնելով տրագիցիոն սխեմաների մեջ), և նոր
ղենքի զարգացման գիծը, վորի համար պատժվեցի
յես՝ ստանալով մի պատմվածք, վոր չի լուծում հար-
ցը վողջ ակնհայտությամբ, այլ միայն մասնակի կեր-
պով իլյուստրացիայի յե յենթարկում հարցի պատմու-
թյունը: Բայց յես պինդ կառչած եմ այն համոզմուն-
քին, վոր նոր նյութն ստղծելու յե նոր ձև, և այդ ձևն
անհետաքրքրական չի լինի և ամենալայն ընթերցողի,
և՛ ամենաբժախդիր քննադատի համար:

Յես այնքան չուտ չկարողացա գտնել այդ ձևը,
սակայն այդ չի նշանակում, թե դա չի հաջողվի մեկ
ուրիշ, ավելի բախտավոր գրողի:

Ամենապարզ մարմինները կարող են
բարդ լինել:

Քիմիա

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

1. ԱՌԱՋ

— Առա՛ջ: Առա՛ջ: Անասուններ, առա՛ջ: Մի՛ ծու-
լանաք:

Պառկած զինվորներն իսկույն վեր թռան, անճոռ-
նիաբար կռանալով՝ վազեցին թփերի արանքով ու ըն-
կան: Ավելի վոչինչ չեր մնում նրանց անելու: Հրամանը
պիտի կատարել անմիջապես: Նրանք ընկան: Դա կոչ-
վում էր տեղեցտեղ վազել:

Լեյտենանտ Ռուդրեխտ Շրեկֆուսը, վորին ընկեր-
ներն ուղղակի «Ռուդի» էյին կանչում, կանգնած մի
ծնկան վրա, հրաճիգ չդժայի յետևը, անփորձ ու բնա-
ծին ռազմիկի ազարտով եր լցված: Ռուդի Շրեկֆուսը
կարող էր լուրջ խոսել միմիայն պատերազմի մասին:
Մյուս ժամանակ նա ուղղակի ծառայող էր, լեյտե-
նանտ, վոր թղթախաղով էր զբաղված, պարտքեր էր
անում, ապրում վոչ ըստ միջոցների, պարծենում չունե-
ցած ավտոմոբիլներով, պատմում իր ախոռների մա-
սին, վոր յերբեք նա չի ունեցել: Յեթե յերբեմն էլ
զինվորին հիվանդանոց էր քչում, բոլոր որենքներին
համաձայն նրա մարմինը կապտացնելով, ապա այդ
անդի յեր ունենում իր դյուրազրգիռ բնավորությու-
նից, վոչ ավելին:

— Մեծ ընտանիքներում, — ասում էր նա իրեն արդարացնելու համար, — յերեխաներն ել յերբեմն տուժում են ծնողների պատահական անսիրտ վերաբերմունքից. յենթավարպետները ծեծում են աշկերտներին, վորպեսզի նրանց խելք սովորեցնեն, իսկ ամուսինները՝ կանանց, վորպեսզի նրանք ճիշտ ճամբով գնան: Ամեն բան այս աշխարհում բարեհաջող է, մանավանդ այսպիսի մարտական ամառային օրը:

Նրան այսօր ամեն ինչ դուրեկան էր. ջերմ արևը, թփերը, վորոնց մեջ ձգվել էր նրա չղթան, պաշտպանական գույնի կանաչ փաթաթաններով սաղավարտները, յերկինքը, հրացանաձգության չոր ճարճատյունը, հրանոթների բուտաֆորական հարվածները, հորվզոնում արշավող սուրհանդակները, սուլոցները, զնդացիներին փոխարինող ճրճուկները, — ուղղմափորձի վողջ խայտաբղետ անիմաստությունը — դա համենայն դեպս լուի ռազմափորձ էր, և վոչ թե պատերազմ, վորը նա պաշտում է և վորը նա իսկի չի տեսել:

— Կապույտների ամբուլթյունը լուում է... Ուշադրություն, Ռո՛ւզի, — կանչեց նրան ընկերը՝ հեռադիտակը թափահարելով:

Աշխարհում կա կարգապահություն ու բանակ: Գյուղը հաց է ցանում բանակի համար, արհեստանոցները հագուստեղեն ու կոշիկ են կարում, գործարանները զենքեր ու ռումբեր մատակարարում: Կեցցե նոր ամբաշինության գործիքը, նոր մաթ գույնի փուր համազգեստի վրա և նորամուծությունը՝ փշալարը:

Ձախ թևից նրան ազդանշան տվին: Նա վեր թռավ.

— Առա՛ջ: Առա՛ջ:

Ձինվորները վազում էին՝ գլխի մեջ չպահելով կանոնադրությունը: Նրանք վազում էին չափազանց նկատելի:

— Վլա՛դեկ: — Ռուդին դուրս էր գալիս ինքն իրենից: — Գլուխդ կուցրո՛ւ, այդչափ բարձր մի բռնիր հրացանդ: Սլավոնական սա՛ղ: Պոզնանյան փորձարի՛ք: Վլա՛դեկ, յես քեզ եմ ասում:

Փոքր ինչ հոգնեցնող և այդպիսի կյանք վարել մի քանի ժամ անընդհատ, և սակայն հիմա կգրավվի ամբուլթյունը: Յեթե դատելու լինենք թնդանոթների պարտավային համառ աղմուկից և զնդացիք ներկայացնող ճրճուկներից, խոտի մեջ սողացող խիտ չղթաններից, վորոնց յետևում սողում են այնպես, ինչպես Շրեկֆուսը, լեյտենանտներ — ամբուլթյունը պաշարված է:

Շղթաներն աճում էին բացականչություններով: Անսպասելիորեն նրանց առջև բարձրացավ այն, ինչին նրանք ձգտում էին ամբողջ առավոտը. գլասիսի, պատվարի, հրակնատի մոխրագույն պատը: Այդ ամբողջ մոխրագույնի վրա, վորպես մակեա, տեսիլքի նման կանգնած էր լուլթյունը: Հակառակորդն արձակել էր բոլոր փամփուլաները: Յեվ այն ժամանակ Ռուդին գոռաց վերջին անգամ՝ արդեն վոչ վոքի չհամաձայնեցնելով.

— Առա՛ջ: Սվիններով:

Նրա գլխում պտտում էր ջարդի պատկերը՝ հավասար Մեցի կամ Սեդանի գրոհին: Դա ներելի չէր. նա առավոտից չէր կերել: Քաղցած մարդու իղձերն, ինչպես հայտնի յե, հիվանդագին կերպով սրվում են:

Այժմ նրա հրաձիգները կխուժեն մոխրագույն ամբուլթյունը, նրան ծառայության համար շնորհակալություն կհայտնի պարոն մայոր Հոլ՝ստը, նրան դիմավորելու կենի պարետը և կհանձնի թուրը: Հպարտացի՛ր, Ռուդի: Վո՛րքան խոսակցություն: Վո՛րքան հիշողություններ: Վեհ գերմանական զինվորները վաղելով մինչև փոսն հասան, մտան փոսը և կանգ առան տարակուսված:

Սպիտակ դրոշի փոխարեն ամբուլթյան պատի վրա յերևացին հրչեջներ: Գրոհողները չփոթված իրար էին նայում: Գրոհն ընդհատվեց: Կոմեդի՛օ յե սա թե պատերազմ: Ինչո՞ւ յեն այստեղ հրչեջները աղյուսագույն այտերով, հյուսիսային մեծ աչքերով, վորոնց մեջ ա՛յ շտառով կերևա հեզնանքը: Բայց վոչ, այդ չի յերևում:

Նրանց ձեռքերում ջրհան մեքենաներ են՝ ուղղված Ռուդիի հաղթական զինվորների դեմ:

— Այս ի՞նչ է նշանակում, — գոռաց նա կատաղած, — այս ի՞նչ է նշանակում:

Ամբուլթյան վրա լավեց հրամանը, և ջրհան մեքենաները սկսեցին դուրս թափել պղտոր ջրի հսկայական հեղեղներ: Զրային բռունցքները խփում էին սաղավարտներին, դեմքերին, ուսերին, կրծքին: Զինվորները գցում յին հրացանները, ընկնում, սայթաքում, փնչացնում ինչպես ձիեր և փախչում փոսից, այո՛, նրանք փախչում էին՝ թրջված ու ստորացած, պղտոր ջուրը զարկում էր նրանց մեջքին: Դա խաղի որենքներից դուրս էր, դա անեկդոտ էր, և դրա մասին յերկար կխոսեն ռազմական բոլոր ակումբներում՝ սկսած Հոենոսից մինչև Վիսլա: Ինքը Ռուդին թրջվել էր վոտից գլուխ: Առավոտվա չքեղությունից հետք անդամ չէր մնացել:

— Ինչ անասուն է մտածել գործի դնել հրչեջներին:

— Ո՛ր, դրա համար պատասխան կտա պարետը, յեթե անդամ նա՝ խելագարված լինի:

— Վո՞րտեղ է միջնորդը: Ո՞ւր է կորել նա: Իսկապես ո՞ւր է միջնորդը:

Ամբողջ ամբողջը, ինչպես հրդեհի մեջ, պսպղում էր հրչեջների սաղավարտներով: Զրհան մեքենաները գազազել էին: Գրոհը պարզեպարզ յետ էր մղված: Վոչ մի զինվոր չէր մոտենում գլասխին: Նրանք խմբվել էին տեսարանի հետևը: Նրանք կիսաձայն հայհոյում էին, կրակում ողում, սրբում հրացանները և քամում անդրավարտիկը: Ռուդին համարյա լալիս էր: Զուրը հոսում էր հպարտ ոճիքից: Համազգեստը փչացել էր, փայլատ գույնի փոկերը խուճացել: Ռուդին կարծեռ պետն էր ընկել նավակամուրջից և կարթածողով վոտից դուրս էին քաշել նրան: Նա խոսք չուներ — նա խլրտում էր մռայլ ու թրջված հրաձիգների չրջանում:

Թփերի միջից գալիս էր պարոն մայոր Հոլստը և նրա հետ գալիս էր միջնորդը: Թևի փաթաթանը նրան

համարյա ոտարերկրացի յեր դարձնում, նա առանձնահատուկ վիճակումն էր: Նա անխոցելի յեր ու անմահ: Միջնորդին չէր կարելի վոչ սպանել, վոչ գերել: Իսկ նա ամեն քայլափոխում ահագին անախորժություններ էր հասցնում բանակին: Սուրհանդակը սանձից բռնած տանում էր նրա ձին — ճակատն սպիտակ բծով չեկ գունտերին:

— Պատիվ ունեմ գեկուցելու... Ռուդին ձայնը չի գտնում, նա պատրաստ է միանգամից կալանքի տակ ընկնելու, նա հասկանում է, վոր իր թրջված տեսքը վարկարեկում է բանակը: Դեպքը չափից դուրս արտասովոր է: Առաջին անգամ գերմանական բանակում կայսերական գորախաղների ժամանակ տեղի յե ունենում նման վայրենի վարմունք:

— Ավա՛րտ:

Ամբուլթյան դռները բացվեցին: Գիրանալու տրամադիր մի մարդ, մանիչակագույն դեմքով և փքված այտերով, բազեյի կտուցի նման քիթը կորացնելով՝ յենում է դուրս իր շտաբի ուղեկցությամբ: Միջնորդը գոչում է նրան՝ առանց ծածկելու իր չարախնդությունը:

— Հիանալի պաշտպանություն էր: Ավելի սրամիտ բան չէր կարելի մտածել: Շնորհակալ եմ ձեզնից: Իուք բացիք Ամերիկան:

Թրջված զինվորներն ու սպաները խմբվում են յետևը: Պարետի թիկունքում շարվեցին հրչեջ սաղավարտները: Զուր չէր, վոր մարգիկ չէին շչնջում: Պարետն արդեն ստացավ «սաքսոնական կլոուն» մականունը: Թե ինչո՞ւ — վոչ վոք չգիտեր, սակայն ամենքին դուր էր գալիս այդ մականունը:

Պարետի մանիչակագույն դեմքն սկսում էր պարզ կապտել, միայն աչքերը անհանգստությունից լայնացած, վստահ նայում էին միջնորդի դեմքին: Գուցե նա վորոշել էր սարքել մի նոր ոյին, վորպիսին չի հնարի վոչ մի դաշտային կանոնադրություն:

Պարոն մայոր Հոլստն ուզում է խոսելն սկսել:

Պարոն մայրերն չի հաջողվում խոսել սկսել, վորովհետեւ ինչ վոր տեղից անցավ մի բառ՝ աղղու ինչպես ելեքտրական հոսանքի գարկը — թրջված գինվորները քարացան շարքերում, թրջված սպաներն արձանացան, միջնորդը կպցրեց ձեռքերն աղղրերին, նրա ձին դադարեց վոտքերով դուրսել։ Ամբոցն անշարժացավ։ Հրչեղների սաղավարտներն ել չեյին պսպղում։

— Կա'յգերը։ Ուշադրությո՛ւն։ Կա'յգերը։

Արծաթափայլ շինելը կիպ նստել եր համաչափ քայլող մարդու ուսերին։ Ծանր աչքերն անթարթ եյին։ Բրոնզե դեմքը, վորի վրա ցցված եյին վազրի տափակ բեխերը նիզականման ծայրերով, քիչ այտասկրոտ, անշարժության եր վերածում իր շրջակայքը։ Ամեն ինչ սառչում եր, կորչում ու ձգվում այդ՝ խթանների հընչուն զրնգոցով դնացող՝ տեսիլքի առաջ։ Նա գտել եր իրեն համար ամեն ինչ՝ քայլվածքը, կենսադրությունը, Գերմանիան։ Նա ուզում եր գտնել բախտը։ Բայց ամեն անգամ, յերբ նա բարձրացնում եր ձեռքը, աչքերն սկսում եյին թարթել, և դա վատ նշան եր։ Ամեն անգամ նման հուզմունքն անուն եր ունենում։ Վերջին հուզմունքի անունն Ազադիբ եր։ Այդ մի փոքրիկ ափրիկական չոր անվան համար նա կարող եր շարժել բանակը, սակայն աչքերը թարթում եյին։

Նա մարդարե չեր, թեպետ բախտի վորոնումների մեջ նա ձգտում եր դեպի արեւելք։ Նրա ձգտումն իրավացի չեր։ Բախտն ընկած եր արեւելքում։ Այնտեղ նա անուն ուներ, տեղ ու թվական։ Այդ բախտը կոչվում եր Սարայեվո։ Յեւ վ ելի նա կոչվում եր երցհերցոգ, բայց այժմ այդ երցհերցոգը զբոսնում եր Իշլում և մի փոքր հարբուխ ուներ, միմիայն փոքր հարբուխ։ Արծաթափայլ շինելով մարդը ուղղակի դեպի Շրեկ-Փուան եր քայլում՝ չչեղվելով վոչ մի կողմ։ Իրապես նա քայլում եր դեպի բանակը, քանի վոր բոլոր տաքորինակությունների մեջ ամենից ավելի նա սիրում եր մի խաղ, այդ խաղը բանակն եր, դա սիրած խաղն եր, ամեն ինչ գոյություն ուներ ի սեր դրա։ Յեթե

այդ խելյին նրանից, այդ — փայլուն, վարժեցված, սպիտակավարտիկ, կապտա-կանաչ-սև համադրեստներով, մեծադյուրդ հրանոթներով, ձիերի խրխինջով և թելի նման ձգված շարքերով — ել ինչ կմնար նրան կյանքում։

Ճիշտ ե, կյանքում նա ցանկացավ ամեն ինչ լինել։ Նկարիչ, արտիստ, գրող, ինժեներ, պրոֆեսոր, ծովագնաց, ճանապարհորդ, — նա նկարում եր նկարներ — վատ, կարդում եր հանպատրաստից վոտանավորներ — վատ, ճամբորդեց դեպի Յերուսաղեմ — անհաջող, գրում եր հողվածներ — անհաջող, գործարանատերերին խորհուրդներ եր տալիս — թեթևամիտ։ Նա հազնում եր զանազան մասնագիտության հագուստներ, նա փորձել եր ամեն ինչ, սկսած պրոֆեսորական պատմությանից մինչև նավաստու կապույտ բաճկանը — և ամենն այն չեր։ Արծաթափայլ շինելը, բարձրաճիտ կոշիկներն ու ստեղծ — թուր նա չեր սիրում, նա չեր տիրապետում աջ ձեռքով, վոր ինչպես մեռած լինեք, չոր, հիմար ձեռքը։ Շինել, կոշիկներ ու սաղավարտ — այդ նրան ամենից շատ եր սաղում, և դա կոչվում եր դարձյալ — պատերազմ։ Յեւ մի՞թե նա պատերազմի համար չեր պատրաստում այդ բոլոր կենդանի խաղալիքները, վորոնք յերբեկից շարժվելու յեն՝ յենթարկվելով շտաբների մատիտի կարմիր կայծակներին Փրանսիայի, Բելգիայի, Լեհաստանի, Անգլիայի քարտեզների վրա։

Մի՞թե նրա համար չեր լեյտենանտ Ռուդի Շրեկ-Փուսը սողում այդ դժբախտ ամբուլթյան շրջակա բոլոր դաշտերով ու թվերով։ Մի՞թե նրա համար չեր, վոր հրչեղները ջուր չխնայեցին պաշտպանության համար։ Մի՞թե նրա համար չխեղազարվեց պարեալ։

Կայգերը մոտենում եր ահագին չքախմբով։ Հուսարների վոսկեվանդակ համադրեստները, ուլանների կիվերի թիթեղիկների սև ցուլքը, հրետավորների սև մահուղը, կայսերական գունավոր դրոշակը, մոնումենտալ համհարզները, հետևազորի կանաչ համա-

զգեսաները, բազմաթիվ թրադաշուններն ու թրերը և տարորինակ խթաններն ուղեկցում էին նրան:

Ամբոցի պարետը կապտել էր, կարծես կայծակն էր խփել նրան: Նա կապտել էր ամբողջապես մինչև մատներին ծայրերը:

Կայսրը հայացքն անցրեց թրջված սաղավարտներին և համազգեստների վրայով: Միջնորդը գիտեր, վոր առաջին հարցն իրեն է ուղղվելու, սակայն սխալվեց:

Կայսրը մոտեցավ պարետին և կանգ առավ: Նա հիանում էր պարետի զեմքի սուր կոպտությամբ, նա հիանում էր ռազմական մեքենայի, հավատարիմ հպատակի յերկյուղով:

— Պարե՛տ, — նա փողհարեց այդ խոսքը, և նրա բրոնզե ալտերն ավելի չոր դարձան, — կապիտան:

— Ոտտո Փոն-Շտարկե, ձերդ մեծություն, — ընդհատվող ձայնով պատասխանեց պարետը:

— Դո՛ւ եյիր կարծեմ ալտերն անձրև կախարդել:

Վո՛չ, Ռուդին չէր ցանկանա լինել պարետի տեղը: Անիծված մահուդը, յեթե ջրով լավ ծծվի, յերկար է պահում ցուրտը: Ռուդին աննկատելիորեն կծկվում էր:

— Ձե՛րդ մեծություն, — առանց կմկմալու մոլեգնաբար դռնում էր Շտարկեն՝ հավաքելով ճակատի վրա բոլոր կնճիռները, — վորպես զերմանական բանակի պահեստի սպա, յես պարտավոր եմ անընդհատ կատաբելադործվել պատերազմ վարելու ձեռքի ձեռք: Սպառելով բոլոր փամփուշտները և ինձ հանձնված ամբողջությունը պաշտպանելու բոլոր միջոցները՝ յես զիմեցի մի ձեռք, վորն ինձ հնարավորություն տվեց յես մղեայս հակառակորդի գերադանց ուժերին հարձակումը: Ինկատի առնելով ռազմախաղային կռվի պայմանականությունը...

Շտարկեն չնչակտուր յեղավ: Կայզերն ստեկով զարկեց փայլող կոշիկին: Դա մի ժեստ էր նրա ժեստերի կոլեկցիայից, և բոլորը գիտեցին, վոր այդ ժեստը զժգոհության նշան է:

— Այո, ինկատի առնելով ռազմախաղային կռվի

պայմանականությունը՝ դու նրանց սառը դուշ տվեցիր: Վատ հոգեբան ես...

Պարետը նորից դառավ իր ձույներ: Նա արդեն վրում էր հուզմունքից և հավատարմությունից:

— Ինկատի առնելով ռազմախաղային կռվի պայմանականությունը՝ յես հրամայեցի վրո՞ղել զրոհողների շարքերը հրավառ յուղի հոսանքով:

Այստեղ տիրեց լռություն, այդ լռության մեջ ջրային անեկդոտն աճում էր՝ դառնալով ավելի մեծ բան, բայց դեռ ժամանակ կար թողնել այն վորպես անեկդոտ: Ամեն ինչ կախված էր ստեկի դրությունից: Ստեկը բարձրացավ, բայց չզարկվեց կոշիկին, նա կախ ընկավ ողում, վորովհետև ձեռքը հենվել էր կողքին և կծկվել բռունցքով: Այդ ժեստը նշանակում էր արթուն մտածողություն:

— Սրբյոք հնարավոր է այդ, — ասաց կայզերը: — Հնարավոր է արդյոք հրավառ յուղով այրել զրոհող զորքերը:

Անեկդոտը մեռավ: Մնաց տարակուսանքը: Մնում էր պատասխանել իսկապես ասած խելահեղ հարցին, ստորադրելության բոլոր կանոններով, սակայն ամբողջ չքախումբը չգիտեր — ինչ պատասխանել: Կիվերներն ու սաղավարտները չչնջում էին: Անեկդոտը վերադառնում էր նորից ամբողջ ուժով, այժմ նա ծիծաղելի յեր դարձնում նաև կայզերին:

Յեվ այն ժամանակ կայզերը նայելով պարետի աչքերին՝ արագախոսությամբ ասաց. «Շնորհակալություն եմ հայտնում քո ծառայության համար» և, ինչպես շարնիլի վրա, դարձավ դեպի չքախումբը, վոր ժամանակ չունեցավ նույնիսկ միմյանց նշան տալու:

— Իսկ այժմ մենք կվերլուծենք դրախտաղը, պարոնայք:

Չոր ճարճատեղին ծալվող աթոռների, դաշտային սեղանների և պյուպիտրների վրո՞ղելը, խշխշացին դաշտային պայուսակներից և պորտֆելներին հանվող

քարտեզները: Հասավ հանրագումարի հանդիսավոր
ժամը:

Շտարկեն սրբում եր ճակատը և ցրում կնճիռները՝
լարված մոտոցիկլի պես դողդողալով: Լիբը և շառ-
քարձրահասակ մի սպա վերցրեց նրա թևը, բարակ,
սափրած ցինկի շրթունքները մոտեցրեց նրա ախանջին
և վորոշակի ասաց:

— Դուք շարադրեք ձեր նախագիծը ճշտորեն ու
ըստ հնարավորին չուտ և այն հանձնեք ինձ: Հասկա-
նալի՞ յե, կապիտան:

2. ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԸ

Պրոֆեսոր Բուրխարդտի տանը հյուրերը շատ յեր-
կար նստեցին: Դրանում հանցավոր եր ինքը, տանտե-
րը: Նա խոսում եր բոլորից շատ:

— Ամեն ինչ բարեհաջող ե, — իմիջի ալյուց ասում
եր նա, — կյանքի միջին տեվդուլթյունն ավերանում ե,
անբուժելի հիվանդությունների թիվը պակասում, պե-
տությունների սահմանադրությունը տարեցտարի լա-
վանում: Այդ ամենն անում ե եներգիայի փոխարկման
որենքը, մարդու՝ հոգուտ պետության կենտրոնացման
որենքը: Մարդիկ, վորոնք միաժամանակ զբաղվում են
մի քանի մասնագիտությամբ, զգացվում են վորպես
պատահականություններ:

— Սակայն, — ասաց իր գործին սիրահարված,
կուլտուրայի պատմաբան Ֆոլկը, — սակայն, յեթե
մենք հիշենք հազար յերեքհարյուրական թվականները,
ապա հինգ ամենամեծ նկարիչներից՝ Չիմարույե, Հով-
հան Պիզանացի, Արնոլֆո, Անդրե Պիզանացի և Ջիոտ-
տո — չորսը միաժամանակ նկարիչ էյին, ճարտարա-
պետ, քանդակագործ, յերբեմն նաև ինժեներ: Հետա-
գայում նկարչությունը կլանեց ամեն ինչ: Հռոմի-Ամս-
տերդամի-Ֆրեզոյեյի որենքները, նկարչություն, լու-
սաստվեր և կոլորիտ, Ռաֆայել, Ռեմբրանդտ և Ֆրա-
Անժելիկո ընդգրկեցին աշխարհը: Գերմանական թան-

գարաններն ընդունեցին նրանց իրենց պահարանները:
Դուք ուզում եք ասել, վոր ունակված է իրել և կյանքին:
Նայենք հենց այդ նույն նկարչության մարդը: Վան-
Եյկն անկասկած առաջին ունակն էր: Իհարկե, վոչ
խտալացիք: Իտալացիք չափից դուրս շատ ավերակներ
ու հին արձաններ են տեսել, վորպեսզի ունակն լինեն
մինչև վերջ: Հոգը, վոր իր բարակ շերտի տակ պահում
ե կամ բարելիեֆի բեկոր, կամ կոտրված ձեռք, մինչև
վերջ չի կարող շոշափվել իրականապես: Նիդերլանդցի-
ներին հեշտ եր: Այնտեղ հարուստ վաճառականներն ու
նրանց կանայք նկարների մեջ վստահորեն ցուցադրում
էյին սղեղ դեմքերն ու հաղուստների ծանր շքեղու-
թյունը: Դա իհարկե ունակված ե: Բայց Վան-Եյկի,
Պետեր Կրիստոսի այդ նույն նկարներում մենք տեսնում
ենք պատից կախված ուռուցիկ հայելիներ, վորոնցում
արտացոլված են Ֆիգուրաները յերկարացված և
ազավաղված, իսկ Պետեր Կրիստոսի մոտ արտացոլ-
վում ե նույնիսկ այն, ինչ չկա նկարում — արտացոլ-
վում ե փողոցը և Ֆիգուրան նրա վրա: Այդպիսով,
յեւք ունակվածից զտնվել ե դեռ չորս հարյուր տարի ա-
ռաջ, և ահա վերցրեք այդ ուռուցիկ հայելիներից մին-
չեվ Կանդինսկին ու Ֆուլթուրիգմն անցած ուղին: Դյու-
րերի ինքնապորտեն: Դուք տեսնում եք նույնիսկ պա-
տահանների արտացոլումն աչքերի մեջ, սոսկայն և
այնպես դա ունակ չե: Յեթե ձեւը հասցված ե մինչ լրիվ
մաքրության, ապա այդ արդեն ունակ չե: Ուրեմն ֆու-
թուրիզմն անկարությունի՞ց ե: Գուցե և այո՛: Յես
ուզում եմ ասել, վոր արվեստի ուղիներն սպառված են,
պետք ե սկսել սկզբից: Պատերազմի մեծ ցնցումը կա-
րող ե վերածնել գերմանական արվեստը: Ռեկլամների
աճը և արդյունաբերության զարգացումը հաղիվ թե
բեղմնավոր լինի մեր արվեստագետների համար: Յես
կարող եմ սովորեցնել, վորպես պատմաբան, միայն
անցյալը: Չճարիտ ե, մենք դեռևս ունենք մի քանի
հրաշալի վարպետներ, սակայն դա մեռնող սերունդ ե:
Պահանջվում ե թարմ արյուն...

Բուրխարդտը հայացք ձգեց իր պատերին: Այնտեղից նրան ելին նայում Լեմբախի պորտրենները, Մորից Շվինգի միամիտ ալլեգորիաները, Կառլ Բախի ծանրակող վալիերիաները, հաստանառուկ մատուցարարուհիները, վորոնց Շտուկը ներկայացնում է վորպես Բաքսի քրմուհիներ:

— Մենք ինքներս ապրում ենք հզորագույն դարում, — ասաց Բուրխարդտը, — և յես չեմ ամոսոսում, վոր չեմ ապրում Զիոտտոյի կամ Հենրիկ Թոչնորոփ ժամանակները: Յեթե անգամ հարյուրամյակներ ե մնում գործող տերմինը — ապա նրա բովանդակությունը բոլորովին փոխվում է: Կարդացի՞ր դուք Հոոմի պապի կոնդակը՝ ուղղված կաթոլիկ բանվորական միություններին: Նա իհարկե դեմ է այն քրիստոնեական միություններին, վորտեղ համախմբված են կաթոլիկներն ու բողոքականները, և նա՝ վճռականապես դեմ է ամեն տեսակի տնտեսական պայքարի: Յերեկալայում եք՝ ինչպիսի իրարանցում է կենտրոնի չարքերում և ինչպիսի տուրուզմբոց քրիստոնեական միություններում, վորտեղ վոմանք շտապում են համբուրել Վատիկանի հողաթափը, իսկ ուրիշները թքում են նրա վրա: Սրանք արդեն խաչակրաց արշավանքներից չեն: Պապը յենթարկվել է վիճակագրությանը: Վիճակագրությունն ընդգրկել է ամեն ինչ: Գերմանիան հաշվի չե առնում ամեն մի համաշխարհային թիվ և հանում յեղրակացություններ: Յես չեյի ասի, թե այդ յեղրակացություններն սպանիչ են նրա համար: Մենք կարող ենք նայել ապագայի վրա ամենապայծառ աչքերով:

— Ներեցեք, հարգելի պրոֆեսոր, — թեթև կարմրելով բարձրաձայն ասաց Երնեստ Աստենը, վորին իր կանացիության համար ընկերներն ուղղակի Երնա ելին կանչում: Նրա՝ այդ յերիտասարդ հասակում գրոհի նետվել Բուրխարդտի դեմ — պարզապես անվայել բան էր, բայց թող տեսնեն Ալիդան և պարոնայք պրոֆեսորները, նա պետք է հարձակվի: — Յես ուզում եմ ասել՝ քանի մասսաները գտնվում են աղքատության

սահմանում, տարրինակ ե խոսել ոպտիմիզմի մասին: Վերցրեք ինքնասպանությունների աճը: Դրանք վոչ միայն չեն վերջանում, այլ անփոփոխ կերպով ավելանում են: Իսկ յերեսաների մահացությունը: Գերմանիայում կան չրջաններ, վորտեղ առաջին տարում մահանում են նոր ծնվածների համարյա կեսը:

— Յեզ ձեզ կարող եմ ասել, յերիտասարդ, թե այդ ինչ ե նշանակում, — պատասխանեց Բուրխարդտը, — միայն թե չտաքանանք: Բուրժուական հասարակության ինդուստրիալ զարգացումն ամենամոտկապով կանգնած է ինքնասպանությունների ավելացման հետ: Յեսասիրական ձգտումների աճումը, կատաղի պայքարը նյութական բարեկեցության համար, քաղցը և աղքատությունը, հաճույքների անհագուրդ ծարավը, պետական պատամիտանալության և հայրենասիրության զգացմունքի նվազումը մանավանդ չունեվորների չրջանում...

— Ավելացրեք անհատի անկարողությունը կապիտալիստական քաղաքի լարիրինթոսում, — ասաց Աստենը, — բանվորներին ճնշելը...

— Դուք չափից դուրս ջահել եք, վորպեսդի ընդհատեք ինձ, — Բուրխարդտը բարձրացրեց ձայնը, — այն ամենը, ինչ յես թվեցի, յես գիտեմ վորպես գիտնական: Անհատի անկարողությունն յես չեմ ուսումնասիրել: Դա ինձ չի հետաքրքրում: Յես նույնիսկ թվեր կասեմ, վորոնք շատ բնորոշ են տաքարյուն և վոգեկորվող յերիտասարդներին հանգստացնելու համար — Գերմանիայում սիրո պատճառով կատարված յուրաքանչյուր հարյուր կանանց ինքնասպանությանը քսաներեք տղամարդու ինքնասպանություն ե ընկնում: Ել ինչո՞ւ յես լավատես չլինեմ: Կյանքի որենքն ընտրում է ուժեղներին: Մենք, գերմանացիներս չենք վախենում մասնավոր փաստերի ներգործությունից: Մենք դատարարվում ենք մեր կամքը վոչ սրտվոնների կասկածելի ինքնախոշտանգմամբ, վոչ լատինացիների թվաբանական ճշմարտությամբ և վոչ ել անգլիացիների

սպորտա-մկանային տրամաբանությամբ: Հիշեցեք ֆրանսիական կուռք Վոլ'տերին, վորն ստում եր, թե Լոնդոնում կա հարյուր կրոն մեկ սոուսում, իսկ Փարիզում — հարյուր սոուս և վոչ մի կրոն: Մենք ունենք կրոն, ունենք յերկիր, մենք ունենք համաշխարհային խնդիր: Եւ ի՞նչ արժեք ունեն մասնակի փաստերը: Բերիտասա՛րդ պարոն, — Բուրխարդտը քմծիծաղ տվեց, — յեվրոպական պետություններում մահապատիժը, վորպես կանոն, ի կատար ե ածվում գիւլյոտինի ոգնությամբ, և թող հայտնի լինի ձեզ, յերիտասա՛րդ պարոն, վոր Պրուսիայում մինչև որս գործադրվում ե հասարակ կացին: Հասարակ կացին: Յեւ յես հարգում եմ դահիճին վոչ թե նրա արվեստի, այլ աչն քաղաքացիական քաջության համար, վորը նրան այնպիսի վստահություն ե տալիս, վոր նրա ձեռքը չի դողում: Գերմանական դահիճը յերգված ե գերմանական պոյեզիայում, և դրանում կա ինչ վոր բան ազգային վոգուց, ինչպիս մենք այդ հասկանում ենք: Յես միմիայն որչեկտիվ եմ, ինչպես որչեկտիվ պետք ե լինի գիտությունը: Կրիմիալիստների վերջին համագումարն ընդունեց մահապատիժը յեվրոպական որենքների սխտեմում վորպես միանգամայն անհրաժեշտ: Գիտությունը միմայն հետևողականություն գիտե, յերիտասա՛րդ պարոն:

— Բույլ տվեք ինձ, պարոն պրոֆեսոր, — ասաց պատանին՝ քառակուսի դեմքով, վոր կտրտված եր սպիններով, — վերջերս յես լսեցի հարգելի դոկտոր Փոն-Տրոպպաույի զեկուցումը այն մասին, թե Ամերիկան գտել ե վոչ թե Կոլումբը, այլ գերմանացի պանգուլիտ Խրիստիան Մյունստերսկին, վոր Կոլումբից դեռ շատ առաջ նավել ե Ռեկիավիկի իսլանդացի Զեննոյեզայրների գուգազի հետ միասին: Մենք նստել ու լսում եյինք՝ հպարտությունից գլուխներս կորցրած:

— Դրանում անհավատալի վոչինչ չկա, — ասաց Փոլ'կը, — յեթե անգամ դա լեզենդ ե, ապա միանգամայն արդարացի: Լատինական ցեղը գործողության

ասպարիզում միշտ պատրաստին ե հասնում: Վերցրեք թեկուզ հենց Նապոլեոնի մահադաշտումն ըստ եյության կարլոսյան կայսրություն ստեղծելու մասին: Քսանե-րորդ դարի ամենամեծ լեզենդը — դա այսորվա Գերմանիան ե: Յեւ յերբ այդ լեզենդը կյանք կխուժի, դա կլինի դարի ամենահոյակապ հանդեսը: Իհարկե, ինձ դոհեկորեն չպետք ե հասկանալ: Մենք չենք նմանվի չերնոգորցի իշխանիկին, վորն իր նախաճաշին հավկիթ խաշիլու համար հրդեհեց Յեվրոպան: Վո՛չ, խոսքը — աշխարհը Վերածնելու մասին ե գերմանական կուլտուրայի միջոցով...

— Այդ անարդարացի յե, հարգելի պրոֆեսոր, — ասաց արդեն բոլորովին կարմրած Աստենը, — յեթե բոլոր ժողովուրդներն սկսեն գլխատել իրենցը, ապա նրանք կընկնեն ծուղակը՝ կուրացած իրար հանդեպ ունեցած ատելությունից, — բարեբախտաբար, այդ դեռ չկա: Յես ներողություն եմ խնդրում, վոր այսպես ոտը եմ արտահայտվում:

Բուրխարդտը պատասխանեց.

— Ժողովուրդները, յերիտասա՛րդ պարոն, վոչինչ են: Նշանակություն ունեն ժողովրդի գլխին կանոնած մարդիկ — ժողովրդի գեկավարներն ու ընտրյալները: Իսկ ժողովուրդներն ինքնին տարրեր են լինում, և մենք միշտ հպարտ ենք նրանով, վոր մենք — գերմանացիներ ենք և վոչ թե անգլիացիներ: Այդ մարդիկ, վորոնք փորձում են ներկայացնել իրենց վորպես հռոմեացի, վոչ ավելի քան մեծադույն ամբարիշտներ են, վոր վաճառքի յեն հանում նույնիսկ ազատությունը: Յերբ Պորտուգալիայում հանրապետություն հռչակվեց, առաջին գործն անգլիացիների, վորոնք հիսուն հազար Փոնտ փախառություն եյին տվել պորտուգալական թագավորին, միտար Գրեյի առաջ միջամտության մասին վողբալն եր: Հապա նրանց պարլամենտի ընտրությունները: Հռչակավոր Ոլդ Սարում ավանը ոհ-Փորմների շուրջն յեղած որինազծի ժամանակ հինգ խրճիթից եր բաղկացած: Մի տասնյակ բնակիչն ու-

դարեւեւ եր պարլամենտ յերկու ներկայացուցիչ, վո-
րոնց նշանակում եր սեփականատիրոջ համատարմա-
տարը կամ նրա սպասավորը: Կար նաև մի աշնպիտի
բարի ավան, վորն իրապես պատկանում եր ծովին, վո-
րովհետև ծովը ծածկում եր նրան խալառ, գլխովին,
բայց և աշնպես նա ռեներ ներկայացուցիչներ: Ծովա-
փի տերը նավարկում եր մակույկով ինքը չորսի փո-
խարեն, և ընտրությունները կայանում եյին: Իսկ
Բուտայում, վորտեղ ընտրություններին բացի չերի-
ֆից և գործավարից ներկայանում եր մի ընտրող, նա
իրրև գինավորական առյանի նախագահ, կարգում եր
անունները, իրրև ընտրող — ինքն եր պատասխանում
կանչին, վորպես աղղարնակչություն — ձայն եր տա-
լիս իր համար և իրրև ցուցակագրող — ինքը գրան-
ցում, վոր ընտրություններն անց են կացվել միաձայն
և վոչ վոք բողոք չի հայտնել: Ավելի պակաս, քան
հարյուր տարի արանից առաջ ծաղկում եյին այդ կար-
գերը: Անգլիայի քաղաքական կուսակցությունների
այժմյան ծախվածությունն հանրածանոթ ե: Սեսիլ
Ռոզսը գնեց անգլիական բանակը՝ Տրանսվաալը նվա-
ճելու համար՝ վճարելով բոլոր ծախսերն իր գրպանից:
Մի յերկիր, վոր հանուն բավականության՝ աղվեսի
վորսի և ձիարչավների վրա ծախսում ե յերկու հար-
յուր հիսուն միլիոն մարկ, չի կարող վերանորոգել աշ-
խարհը: Բրիտանական արհամարհանքը, վոր անգլիա-
ցիներին թույլ ե տալիս գեպի գերեզման քչել ամբողջ
ժողովուրդներ, անրնաջնջելի յե: Յես չեմ խոսում այն-
պիսի մանրունքների մասին, ինչպես այն, վոր դատա-
րանում անգլիացին միշտ իրավացի կլինի թխամորթի
հանդեպ, յես չեմ խոսում այն մասին, վոր ամեն մի
անգլիացի յերեխա կարող ե վզակոթին տալով վազո-
նից դուրս գցել հնդկական հողատեր իշխանին իր ծան-
րոցների հետ միասին: Յես խոսում եմ ստրկական աշ-
խատանքի և սխտեմատիկ քաղցի մարին: Ամբողջ աշ-
խարհի պատերազմները հարյուր տարվա ընթացքում
խժռել են հինգ միլիոն մարդ, տասը տարվա ընթաց-

քում, իննսուն մեկ թվականից մինչև իննը հարյուր
մեկ թիվը խրոնիքական քաղցածությունն Հնդկաստա-
նին նստել ե տասնիննը միլիոն: Ահա կառավարչական
մի սխտեմ, վոր արժան ե ընդորինակման:

Աստենն Ալիդայի ականջին ասաց.

— Ինձ մի վոքը սարսափելի յե թվում մեր հար-
գելի Բուրխարդտը...

— Երնա, քեզ արդյոք չի՞ թվում, վոր դու հա-
մարյա ծիծաղելիորեն ես պահում քեզ այսօր: Ինչո՞ւ
յես դու ամեն անգամ վեր թռչում և ընդհատում: Յես
քեզ չեմ հասկանում: Յերբեքցե պիտի սովորես քեզ
զսպել...

— Յերբեքցե կսովորեմ, — ասաց Երնան, — սա-
կայն յես չեմ կարող, յես չեմ կարող, յերբ նրանք
այդպես հանդիստ են, կարծես ամեն բան նրանումն ե,
վոր նստեն ու խոսեն, և ի՞նչպիսի ատելություն են
նրանք կուտակում:

— Վե՛րջ տուր փախուցիդ, մեզ են նայում:

Պրոֆեսոր Բուրխարդտը չեր նայում նրանց: Նա
ուշադիր աչքերով դիտում եր ժողովը: Արվեստի հար-
գարժան թեորետիկը նստել եր՝ կուսակցով սիգար
կտրող մեքենայի վրա և հողացողությամբ ուսումնա-
սիրելով այն: Քառակուսի գեմքով պատանի կորպո-
րանտը նայում եր վոռնալու սրատրաստ բուլ՝դոգի աչ-
քերով: Լուսկյաց նկարիչը, վոր ամբողջ յերեկոյան
վոչ մի խոսք չեր ասել, գննում եր Եվինդովյան առպե-
տին, կարծես նրանում ճանաչել եր իր ծանոթին և
տակավին չեր վորոչել՝ բարեկե՞լ նրան, թե հարցն առ-
կախ թողնել: Յերկու ջահել կանայք ալ՝բոմ եյին քրո-
քրում: Քաղաքային վարչության խորհրդականը ջա-
նասիրությամբ մարտում եր նրա ճառը: Յեվ այդ ժա-
մանակ Բուրխարդտն սկսեց խոսել նորից.

— Կան ժողովուրդներ, վորոնք իրենց հասուն տա-
րիքում պահել են մանուկների սովորություններ՝ մտած-
նրանց հիմնական պատմական բնավորության մեջ:
Նրանք համառորեն կառչում են դրան և ժամանակ առ-

Ժամանակ հատուցում են դրա համար: Այդպիսին են հենց թեկուզ ճապոնացիք: Նրանք համառ են և անտրամաբան, մահու չափ քմահաճ և անհասկանալի յեն մեղ: Իմ մոտիկ բարեկամներից մեկը — պրոֆեսոր — վերջերս քննում էր այդ ազգության ներկայացուցիչներից մեկին: Յերիտասարդ ճապոնացին լավ գիտեր գերմաներեն լեզուն և շատ վատ՝ իր առարկան: Մի խոսքով՝ ճապոնացին կտրվեց այդ քննությանը և անհայտացավ հորիզոնից: Անցավ վորոշ ժամանակ, և իմ բարեկամն ստացավ հետևյալ տարրերինակ նամակը մի ճապոնացի աղջկանից՝ այդ ուսանողի քրոջից: Նամակում գրված էր բառացիորեն հետևյալը. «Դուք անարգեցիք մեր ընտանիքը և դժբախտություն բերիք նրան: Յես վերջացնում եմ ինքնասպանությամբ և սպասում, վոր դուք ևս կկատարեք նույնը»:

Ունենդիրները չգիտեյին, թե ինչպես ընդունել այդ տեղեկությունը: Երևան ուղում էր վեր կենալ, սակայն Ալիդան պահեց նրան: Բուրխարդտը նայում էր սառն, ինչպես միշտ: Թվում էր, վոր նա ուրախ է նույնիսկ, հյուրերի մեջ աղաջացնելով վորոշ չիտթություն և չվարում, ավելի խոր, քան ինքն էր յենթագրում: Վոչ վոր, բացի կորպորանտից, չարտահայտեց իր կարծիքը: Կորպորանտը վայրենի քմծիծաղ տվեց և աչքերը շեղելով՝ ներկայացրեց ճապոնացուն: Բուրխարդտը շարունակեց անտարբեր:

— Ինչ վերաբերում է Կոլումբին, ապա մեր գիտնականների մեջ կան մարդիկ, վորոնց մասին պետք է խոսել բաց, չծածկած գլխով: Դեռ յերբեք յերկիրը չի ունեցել այդպիսի քանակությամբ խելոք, ազատ, նպատակադեմ գլուխներ, ինչպես այժմ: Յես կհիշատակեմ միայն իմ բարեկամ պրոֆեսոր Ֆարերին, վորի աշխատանքները քիմիայի բնագավառում կարելի չե անվանել ճանապարհորդություն դեպի նոր Ամերիկա: Մարդկության բարերարները — բավական հազվագեղ յերևույթ են, սակայն այն հետախուզումները, վոր կատարել և այդ մարդը, և այն հայտնաբերումները,

վոր նա արդեն ունի իր ձեռքում, նպաստում են իսաղաղ բարգավաճման գործին ավելի, քան տասը Հաագայի կոնֆերանս: Ահա գերմանական գիտնականի տիպարը: Նա յերբեք չի հրաժարվել վտանգի յենթակել իր կյանքը, յեթե փորձը բերում է բարի արդյունք: Պրոֆեսոր Ֆարերն այսոր խոստացել էր անցնել գիտական դիսպուտից հետո: Հնարավոր է, վոր ուշ ժամանակը...

Դուռը բացվեց այնպես, ինչպես կարծես թե մարդը լսել էր Բուրխարդտի ճառը և վորոշել ընդհատել այն ամենաաներկմիտ ձևով: Սենյակ մտավ հյուրը՝ շատ մեղմ, ժպտուն, զգուշ և միանգամայն բարեկիրթ:

— Բուրխարդտ, քո ճառը թեթևակի նմանվում էր տաքացրած պաղպաղակի, — ասաց նա մանժետներն ուղղելով:

Բուրխարդտը բարեկամաբար ժպտաց, բոլորը գիտեյին, պրոֆեսոր Ֆարերը մեծ սիրահար է սրամտության և կատակների, թեպետ ինքը չի կարողանում սրամտել:

3. ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Վատ ասլարատը ծիծաղելի ուրվականների գործողության վայր էր դարձրել եկրանը: Մարդիկ նրա վրա մերթ նմանում էին գորշ մակարոնների, մերթ տաքածվում գորշ բլիթների նման: Յուրաքանչյուր սիրային տեսարանի ժամանակ հանդիսատեսները «ախ» եյին քաշում և դեպի իրար թեքվելով՝ առում. «Սքանչելի չե, սքանչելի...»: Ավելի հասարակները հիացմունքից իրար եյին կմշտում:

Դրամայից հետո թռչկոտեց և շողչողաց դունազեղ ֆեյերիան: Հաստ, բարեհոգի փայտահատը տուն վերադառնալիս՝ դեմ է ընկնում կնճռոտված, փոքրիկ, սառչող սպառավին, վոր ընկած է ձյան կույտի մեջ, ցախի կապոցի տակ: Փայտահատը կանչում է կնոջը՝ բարեհոգի ձեռքերը թափահարելով: Կինն ողնում է նրան՝

քերելու գույնզգույն սառչող պառավին իրենց գույնը գգույն խաղաղ յոնակը: Նրանք կերակրում են պառավին կուշտ ընթրիքով, տալիս են նրան իրենց անկողինը և հրաժարվում պառավի առաջարկած պղնձյա գրամից: Պառավը լալիս է, թափ տալիս իր ցնցոտիները և համբուրում նրանց ձեռքերը: Հետո ամուսինները քնում են: Բացվում է վարդագույն ու մով առավոտը: Պառավը հանելուկային ժպտալով, փափուկ բուլկուց և սուրճով կաղգուրված՝ ամուսիններին տանում է դեպի ձյան դաշտը, ուր ձմռան կիսին ծաղկում էյին արտասովոր ծաղիկներ: Դահլիճում լավում են հոգոցներ: «Սա սքանչելի յե» — անցնում է ալիքը մի աթոռից մյուսը: Այդպիսի ծաղիկներ չես տեսի ամեն մի ծաղիկ խանութում: Պառավը շնորհակալությամբ հավաքում է արտասովոր ծաղիկների մի խոշոր փունջ և նվիրում ամուսիններին: Նրանք ժպտում են և վազում տուն՝ ուրախացած ամբողջ կյանքում: Պառավը քիչ ժամանակ նայում է նրանց հետևից, ապա դառնում հավերժահարս և շքեղորեն անհետանում հսկա, փարթամ թփերի մեջ: Ճոճվում են շուշանները: Փայտահատը ծաղիկները տանում է ներս իր սենյակը և փունջը դնում սեղանին: Ծաղիկներից դուրս են ընկնում յերկու հասալիկ, ինչպես խաղուկ, յերեսիաներ: Ամուսինները պարզում են ձեռքերը դեպի յերկինք և գոհություն հայտնում ճակատագրին: Այնուհետև գրնաց խրոնիկան: Թուշում է կոմս Յեպպելինը, և կոտորվում են ավտոները Ռեյմսում արշավի ժամանակ: Դահլիճում վառվեց լույսը: Ֆիսկարմոնիան դղրդյունով վերջացնում էր իր տաժանակիր դասը: Շատերը խնչում են: Շատերն ավարտում են բուռերբրող և շուկոյող ծամելը:

— Լավ յերախտագիտություն է, — ասաց Երնան, — ծածուկ ուրիշի վրա ձգել մանկիկներին: Գնանք այտեղից, Ալիդա, վո՛չ մի բոպե ավելի այս սրտամաշ տեղում:

Նրանք ծիծաղելով դուրս յերան փողոց: Նրանք

յերկար հրասնում էյին քաղաքում՝ հաշիվ չտալով իրենց, թե ինչպիսի փողոցներով են գնում, նրանք չէյին ուզում կանգ առնել:

— Նայիր, ինչպիսի աստղեր են, Երնա. չե՞ վոր սա Սիրիուսն է, իսկ նա անկասկած Որիոնը: Ափսոս, վոր մենք չենք ծնվել այդ աստղերի տակ: Յեթե մենք ծնվեյինք այդ աստղերի տակ, մենք այսպես փոքր չէյինք լինի, մենք կլինեյինք ինչպես...

— Ինչպես պրոֆեսոր Բուրխարդտը, — ասաց Երնան, — կամ ինչպես պրոֆեսոր Փարերը իր ամենագետ անշարժությամբ: Յերեակայում եմ՝ ի՞նչպիսի Ամերիկա կհայտարարի նա և իր նման վորքան անշարժ կլինի դա, մահաբեր մի յերկիր, անկասկած մեղմ կլիմայով:

— Ինչո՞ւ մենք չկարողացանք ծիծաղել այնտեղ, կլինոյում, ինչպես բոլորը, և ինչո՞ւ յես չեյի ուզում պսել՝ «սքանչելի յե» և ինչո՞ւ Բուրխարդտի մոտ, յերեկոյթին յերբեմն յերբեմն յես ցանկանում էյի լալ: Դու չե՞ս կարծում, Երնա, վոր ճապոնացի ուսանողի դեպքը վո՛չ թե Բուրխարդտի մոտ բարեկամի, այլ հենց իրեն հետ է յեղել: Դու հիշում ես, թե ինչպես նա դանդաղ, բավականությամբ պատմում էր այն աղջկա ինքնասպանության մասին: Երնա, մի՞թե նա իրոք ինքնասպան է յեղել: Դու ի՞նչ ես կարծում...

Նրանք կանգնած էյին պարկում, ավազանի ավին: Ծառերին յեղյամ էր նստել: Ավազանը ծածկված էր բարակ, ինչպես կիտրոնի կեղևը, սառույցով: Երնան բարձրացրեց փոքրիկ, սառցակալած քարը և նետեց ռիկոչետով: Փոքրիկ քարը տարորինակ, յողձալի ծվացով յերկար ցատկոտում և վազում էր սառույցի վրա, մինչև վոր կորավ կապույտ միգում:

— Յես կարծում եմ, սիրելիս, վոր պրոֆեսոր Բուրխարդտը բոլորը պատմում էր իր մասին: Մի՞թե նա վորեւէ այլ բանի մասին կարող է պատմել: Բայց դրանով նա թեթևություն չի զղա, ճամարիտ չե՞, իմ փոքրիկ:

Նրանք անցան ավազանի յերկայնքով և կանգ առան չսառած ծովախորշիկի մոտ: Բազերը գորշ յերամով խռնվել էյին ջրում. նրանք մըսում էյին, յերկաբացնում վզները, կարծես փնտռելով գիշերելու հյուրընկալ վայր: Երնան բոլորովին մոտեցավ ջրին և մի փոքրիկ ճառ ասաց.

— Թանգագին թռչուններ: Դուք յերբեք չեք դառնա պրոֆեսորներ, և դրանումն է ձեր յերջանկությունը: Հարգելի բազեր, դուք այս քաղաքում միակ արարածներն եք, վոր չեք զգում պատրիոտիզմի, կրիզիսների և անհատի ճնշման ծանրությունը: Դուք վոչինչ չգիտեք, հրաշալի մանկիկներ: Դուք չգիտեք, վոր սոցիալիզմին նվիրված ուսանող Երնա Աստենը, նախապաշարումների թշնամին յերեկ կոչվում եր սուսերով՝ նոր Գերմանիայի կորպորանտի հետ: Երնա Աստենը, վորը չի սիրում կորպորանտներին և մենամարտեր, և սպիներ ճակատներին ու աչտերին, և կըտըրված քթեր, իր հակառակորդի ձեռքը ծակեց, պատահական հարվածով—ընդունեցեք այդ ի դիտություն, պատվելի թռչուններ: Ինչո՞ւ յեր կորպորանտը կոչվում ինձ հետ: Միմիայն նրա համար, վոր նա չկարողացավ տանել իմ այն դիտողությունը, թե Ամերիկան գերմանացին չի հայտնաբերել: Յես փաթաթեցի իմ իրանն ու փոտքերը կանեփի հաստ պարանով, կաշվե գոգնոցով, պահպանական ակնոցներն աչքերիս, սիրտս ծածկող հատուկ վահանով, սիրտս, վոր պատկանում է այս աղջկան, և ճակատս ու աչտերս դեմ արի սուսերի հարվածներին, բայց վողջ մնացի, թանգագին թռչուններ: Յես կանգնած եմ ձեր առաջ և յերդվում եմ ձեր ձմեռային փետրավորումով, վոր այդ այլևս չի լինի...

Բազերը կշկշացին:

— Դու հիմար ես,— ասաց Ալիդան,— յես մըրսում եմ, գնանք:

Բայց նրանք դեռ յերկար զրոսնում էյին ծառուղիներով և զրուցում մինչև Ալիդայի վոտքերի սառ-

չելը: Վերջապես նրանք մոտեցան Շտարկեյի տանը:

— Ի՞նչ է անում քո հորեղբայրն հիմա,— հարցրեց Երնան՝ նայելով լուսավորված պատուհաններին:

Ալիդան զարմացած նայեց նրան:

— Ի՞նչ է անում: Միշտ միևնույնը: Նա հրդեհներ է հանգցնում գիշեր-ցերեկ և շրջում է ամբողջ քաղաքը: Նա դարձյալ հրչեջավագ է:

— Ինձ ով վոր ասաց, թե նա բյուզանդական կրակի նման մի ինչ վոր բան է հնարում:

— Ախ, իսկապես, նա մի աշխատանք ունի, վորը մեզնից բոլորից թագցնում է: Այո՛, նա ինչ վոր դյուտ է անում: Դե ախր նա տխրում է առանց գործի և հետո նա ամեն ժամանակ կրկնում է, թե պետք է աշխատել հայրենիքի ոգտի համար:

Ալիդան լուեց: Նրանք կանգնած էյին և վոչ մի կերպ չէյին կարողանում բաժանվել:

Տանն սկսեց հաջել շունը:

— Այդ մեր Բեկն է,— ասաց Ալիդան,— մնաս բարով: Նա զգում է, վոր յես յեկել եմ:

Գնալիս նրանք համբուրվեցին, և Ալիդան վազեց տուն: Մեծ զամփուր դրեց իր թաթերը նրա ծնկներին: Հյուրասենյակի մոտից անցնելիս՝ նա մի բոպե կանգ առավ: Հյուրասենյակում կանգնած եր նրա հորեղբայրը՝ հրչեջավագ Ռոտո Փոն-Շտարկեն: Նա կանգնել եր, ձգված, ինչպես զորատեսի ժամանակ: Նրա առջև, վորպես սև սյունը, փայլում եր սեղմ կոճկած բաճկոնով մի սպա: Նրանք յերկուսն ել անհետացան առանձնասենյակի դռների յետեր: Ալիդան հիշեց, վոր այդ զինվորականի դիմանկարը նա մի շարաթ առաջ տեսել եր մասսայական ժուրնալի եջերում, միայն այնտեղ նա սաղավարտով եր և բոլոր շքանշաններով:

4. ԼՈՒՌԻ ԽՈՍԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Որը բազկաթոռում նստած բարձրահասակ զինվորականի դիմադծերը կարծես քանդակված էյին

ցինկից: Կողմնակի դիտողը նրանց մեջ իզուր կը-
փնտռեր ջերմութիւն: Զերմութեան այդ բացակա-
յումն հենց ուրախացնում էր Շտարկեյին: Այն, ինչի
մասին նա պատրաստուում էր խոսել, պահանջում էր
կրկնակի և սառն ուշադրութիւն:

— Զերդ գերազանցութեանն հարգեցիք ինձ ձեր
անձնական այցելութեամբ: Յեա պատրաստ եմ պատմե-
լու ձեզ բոլորը: Վո՞րքան ժամանակ կարող եք ինձ
տրամադրել:

Գեներալն այնպես նայեց հրշեջակազին, կարծես
թե կռում էր պատմողին և նրա քաշով մտածում էր
վորոչել պատմածի կշիռը: Հետո նա սկսեց խոսել մի
տեսակ գերմարդկային ձայնով, և Շտարկեյին պատ-
կերացավ դաշտը՝ ռազմիկների դասավորված զորա-
սյուներով, ձիերով և հրանոթներով — նրա վտարերը
մի րոպե մեխվեցին հատակին և ստրկական խոնար-
հութեան ցուրտն անցավ նրա մեջքով: Նա ցած դրեց
սիգարը և առանց շարժվելու լսում էր գեներալի խոս-
քերը:

— Ամենից առաջ յես ուզում եմ իմանալ, թե ինչ-
պիսի դիտողութեաններ ձեզ բերին այդչափ անսպասե-
լի յեղրակացութեան: Դուք բացատրեք ինձ ձեր մտքե-
րի ամբողջ ուղին, առանց շտապելու և վոչինչ չմոռո-
նալով: Պատերազմական զենքերի թարմացման մի
այդքան հետաքրքիր փաստն՝ ինքնին յենթակա խստա-
գույն գաղտնապահութեան՝ պետք է լիովին հայտնի
լինի մեզ և ռերիշ վոչ վոքի... Միջազգային դրու-
թեանը լարված է ծայր աստիճան, յես ձեզ բացելբաց
ասում եմ այդ, և կարող ե պատահել այս գարնանը,
այս ամառ... Մի խոսքով՝ յես ձեզ լսում եմ:

Շտարկեն սպասեց, մինչև վոր գեներալի ձեռքը
հանգիստ պառկեց բազկաթոռի գլանիկի վրա, և վեր
կացավ: Գեներալը գլխի թեթև շարժումով վերադարձ-
րեց նրան բազկաթոռին: Շտարկեն նստեց: Նա շատ
անգամ էր պատմել իր անթիվ հրդեհների մասին թե
ընկերական չըջաններում և թե պաշտոնական զեկու-

ցումների ժամանակ, բայց այժմ խոսակցութեանն այդ
չպետք է լիներ. խոսքն ապագայի մասին էր, վորի
բունն ալիքներն արդեն թափալում էյին նրա վտարերի
մոտ, անհայտ որերի փրփուրը թռչում էր մինչև ծրնկ-
ները: Պետք էր կենտրոնանալ և վորոչել՝ մտնելու նրա
մեջ — այդ ավելի սարսափելի յեր, քան յեթե նա հի-
մա միայն բաճկոնը հագին բաց աներ դուռը, դուրս
գար սառնամանիքին և գնար մեծ թատրոնը Զիգֆրիդի
համար տոմս գնելու: Յեվ նա բացեց դուռը:

— Զերդ գերազանցութեանն հայտնի յե, վոր յես
լոկ հրշեջակազին, դույլի համեստ պաշտպան, մաս-
նավոր սեփականութեան պահապան՝ հանդես առնալ
տարերքի, մի մարդ, վոր ամեն ոք կրակ է տեսնում,
մի ամսում տեսնում է այնքան կրակ, վորքան սովո-
րական մարդիկ չեն տեսնում ամբողջ կյանքի ընթաց-
քում: Կրակը լինում է տարբեր գույների, տարբեր
ուժի, տարբեր բնավորութեան: Կրակը շատ մեծ ար-
վեստագետ է: Յես տեսել եմ, թե ինչպես նա ֆան-
տաստիկորեն խաղում է տների, կահավորանքի, մարդ-
կանց հետ, նախքան նրանց վոչնչացնելը: Նա կռանում
և պարում է, նա քայլում է յերկար դեղին շարքերով,
նա թագնվում է, նստում ծալապատիկ և սպասում,
նա թակարդ է դնում: Յես լավ գիտեմ կրակի դեմքը և
նրանում յես շարունակ դպացել եմ թշնամին: Այդպես
յերևի ձկնորսներն զգում են ծովը: Յես գիտեմ այն
ուժը, վորին տանում եմ կրակի դեմ: Յես սիրում եմ
իմ խիզախ կտրիճներին, վորոնք գալարապատույտ
մազլյում են նոր յուզած սանդուղքներով դեպի յեր-
կինք, յես սիրում եմ ջրային մրրիկները, և մեկ ան-
գամ իմ ներկայութեամբ կրակը գուտ պատահակա-
նորեն դուրս թռավ նեղ ու յերկար լեզվով և անշունչ
ցած գլորեց իմ լավագույն շտեյգերին՝ Լյուդվիգ Կու-
րիչին: Նրանից հետո մնաց վորդին՝ Իոհաննը — մի
բարի և խելոք տղա: Յես վողջ կյանքում միտս պա-
հեցի այդ տասը մետրանոց հրե լեզուն և իմ գինվորի
ռեացած դիակը: Այն դիչերը յես չկարողացա քնել, յես

նատած էյի մինչև առավոտ և ծխում էյի: Առավոտը
ամբողջ հատակը ծածկված էր սիգարի մնացորդներով,
սակայն այդ ծխի մեջ ծնված միտքն այնչափ մեծ էր,
վոր յես վախեցա, յես թագնվում էյի նրանից ծխի
մեջ, և առավոտը հանդիպեց ինձ վոտքի վրա, ուժաս-
պառությունից կանաչած, բայց և այնպես ուրախ: Յեվ
ինչո՞ւ մենք, ասացի յես ինձ, ինչո՞ւ համար մենք
չպետք է փոխարինենք թանգարժեք հրանութները թըշ-
նամուն այրող թեթև ջրհան մեքենաներով, ինչո՞ւ չի
կարելի ջուրը փոխարինել հրավառ յուղով: Յես պատ-
կերացրի մեր քաջարի տղաներին, վորոնք այրում են
թշնամու բանակը ինչպես անպետք խոտ: Յես հավա-
տում եմ ասածուն, ձերդ գերազանցություն, և հոգարտ
մարդ եմ: Ինձ չի վայելի ծիծաղելի լինել թե՛ իմ աս-
տիճանի, թե՛ պաշտոնի իմաստի և թե՛ պարտականու-
թյան հասկացողության տեսակետից: Բայց յեթե ամե-
նաբարձրյալը տվեց ինձ այդ միտքը, յեթե նա ինձ
հաղորդիչ կարգեց իր գործին, կարո՞ղ էյի յես արդյոք
հրաժարվել այն գաղափարից, վոր ճշմարիտ չկրթում
ինձ վախեցրել էր: Սկզբում յես վանում էյի այդ, վոր-
պես դայթակղություն, վորպես գործ, վորը վեր է իմ
թույլ ուժերից, բայց միտքն ամբանում էր և աճում:
Յես ինքս ել չէյի կասկածում, թե ինչպիսի ծիլեր է
թողել նա իմ մեջ: Յեվ յերբ զորախաղերի ժամանակ
ինձ հրամայեցին պաշտպանել ամրությունը բոլոր
հնարավոր ուժերով, յես չգիտեյի, վոր կովից տասը
ժամ անցած յես այնպես կլինեմ իմ սևեռուն մտքի տի-
րապետության տակ, վոր հրաման կտամ ջրով վոռողե-
լու հարձակվողներին: Յես ինձ պահում էյի վորպես
մատուց ապաստանի: Նրանք ինձ չհասկացան, յես հավա-
տացած եմ, նրանք ինձ խելագարի տեղ էյին ընդու-
նում: Դուք վկա էյիք այդ կովին, ձերդ գերազանցու-
թյուն, և դուք արդարացրիք ինձ:

Գնե՛րալը չհեռացնելով իր հայացքը՝ դիտում էր
Շտարկեյի մանիշակագույն այտերը, վորոնք ծածկվել
էյին քրտինքի մանր կաթիլներով: Նա չեր շարժում իր

գորշ, սառը, ցինկե ձեռքը, վորոնք հանգչում էյին
բազկաթոռի գլանիկների վրա: Նա թեթևակի կիտեց
հոնքերը, յերբ Շտարկեն կանգ առավ: Հրշեջավազը
շարունակեց.

— Ձեր հրամանով յես կապվեցի այն մարդկանց
հետ, վորոնց հանձնարարել էյին ինձ: Վո՛չ, մենք չենք
ստեղծել աշխարհը վեց որում: Դա ավելի մեծ ժամա-
նակ է խլել: Բայց յես, ինչպես աղոթք, գիտեմ իմ ա-
պարատի որենքները: Հեշտ բռնկվող յուղը՝ սեղմված
գազի աղդեցության տակ՝ դուրս է մղվում ջրհան մե-
քենայի միջով քսանհինգից մինչև հիսուն մետր խորու-
թյամբ, նայած սարարատի ուժին և մեծությանը:
Յերբ դուք բացում եք կաշեփողի (չլանգ) ծորակը,
յուղը բռնկվում է ինքնիրեն և դուրս պրծում մեծ
հոսանքով՝ միանդամայն մահացու մարդու համար:
Մենք փափաղում էյինք շուտ սկսել փորձերը: Մենք
ընտրեցինք յուղի հարյուրավոր տեսակներ ու կոմբի-
նացիաներ, փորձեցինք հարյուրավոր ջրամբարներ,
կաշեփողեր ու ջրհան մեքենաներ: Մենք վաղուց էյինք
թողել հասարակ հրշեջ խողովակը, մենք կատարելա-
գործում էյինք մեր հրանետների տեսակները, և այն
ժամանակ ի մեծ ուրախություն մեր՝ ստեղծվեց թըշ-
նամու համար սարսափելի և մեր բանակին հարմար
հրանետը: Ի՞նչպիսի հուզմունքով մենք ձեռնարկեցինք
առաջին փորձը: Վերցրինք տասնյակ հարդե ֆիզուր-
ներ՝ միջակ մարդու մարմնի ծավալով, կանգնեցրինք
այնպես, վոր նրանք պատկերաճան էյին վորպես հար-
ձակվողներ: Յեվ յերբ յես հրամայեցի՝ «կրակ», յես
մոտ էյի ուշաթափության: Մեր անքուն դիշերների
լարվածությունն իր աղդեցությունն ունեցավ: Ինձ
թվաց, վոր յեթե յես հրաման տամ «կրակ» և հրանետը
հրաժարվի գործելուց, ապա այդ հարդե խրտվիլակները
կատաղի ձայնով կներխուժեն ամրությունը ու կձգմեն
բոլորին, կկոտորեն և կպարեն մեր աճյունների վրա:
Յեվ — ո՛հ, հրաշք — կրակի հոսանքներն այրեցին
նրանց բոլորին: Նրանք վառվում էյին, ճարճատում,

և դարձահոտութիւնը ծածկեց արեւը, սաւայն դա մեզ թվում էր անուշահոտ բուրմունք: Յես քայլում էյի սև, դալարված հարդյա մարմինների վրայով, նրանք գլորվում էյին դրոհային սանդուղքներից, նրանք թափալվում էյին փոսերում, յես անցնում էյի նրանց միջով, ինչպես հնձվորը հալաքած հունձից հետո:

Այն ժամանակ մենք կրկնեցինք փորձը և կանչեցինք բժիշկներին: Նրանք նայում էյին չռած աչքերով, և յես նրանց միմիայն մեկ հարց տվի. «Բալակա՞ն ե արդյոք այս գենքի ներգործութիւնը, փորպեսդի շարքից դուրս հանի հակառակորդի գինվորներին»:

Բժիշկներից մեկը ծիծաղեց, իսկ մյուսն ասաց, թե վոչինչ ավելի սարսափելի նա չի տեսել իր կյանքում — և այն ժամանակ մենք բոլորս ել սկսեցինք ծիծաղել...

Գեներալը թեթև կերպով շարժեց ուսերը:

— Ինչպես եր պահում իրեն ձեզ հանձնաբարձված ինժեներ Մորիցը:

Շտարկեն մի անսպասելի թուլութիւն գդաց: Նա հասկացավ, վոր գեներալը զժողո՞հ ե նրա վերամբարձ, չափից դուրս վերացական բացատրութիւնից և վերսուղարձնում ե նրան դեպի յերկիր:

— Ինժեներ Մորիցը, — ասաց Շտարկեն, — իրեն պահում եր վորպես որինակելի հայրենասեր: Նա ինձ խորհուրդ տվեց գործածել թանձր յուղ, կապույտ յուղ՝ քարածուխի խեթի և քարածուխի յուղի խառնուրդը, քանի վոր դա այրվելիս տալիս ե շատ լավ բոց և շատ մեծ ծուխ, վորը վախեցնում ե թշնամուն...

— Իսկ ի՞նչ գաղի ոգնությամբ դուք նետում եք կրակի հոսանքը:

— Մենք վերցրինք բորակածինը: Թթվածինը պայթեցրեց մեզ մոտ չորս ապարատ: Նա անպետք ե: Մտացրած ոգը նույնպես հնարավոր չեղավ ոգտադործելու: Մեր միտքն աշխատում եր ավելի ու ավելի: Ինժեներ Մորիցն ասլրել ե Աֆրիկայում: Նա ինձ պատ-

մեց, թե ինչպես նեղրերն հրդեհում են չորացած խոտը, և այրում վողջ տափաստանը: Յերբ հրդեհն անցնում ե, նրանք հալաքում են մեծ քանակությամբ խորովված վորսը, և ուտում: Դրանից հետո յես հնարեցի ներգործության մի նոր վարիանտ հրանետի կիրառումով: Վայրը, վորտեղից անցնում ե հակառակորդը, դրոհից առաջ վոտոգվում ե հրավառ յուղով, և յերբ դրոհողների շարքերն անցնում են այնտեղով, մենք սկսում ենք տեղալ նրանց վրա հրանետի կրակը, ամեն ինչ բռնվում ե, և մենք սարքում ենք իսկական հրե թակարդներ, դասավորում ենք հրանետները զիզդապաձե, վորպեսզի թշնամին ընդգրկվի բոլոր կողմերից: Մորեխի նման ճրթճրթացող հակառակորդի գինվորների մարմիններ — ահա կովի նոր յերաժշտութիւնը: Յեւ վերջապես, յերբ կհնչի նոր Սեդանի պատմական ժամը, ձերդ գերազանցութիւն, մենք չենք մոռանա, վոր մեր թիկունքում կարող են գտնվել կեղծ գերմանացիներ, կլինեն ամեն գույնի սոցիալիստներ, պացիֆիստներ և հեղափոխական բանվորներ, վորոնք կարմիր լաթերով դուրս կգան փողոց, վորպեսզի ոգտվեն մեր դժվարութիւններից: Դուք պատկերացնո՞ւմ եք, ձե՛րդ գերազանցութիւն, թե նրանք ի՞նչպիսի մոռութիւն կունենան, յերբ կտեսնեն իրենց առջև իմ հրանետների հիանալիորեն փայլեցրած պողպատը: «Պատրա՛ստ», — հրամանից հետո փողոցները դատարկ կլինեն:

Առաջին անգամ ամբողջ յերեկոյի ընթացքում մի թեթև ժպիտ անցավ գեներալի դեմքով:

— Ի՞նչպես ե կոչվում հրանետների ընդհանուր գործողութիւնը կովի մեջ, — հարցրեց նա:

— Մենք այն անվանել ենք Ֆանգ — Feüerang riff կրակե դրոհ: Դա լավ խոսք ե — Ֆանգ, նա բացատրում ե մեր միտքը և ծառայում վորպես նախազգուշացում:

— Պահո՞ւմ եք արդյոք դուք տանը այդ գործին վերարբերող զծագրութիւններից վորեւէ բան:

Շտարկեն համարյա ուրախ թափահարեց թևերը:

— Վո՛չ մի գծադրական քանոն: Ինչպես դուք հրամայեցիք, ամեն ինչ պահվում է միջնաբերդում:

— Ձեզանից բացի, գիտե՞ արդյոք վորեն մեկը այդ մասին: Ձեր կինը, յեղբոր աղջիկը, աղախինը...

— Այս տանը գիտեն միայն յերկու հոգի՝ դուք և յես:

Գեներալը վեր կացավ և սկսեց շրջել կարխնետում:

— Արդյոք չի՞ թվում ձեզ, հարգելի Շտարկե, — ասաց նա համարյա ընտանեբար, — վոր դա նոր ապամական դարեսկզբի փոքրիկ եպիպոդներին մեկն է:

Շտարկեն ուրախության անսպասելի մակընթացություն զգաց: Դա վոչ միայն հավանություն էր, դա գովասանք էր, ծանրակշիռ, ինչպես չքանչանք: Նա կանգնել էր՝ սեղանին հենած իր մանիշակագույն, կոշտ ու ջլուտ ձեռքը և ժպտում էր, ինքն ել այդ չքանկատելով:

— Իմ գոյությունն արդարացված կլինի, — ասաց նա ինչպես աշակերտ, վոր վերհիշել էր վաղուց մոռացված վայելչադրությունը:

Գեներալը դադարեց շրջել կարխնետում: Նա մոտեցավ Շտարկեյին և նայելով ուղիղ նրա աչքերի մեջ՝ ձեռքը դրեց նրա ուսին և այդպես կանգնեց մի րոպե: Հետո նա կամացուկ վերցրեց ձեռքը, գեմքին լրջություն տվեց, այնպես վոր նրա ցինկե վոզջ պրոֆիլը փայլեց չոր տապով, և ասաց.

— Բանակի դերագույն չեֆն հետաքրքրվում է ձեր փորձերով:

Նրանք նորից նստեցին բազկաթոռում և ամբողջ մի ժամ զրուցում էին:

Նախասենյակում Շտարկեն ինքն ոգնեց գեներալին հագնելու շինելը: Գեներալը կանգնած էր ինչպես մի լուրջ մանեկեն, չհասկացող վոչ մի կատակ և կյանքի վոչ մի դեպքում չթուլատրող իրեն հետ կատակելու: Յեվ այնուհանդերձ նա կատակեց: Մատի չարժուժով նա մոտ կանչեց Շտարկեյին և, կարծես թե տատանվելով ու ջանալով ամենամեծ անկշռելիու-

թյունն հաղորդել իր խոսքերին, ասաց համարյա թե անփուլթ.

— Հա՛, իմիջի ալուց, ձեր յեղբոր աղջիկը պետք է դադարեցնի իր ծանոթությունը Երնեստ Աստենի հետ: Մենք չենք ուզում այդ մտերմությունը: Յեվ հետո մեզ մոտ կան տեղեկություններ...

5. ՏԵՍԱՐԱՆ ՄՈՒՐԵՐՏԻ ՄՈՏ

Պարնանային քաղաքը տարածվել էր նրանց առջև: Բաղաքում դարձան եր: Պատուհանում, հինգերորդ հարկի բարձրությունից դա թվում էր համոզիչ: Այնտեղ, քաղաքում կանգնած էյին սուր զանգակատներ բարի զանգակներով, բարի վոստիկաններ, վոր ճանապարհ էյին ցույց տալիս, այնտեղ ապրում էյին բարի քաղաքացիներ՝ խմող և չխմող, ավտոները մտերմաբար սուլում էյին, պարկերն առաջարկում էյին զրոսնել իրենց ծառուղիների մայիսյան կանաչում, բաղմաթիվ լրագրներ գրանցում էյին բարի կյանքը, Պրուսայում բարի կացիներով ու վոր գլուխն էյին կրում...

Երնան հեռացավ պատուհանից: Սենյակը լցված էր քաթանով, թղթապանակներով, նկարներով, դանազան գույնի թղթի կտորտանքով և ներկերով: Ներկեր տյուրիկներում, ներկեր նկարչատախտակի վրա, ներկեր հատակին ճզմված, ներկեր անավարտ ետյուլների վրա, — այդ բոլորը նա զգում էր վորպես վոչ բարի, ուստի և մտերիմ սկիզբ: Ներկերը չարաբաստիկ էյին, սենյակը չարաբաստիկ էր, Ալիդան չարաբաստիկ էր:

Ամենաչարաբաստիկ և աչք գրավող առարկան — մեծ, սպիտակացրած քաթանն էր, վոր շնչում էր արվեստին ծառայելու պատրաստակամությամբ, բայց չէր ոգտագործված վարպետի կողմից: Այդ դատարկ քաթանը՝ միայնակ իր մարմնավորված լինելու ծարավով՝ իր գորչ յեղբերով ցցվել էր գունավոր բծերով

աշխուժացած սենյակում: Բացի այդ, նա գրված էր սև մոլ՝ բերտի վրա: Երևան նայում էր նրան վորպես բարեկամի: Այդ քաթանը նմանում էր նրա՝ ապագայի մասին ունեցած խոհերին: Պատրաստի բնավորությունըն սպասում էր գործադրության: Ո՞ւմ ձեռքումն էին վրձիններն ու ներկերը: Ո՞ւմ: Երևան շոյեց անհարթ գործվածքը:

— Ինձ տարորինակ է թվում, — ասաց նա, — վոր այսպիսի դարնանային յերեկոյին յերկու մարդ հսկայական քաղաքում չեն կարողանում խույս տալ պետական վատ աչքից: Յես չեմ ուզում, Ալիդա, վորպեսդ իմ հետեից փողոցներով քայլի մի մարդ, վոր չի կարողանա ասել վոչինչ մարդկային, յեթե յես մոտենամ նրան և հարցնեմ. «Ո՞վ ձեզ իրավունք տվեց հետևելու ինձ»: Յես վախենում եմ, վոր նրանք ամենուր հիվանդացել են լրտեսացավով: Յես հավատացած չեմ, վոր այնտեղ, ներքևը յերկար բացակայելու համար ինձ չի անիծում վոստիկանության մի այդպիսի մեքենայական ծառա, վորը մեխանիկորեն տեղափոխում է վոստքերը և մեխանիկորեն մտքումը պահում իմ շարժումները: Այդ սկավեց այն որից, այն յերեկոյից, յերբ դու ընդհարվեցիր հորեղբորդ հետ, և քո համառությունը պատժվեց տարորինակ կերպով — յես ստացա մի ստվեր: Ի՞նչ են ուզում նրանք ինձանից:

— Երևա, ուրախացիր: Այժմ ուրախացիր: Դա դատարկ բան է: Նո՛ւ, պետական աչքի ինչի՞ն են դու պետք: Կամ դուցե դու հասարակարգի մշտական տապալուդ ու բողոքող ես, պահածոների հին տուփերից իրոք ումբեր չինող, ինչպես ուսաները կամ բուլղարները: Այդ դեպքում խոստովանիր և ցույց տուր, թե ինչպես է այդ արվում, և յես քեզ համար կներկեմ այս տուփերը ծովապուրի կամ ծիրանի դույնով: Դե՛հ, ուրախացիր, տես, ինչ գեղեցիկ գվարդիական ե...

Նա բռնեց պատատից դուրս հանած, գունավոր մատիտով պատկերած նկարի ծայրից: Նկարն անաւարտ էր: Ահագին սաղավարտով գվարդիականը

նայում էր հսկա միադիտակում, վորի ներքևի ափը նեցուկ էր տվել չոր, անարյուն շուրթերին, նայում էր իր լաքած յերկարաճիտք կոշիկին նստած միջատին: Նկարի միտքն այնքան էլ հասկանալի չէր:

Այստեղ Ալիդան նկարը շրջելով՝ սկսեց քրքշալ:

— Յես հիմա հիշեցի մի այդպիսի յերիտասարդ սպայի, Շրեկֆուս տարորինակ ազգանունով: Ինձ նրա հետ ծանոթացրին ձմեռը մի ընտանիքում: Նա ճանապարհորդելիս՝ անցել էր այստեղ, ուր նրա ազգականներն ապրում են մեզանից վոչ հեռու: Նրա վրա ամենքը ծիծաղում էյին, բայց զգուշորեն, և նա չփոթվեց, յերբ ծանոթացրին մեզ: Հետո ինձ պատմեցին նրա չփոթության պատճառը: Նա այն սպաների թվից էր, վորոնց մի ժամանակ զորախաղերին իմ հորեղբայրը ջրել էր վոտից մինչև գլուխ՝ քստ սովորության զինվորների փոխարեն զործի դնելով հրչե՛կներին: Դու պատկերացնո՞ւմ ես այդ փայլուն, ինքնաբավական, հպարտ ուղմիկներին, թրջված ինչպես հավ: Նրանք ամեն ժամանակ ասում են՝ «յերկաթե խաչ, յերկաթե զինվոր», բայց նրանք կարող են ժանգոտվել իմ հորեղբոր դուշից: Խոստովանիր, վոր նա յերբեմն դուրի չէ հեղնանքից: Յերբ յես պատկերացնում եմ այդ լեյտենանտին ժանգոտված ինչպես մեխ, շարունակ ծիծաղս է գալիս:

— Նո՛ւ նստի՛ր, Ալիդա, սպասիր, մի՛ ծիծաղիր, մի ծիծաղիր... Նու մի՛ ծիծաղիր: Ինձ մահու չափ զգվեցրել է այդ զինվորականությունը: Յես յերբեք զինվոր չեմ դառնա: Իր ժամանակին ինձ ազատեցին հիվանդության պատճառով: Վիրավորական է, յերբ բոլորը ծիծաղում են և չեն վախենում այն անեղությունից, վորոնց յուրաքանչյուրը կարելի չէ պարզևատել իրիտիղմի համար: Այդ Շրեկֆուսը մեր գերմանական զորանոցային իմաստունների նման յերեկ մանական զորանոցային իմաստունների նման յերեկ սիրում էր ասել, հարյուր անգամ իրար հետևից, վոր սկզբում յեղել է հայր-աստված, իսկ հետո վոչինչ, այնուհետև՝ հեծելազորային սպան, իսկ հետո վոչինչ,

այնուհետև՝ նրա ձին, իսկ հետո վոչինչ, իսկ հետո վոչինչ, իսկ հետո վոչինչ, և այնուհետև՝ հետևակի սպան։ Ո՛ր, յերևակայության աղքատություն։ Յես տուամ եմ մաքրած կոշիկների այդ փայլը, այդ զրնգուն խթանները, այդ պրկված համազգեստները։ Յես համանորեն ի ծնե հերոս եմ նորահար դավադրության հեռուորդների շարքից։ Յես ազատ եմ յեկեղեցուց, կրոնից և պետությունից։ Քեզ արգելել են ինձ հետ տեսնվել։ Յեվ այս բանում յես համառացած եմ, վոր այդ նրանք են աշխատել։ յես չգիտեմ, սակայն այստեղ ևս անկարելի յեղավ առանց այդ բարձրակոճակ բաճկոնների։ Նրանք բոլորն իմատակում են, խելքերին զու տալիս՝ խտրելով ամբողջ յերկիրը։ Մենք վոչինչ չգիտենք նրանց իսկական քաղաքականության մասին։ Նո՛ւ, սատանան տանի նրանց։ Մենք մեր գործերն ունենք, և ահա այդ ել պետք է պարզենք, Ալիդա։ Դու կմեկնես, քեզ ուղարկում են Պոմերանիա՝ դիտելու սպերը և ավազակությունը, վոր մանկությունից դու չես տեսել։ Մեծ արհամարհանք է, այնպես չե՞։ Իմ հրաշալի պրոֆեսորն ամեն ոք խայթում է ինձ։ Նա կատակով է խոսում, ինչպես վայել է խոսել ցածր զարգացողության անհատի հետ։ Նա ասում է. «ձեզանից դուրս կգա վատ գիտնական, վատ վիճակագիր, դուք չափից դուրս շատ ավելորդ բաներ եք գրում լուսանյութերում, դուք չափից դուրս շատ եք կարդում տողերի արանքում։ Ձեզ պահասում է սառնարյունությունը»։ Այո՛, ինձ պակասում է սառնարյունությունը, և, բացի այդ, ամեն ինչ իրար է խառնվել։

— Երևա, յես ինքս ամբողջ որերով մտածում եմ, թե ինչին կհասցնի այս։ Յես վատ նկարչուհի յեմ, բայց հավատում եմ, վոր աշխարհում ազատ է միայն արվեստը։ Մի վարպետ ասել է, վոր նկարիչը պետք է

նկարի վոչ միայն այն, ինչ տեսնում է իր առջև, այլ՝ ինչ նա տեսնում է իր ներսում։ Իսկ յեթե իր ներսում վոչինչ չի տեսնում, ապա թող թողնի նկարել այն, վոր իր առջևն է։ Այլապես նրա նկարները կհիշեցնեն շիրմաներ, վորոնցով թաղցնում են հիվանդներին, իսկ յերբեմն ել՝ մեռելներին։ Ինքը, այդ վարպետը նկարում եր միմիայն մաքուր և սառն լանդշաֆտներ։ Ամենուր իր նկարներում նա՛ լեռնային տեսարանով պարկերում, և՛ հյուսիսային ծովի ափին, և՛ վաղորդյան դաշտում — նա տեղավորում եր մի կանացի Փիգուրա, նիհար ու կռակա։ Այդ կինը կանգնած է նաև նկարչի արվեստանոցի պատուհանի մոտ, իսկ պատուհանում յերևում է նավի կայմը։ Յեվ նա շարունակ նայում է, միմիայն նայում, այնքան մեղմ և այնպիսի հարգանքով, վոր բնության մեջ վոչինչ չի կարելի փոխել, և դրանից է գուցե սառնությունը, քնքշությունն ու թախիծը իր անկարողության գիտակցության հանդեպ։ Իհարկե, մեր արվեստը միշտ մի տեսակ կանացիական է, բայց և այնպես նա ազատ է. յեթե դու նկարիչ լինեյիր, չեյիր զգա քեզ այդչափ միայնակ։

— Բայց, սիրելիս, նրանք ինձ կստիպեյին նկարել և գեներալներ և այն, ինչ իրենք են ցանկանում։ Վոր արվեստը գեղեցիկ է, խորը և կանացիական — այդ ճիշտ է, բայց վոր արվեստն ազատ չէ — այդ նույնպես ճիշտ է։ Ամենամեծ ստրկությունը — դա հենց այն ըստըրկությունն է, յերբ դու ապրում ես նրա մեջ և նրան չես տեսնում։ Քեզ թվում է, վոր արվեստը ազատ է, սակայն չե վոր այդ քեզ թվում է, և դա յելք չէ։ Չըխոսենք այդ մասին։

— Երևա, յես քեզ չեմ ուզում կորցնել։ Յես այժմ խաբում եմ ամենքին՝ սկսած հորեղբորիցս և վերջապես մոտիկ բնկերներով։ Մեր Փոլկը, վոր այդչափ պերճորեն խոսում է Փրա-Անժելիկոյի և պրեռաֆայելիտների մասին, նկատել է, վոր յես փոխվել եմ, վոր յես բոլորովին փոխվել եմ, և նա ակնարկեց, վոր դա

քո ազգեցությունն ե։ Սակայն փոխվել ե և մի ուրիշ բան։ Յեւ վոչ միայն իմ և քո մեջ։ Հորեղբորս տանը յերբեք այդքան զինվորականներ չեն յեղել, ինչպես այժմ։ Չե՛ վոր նա իսկապես հեքիաթներ չի պատմում նրանց։

— Մի անգամ ևս վերանայենք ամեն ինչ սկզբից։ Յես գնում եմ Բերլին, դու՝ Պոմերանիա, սակայն յերկու ամսից հետո, յերբ դու կվերադառնաս, մենք կհանդիպենք և այն ժամանակ մենք կփախչենք լեռները վողջ ամառը։ Ի՛նչպիսի ուժ են լեռները։ Ի՛նչպիսի հզորություն են լեռները։ Յես այնպիսի արյունաբերութիւններ ցանկացնում եմ, ինչպես այդ վոմանց թվում ե։ Մենք կփախչենք լեռները։ Դու կսկսես նկարել։ Յես կմագրւցնեմ ժայռերով, յերեկոյան մենք կնստենք լեռնցիներով լի լեռնային սքանչելի պանդոկում, ուր կախված են յեղջերույի յեղջուրները, ծխամորճներ ու զենքեր, առարկաներ՝ լի պարզությամբ և բնական ազնւությամբ։ Տիրուհին վողջուհում ե բոլոր ներս մտնողներին իր «grüßgott» — ով, ամեն մեկին դարեջուր ե մատուցում, ասելով՝ «անուշ արեք»։ Մենք կքայլենք ձյուններով, վորտեղից անցնում են միայն թեթև այծերը, իջնելով բարձրունքներից՝ մենք կդիտենք հսկայական ապառաժները, սառցադաշտերը, մեր մոտով կզահավիժեն ձյունակուլտերը՝ ձյան փոշի թափելով մեզ վրա։ Մեր վողջ արյունը, մեր վողջ որդանիզմը կնորոգվի այդ զարմանալի վաննայում։ Չե վոր այստեղ կարելի չե խեղդվել ողի բացակայությունից։ Ամեն ինչ ծնված ե գաղտնի տենդային տապով։ Վերջերս յես պատահեցի մի ինչ վոր անգլիացի տուրիստի նա մոլորվել եր և հարցնում եր ճանապարհը։ Նա հիանալի գերմաներեն եր խոսում, և մենք սկսեցինք զրուցել։ Տուրիստն ասաց. «Ա՛խ, ինչ սքանչելի յե ձեր յերկիրը։ Ինձ դուր ե գալիս Բավարիայի արձանի գլուխը. ի՛նչ խոշոր, մաքերից ազատ գլուխ ե... Նրա վրայից յերևում են ահռելի հորիզոններ...»

— Դու վատ գերմանացի յես, — վրդովմունքով ասաց Ալիդան։ — Յես համենայն դեպս զինվորական բնտանիքից եմ, և այդպես չի կարելի անպատիժ կերպով խոսել։ Մենք բոլորս ծնվել ենք այս յերկրում և վորեւե կերպ այդ զգում ենք։ Դու մոխիր ես դարձնում ամեն ինչ։

— Սպասիր, Ալիդա, սպասիր. այդ անգլիացին նաև ասաց. ինձ դուր են գալիս ձեր հսկայական խառնութիւնները, վորոնք գնում են անանկացած փոքր Փիրմաների ապրանքները և նետում են վաճառասեղանների վրա իրեր՝ զարմացնող իրենց լավորակությամբ և եփանդությամբ։ Յես հիացած եմ ձեր կարողությամբ՝ շահել մարկան մարկայի վրա դուռ տնային ճանապարհով։ Նա ասաց. յես հավանում եմ Հռենոսը. նա իսկապես նման ե գինու չիթին մայրամուտի ժամանակ, բայց ձեր բազմաթիւ գեներալների լամպասներն այնուամենայնիւ ավելի գեղեցիկ են։ Ամենից շատ յես հավանեցի մի արձան Բերլինում։ Այնտեղ նստած ե ձիու վրա, բարձրում, ինչպես սահմանված ե, կայսրը, և նրա վոտքերի մոտ կա չորս առյուծ։ Յեւ առաջին առյուծն ուղղված ե դեպի Ֆրանսիա, նա գրկել ե ռազմական ավարի շեղձակույտը և մարտականորեն ինքն իրեն լիզելով՝ դիտում ե հեռուն, յերկրորդ առյուծը, ամենից հանդարտը կիսափակել ե աչքերը, վորովհետև նայում ե դեպի հարավ — Իտալիան դեռևս դաշնակից ե, այնուհետև պառկած սլավոնական առյուծը՝ ուղղված դեպի արևելք։ Ո՛ր, միտեր, այդ ինչ հրեշափոր տեսարան ե։ Առյուծը կատաղած ե, կարծես թե նրան կարիճ ե կծել։ Նա չի կարողանում հանդիսանալ իր տեղում։ Յեւ չորրորդ առյուծը՝ պատրաստ հանկարծակի թռիչքի, — չվերափորվեք, ասաց նա, — անհանգիստ նայում ե մեր կողմը։ Յեւ նրա աչքերը մեր ջրանցքի վրայով նայում են Անգլիային։

«— Ինչո՞ւ յեք դուք հավանում այդ, — հարցրի յես։

«Նա թոթվեց ուսերը և մտերմաբար զարկեց իմ ծնկին: Յես յետ չքաշվեցի, ինձ համար բոլորը մեկ եր:»

«— Ինչո՞ւ յեմ յես այդ հավանում: Վորովհետեւ համենայն դեպս դա անկեղծ ե:»

«— Յե՞վ դուք հավատում եք, վոր այդ առյուծներն յերբեկեցե թռչելո՞ւ յեն միանդամից:»

«— Յեթե ցանկանա սանձահարողը: Յե՞վ հետո մի՞ մոռանաք, վոր ամեն մի յերկրում կան իրենց առյուծները. նրանք առայժմ լվեր են վորոնում, սակայն դա նրանց հիմնական գրադմունքը չէ»: Յե՞վ տուրիստն անհայտացավ մշուշի մեջ, բայց ի՞նչպիսի մշուշ, ի՞նչպիսի մածուցիկ մշուշ մնաց նրա խոսքերից հետո: Ալիդա, ինչո՞ւ յես դու այդպես նայում:»

«— Յես քեզ չեմ հասկանում, Երնա: Այդ բանը կարող եր ասել ոտարերկրացին, բայց դու... մի՞թե ամեն ինչ պարզ ե այդպես: Ձե վոր ինքդ ես սովորեցրել ինձ, վոր կյանքը գումարվում ե շատ բարդ մասերից: Յես վախենում եմ, վոր դու խճճվել ես: Յես վախենում եմ...»

«— Ինչի՞ց ես վախենում, Ալիդա:»

Ալիդան վերցրեց իր թիկնոցը և ձգեց ուսերին: Նա ծածկում եղ գլխարկը:

«— Յես վախենում եմ, վոր շատ եմ մտածելու Պոմերանիայում, և միայն այն ժամանակ ինձ համար պարզ կլինի վերջավորությունը: Հիմա յես վոչինչ չգիտեմ:»

«— Դու չես գնա Պոմերանիա, — ասաց Երնան՝ լուսնոտի պես գունատվելով: Դատարկ քաթանը ծիծաղում եր նրա վրա իր ծառայելու պատրաստակամութեամբ: Բայց ո՞ւր ե վրձինը: Ո՞ւր են ներկերը: Դորձ քաթանը վոչնչով չեր կարող ոգնել: — Դու չես գնա...»

«— Դու այդ չես կարող արգելել ինձ, — ասաց Ալիդան, — իսկ հետո նայիր ժամացույցին. յերեւի ար-

դեն յոթն ե, շուտով կգա Ադոլֆը, — նրան անհրաժեշտ ե արվեստանոցը, և դու ել այսօր յերեկոյան գրադարան եյիր շտապում:»

«— Ալիդա, — ասաց նա, բայց Ալիդան կանգնեցրեց նրան:»

«— Սիրելի Երնա, լսի՛ր: Ինձ թվում ե, վոր քեզ ևս պետք ե հանգստանալ բազմաթիվ մտքերի ծանրությունից: Դու, ներկայացուցիչը գերմանական ինտելիգենցիայի, կամքը դատարարակելու որինակ պիտի վերցնես թեկուզ հենց...»

«— Թեկուզ հենց լեյտենանտ Շրեկֆուսից, ուզում ես ասել. թրջված լեյտենանտ Շրեկֆուսից, վոր ուզում ե չոր ձևանալ, մշտապես չոր, թեկուզ ինչ ել լինի՝ չոր:»

«— Թեկուզ և այո, — ասաց Ալիդան կարմրելով: — Յես կարծում եմ, վոր դու հոգնեցրել ես նյարդերդ, քեզ ամեն տեղ ուրվականներ են յերևում: Յես այլևս չեմ հավատում քո լրտեսներին: Իսկ այժմ թող ինձ:»

Նրանք լուռ իջան սանդուղքով: Յերբ դուրս յելան փողոցի դռնով, հարևան մայթի վրա կանգնած մարդն անհարմար կերպով գլխարկը քաշեց աչքերին և սկսեց լուցկի վորոնել գրպանում: Նրա սիգարն իսկապես չեր ծխում:

6. ԶԱՐԿԻՉԸ ՅԵՎ ԿՈՃԱԿԸ

Յերբ Ալիդան արթնացավ, առաջինը, վոր ընկավ նրա աչքին, զարկիչներ, տենիսի դեղին զարկիչը՝ կախված առջևի պատի վրա, սեղմիչների մեջ: Զգերի կարմրավուն թեկերը փայլվում եյին արևի տակ: Ուշ եր արդեն: Այգում յերգում եյին թռչունները: Տաք ողջ թեթևակի չարժում եր վարագույրը:

Նրա աչքերում դեռ պատկերվում եյին Պոմերանիայի տեսարանները, թեպետ մի ամիս եր անցել, ինչ նա վերադարձել եր այնտեղից: Գիշերները նրան հետապնդում եյին դորձ ավազածները սոսիների ծա-

ծանձող կատարներով և հսկայական գորշ ակիքները, վորոնք վազում էին դեպի լայնածավալ, տրտում ծանծաղուտները: Ալիքների վրայով յերբեմն սլանում էին զրոսանալերը: Հեռվում կախ եր ընկել շոգենավերի ծուխը: Յեվ յեթե սոսիի ճյուղքերի արանքով նայել ակիքների գորշ փայլարին, ապա նրա մեջ ցրվում երմի դեմք: Յեվ այդ դեմքը վոչ մի կերպ չեր հավաքվում մի ամբողջության մեջ, շարունակ բացակայում եր մի վորեւե անհրաժեշտ մանրամասնիկ: Յեվ այդ դեմքը — Երնա Աստենի դեմքն եր: Յախտ-կլուրում յերկու ծովագնաց տարբեր կերպով նման էին նրան: Մեկը նրա քայլվածքն ուներ, մյուսը՝ աչքերն ու կզակը, իսկ գուցե այդ միմիայն թվում եր:

Ալիզան նստեց մահճակալին՝ դիտելով զարկիչը: Քուներ թողել եր նրա գլուխը և ազատել աչքերը: «Կար չկար մի աղջիկ, — ասաց, — աղջիկը փչացնում եր ներկերն ու գրա հետ միասին իր մոտիկ մարդկանց կյանքը: Նա չեր կարողանում ինչպես հարկն ե ուրախանալ, և նրան բացակայում եր բնավորութուն: Յեվ այդպես ժամանակն ընթանում եր, և վոչ վոք չեր կարեկցում աղջկանն ինչպես պետք ե... Սակայն արդեն ուշ ե», — ասաց նա:

Ամառային որն ապրում եր թիկունքում այդ անդրադարձային տնակի, դեպի ուր նա յերջանիկ փախուստ եր տվել քաղաքի իրարանցումից: Ի՞նչպիսի անմիտ իրարանցում քաղաքում: Մի՞թե այնուամենայնիվ նրանք կպատերազմեն: Ալիզան կրկին փակեց աչքերը: Նա տեսնում եր յերեկոյան տեսնիսային հրապարակը, վեր ու վայր թռչող ճերմակ, փափուկ, առաճդական խաղաղնակները, չոր ռեֆերիին սպիտակ փոքրիկ սանդուղքի վրա: Ողորդակներն ավելի արագ էին թռչում, մարդիկ գոչում էին նստարանների վրայից, նա յետ եր մղում խաղաղնակները՝ չհոգնելով վազել կավիճի քառակուսիների միջով, անչարժ ցանցի առջև: Հետո մոտեցավ պրոֆեսոր Փաբերը և ասաց իր ուրախ ձայնով, վորից միշտ ուզում ես կծկվել:

— Ձեզ շատ կապի դժուրթյան քրոջ կոտորածը, այո՛, այո՛, — այդ ասաց նա, և նրա սպիտակ մուճակները փայլում էին կավճյա թղթի նման:

Հորեղբայրը մեկնել եր Բերլին, արդեն մի շաբաթ ե չեր վերադառնում: Պրոֆեսոր Բուրխարդտն Իտալիայից գրում ե կնոջը, թե ուսումնասիրում ե նորմանդական ամրոցները Սիցիլիայում և թե նրա համար այժմ պարզ ե, վոր գերմանացիների ձգտումը դեպի հարավ միշտ յեղել ե պատմական անհրաժեշտութուն:

Երնա Աստեն — ինչո՞ւ զարկիչի վորոշակի վանդակի միջով Ալիզան չի տեսնում նրա դեմքը: Միայն յերեք համառոտ նամակ այդ ամբողջ ժամանակամիջոցում: Վո՛չ, Ալիզան չգնաց լեռները: Երնան միայնակ ե լեռներում: Նա մեն-մենակ ե իր սառցադաշտերի, ժայռերի, ձյունների, լեռնցիների հետ և գրում ե, վոր ինքը դժբախտ ե: Իհարկե, նա կգա:

Ալիզան գնում ե լվացվելու: Ամառանոցը միանգամայն դատարկ ե: Անցնելիս՝ նա բաց ե անում դեպի ճաշարան նայող պատուհանը: Պատուհանի առջև, ճյուղքի վրա նստած ե կապույտ յերաշտահավը: Այդին բոլորովին դատարկ ե: Այդեպանը մի վորեւե տեղ փոփրում ե ածուները: Պառավը չուկա յե գնացել: Բեկին թողել են քաղաքում: Նա հիվանդ ե: Նրա համար բժիշկ էին հրավիրել: Մի՞թե այնուամենայնիվ նրանք կկռվեն: Փողոցում մարդիկ միմյանց ձեռքից քաշքշում են լրագրները: Լրագրները լցրել են ամեն ինչ: Ալիզան նստում ե պատուհանի մոտ, կաթ ե խրմում և ուտում համբուրգյան բուտերբրոդներ: Նրան սովորեցրել էին յախտ-կլուրում՝ մի կտր սպիտակ բուլկի, մի կտոր չվեղական հաց, մեջտեղը յուղ ու պանիր:

Ինչ վոր մեկը շրխկացրեց այդու դռնակը: Ալիզան լսում ե արագ քայլեր ճրթճրթացող խիճի վրա: Կատաղած մարդը պոկում ե պատշգամբի դուռը, այնպես վոր աղմուկը տևում ե մի ամբողջ հավիտենականութուն: Պամերանյան գորշ ակիքներում աճում ե մի

դեմք: Ալիդան թափեց կաթը ձեռքերին: Նա դեմ է վազում, և սենյակում, դատարկ ու ամառային լույսով վողգոված սենյակում կանգնած է մի մարդ: Նա գորշ է ամբողջովին, նա կանաչա-գորշ է վոտից մինչև գլուխ, կարծես կանգնած է ծխի ալիքներում: Ինչո՞ւ յե կանաչ սաղավարտը նրա գլխին: Չե վոր դա զինվոր է: Ի՞նչ է պատահել, վոր զինվորը փոթորկի նման ներս ընկավ տուն, և վոչ վոք չգիտե, թե հետո ինչ կլինի: Ալիդան նայում է այդ դեմքին, վորի վրա բացակայում է ինչ վոր մանրամասնիկ: Սաղավարտն ընկնում է աթոռին, աղմկում, ինչպես դիմակահանդիսային անպետք անհեթեթ բան: Դա Երնան է, սակայն նրա մազերը չկան, նա մաքուր սափրված է:

— Զարկիչը, — ասում է Ալիդան, ինքն ել չիմանալով՝ ինչու.— տեննիսի այդ պարտիաները...

— Մենք սկսեցինք համաշխարհային պարտիան, — ասում է Երնան: — Յես մտածում եյի, վոր յես քեզ չեմ գտնի, յերբեք չեմ գտնի, վոր յես կմեռնեմ ճանապարհին: Ինձ տվել են չորս ժամվա արձակուրդ, իսկ անցել է արդեն... Ինձ համար միևնույն է, թե վորքան է անցել: Կարծես թե յերեք ուր է անցել, մինչև վոր յես քեզ գտա...

Յեվ այն ժամանակ նրանք այլևս խոսքեր չեն գրանում: Նրանք նրանց չեն ել վորոնում: Ալիդան ձեռքերը գցում է նրա ուսերին, և նրա մազերը հպում են անձանոթ հագուստին, և նրա կուրծքն է մեխվում կոծակը, հաստ կոծակը, վոսկի արծիվով ահագին կոծակը, ծածկված ու կարված հաստ, կանաչ, անիծյալ մահուղով:

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1. ՖԱՆԳ

Շտարկեն յերբեք, նույնիսկ մանկության օրերից, չէր սիրում անտառը, բացի այդ՝ նա առում էր փայտե շենքերը նաև նրա համար, վոր հրդեհի ժամանակ նրանք չառ շուտ եյին այրվում, և նրա՝ կրակի հետ հին մաքառողի բոլոր ջանքերն ու գիտությունն իզուր եյին անցնում: Ծիչտ է, անտառը, վորտեղ նա այժմ գրանվում էր, քիչ էր նմանում սովորական անտառի:

Ամենից առաջ ծառերը կատարներ չունեյին: Կատարներն ընկած եյին գետնին: Նոնակներով ձեղքված բները և կոտրված ճյուղերը մանավանդ մայրամուտին այնքան տխուր եյին, վոր նրանց նայելիս՝ մարդու սիրտ էր կծկվում: Նրանք իսկապես իզուր եյին տուժել: Ահագին բացատներ եյին գոյացել այնտեղ, ուր մի քանի ժամ անընդհատ պարում եյին ծանր հրետանու արկերը: Անտառի մի մասն ոգտագործվեց խրամատների հագուստի և բլինդաթների համար: Թփերը խճճված եյին յերկաթալարով: Վոչ մի հատիկ թռչուն չէր յերգում, և չէր գոռում վոչ մի դադան:

Մի քանի հազար մարդիկ թաղնվել եյին անտառում, հողի մակերեսից ցած, վոմանք այդպես ել չեյին բարձրանում իրենց բներից: Դրանց փոխարեն հայրենիքում ստացվում էր մի նեղ թղթիկ համառոտ տեղեկությամբ՝ «Պատվի դաշտում», սակայն այդ դաշտ չէր, դա համենայն դեպս անտառ էր:

Յեվ այդ անտառում կանգնած էր Շտարկեն, մեն-

մենակ իր համաշխարհային իդեալով: Այդ իդեալն ա-
վելի լայն եր, քան անտառը և բարձր, քան ամենա-
բարձրահասակ գրենադերը: Նա լցնում եր Շտարկեյի
հոգին մի առանձին բոցով, յերբ նա զիտակետից նա-
յում եր անտառի խորքը և սպասում այն ըսպելին,
յերբ նա, Շտարկեն կդառնա ժողովրդական հերոս:
Կոլումբոսն իր խեղճ տաշտակի տախտակամածի վրա
կերևար Շտարկեյի կողքին, ինչպես մի պարզամիտ
գյուղացի, վորը պետք է խաբեր մերկ վայրենիներին,
մինչդեռ, յերբ Շտարկեյի առաջ, հիսուն մետր տարա-
ծության վրա թաղնված էյին կայդերի թշնամիները՝
վոտից մինչև գլուխ գինված, և նա այնպես կանի, վոր
նրանք հոտի նման կվազեն՝ ամեն ինչ մոռանալով և
սիրտ չանելով դիմադրելու: Շտարկեյի Ամերիկան —
դա Փարիզ տանող ուղին եր, դա վերջն եր պատերազ-
մի՝ մինչև տակն այրված: Յեվ պատերազմը կայրի
նա, Շտարկեն և ուրիշ վոչվոր:

Նրան այնքան ել բուռն կերպով չեյին հավատում
զանազան շտաբներում, վորտեղ նստած էյին շատ
բարդ հանելուկների սովոր մարդիկ: Մի՞թե նրանց
կզարմացնես վորեւ բանով: Յեվ հետո այնքան ան-
հաջող գյուտարարներ են յեղել: Միակ զենքը — ազնիվ
նռնակներն են, հաղարավոր նռնակներ, միլիոնավոր
նռնակներ, ահա ռազմադաշտը պայթեցնող խկական
գութանները: Վո՛չ, նրան մինչև վերջ չեյին հավա-
տում:

Շտարկեն ուղղվեց: Անտառի մութ քառակուսիներ-
ում փայլատակեցին թեք ճառագայթներ, միացան և
նորից փայլատակեցին առանձին: Այդ հետախույզներն
էյին վերադառնում:

Նեղլիկ փոսերում, պատվարի առաջ, յերկաթալա-
րի մոտ մարդիկ զբաղված էյին անձայն: Նրանք
խնամքով մաքրում էյին նեղ տարածութունը բեկոր-
ներից, չոր ճյուղերի կույտից, քարերից: Իրենք ել
չգիտեյին, թե ինչի համար ե այդ պետք: Բացի դրա-
նից, ամեն ըսպե կարող էյին նրանց հրացանազարկ ա-

նել: Պատերազմի յերկար ամիսների ընթացքում նրանք
ընտելացել էյին անասնական ապրելակերպին — չորեք-
թաթ սողալուն, փորի վրա ժամերով պռկելուն: Նը-
րանք առնետների պես փորում էյին հողը, շների նման
հողի մեջ թաղցնում, իրենց մթերքները, յեղների պես
կարմիր աչքերով վազում առաջ, վորպեսսպի սվինների
վրա բարձրացնեն այն ամենը, ինչ վոր պատահեր:
Բթացած շարունակական կեղտոտ, ծանր աշխատան-
քից, վախից, վորը չեր թուլատրում ուրիշ մտքեր,
նրանք սողում էյին այժմ պատվարի և յերկաթալարի
միջև և, հոգ տանելով չաղմկել, աշխատում էյին:

— Գամին կխանդարի, — ասաց Շտարկեն:

— Վերջին տեղեկագրով՝ ուժը հինգ մետր է: Այդ
դատարկ բան ե, — պատասխանեց դիտողը:

— Վորպեսզի վոչինչ չլինի՝ պատվարի առաջ, —
ասաց Շտարկեն:

— Այնտեղ մնացել ե միայն յերկու սպանված յեր-
կաթալարի վրա, բայց դա չի խանդարի:

— Նայենք աստիճանները, — ասաց Շտարկեն, —
յերբեք չի կարելի լինել հանգիստ, մինչև ամեն ինչ
չստուգես:

Նա իրեն բռնեց այն բանում, վոր հուզվում ե ա-
վելի, քան նրան թուլատրելի յե: Նրանք անցան խրա-
մատի միջով և ելեքտրական փոքրիկ լապտերներով շո-
շափեցին աստիճանները: Աստիճանները չինված էյին
ուշադիր և ամուր: Այդ աստիճաններով նրա հրետա-
նավորները պետք է գտնեյին փառքի ուղին:

— Ուղղեցեք այս փոքր սանդուղքը, այստեղ կա-
րելի յե սայթաքել, — ասաց նա, և իսկույն բորբոքներն
զգուշորեն, ուժ տալով բահերին՝ սկսեցին կոկել ան-
հարթությունները: Նրանք կարճ թրերով կտրեցին
ցցված արմատները:

Մի քանի մարդ թռան խրամատը: Հողը թափվում
եր նրանց ցեխոտ ուտերից: Նրանք հենց նոր, սողալով,
յերկաթալարերի միջով, մաքրել էյին անցքերը: Նրանց
չինելները թրե յեկած ու կծկված, հիմա ել սեփական

յերկաթալարից պատուժած՝ ներկայացնում էյին մի ամբողջ բազմաչարչար պատմութիւն:

Շտարկեն վոչ մի ուշադրութիւն չդարձրեց նրանց վրա: Մարդիկ նրա պատկերացման մեջ շարունակ յեղել են չափազանց փափուկ մեղրամոմ՝ պետութեան փորձառու ձեռքերում: Յել այդ մեղրամոմից շատ կար, համենայն դեպս բավականաչափ կար:

Այստեղ նա մոտեցավ ապարատներին: Ներկված պաշտպանական գույնով՝ կանգնել էյին նրա սրտի և մտքի զավակները: Նա չոյեց նրանց: Նա հիշեց, թե ինչպէս մի քանի ամիս առաջ ինքը պատահամբ ընկել էր գերիների բնակատեղը: Նրա շուրջը կանգնած և նստած էյին ֆրանսիացիներ, ռուսներ, բելգիացիներ, սերբեր, անգլիացիք: Յածր տախտակամածներն անկարող էյին տեղավորել բոլորին, և այնուամենայնիվ նրանք բոլորն էլ ուզում էյին պառկել, խցկվում էյին միջատների պես՝ լցնելով բոլոր ճեղքերը, և վերջապես տախտակամածները չդիմացան: Ենքը կանգնեցրել էյին շատ կարճ ժամկետում: Տախտակամածները չդիմացան և փլվեցին: Յեվրոպայի բոլոր ժողովուրդները հայհոյելով թարտում էյին մի կույտում: Նրանք մեկը մյուսի յետեից դուրս էյին սողում՝ կույտի միջից և մուսյութեն չփում՝ ջարդված տեղերը: Շտարկեն անտարբեր նայում էր նրանց: Վոչ հայհոյանքը, վոչ տանջալից ծամածուլութիւնները, վոչ տնքոցները չէյին կարող նրան համբերութիւնից հանել: Վերջապես տախտակամածների տակից հայտնվեց մի անգլիացի. յերբ նա վեր կացավ՝ կեղտոտ, փոշոտված, ճմրված, դիտեց վողջ քարուքանդ կառուցվածքը և խայթելով ասաց (նա ավելի շուտ թքեց, քան ասաց), աչքով անելով ավերածութեան վրա՝ Made in Germany:

Շտարկեն յերկրորդ անգամ չփեց ապարատի սառը պողպատը:

Նա այժմ այլ կերպ չէր կարող պատասխանել այդ անպատեյի հիշողութեանը: Ուրիշ ի՞նչ ունի նա յերկու խոսքից՝ կայգեր և ապարատներ: Գուցե Շտարկեն

առհասարակ գոյութիւն չի՞ ունեցել: Խրամատի ծխով լի ոդում, մարդ-սովերների մեջ կանգնած և ինչ վոր բան կապիտանի ուսադիրներով. կենտրոնացած յեռանդ, յերևակայութիւն՝ շուռ տված առարկայորեն, նա չէր նկատում, թե ինչպէս անտարբեր նայում էյին նրան խրամատի մարդիկ իրենց բներից, նա տեսնում էր միայն խավարն անտառի, ուր յերբեմն յերկներանդ կայծակները միշտ գծում էյին միևնույն ծածկադիրը — պատերազմ, պատերազմ, պատերազմ:

Շտարկեն և նրա շքախումբն զգուշ ծխում էյին սիգարները: Նրանք թաղցնում էյին այն, ինչպէս նորակոչիկներ, ձեռքերում և թէքով ծածկում: Այժմ այդ սիգարները մտել էյին պատերազմի բառարանի մեջ, վորովհետև նրանց կարմրավուն, չար, չիկացած լույսի տակ մարդիկ ստուգում էյին մանոմետրերը: Բորտկածնի շէրի ծնկաձև ցցվածքներն անշարժ ու գորշ էյին, և թվում էյին անվնասակար: Նրանց կարող էյին դտնել յերեխաներն աղբի մեջ և խաղալ նրանցով: Այստեղ նրանք համաշխարհային ստատիստների վիճակում էյին: Ամենափոքր անկանոնութիւնը կկործաներ նրանց ամբողջ կարյերան:

— Ստուգենք մեր ժամացույցները, — ասաց Շտարկեն:

Կարմիր փայլը սահեց վեց տպակիների վրայով և համոզվեց բոլոր սլաքների միատեսակ դիրքավորման մեջ: Բոլորն, ինչպէս մի սլաք, բռնել էյին իրենց ուղին, բայց յերբ Շտարկեն իր սիգարը նորից բորբոքեց, սիգարը դիշերից պոկեց մի սպիտակ բիծ, վորի վրա գծված էր կարմիր խաչ:

Կարմիր խաչը վոչ մի առնչութիւն չունեւ. նա նույնիսկ վոչ շատ հաճելի մի ակնարկ էր: Այդպիսի նշանով մարդուն պետք էր իշխանավորական վորեն բան ասել, վորպէսզի նա շատ չհպարտանա իր մենակութեամբ և հրամանատարութիւնից ունեցած անկախութեամբ:

Սիգարը անհայտացավ՝ թնքով ծածկված, և
Շտարկեն հարցրեց սանիտարական յենթասպային.

— Յեթե սառն յուղի կաթիլներն ընկնեն աչքի
մեջ...

— Ճիշտ այդպես, այրված տեղերի սպեղանի և
կոկային...

Շտարկեն կանգնել եր հրանետավորի հանդեպ:
Ի՞նչքան ջանք եր նա թափել այդ մարդկանց, բանվոր-
ների և ծառայողների վրա, վորոնք իրենց խաղաղ
կյանքի ամբողջ ընթացքում չեյին կասկածել, թե
պետք են դալու Շտարկեյի մոռյլ գյուտարարությանը:
Վորքան աշխատանք ե նա դրել, վորպեսզի նրանցից
պատրաստի չղատող, ալիւայլ սովորույթներ մոռացած
ստրուկներ հրանետային ապարատների համար... Այդ
հաջողվում եր վոչ միշտ: Բարձրահասակ զինվորը
կանգնած եր բլինդաթի մոտ, ձգված, կարծես նրան
կեռի վրա կախել եյին ոճիքից:

— Լեյտենանտ,— ասաց Շտարկեն,— ստուգեցե՛ք
սպառազինումը:

Լեյտենանտը լապտերի լույսն ուղղեց ջրալի աչքե-
րով, գորշացած դեմքի վրա: Դեմքը չեր մտել սպա-
ռազինության մեջ: Նա միանգամայն անզեն եր լապ-
տերի այդ դեղնադույն շողի և իրեն հրամայողների սև
ձեռքերի առաջ: Դեմքը չեզոք եր: Յեւ դա պայթեցրեց
լեյտենանտին: Ինչպես աճուրդում հանգիստ մոթմըռ-
թոցն ուղեկցելով մուրձի անտեսանելի հարվածներին՝
լեյտենանտը ձայնում եր ինքն իրեն, իրոք նա հարց-
նում եր կիսաձայն.

— Կաթսայիկ...

Կաթսայիկը կախված եր կողքից, նա ցուցադրեց
իր կորությունն և ողակը և տեղը զիջեց կաշեփողով
ջրհան մեքենային:

— Տոպրակ գործիքի համար վզափոկի վրա...

— Տոպրակ...

— Մի կոմպլեկտ միջադիրներ...

— Միջադիրներ: Այդպես:

— Աքցան խողովակների համար...

— Աքցան:

— Կոլ'տ:

— Կոլ'տ:

Լեյտենանտը տեղափոխեց լույսը.

— Պայուսակ սուսերակալի վրա: Բացեք պայուսա-
կը:

Զինվորը կատարեց հրամանը՝ մնալով լարված:
Նա քիչ եր մնում յերերվեր լարվածությունից: Բայց
նա կարող եր յերերվել և հոգնածությունից:

— Հրձիգի պահեստի յերկճիղ,— ասաց լեյտենան-
տը,— ցույց տվեք հրձիգները: Դուք այդ ի՞նչ եք ա-
րել: Հրձիգը խոնա՞վ ե:

Շտարկեն ցնցվեց: Զինվորն որորվեց, կարծես
զարկեցին նրան:

— Յես բլինդաթումն եյի նստած,— ասաց նա:—
Բլինդաթում, պարոն լեյտենանտ:

— Բլինդաթում, անիծվե՛ք դուք: Զրումն եք դուք
նստել, սատանան տանի: Իսկույն փոխեցե՛ք հրձիգնե-
րը: Գնացե՛ք իսկույն:

— Աղգանո՞ւնը: Նրա աղգանո՞ւնը,— շնչասպառ
կռկռում եր Շտարկեն:

Զինվորը յետ դարձավ.

— Հանս Նեմլանդեր:

— Լեյտենանտ, յերբ կռիվը վերջանա — լեյտե-
նանտ, կստուգենք ամենքին կովից հետո և բոլոր այդ-
պիսիներին կտանենք հետևադորը, նորից հետևադո-
րով գնան կորչեն...

Շտարկեն քրտնեց այն մտքից, թե բոլոր հրձիգնե-
րի հետ կարող ե նույնը պատահել: Այն ժամանակ նա
իր փորով կընկնի Ֆրանսիական յերկաթալարի վրա և
կմեռնի: Բանակի բարձրագույն չեֆը կհետաքրքրվի
այդ փորձերով... Բարձրագույն չեֆը — հանուն դրո
արժե մեռնել...

— Իսկ ջահերը...

Ջահերը հենց այդտեղ եյին, ջահերը կանգնած ե-
յին նեցուկների վրա: Հարդը, վորով պատել եյին փայ-

տաճողերն, չոր եր, իսկապես չոր: Շտարկեն մեղմացավ: Նա մեկ առ մեկ դիտում էր մարդկանց: Ամեն ինչ կարգին էր: Կարգը կարող էր ավելի լավ լինել, բայց այստեղ վոչինչ չես կարող անել:

— Հրային շիթը բաղկացած է հրավառ յուղից և այրվող յուղային գազերից... Հավաքեցե՛ք մարդկանց, — ասաց Շտարկեն

Ոմբերը կանգնած էին յերկրորդ գծի վրա, նրանք միանգամայն փոքրաթիվ էին: Շտարկեն մի քանի խոսք ասաց: Իսկապես առած՝ խոսել չարժեք, սակայն կանոնադրությունն հրահանգում էր խոսակցություն կաղմակերպել: Շտարկեյի հոգին, կանոնադրելից բացի, հավատի այլ սկզբով չուներ:

— Ձինվորներ՛, — ասաց նա, — արիություն, արիություն ամենից առաջ: Դուք, պատերազմի սպորտամեններ — դուք պետք ե դառնաք չեմպիոններ: Ուրե՛ք նրանց աչքերին, այրեցեք նրանց մոռված. նայեցեք, վորպեսզի յուղի հոսում չլինի, հիշեցե՛ք «կանգնիր» հրամանը, կանգ առեք անմիջապես, չափից դուրս առաջ չնետվեք, մեր գործը — սլաավի գործ է: Ուստի նիչ կրակի միջով թեկուզ ինչ գնով ել լինի, թեկուզ ինչ գնով ել անցկացրեք հրանետները: Առա՛ջ, առա՛ջ, առա՛ջ:

Ձինվորները կանգնել էին, ինչպես մորթելու համար ջուղված ջահել յեղեր: Նրանք առողջ տղաներ են, նրանք կանցկացնեն հրանետները խափանիչ կրակի միջով: Նրանք սպորտամեններ են — թող այդպես լինի, ինչո՞ւմն ե բանը: Այդ հասակավոր մարդը կարող ե ապել ամեն բան, ինչ վոր խելքը փչի: Չե վոր դրանով գործը չի փոխվի: Գործը կայանում ե նրանում, վոր հարկավոր ե դուրս գալ խրամատից և առաջին անգամ կյանքում հրավառ յուղով հեղեղել մարդկանց: Տոն օրերին գյուղում իհարկե ավելի ուրախ ե լինում, քան այստեղ, բայց այնտեղ այսպիսի տեսարան չես տեսնի: Բացի այդ, դրա համար կարող են տալ արձակուրդ կամ սպիտակ-սև ժապավենիկ: Փորձենք: Շտարկեն քնքշություն մակընթացություն զգաց:

Նա իր պերճախոսություն կողիտ սնդուկի հատակում փնտռում էր առանձնահատուկ խոսքեր, վորոնք մի փոքր կմկմալով դուրս թռան նրա լեզվից: Նա ցանկացավ փաղաքել այդ մարդկանց, կարծես կանգնած լինե՛ր հրդեհի առաջ, կրակի առաջ, ուր մաղցում են նրա հրչեջները և արդեն զոհվել ե նրա լավագույն շտեյգերը:

— Տղե՛րք, — ասաց նա, — դուք այսօր կալբաս ստացաք, այո, ճիշտ վոր լավ կալբաս, դուք այսօր սիգարներ ու կակաո ստացաք, իսկ վաղն այնպիսի փառք կստանաք, վոր վոչ վոք չի ունեցել: Արիություն, արիություն, գոչենք մեր հոգում իսպառիվ բանակի գերագույն չեֆի՝ յերիցս ուռա՛:

Գոչել չե՛ր կարելի: Արդյոք զինվորներն իրենց հոգում կանչո՞ւմ ելին ուռա — Շտարկեյին շատ չե՛ր անհանգստացնում: Նա հավատում էր, վոր նրանք գոչեցին: Վոր նրանք կերան կալբասը, կակաոն խմեցին և սիգարներ ծխեցին, այդ նա գիտեր: Դա մի հատուկ օրապարեն եր չտեսնված մասնագիտություն համար:

Շտարկեն ձեռքը տարավ դեպի սաղավարա՛ր և խստորեն ցած իջեցրեց: Հաղորդակցություն անցքերը կլանել էին մարդկանց: Շտարկեն յերկար ժամանակ ծխում էր սիգարը: Ձեռքի ժամացույցն աճել, դարձել էր մի ահագին ցիֆերբլատ, վոր ճոճվում և թխթըկում էր անտառով մեկ: Ժամապահների թեթև հրացանաճգությունն անցնում էր անտառի միջով վորպես միայնակ պիծակների թռիչքը:

Սլաքը ճոճվեց և անշնչացավ:

Ժամանա՛կ ե:

Այդ կարող էին ասել հարյուրավոր մարդիկ միաժամանակ: Լուսատու արկն անցավ անտառով, մտրակեց խավարը կապույտ լույսով և վառվեց՝ ծխելով տարածությունը: Յեվ անմիջապես մարդիկ աստիճանների վրայով նետվեցին դեպի վեր: Անտառի միջով գնում էին ամպերը, վորոնց մեջ սպիտակ սուլոցով թռչում էր հրավառ յուղը: Նա վառվում էր ըլինդած-

ներում, ճյուղերի, յերկաթալարի սյուների վրա, գընդացրային բներում, նա վառվում եր շինելների, հրացանների, կորզակների վրա՝ չաչելով և թանձրանալով:

Շիկացած շիթերը թշնամուն վրա եյին հասնում վազելիս, և արդեն այրվում եյին միսն ու կաշին, պայթում աչքերն ու յերակները: Անտառում մի վոռնոց եր բարձրացել, վորի միջով ընթանում եր Շտարկեն, լեզենդներից յեյած ու անհողողդ: Լեզենդը ծափալվում եր նրա առաջ: Նրա կրակն այրում եր ամեն ինչ: Թակարդը գործում եր: Կուրացնող շիթերն հոսում եյին անընդհատ: Նրանք մերթ վեր եյին սլանում, մերթ նշանը փոխելով, կողքից դարկում եյին հակառակորդին: Գիշերը կենդանություն եր ստացել նռնակների բռնկումներից և դողդալով հարվածներից, անհասկանալի, վորպես ամեն ինչ գիշերային կռվում: Թակարդն հանկարծակի բռնել եր թշնամուն: Սակայն թշնամին դեռևս փորձում եր կրակել առանց նշանոցի և հուսահատորեն:

Շտարկեյի առջև ընկավ մի հրանետավոր, հավանորեն գլխից դարկված, քանի վոր նա բարձրացրեց ձեռքը և չհասցրեց մինչև դեմքը: Գնդակով ծակված ապարատից հոսում եր յուղը: Այրվող ապարատը կարծես կծկվում եր գետնի վրա՝ դուրս նետելով կենդանի փորոտիքը: Շտարկեն կռացավ և փակեց ծորակը: Նա դարձել եր թեթև, ինչպես իր վաշտի ամենաջահել գինվորը:

Հուրն այրում եր անտառը, մարդկանց և բոլոր խոչընդոտները: Թշնամին կամ մեռել եր, կամ աչքերը փակած վոռնում եր ահից: Մարդիկ փակում եյին աչքերը, նրանք ամենից ավելի վախենում են կորցնել տեսողությունը, նրանք մինչև վերջ ուզում են տեսնել ամեն ինչ:

Հետևագործը վազում եր հրանետավորների կողքից: Շտարկեն թռավ խրամատը: Դա Փրանսիական խրամատ եր: Պատվարի տակ և պատվարի վրա ընկած եյին

մարդիկ, սակայն դրանք մարդիկ չեյին: Նրանք սև, ածխացած տոպրակներ եյին, ծղնոտե տիկնիկներ, վորոնցով խաղում եր Շտարկեն, յերբ նրա հրանետն ապրում եր պատանեկության հրե որերո:

Շտարկեյի շուրջը մոլեգնում եր յուղը: Թվում եր վոր նա սպասել եր միմիայն այդ գիշերին — իր վողջ կյանքի յերկար ընթացքում, մարդկության հետ կողք-կողքի յուղն սպասել եր այդ գիշերին, վորպեսզի ցատկի, սուլի, այրի, վոչնչացնի: Պետք եր ավարտի ադդանչան տալ: Պետք եր չթողնել, վոր ուժասպառ լինի այդ հզոր հեղեղը:

Բարձրում, խրամատից վեր յերևաց մի մարդ, և յերեք շիթեր թափվեցին նրա վրա, ինչպես միջատի: Նա պտտվեց տեղնուտեղը, սկսեց թռչկոտել, և բոցը վոլորվում եր նրա վրա, կարծես խտտացնում եր նրան ամեն կողմից: Մարդը ցատկում եր մի վոտի վրա, և այրվող շորերի լույսի տակ յերևում եյին հրկիզվող մազերը, սև ճակատը, լայն բացած բերանը, վոր անձայն խեղդվում եր վշտից: Մարդը վոչնչանում եր: Հանկարծ նա սկսեց ճարճատել, ինչպես մանկական հրացան: Կրակը հասավ մինչև փամփշտամանը, վորը նա չեր կարողացել ձգել: Փամփշտամանը բռնկվեց, փամփշտամանը տրաքվեց, բոցը նետվեց մարդու՝ պեմզայի նման գորշ յերեսին: Տրաքեց յերկրորդ փամփշտամանը, և մարդը կուչ յեկավ, ինչպես լամպի ապակու մեջ յերկար ժամանակ պտտված թիթեռ, վոր վերջապես ընկնում ե մոխրացած:

Գրենագերները նռնակը ձեռքերին կանգնած եյին բլինդաժների մուտքի մոտ և կենդանի մնացածներին առաջարկում եյին անձնատուր լինել: Ապարատներն հանգանմեկը մյուսի հետևից: Փրանսիական թնդանոթները դարկում եյին խրամատներին, և արկերը չալրտում եյին ածխացած մարմիններ՝ գլխիվայր ձղելով նրանց, շուռ տալով և մաս-մաս անելով, վորպեսզի համոզվել, թե իրոք արտասովոր ինչ վոր բան ե տեղի

ունեցել: Յեւ վայել ժամանակ սկսեցին բերել գերիններին:

Շտարկեյի մոտով անցավ Փրանսիական հասարակական, վորից արյուն եր հոսում, ինչպես վոչխարից: Նա միևնույն խոսքն եր կրկնում:

— Այսպես պատերազմել — դա աղտեղություն ե, աղտեղություն, ինչպես դա կոչվում ե...

Շտարկեն կանգնեցրեց նրան և բռնեց ձեռքից:

— Սա կոչվում ե Փանդ, — ասաց նա, բայց Փրանսիացին հրեց նրա ձեռքը և արյուն հեղեղելով առաջ անցավ՝ միշտ միևնույնը կրկնելով:

— Այսպես պատերազմել, — դա աղտեղություն ե, աղտեղություն, ինչպես դա կոչվում ե:

2. ԶՈՒՐ ՅԵՎ ՀՈՒՐ

Դա մի սովորական քեֆ չեր, ճիշտն ասած՝ դա բոլորովին ել քեֆ չեր: Հատուկ նշանակության գործադասերի սպաները նստել էյին ջարդված բազմոցների և վոզլ մնացած աթոռների վրա: Յեւ նրանց կենտրոնում բարձրացել եր Շտարկեն: Նա բարձրացել եր, փռել ուսերը, և նրա մոխրագույն հոնքերը, և՛ բոլորովին բոսորացած արևակեղայտերը, և՛ մանիչակագույն կզակի անշարժությունը, և՛ ձեռքերի ծանր, դանդաղ շարժումները նրան դարձնում էյին ինչ վոր աստվածաման մի բան: Պատերազմական գիցարանության այդ աստվածաման էյակը խմում եր գինին մեծ կումերով, վորովհետև նա իրավունք ուներ խմելու:

Գինին նվաճված եր, գիշերը նվաճված եր, բազկաթուր, վորի մեջ նա նստել եր, նվաճված եր: Դա կոչվում եր կյանք, ուրիշ կյանք գոյություն չուներ: Բաժակները շրխկում էյին: Բոլորը խմում էյին՝ բղավելով:

— Հազար չորս հարյուր գերիններ, գնդերի յերկու հրամանատար, վաթսուներեք գնդացի:

Լեյտենանտի տակ կոտրվեց աթուր և նա տեղա-

փոխվեց սանիտարական պարագաներով լի արկղի վրա: Նա վայր չընկավ:

— Տասնչորս հրանոթ, պահեստներով ձեռքի նրուտակներ:

Բոլորը բավականությունից դուրում էյին վորտեբրով: Շտարկեն հատակին ջարդեց բաժակը: Նրա աչքերում փայլում եր Փանդի քառանկյունի հրատարափը: Այդ խոսքի մեջ ինչ վոր արևելյան, չինական բան կար նույնիսկ: Այդ խոսքը կարելի չեր վերածել կրակի հրեշի, վորը մոխիր ե դարձնում ամեն մի կենդանի շունչ: Հենց միմիայն այդ եր ցանկանում Շտարկեն: Սակայն այսօր նա մեծահոգի չեր: Նա կարող եր կիսել հաղթանակը:

— Փա՛ռք հետևազորին, — ասաց նա, — փա՛ռք խլուրդներին, փորոնք փորում են թշնամու հողը: Փառք հրետանուն, վոր լավ թակում ե նրանց... բանակի չեֆը...

Բոլորը վեր թռան և կանգնած խմեցին: Խավար դեմքերի վրայով շրջում եր պարաններից կախված նավթի լամպերի և լապտերների բոցը: Յեռագույն լույսը յուրաքանչյուր դեմք դարձնում եր յեռագույն. կարմիր՝ արևից, սև՝ հուզմունքից և բծավոր — վորտեբրի գինուց: Շտարկեն շառագունել եր, ինչպես յերբեք:

— Ֆրանսիացիների վերջին դեկուցագիրը, — ձայնեց ձեռքը վիրակապով փաթաթված մի մարդ, — ամենաօտրը կույսը և սուրը Յեղիսաբեթը վիրավորված են չրապնելով... Թքել եմ յես այդ կնիկարմատների վրա: Մարգարեները թավալվում են բեկորների տակ: Կեցցե սուրբ Բերտան և նրա քառասուներկու սանտիմետրը, վոր խփում ե նրանց կողքերին: Չանգերը մետրը, վոր խփում ե նրանց կողքերին: Մուրը Ռեմիգին փախավ — նրանից հետք անգամ չգտան: Սատանայի ծո՛ցը — բոլոր տաճարները: Խմում ենք հրետանու կենացը:

— Նրանք իրենց դիտողներին խցկում են բոլոր ծակուծուկերը: Բոլոր ճանապարհները վխտում են նը-

բանց լրատեսներով: Նրանք կոտորում են վիրավորներին: Թունավորում են ջրհորները:

— Յուզի, պահամանը, կաշեփողն ու ջրհան մեքենան մաքրվում են հում բենզոլով, — ասաց Շտարկեն, — ճանապարհ հրանետին, յեկել են նոր ժամանակներ...

Սպասյակներն ու բանբերները՝ գումակային գորշ, մեծ ձիեր՝ սեղան ներկայացնող արկղների վրայից հավաքում էին ջարդված ամանեղենը:

— Խոսք եմ խնդրում, — ասաց լեյտենանտը: Հուզմունքից նրա աչտոսկրները շարժվում էին: Գոլ'ֆի ակումբում նա համարվում էր լավագույն հոեոոր: Նա այնպես էր հուզված, վոր հուզմունքից կարող էր ցատկել սեղանի վրա:

— Խոսք լեյտենանտ Գերինգին...

— Լեյտենանտ Գերինգ...

— Յեկան այն ժամանակները, վորոնց մասին մենք յերազում էինք: Գոլ'ֆ խաղալիս՝ մենք, իսկապես ասած, ամբողջ ժամանակ պատերազմ էինք խաղում: Կապիտան Ոտտո Փոն-Շտարկեն՝ գերմանական հատուկ զորամասերի զարդն սկսեց հրե գոլ'ֆի մեծագույն խաղամրցումը: Բարձրացնում էմ նոր դարաշրջանի հայտնաբերման կենացը, կապիտան Շտարկեյի ֆրանսիական պարտիայի կենացը:

Նա քայլեց, և նրա խթանը դեմ առավ պատռված գորգին: Գորշ, ինչպես ձին, բանբերը կուսացավ և ազատեց նրա վոտքը թակարդից:

Բաժակները լցվում էին: Յեռագույն դեմքերն արդեն նմանում էին դրոշակներին, պատշգամբներին դուրս ցցված մասերում որորվող դրոշակներ, վորոնք դիմավորում են հաղթողներին: Յեվ այն ժամանակ բոլորը մի աղմուկ լսեցին: Աղմուկը փողոցից էր գալիս — բաց տարածություններից, գիշերից, քանդված տան հետևից, վորտեղ նրանք նստած էին՝ առանց հանելու զենքերով կախված շինեղները: Նրանք խմբով փողոց դուրս յեկան:

Անձրևը ծեծում էր: Արդեն մի քանի ժամ և ձե-

ծում էր անձրևը: Նրանք այդ չեյին նկատում: Հանգըստացողն իրավունք ունի վոչինչ չնկատելու: Այժմ նրանցից վումանք, ուրախությամբ բանալով բերանները, ջուր էյին վորսում, վորպեսզի թարմանան:

Նրանց առջևից գործեր էյին անցնում: Խիտ շարքերով, անհամաքայլ գնում էյին զինվորներ, զինվորներ, զինվորներ: Նրանցից բացի վոչ վոք չկար չըջակայքում: Անձրևը ծծվել էր նրանց մեջ, նա կաթում էր ճակատներից, նա բարակ շիթերով, մեջքի յերկայնությամբ հոսում էր մերկ մարմնի վրայով, նա աննրկատելի անցքերի միջով թափանցում էր իրեղենի տուպրակները, նա արդեն չաչում էր կոշիկների մեջ, նա լճակներ էր փռում նրանց առաջ, նա խփում էր աչքերին: Թրջված ձեռքերը բռնել էյին թրջված հրացաններ, թրջված կրծքերը բարձրանում էյին նողկալի հագով կամ անեծքով:

Մարդկային մարմինների այդ չաղախը, վորը փակ աչքերով, լուսնոտների պես առանց ընդմիջման ընթանում էր ու սայթաքում, վերջ չունեք: Կարծես ծովը վերադարձրել էր բոլոր ջրահեղձներին, և նրանք ընդհանուր աղետով միացած՝ չեյին կարողանում միմյանց թողնել: Ահագին կոշիկները, ահագին սաղավարտները, թվում էր, իրենք էյին քարշ տալիս մարդկային մարմինների թեթև դոնդողը, իրերը տիրապետել էյին այդ մարդկանց, նրանց շարժում էր վոչ թե հրամանի ձայնը, այլ սուլիչը: Վիրակապերը կախված էյին վզների, ձեռքերի, վոտքերի վրա, անձրևը լվացել էր վիրակապերը և արյունը, բամբակն ու մարլան դարձրել մի սառն կարկաս, թանձր և տանջող: Զորքերի մեջ քայլում էյին թեթև վիրավորները, վորոնք մնացել էյին շարքում: Մարդիկ ատամների արանքից արյուն էյին թքում: Նրանց գլխավերելք լուսարձակների պաղ սղոցները կտրատում էյին կեղտոտ, մուգ չազանակագույն յերկինքը, և այն ժամանակ անձրևն ամիսի ուժգին էր հարձակվում գնացողների վրա, կարծես գանում էր վոչ բավականաչափ

Թրջված ջուկատներ: Մարդիկ հասում էին անկանդ հեղեղով, և, յեթե նայել նրանց վրաքերին, ապա հոգու խորքի ինչ վոր տեղից բարձրանում եր սրտախառնումը:

Լեյտենանտ Գերլինդը, վորի հուզմունքը յեւք եր պահանջում, գոչեց տեսիլներն այդ դիչերային, վայրենի բանակին:

— Կեցցե՛ն բաղենցիները:

Վոչ վոր չպատասխանեց, վոչ վոր յետ չնայեց: Անձրեւ խլացրեց կանչը: Գերլինդը և մյուսները հերթով գոչում էին, ինչպես կատաղածներ:

— Կեցցե՛ն վյուրտեմքերդցիները, բավարացիները, սաքսոնացիները...

— Կեցցե՛ն պրուսացիները, հաննովերցիները, գրվարդիան...

Խելագարների նման նրանք գոռում էին անցնողների դեմքին, և այդ անցնողներն իսկապես մի դեմք ունեյին՝ հալումաչ, գորչ-կանաչագույն, թաց դեմք խոր դնացած աչքերով, վորոնք կարծես ազատվել էին ցանկանում անձրեւից: Տեսնելով դիչերը ծանրաբեռնող այդ լուեյայն կերպարանքները, անվերջութունը նրանց յերթի, վոր հեղեղի պես թափվել եր փողոցից փողոց, ավերակների և արկերից գոյացած փոսերի միջով, Շտարկեյի կամպանիան, վորպես աղարտային խաղից հենց նոր դուրս յելած և վկաներ դարձած ուրիշի աղարտային խաղին, հուզվեց մինչ մուկանության աստիճան:

Նիհար, ցրտից դողդողացող մի սպա մոտեցավ նրանց:

— Բոլորը, ինչ վոր մնացել ե Շրեկֆուսից, — ասաց նա, — կարծես ինչ վոր հեռվից հանելով իր անունը, — ծխախոտ չկա՞ ձեզ մոտ:

Սիգարի վեց տուփեր չրխկացին նրա հանդեպ: Նա վերցրեց պապիրոսը և պահեց ձեռքում՝ առանց ծխելու: Նրան դիպչում էին անցնողները, նա ուշադրութուն չեւ դարձնում: Շնչում եր նա, ինչպես սարը

յելնող ձի, և նրա մատները դողում էին: Շինելի թեքերից դուրս էին վազում ջրի չիթեր:

— Սմբողջ վաչտից մնացել ե յերեսունյոթ մարդ, յերկաթալարի յոթ շարք, գալադուրեր:

Նրան չէին լսում, նա ինքն իր հետ եր խոսում, նա հանրագումար եր տալիս չմտածելով. յերկաթալար, յերկաթալար — քսանական մարդ յուրաքանչյուր շարքում:

Ծխախոտը բռնկվեց և թչչալով հանգավ: Խալաքը խտացավ նրա դեմքի մոտ: Նա նետեց պապիրոսը և անցավ առաջ, և նրա վրաքերը խեղդվում էին մինչև ծունկը հասնող ցեխում:

Մարդկանց գորչ հոտերը շարժվում էին ու շարժվում: Վոմանց ողնելով տանում էին ընկերները: Ընդմիջումներին փնջացնում էին ձիերը: Զիավորների շարքերը պողպատե դռնի թիկնոցներում կշռված աշխարհում էին չարժվել՝ գիտենալով, վոր աշխարհում միակ չոր տեղը թամքն ե: Թամքից ցած սկսվում եր ովկիանոսը: Զղվելի յեր շոչափել ձիերի թաց բաշը, թաց սանձերը, սեփական ձեռքերը:

Շտարկեն նայում եր նրանց վրայից դեպի այնտեղ, ուր միայն խավարն եր, վորը կարատում էին զուտ ձակների ձերմակ սղոցները: Նրա աչքերի առաջում անցնում էին հրանետների շրացուցիչ, ճկուն շողով անցնում էին հրանետների մարդարենները թավարվում շափուկները: Թշնամիական մարդարենները թավարվում են բեկորների տակ: Յերեք վերացրին Մարիամ կույսին՝ սև մազերով, ծնկները վորքերի փրփրախցի նրստեցրած փարիզուհուն:

— Հրանետը, պարոններ:

Յեւ բոլորը հնազանդվեցին նրան: Վողջ ամբողջ մուկ փողոցներով դնաց անձրեւի տակ: Նա տանում եր նրանց, ինչպես տանտերը տանում ե հյուրերին ցույց տալու իր կալվածքը, նա քայլում եր, ինչպես մարդարեն նվաճված յերկրով — ցույց տալու վոչնչություններին պատժող սուրը:

Ժամապահները կանգնած էին թրջված սուկերի

նման: Տարորինակ եր, վոր հրացանները ինչ վոր կարծրություն եյին պահպանել այդ հեղուկացած, ինչպես խոզերի կեր, գիշերին:

Որպա՛հը բորբոքված աչքերով զեկուցեց՝ ձեռնոցը սաղավարտի մոտ բռնած: Նա այն կարող եր բռնել մի ամբողջ հարյուրամյակ: Շտարկեն հիանում եր այդ ծալված ուժեղ ձեռքով: Բաները լապտերն եր բռնել: Հնազույն պարկի խորքում ննջում եյին հրանետները: Նա բերանացի գիտեր նրանց:

— Հրանետ № 10, — հրամայեց Շտարկեն, — փորձնական քննում:

Անձրեւը չեւ դադարում: Թվում եր, թե ծառերը կենեն հողից և կրնկնեն տների հեղուկ պատերին: Հրանետը կանգնած եր փայտե ծածկի տակ: Նա ապրում եր ինչպես ամուրին ամառանոցում, փոքրիկ չինության մեջ: Խումբը շարժվեց հրանետի մոտ: Սպաների ամբոխն անցնում եր վռտքերն հաղիվ փոխելով: Գինին այլևս չեւ տաքացնում: Խթաններից կախվել եյին ցեխի կոշտեր:

— Կրակի պատրաստ, — հրամայեց Շտարկեն:

Մարդիկ կամ ուրվականները խառնվեցին, ինչպես բալետում: Ամայի պարկը խախտում եր գիշերվա խիստ մթությունը: Այդպիսի գիշերն ամեն ինչ կարելի չեւ անել: Մարդկությունը ձայն չունի այդպիսի գիշերը: Ո՞ւր եւ նա: Յեւ անհասարակ կա՞ արդյոք նա, այդ մարդկությունը: Այն գորշագույն ամբոխներում, վորոնք խոսում եյին գիշերվա միջով, տարբերել չեւ կարելի ծերերին և ջահելներին, խելոքներին ու տխմարներին, բանվորներին կամ արտիստներին, նրանք բոլորը միատեսակ եյին: Նրանց վարում եր սուլիչը: Ընդմիջումներին անցնում եյին ձիերը: Լուսարձակները նշում եյին նրանց մահվան անդերը: Վոչ վոք չեւ հավատում, վոր գիշերը կվերջանա: Մութը նստել եր հորիզոնում:

— Զգա՛ստ, — հրաման տվեց Շտարկեն, — կըրա՛կ:

Ծխի շրջանը սլացավ վեր և անցավ առաջ: Նրան հետևեց ճարձատող, ուժեղ, ինչպես բռնացք, հրի հաստ յերակը՝ կարելով տարածությունը: Այդ յերակի սուր ծայրը, լուսավորվելով սև ծխի մեջ, վորպես հազար շիկացած յերկաթալար, մեխվեց ծառերին, վորոնք չաչում եյին մահացու ալրվածքներով պատած, թփերը ճոճոթում եյին, գիշերային խավարում բացվել եր մի ճեղքվածք՝ սարսափելի շիթերով ծածկված:

— Կանգ ա՛ռ, — Շտարկեյի ձայնը հասավ մինչև ապարատների մոտ դանվող սև մանեքներին: Կրակը հանգավ:

— Հրանետն ազատի՛ր:

— Մաքրի՛ր...

Լեյտենանտ Գերինգը՝ գոլ՝ֆի ակումբի լավագույն հոետորը, այլևս չեւ գլուժ գինու ազդեցությունը, բայց նա մոռացել եր նաև բոլոր ծառերը: Զղային տենդը տակնուվրա յեր անում վոսկոյները: Նրա պինդ հպված շրթունքներն աշխատում եյին պահել ատամների կրճատոցը:

— Խավարի իշխան, — ասաց ինչ վոր մեկը նրա հետևից: Շտարկեն քմծիծաղ տվեց: Նա արդեն գիտեր, վոր այդ կոչումը գնում եւ նրա հետքից շտաբների և գումակների միջով, կայարանների և հավաքատեղերի միջով, խրամատների և բլինդաժների միջով, նա կար, այդ լուսավոր տրանսպարանտը, նա դուրեկան եր Շտարկեյին, վոր կդարձնի նրան իր դրոշը:

— Սարսափեցնելով թշնամիներին՝ դեռ դեպի հաղթություն, թող նրանց մնան միայն աչքերը — վողբալու իրենց պարտությունը: Աչքերը կմնան, չեւ վոր նրանք մշտապես ծածկվում են ձեռքերով, յերբ թշնամու վրա սլանում եւ բոցը, Շտարկեյի բոցը:

Վորպեսզի տաքանան, սպաներն շտապելով ու բարձրաձայն սկսեցին խոսել:

— Այո՛, դա դյուտ ե...

— Յես չեյի ցանկանա Փրանսիացի լինել:

— Հազար չորս հարյուր գերիներ, տասնչորս հար-
նոթ հինգ թույնով:

— Պետք է գնդեր պատրաստել այդ խաղալիքնե-
րի, այն ժամանակ գործն իսկապես կգնա:

— Իսկ յեթե նրանց մոտ:

— Ի՞նչ նրանց մոտ:

— Իսկ յեթե ֆրանսիացիներն ել...

— Նրանք — նրանք յետ չդարձած՝ ամենինչ վեր-
ջացած կլինի:

— Ժամապա՛հ, — ասաց Շտարկեն, — յետ մոռու-
ցա — Հանս Նեմլանդերը...

Բարձրացված ձեռքը ձեռնոցի մեջ, հզորապես
ծալված, հիանալի յեր: Սիմվոլ գիտցիպլինայի և կար-
գապահության: Նա կարող է սաղավարտի մոտ կախ-
ված մնալ ամբողջ հարյուրամյակներ, սակայն ձեռնո-
ցի յերկու մատները դատարկ են:

— Ճիշտ այդպես: Հանս Նեմլանդերը չի կարող
հետևադոր գործուղվել: Նա սպանվել է նախանցյալ
օրը:

3. ԽԱՎԱՐԻ ԻՇԽԱՆԸ

Խավարի՛ իշխան: Արդեն քանի շաբաթ է աշխա-
տում են նրա հրանետները, արդեն քանի թվանշան է
ավելացել զեկուցագրերում, քանի ածխացած գիակ-
ներ՝ թաղված խրամատներում և փոսերում, գնդացե-
րային բների խորքում, շարված գերանների մեջ, աղ-
վեսի վորջերում, — սակայն չե վոր այդ միայն սկիզբն
է: Այդքանը քիչ է: Շտարկեյի միտքը գործում է
գիշեր-ցերեկ և միմիայն մեկ ուղղությամբ՝ ինչո՞ւ
յեն նրանք դանդաղում, այդ շտաբները: Ինչո՞ւ նրանք
չարունակ, չարունակ արգելակում են, չեն հավա-
տում, կասկածում են այդ պարոնները: Փարիզը վա-
ղուց գերմանացիների ձեռքում կլինե՞ր, յեւթը գեպի
լամանչ — նույնպես: Անգլիան խորտակված կլինե՞ր,
յեթե նրանք շտապեյին, բայց նրանք յերբեք չեն շտա-
պում:

Այդ մարդիկ կարծես հպարտանում են իրենց դան-
դաղկոտությամբ: Նրանք կարծես սպասում են, թե
կհայանվի Շտարկեյի մրցակիցը, մի մարդ, վոր կլսի
նրա փառքը, նրա գործերը: Ինչի՞ վրա յեն հույս
գնում նրանք — նրա վրա, վոր ֆրանսիական գործա-
բանները կկանգնե՞ն, նրա վրա, վոր Անգլիան կվախե-
նա իր ապագայից և հաշտությո՞ւն կկնքի: — Վո՛չ,
նրանք դրականապես անհասկանալի յեն:

Մոտոցիկլը թռավ մի կողմ, վորպեսզի թողնի անց-
նելու կամաց յեկող բեռնատարին՝ փաթաթած յերկա-
թալարով լեցուն: Յերկաթալարը կախ եր ընկել նրա-
նից՝ չորսդին սպառնալով չեկ ասեղներով: Նրանք ամ-
բողջ բանակն սկսում են սեղմել այդ խոցող կորսե-
տում, նրանք գետինն են փորում որ ու, գիշեր, նրանք
բաց են թողնում հազար արկեր, վորպեսզի թշնամուց
խլեն մի քանի մետր, վորոնց վրա դժվար է չնչել վա-
ռողի գազերի և չհավաքած մեռելների պատճառով:
Վո՛չ, նրանք դրականապես այն չեն անում:

Մայր — արդեն մայր — Շտարկեն փոքր ինչ
բարձրանում է կռուցում: Ծանր մոտոցիկլն խոտոր-
նակի անցնում է ավերակների մոտից և կանգնում՝
դժգոհաբար դռնալով: Մեծ, կանաչ բեցը, շտաբի
նշանով, առջևի անիվներով խրվել է փոսի ծայրում և
չի կարողանում դուրս գալ: Տասնյակ զինվորներ ջրա-
նում են նրա մոտ: Մոտոցիկլիստը կանգ է առնում —
անցք չկա: Շտարկեն ատելությամբ նայում է բեցի
միջից դուրս յեկող մարդկանց:

— Շարունակ ճանապարհի մեջտեղը, շարունակ
ճանապարհի մեջտեղը...

Նոր, փայլուն թիկնոցներով, շացուցիչ դանդա-
պաններով սպաների շրջանում, այդ կոշտ, սիրունիկ
տղամարդկանց մեջ, վորոնք տարիներով մշակում են
դեմքի վճռական արտահայտություն և քայլվածքի
հպարտություն, խորիմաստ կնճիռներ և ներողամիտ,
գունատ ժպիտ — այդ սպաների շրջանը նրան թվում է
քաղաքացիական մարդկանց շրջան:

Նրանք նույնպես ռազմաճակատումն են թրև գալիս: Դասախոսություններ կարդալու: Նայելու և գթաշարժվելու վոլիւնների, զինվորական անամուկատների, արյունոտ վիրակապերի, նոր, պաշտոնական հերոսների վրա:

Մայր Շտարկեն զրկվում է հանգստությունից. բենցը ճոճում է մինչև ծնկները ջրի ու ցեխի մեջ կանգնած սարուկների միահամուռ գրոհի տակ: Շտաբայիններից մեկը անբավականորեն նայում է ժամացույցին:

— Մենք ուշանում ենք, պրոֆեսոր, — ասում է նա կլոր, համակրելի դեմքով մարդուն, այնպես սիրելի և զվարթախինդ մեկին, վորի համար ռազմաճակատում մի գործ կա միայն — չըջադայել շտաբի ավտոմոբիլով և նախաճաշել շտաբում: Գուցե դա չեզոք պետութայն ներկայացուցի՞չ է: Այդ դեպքում հարկավոր է նրան լիզել ամեն կողմից, վորպեսզի վոչ մի մուսյլ բան, վոչ մի արյունոտ փոշի չկազի նրան:

Նա, ում պրոֆեսոր եյին կանչում, ավտոմոբիլային ակնոցների միջից կանաչագույն աչքերով դիտում է կանաչավուն յերկինքը և ուները թոթվում:

— Ծայրահեղ դեպքում մենք կնստավորվենք — մերք ձեզ իսկույն կտեղավորենք:

— Պրոֆեսոր Ֆաբերը կարող էր ոգտվել մոտոցիկլով, — ասում է անգլիացու պես սափրված սպան՝ աչքերով Շտարկեյի վրա ցույց տալով:

Շտարկեն չի լսում այդ հարցական նախադասությունը: Նա այժմ, ինչպես յերբեք, արհամարհում է քաղաքացիականներին: Նա անշատում է իր լսողությունը: Պրոֆեսորը ճակատին է բարձրացնում ավտոմոբիլային ակնոցները:

— Վո՞րքան ժամանակ կխլի այս գործողությունը մեր ավտոմոբիլի հետ, — հարցնում է նա:

— Ֆելդֆելե՛լ, վո՞րքան ժամանակ դուք պետք է փորփրեք այդտեղ, — կանչում է շտաբայինը:

Հին ծառայողի դեմքը կենտրոնանում է, կարծես հիմա նրան խիելու յեն: Նա հարձակվում է իր գործ

սարուկների վրա, և նրանք վրա յեն ընկնում վերջին ուժերով, անձայն, քրտինքը դուրս է գալիս բորբոսնած շինելների տակից, նրանք այժմ գոյություն ունեն միմիայն այդ մեքենայի, այդ ջրափոսի, շտաբայինների այդ խմբի համար — հետո նրանց կհրամայեն՝ «ադա՛տ», հետո կպատվիրեն հրացաններ քանդել:

Նրանք դուրս են բերում բենցը ճանապարհի վրա, շոֆերը նստում է իր տեղը և նրա մորթե ձեռնոցներն հավում են դեկին: Ամեն ինչ կարգին է: Շտաբը նորից անխիմների վրա յե: Նա սլանում է Շտարկեյի կողքով: Շտարկեն յերկար ժամանակ հիշողության մեջ է պահում պրոֆեսոր Ֆաբերին, վոր մոռացել էր իջեցնել ավտոմոբիլային ակնոցները:

4. ԲԱԼԼՈՆՆԵՐԸ

Հաղորդակցութայն նեղ անցքում հրաձիգները կաշում եյին պատերին, վորպեսզի թողնեն անցնելու ծանր շնչող, ամեն ըուպե սայթաքող մարդկանց, վորոնք անհասկանալի բեռ են կրում: Հավանորեն այդ մարդիկ վաղուց եյին կրում իրենց բեռը և բռնել եյին դեպի առաջին գիծը տանող ճանապարհը:

Հրաձիգներին սկզբում թվաց, թե դիակ են տանում, հետո թե արկ են տանում, և նրանք զարմանում եյին, վոր այդ ձեռով բոլորովին մութի մեջ չդիտես ինչու տեղի յե ունենում փոխադրումն արկերի, և ի՞նչպիսի հսկայական արկերի:

Մարդիկ փայտածողերով կրում եյին հանելուկային մետաղյա բալլոնը, և նրանց պղտոր շնչառությունը խուպտութայն և խեղդված հազի հետ ցույց էր տալիս, վոր բեռը հեշտ չէ:

— Այդ ի՞նչ բան է, ե՛յ ընկեր, — հարցրին նրանց, բայց բեռ տանողները առաջ չարժվեցին ու ճոճվելով կորան լսավարում: Հրաձիգների հանդեպ գալիս էր հաջորդ գույգը՝ փայտածողերի վրա կրելով ճիշտ նույնպիսի արկ: Նրանց հետեից, վոչ հեռու տարածու-

Թյան վրա չարժւում էյին դարձյալ ուրիշները: Թւում էր, թէ խավարն է ծնում այդ անհայտ բանի բեռնա-
կիրներին մի տարրորինակ և ոտարոտի քմահաճույքից
դրդւած:

Հրաձիգները շունչը պահած կանգնել էյին, իսկ
բալլոններով մարդիկ անընդհատ անցնում էյին ու
անցնում նրանց մոտով: Հրաձիգներն հաշվեցին արդեն
քսան չորս բալլոն, և յերթին դեռ վերջ չկար: Նման
բան նրանք չէյին տեսել խրամատային ամբողջ կյանքի
ընթացքում:

— Ընկերներ, այդ ի՞նչ են դրանք: Ինչո՞ւ են
դրանք լցւած:

— Գազարի մարմելադով, — ասաց մի մուսլ բեռ-
նակիր՝ քրտինքը թւքով սրբելով:

— Յես վո՞րտեղից գիտեմ, մենք ինքներս չգի-
տենք, — ասաց մյուսն ավելի ուրախ, — յես կարծում
եմ, վոր այսպէս մենք մինչև Փարիզ ենք կրելու, յեթե
չսատկենք ավելի վաղ:

— Վո՞ր զորամասն է, — հարցրին հրաձիգներն ար-
դեն քառասուն յերեք բալլոնն անցնելուց հետո:

— Պատժական վաշտը, կալանավորներ, գնդացի-
րային միս, — համարյա բարձրաձայն պատասխանեց
կանգ առած մի զինվոր՝ բալլոնը նեղ անցքի պատին
դեմ տալով: Հրաձիգները կամացուկ շփացրին:

— Գնդացիւրային միս ենք մենք ինքներս, — ասա-
ցին նրանք, և զայրույթն արդեն սկսում էր զարթնել
նրանց մեջ այդ անդրչիւրիմյան յերթի, այդ անմիտ
կանգառումի, այդ նեղ անցքի համար, վորը թույլ չէր
տալիս ցրվելու, իսկ խրամատի ափը դուրս դալ վոչ
վոք չէր ուզում: Յերկնքում լուսարձակներն էյին թա-
փառում, և յուրաքանչյուրը գիտեր, թէ այդ ինչ է
նշանակում:

Ձինվորի ընկերը, վոր իրեն գնդացիւրային միս ան-
վանեց, նույնպէս հենվեց պատին՝ չնայած այն բանի,
վոր նրան արդեն նոր դույզ էր մոտենում:

— Ձե՛մ գնա, — ասաց նա: Նրա ոճիքի մեջ թափ-

վում էր հողը, սակայն նա մեծ բալականություն էր
օտանում հանգստանալ ձիգ կանգնելով, մանավանդ
յերկար անցումից հետո, յերեք նա քայլում էր կռացած,
ինչպէս կապիկը:

— Աստե՛ն, հիմարություն մի՛ անի, — ասաց նրա
ընկերը, — բարձրացրու փայտածողը, գնանք առաջ.
յեթե սա մեզ նեղը դցի, և մենք սկսենք գոռգոռալ,
ի՞նչ կլինի:

— Իսկ յեթե գնդակը խփի այս անախտան բալլո-
նին, կարծում ես վո՞ղջ կմնանք:

— Իսկ ի՞նչ կա նրա մեջ, սատանան տանի, իմ
կարծիքով նա հարյուր ֆունտ է կշռում: Յեթե նա
տրաքվի, յես կարծում եմ, վոր այստեղ մի ամբողջ
կիլոմետրի վրա խորոված մսի հոտ է կանգնելու:
Գնա՛նք, գնա՛նք:

Նրանք անցան առաջ, դեպի մութ, գիշերային
կյանքը անվերջ անցքերի, վորոնք կտրաւորելով մերթ
սուղվում էյին դետնի խորության մեջ, մերթ դուրս
դալիս մինչև խղճուկ լուսավորված սև շենքերը, ուր
թագնվել էյին մարդիկ: Նրանք գնում էյին առաջ:
Ժամանակ առ ժամանակ Նրնային թվում էր, վոր նա
քնում է: Նա գնալիս ընկնում էր ամենաթափանցիկ
ինքնամոռացման մեջ: Նա զգում էր բեռի ծանրու-
թյունը և փայտածողն իր ուսերի վրա, նրա վոտքերը
չարժւում էյին, սակայն խավարը մտնում էր բերանը,
աչքերը, ականջները և դադարեցնում մարդկային ա-
մենայն շարժում, ամենայն մարդկային միտք: Ինչի՞
մասին կարելի յէ մտածել այդ խավարում՝ հոգնածու-
թյունից հեմալով, ճանկրտված ձեռքերով, ջարդված
վոտքերով, հոգնածությամբ լի գլխով:

Նրան թագրել էյին պատժական վաշտում՝ ատե-
լության իրավունք վերապահելով հանգեպայն ամենի,
ինչ վոր նա տեսնում էր: Նա գիտեր, վոր պատժա-
կան վաշտի մարդիկ հրամանատարության աչքին լուկ
նյութ էյին, վորից պետք էր աղատվել առաջին հեր-
թին, բայց աղատվել խեղացիորեն: Բալլոնների գիշե-

քայլին դադարեցրել սակայն նա չէր դուռնակել: Յեւ վոչ վոք, ում նա հարցրել էր, չէր կարողանում ասել, թե ինչումն է բանը: Շատերը կարծում էին, թե դա ա- կանների նման ինչ վոր պայթուցիկ բան է:

Նրա անցյալ կյանքը մնացել էր ուր վոր ուրիշ դարում, ուրիշ յերկրում: Կեղատոտ, գզգզված, հողա- յին լաբիրինթոսի սև անցքերը քշված, անողի, կենդա- նուն համասարեցված՝ նա չէր կարող այսոր հակաճա- ուել պրոֆեսոր Բուրխարդտին, վոգելորված յերիա- սարդի գրքային տաքարյունությամբ: Նա կարող էր լեցնել իր գրպանը մի կտոր այդ հողից, վոր մանրվել էր բահերով ու դինամիտով, խառնվել արյան ու վոս- կորների հետ, և նվեր տանել պրոֆեսորին նրա հրավի- բած ընթրիքի ժամանակ, յերբ նա կսկսի ապացուցել, թե ամեն ինչ բարեհաջող է — պետությունների սահ- մանադրությունները կատարելագործվում են:

Նա դիպավ ամրաշինական մոռացված մի բահի, վորը պատուտեց նրա անդրավարտիքը և խորն ախոսեց ծնկից ցած: Յավը նրան սուր չէր թվում. մի սպիով ավելի, մի սպիով պակաս, մի՞թե բանն այդ է:

— Ալիգա, — ասաց նա համարյա լսելի ձայնով և վողջ եյությամբ զգաց անհայտ զգացումն այն վերջին վախի, վորից զգաստանում է գլուխը և վոտքերը բամ- բակյա յեն դառնում: Նա դեռ վոչինչ չէր տեսել, իսկ շունչն արդեն կանգ էր առնում, և յերակը քունքի վրա դուրս էր ցցվել այնպիսի աղեղով, վոր նա լսում էր, թե ինչպես յերակն արյունով է լցվում: Նրա ընկերը, վորին կարծես հաղորդվեց նրա զգացումը, թեքեց գլու- խը և փակեց աչքերը՝ փայտածողը սակայն ձեռքից բաց չթողնելով: Յեւ հենց իսկույն ինչ վոր մոտիկ տեղում սպիտակ բոց յերևաց, և վայրենի հարվածը կիսեց գիշերը: Սպիտակ ամպի միջով կապտակարմիր շերտեր անցան, և սև, գիշերից ել սև, թեքված սյունն ընկավ այնպիսի կոճառոցով, վոր ծնոյունները կծկվեցին:

Նրանք ուշքի յեկան, յերբ նրանց հրեցին հետևից — նրանք առաջ ընթացան և դարձյալ գլուխները ներս

քաշեցին, վորովհետև սև սյան հրաշքն այժմ աջ կող- մից էր ստեղծվել և Նրնայի գեմքի լայնությամբ, վորպես խոնավ, խունացող, սև ձեռնոցի հետք, նստել էր ցեխի կտորը: Նրնան քսելով տարածեց ցեխը, և նրանք շարունակեցին ճանապարհը:

Այժմ կանգնել էին առջևից գնացողները, կարծես նրանց հրամայել էին կանգնել: Քարուքանդ անցումի մոտ կիսովել էր բեռնակիրների մի ամբողջ շարան: Լուսարձակը չըջում էր նրանց վրա՝ անողոք կերպով բացելով իր լայն սպիտակ սղոցը: Լուսարձակը հասավ նրանց: Մարդիկ անշարժացան: Իեմքերը դարձան կավ- ճային: Ձեռքերը կապտեցին, կարծես նրանց սպիրտի մեջ էին գցել: Բալլոնների աղոտ լույսը ծածկվեց սառնամանիքի շերտով: Մարդկանց այտերը ներս ըն- կան: Ինչ վոր մեկը լաց յեղավ վախից: Նրան սուս կացրին: Մարդիկ կանգնել էին առանց շարժվելու: Լուսարձակը շոշափեց դեմքերը, կանգ առավ բալլոն- ների վրա և խստորեն թեքվեց մի կողմ: Մարդիկ քարշ յեկան առաջ: Բայց հազիվ նրանք մի քանի տասնյակ քայլ էին արել, յերբ ուրախ շվոցով յերկինք յեկավ հրթիռը: Նա գնում էր՝ բարձրություն գրավելով, շա- րունակ վեր ու վեր իր սրածայր սպիավոր կրակով, հետո կանգ առավ, ճայթեց, և յերեք սպիտակ թելերի վրա կախվեցին յերեք փոքրիկ լուսիններ, և այդ լու- սիններն սկսեցին գիշերը ցերեկ դարձնել: Այդ բանը նրանց հաջողվեց ժամանակի այնպիսի տեվողությամբ, վոր կարելի չէ մեռնել սրտի պայթյունից:

Լուսինները փայլում էին մեռյալների դաշտի վրա, վորովհետև մարդիկ կանգնած էին վորպես պա- տերին թիկն տված մեռելներ: Վոչ վոք չէր շնչում: Նրնան ճանկրում էր հողը իր ազատ ձեռքով, և հողը մեռած էր, սառն, անուրախ:

Լուսիններն հանդան: Յերթն անընդհատ շարու- նակվում էր: Նրանց մոտով խցկվեց մի մարդ՝ խուլ փսփսալով. «Ձգո՛ւշ, ավելի զգուշ, լայն տարածու- թյամբ, վերջին քայլեր, կռացե՛ք, հաղորդեցե՛ք հե-

անվյալներին, վորպեսզի լուռ քայլեն, վորքան կարելի
յե լուռ»:

Անցքերն սկսեցին ճյուղավորվել: Ամեն մի ճյուղավորման առջև սպասող մարդիկ էյին կանգնած: Նրանք հետագա ճանապարհն էյին ցույց տալիս: Ի՞նչպես եր հնարավոր տեսնել այդպիսի խավարում — այդ մասին վոչ վոք չեր մտածում: Գնում էյին անկարգ: Վո՛չ, նրանք արդեն չէյին գնում: Նրանք փոխում էյին վտերն այնպիսի դժվարությամբ և այնպիսի ծանր մտահոգությամբ, վոր կարծես ապակյա վաղեր էյին տանում: Երնան գայրույթով եր լցված մինչև բուկը: Նա յերբեք չեր զգացել մահը վորպես ցրում և անհետացում իր վողջ էյության, չեր զգացել այնպես պարզ, ինչպես հիմա: Նա չեր հիշում՝ արդյոք գիտակցորեն արավ նա այդ բանը, թե իրոք վոտըը սխալ դրեց: Բալլոնը զրնգաց այդ միանգամայն լուռթյան մեջ, բալլոնը նրա փայտածողից վար սահեց և պարզ դողանջով գարկվեց ներքևում ինչ վոր ծառի: Արդյոք դա խրամատի շրջափա՞կն եր, ու՞րա կոծումից տակնուվայր յեղած, թե պատահական գերան — այդ յերբեք նա չիմացավ:

Արյունը գլխին խփեց, վորովհետև հենց անմիջապես, կարծես կողքին սկսվեց հրաձգություն, հետո հերթը որսպահ զնդացրին անցավ, ուրկոչեառով թռչկոտող գնդակները յետ վոստներով անտեսանելի վահաններից՝ պատկերավոր կերպով շվշվացնում էյին իրենց վախճանը:

Պայթուցիկ գնդակները լույս էյին տալիս: Թվում եր, վոր հիմա ամեն ինչ կծածկվի ընդհանուր հրի կատաղի տենդով, սակայն իրարանցումն անհետացավ այնպես հանկարծակի, ինչպես և սկսվեց: Վերջին գնդակները թավալվոր գալով՝ թաղվեցին հողում, Երնայի առաջ կանգնել եր մի մարդ, վոր թափահաբում եր նրա ուսերը, և հենց բերանի մոտ Երնան զգաց մաուղերի պաղ հոտը: Մարդը կանչում եր խեղդված ձայնով. «Յեթե դու, յեթե դու մեկ ել վայր գցես բալլոնը, յես կգնդակահարեմ քեզ տեղնուտեղը»:

Յեվ նա իսկույն դնաց նրա հետքից, այնպես վոր նրա շնչառությունը լսում եր Երնան այնպես մոտիկ, կարծես թե նա նստել եր նրա մեջքին: Յերբ Երնան սայթաքում եր, մաուղերի փողը ցցվում եր նրա ծո՞ճրակին: Չորս մարդ ընդունեցին նրա բալլոնը և տարան այնքան անաղմուկ, կարծես այն վոչինչ չեր կշռում: Երնան թեթևացած չունչ քաշեց: Սպան անհետացավ:

Բոլոր բեռնակիրները ձեռք-ձեռքից բռնած՝ խորասուզվում էյին ամենախոր խավարի մեջ, և դա բլինդաթ եր: Մի քանի տասնյակ մարդկանց տաք շնչառությունը ջերմացնում եր Երնային: Նա աղոտ կերպով հիշեց եսկիմոսներին, վորոնք մեռնում են ճյուղե խրճիթներում իրենց շների հետ միատեղ: Դա առաջին հիշողությունն եր գրգռի աշխարհից, աշխարհ, վաղուց կործանված, ինչպես Սալանտիդան: Նա պառկեց յերկու անտեսանելի հարևանների մեջտեղը: Ծխախոտների կրակները կայծկլտում էյին նրա առաջ:

Ինչ վոր մեկի ձայնը լսվեց վերևում: Մարդը խորսում եր բլինդաթի սանդուղքից՝ չհողալով՝ լսում են են իրեն, թե վոչ: Նա սովոր եր խոսել խավարի մեջ մրսած, վոռնացող ձայնով, վոր վոչ մի վստահություն չեր ներշնչում:

— Հանգիստ կես ժամ — չծխել — է՛յ դուք եղտեղ, արիստոկրատներ:

Չայնը կորավ, բայց կրակները մնացին: Մարդիկ ովկիանոսի հատակում, վորոնք իրենց ջրահեղձ են կարծում, կարող են իրենց թույլատրել չապլություն՝ չվախենալ մրսած ձայներից:

Մեկը մի կտոր հաց դրեց Երնայի ձեռքը: Մատների վրա հոսում եր սառն ճարպը: Նրա հետ բալլոն կրող ընկերն ասաց կամացուկ. «Կե՛ր, յես այնտեղ, կայտնում յերկու բանկա գողացա: Սրանք կոնսերվ են, մի՛ վախենա»:

Յեվ նա սկսեց ուտել կպշուն, մաղմղուկներով միսը, վորից քրտինքի և հողի հոտ եր գալիս: Նա չտապ կշտանում եր՝ պահպանելով յուրաքանչյուր փշրանքը:

Չախակողմի հարևանը խոստացնում էր: Բլինդաժում լավում էր գտնված խոսակցութեան աղմուկը: Մեկն սկսեց հազալ՝ բերանը ձեռքով ծածկելով: Այն տպավորութիւնն էր ստացվում, վոր այդ մարդուն անընդհատ հարվածում են մեջքից: Աջակողմի հարևանը վերջացրեց ծամելը:

Նա թեքվեց դեպի Երնան.

— Դու չե՞ս քնում, Աստեն:

— Յես չեմ քնում, Ծրից: Ի՞նչ էս ուզում: Ծնորհակալութիւն կոնսերվների համար:

— Թող: Յես հիմա իմացա, թե ինչումն է բանը: Թեկուզ նոնակն ինձ պատառոտի, բայց յես քիչ եմ հասկանում: Դու գիտուն ես, գուցե բացատրես: Գիտե՞ս, թե այդ բալլոններով ասում են, ինչ էյինք կրում:

— Նո՞ւ:— Երնան մատները լիզելով՝ անտարբեր լսում էր չշուկը:

— Նրանց մեջ գաղ է:

— Գա՞ղ: Ի՞նչպիսի գաղ:

— Յես հենց քեզ եմ հարցնում՝ ինչպիսի գաղ: Այն, վոր փողոցներում է վաւում, թե ինչ:

— Վէ՛ր կենալ, — ասաց մրտած ձայնը անտեսանելի չեմքից, — մեկ-մեկ դուրս յեկեք կամացուկ: Չծխե՛լ:

5. ԿԵՆՍԻՆ

Ժան Կենսին ամբողջ օրը հիանալի տրամադրութեան մեջ էր: Այնտեղ, ուր նա յերեկ տեսել էր մի չաղիկ առնետ, այսօր էս տեսավ նրան: Յեվ անդամ առնետը զվարճացրեց նրան:

— Քե՞զ ել են զորակոչի յենթարկել, — ասաց նա տեղից չշարժելով, — վո՞րտեղ է հապա քո գենքը, շուն:

Առնետը նստած էր ու քորում էր իրեն. հաստիկ, խրամատային առնետ, զգլիկի, ամբողջացած ներկայացուցիչն իր ցեղի: Նա Ժանին ցույց տվեց իր մանր,

նեղ ատամները, վորոնք ծածկված էյին ինչ վոր բորքոսով:

— Դու, ինչպես յերևում է, նաև ծիծաղել դիտես, — ասաց նա, — իհարկե, դու մեզ հետ ճարպոտ ես ապրում, — այդ յերևում է, բայց մենակ այդ ճիշտ չէ: Մեզ ընկնում են բոլոր վտանգները, իսկ քեզ՝ բոլոր բավականութիւնները: Դու ճարպակալում ես մեր արյունով, վորպես բանկիրը բորսայում, բայց դա գործ չէ: Դու ազատ ժամանակդ մտածիր այդ մասին, ժամանակ բավական չատ ունես: Յեվ մի կերպ այնպես արա, վորպեսզի այդ բանը շուտ վերջանա:

Նա անզդու չարքաւ չարժեց հրացանը, առնետը փախաւ: Նրա նեղ, ողակալոր պոչը մի բոպե դուրս էր ցցվել փոսի միջից, հետո նա յեկ անհետացաւ: Կենսին նայեց պատվարի վրայից: Յերկաթալարե փակոցի տխրադին շարքերը, գերմանացիների խրամատները, ջրով լցված փոսերը, քանդված հողը, յերկաթալարերն ու սյուները՝ այստեղ ու այնտեղ դատարկ պահածոների տուփերը քարշ ընկած: Տաղտկալի յէ:

— Յես այնպես եմ վարժվել այս տեսարանին, ինչպես Լուարայի գետափին: Այ միայն պատերազմը վերջանա... — նա մտածմունքի մեջ ընկաւ:

Նա խոսում էր ինքն իր հետ, վորովհետև նրա բոլոր ընկերները քնած էյին, բացի ժամապահներից, վորոնք ուսումնասիրում էյին պարկերով ծածկված վահանի միջի զրահապատ անցքը: Մոտակա ժամապահը նայում էր նրա կողմը՝ նշաններ անելով: Կենսին մոտեցաւ նրան: Գյուղացի տղան չգիտեր՝ արժի արդյոք կանչել յենթապային:

— Յենթապան սափրվում է, — ասաց Ժանը, — նա քո ինչի՞ն է պետք:

— Գերմանական սափառնակ, տես ինչպես է պտտվում, պտտվում, կարծես զարկված է, դու տես վոր չնստի:

Նրանք յերկուսով սկսեցին նայել: Գերմանական սափառնակը չէր ել մտածում ընկնելու:

— Այ ենտեղ ընկած ե Բարազեն, — ասաց ժամապահը, — այ են յերկաթալարի վրա, արդեն յերրորդորն ե: Յես ուզում եմ խնդրել յենթասպայից, վոր թույլ տա գնամ Բարազեյի գլխիկի հետեից:

— Նա քեզ ինչի՞ համար ե հարկաւոր:

— Նրա գրպանում մնացել են այն զատերը, վորոնցով մենք խաղում ենք: Տխուր ե առանց զատերի, իսկ Բարազեյի հետ նրանք կկորչեն: Հենց դրա համար ել ուզում եմ ետոր իրիկուն ման գալ նրանց հետեից: Զատերն ենպիսի լավ բաժակի մեջ են: Նրանք անպայման իրենց տեղումն են: Նա պահել եր զատերը ներսի գրպանում:

— Յես նույնպես կդամ քեզ հետ: Մեղնից մեկնում մեկը բարեհաջող կերպով տեղ կհասցնի: Դու վո՞նց ես կարծում:

— Նայի՛ր մի, տես ի՞նչ ե անում եղ խողը:

Գերմանական սալառնակը ծխի մի սև սյուն թողեց, և սյունը կախ մնաց: Հազիվ նա հասել եր գետնին, յերբ ինչ վոր հեռվից վեր արձակվեցին թնդանոթները, և առաջին նռնակներն ընկան խրամատի առջև՝ պատռելով պարկերը, ջարդելով տախտակները, կտրատելով ծածկարանների վահանները: Յեվ դա արդեն ոմբակոծութունն իր: Յենթասպան ինքը դուրս թռավ: Հայանվեց լեյտենանտը: Պատվարի յետևի տարածութունն իր ճանճրացնող յերկաթալարով և զզվելի փոսերով տասը բոլեյից հետո անճանաչելի դարձավ: Արկերի բոլոր չհասումներն ընկնում եյին այդ տարածության վրա: Մեկը մյուսի հետեից բարձրանում եյին հողի սև շատրվաններ և այնպես հաճախակի, վոր կարծես թե այնտեղ խայտում եր արտասովոր կետ ձկների մի ամբողջ յերամ:

Բոլորը պառկած եյին փորների վրա, կանաչ գեմքերով: Նռնակները, վորպես ելեքտրական գութաններ, հերկում եյին հողը: Այդպես եր յերեք որ առաջ, այդպես ե և հիմա:

— Պատրաստվել գրոհի, — ասում ե լեյտենանտը,

և յենթասպաները կրկնում եյին նրա կարգադրութունը: Բլինդաժներում ստուգում են ձեռքի նռնակները: Գնդացիրային ծածկարաններում պատրաստվում եյին հակահարձակման: Այդպես եր յերեք որ առաջ, այդպես ե և հիմա:

Կենսիի զվարթութունը չեւ անցնում, չնայած այն բանի, վոր նա ծամում եր մի պտղունց ծխախոտ՝ մեղմացնելու համար ոմբակոծութունից առաջացած ատամնացավը: Նռնակների տարափն անցավ: Ամենուր, ինչպես մայիսյան փոթորկից հետո, շրջում եյին բաց մանիշակադույն ամպիկներ, վորոնք մերթ կծկըվելով, մերթ շերտավորվելով՝ մտնում եյին փոսերի մեջ: Այդպես եր յերեք որ առաջ, այդպես ե և հիմա:

Ամպերի բեկորների հետեից ընթանում եր մի կանաչադույն-թանգոտ մշուշ, չխառնվելով նռնակների ծխի ամպիկների հետ: Յերեք որ առաջ այդ չկար, այդ չի յեղել յերբեք: Մշուշն առաջանում եր, ինչպես ծովի վրա, հավասար, հանգիստ, վոչ մի ցունկութուն չունենալով մինչև յերկինք հասնել, նա ավելի շուտ ընթանում եր մի տեսակ կորացած, և նրա կանաչավուն պղտորության մեջ կորչում եր ուղղմադաշտը: Պատվարներն արդեն չկային: Բոլորն սկսեցին փախչել: Վոչ վոք չգիտեր, թե ինչ տեղի ունեցավ: Կենսին թռավ բլինդաժը, բայց գրոհի միտքը դուրս չեց նրան այնտեղից: Զոհվել ինչպես առնետը, ձեռքի նռնակից կտոր-կտոր յեղած, կամ գանգի վրա հարված ստանալ — դա գործ չե:

Նա դուրս թռավ վերե: Նա դեմ ընկավ պառկած յենթասպային: Յենթասպան պառկել եր փորի վրա: Նա վիրավորված չեւ: Զղածգորեն ամբողջ դեմքով նա ճմռում եր հողը, ցեխոտ, խրամատի մուգ հողը: Յենթասպան, հավանորեն, խելադարվել եր: Կենսին վազում եր խրամատի միջով, և ամեն տեղ մշուշի մեջ պառկած եյին մարդիկ: Նա կոխտտում եր նրանց, ընկնում եր, բարձրանում և չեւ կարողանում բան հասկանալ: Հանկարծ ամեն ինչ սկսեց լողալ նրա աչ-

քերի առջև: Հետո գիտակցությունը տեղն յեկամ: Նա շնչասպառ եր լինում: Անհասկանալի յեր, թե ինչից է նա շնչասպառ լինում: Նա ձեռքերով սկսեց լուղորդի շարժումներ անել, բայց լողալու տեղ չկար: Նա սկսեց հազալ, ինչպես թոքախտավոր: Նա փռչում էր, քթից հոսում եր ջրի թե արյան նման ինչ վոր բան, նա չեր նայում, գլխում խշշոց եր: Կոկորդն սկսեց սեղմել ինչ վոր ուետինե ողակը, հարյուրավոր ասեղներ ծակում եյին յերկինքը. նա շունչ քաշեց, նա կուլ տվեց մի կտոր այդ կանաչավուն մշուշից:

Լուսարայի գետակը հոսեց մոտիկից, ինչպես կինո նկար: Այդ նկարը պետք չեր: Հապա ի՞նչ եր պետք: Պետք եր փնտրել միանգամայն անհրաժեշտ ինչ վոր բան: Կայծակի արագությամբ փերանայել հիշողության բոլոր տպավորությունները: Ականջներին խշշյունն անտանելի դարձավ: Բերանը լի յեր թաց լորձունքով, կարծես թե նա տիղմ եր կերել: Կանաչ մարդագետիկները, ծառերը թռչում եյին, ինչպես պատառոտված գրքի թերթեր, բայց այդ այնուամենայնիվ այն չեր: Հրացանն ընկավ նրա ձեռքից: Նա վազեց դեպի պատվարը: Մշուշի ծալքերում նա տեսավ ամենհի մենակությունը: Աշխարհը վերջացավ: Ամեն կողմ վազվզում է ընկնում են մարդիկ: Հենց դա յե պատերազմի վախճանը: Ի՞նչ տարրերնակ է նա վերջանում:

Սիրտը կանգ եր առնում: Անհրաժեշտ եր գտնել շուտով, շուտով: Մլացավ լարորատորիայի ձերմակ չենքը, պատերի հախճապալը, ծուռ դեմքը լցվեց կանաչագույն ջրով, բայց նա անձնատուր չեր լինում: Նրա վրա փլվեցին գույնզույն փորձանոթները, մրդավածքների պահարանները, սպիրտի ալրիճների լեղվակները, սպիտակ բալախոնը: Այո՛, իհարկե, Ժան Կենսին հիշեց. նա ինքը քիմիկոս է:

Պատվարի վրա կանգնած, յերերալով և ձեռքերը թափահարելով՝ նա ներշնչում եր կանաչ մշուշը, և ցերեկվա զվարթությունը տասնապատկված՝ վերա-

դառնում եր դեպի նա: Նա արդեն չեր զգում ուետինե ողակը կոկորդի վրա, նա արդեն չգիտեր՝ մնացել են արդյոք իր դեմքի վրա բերան կամ աչքեր, բայց սուզվելով կանաչ խավարում՝ նա գոռում է,— նրան թվում է, վոր ինքը գոռում է,— այն միակ բանը, ինչ պետք եր գոռալ:

— Դա քլոր է,— գոռում է նա,— չե վոր դա հասարակ քլոր է:

Յեվ յերկրում իջնում է վերջին լուծթյունը, վորը ձեղքում է սևաթույր վորտոր: Դա վոչ նուակ է և վոչ ել ականի պայթյուն: Այդ կոշիկներն են, Ժան Կենսին գինվորական կոշիկները և Ժան Կենսին գինվորական ուսերը դարկվեցին խրամատի հատակին:

ՅԵՐՐՈՐԴ ՄԵՍ

1. ԱՆՆԻ

Ձայնեղ տղաների յերամբ ներխուժեց կաֆե՝
թարմ լրագրների թերթեր տեղալով սեղանների վրա։
Նրանք ձայնում էյին վառվռուն ջահելության ամբողջ
բերկրանքով, նրանց, այդ ապագա զինվորների կո-
կորդներն արդեն այժմ աշխատում էյին պաշտպանու-
թյան համար։

— Հսկայական հաջողութիւն...

— Առաջին անգամ՝ պատերազմների պատմութիւնն
մեջ...

— Արժանի պատասխան թշնամուն...

— Դաշնակիցների ռազմաճակատի արյունալի
ջախջախում։ Հազարավոր սպանվածներ։ Սոչո՛ր հա-
ջողութիւն։ Մահաբեր դաղեր։ Առաջին անգամ...

Մարդիկ թողնում էյին գավաթներն ու սնակները
և խլում լրագրները և կռանալով աթոռների մեջքի
վրա՝ կարդում էյին հարեանի ուսի հետևից, ուռա
կանչում, ինչ վոր մեկը հիմն եր պահանջում։

Պատուհանի մոտ նստած ջահել կինը վեր թռավ
տղաների առաջին կանչից և յերկար ժամանակ մանրա-
գրամ եր փնտրում, վորպեսզի վճարե լրագրի համար։
Նա բացեց լրագիրն և սկսեց կարդալ՝ խորանալով յու-
րաքանչյուր տառի մեջ։ Վոչ վոր ուշադրութիւն չե-
ր դարձնում նրա վրա։ Ամեն մարդ իր ուղածի պես եր
բացատրում լուրը։ Այո՛, յերեխաները ճիշտ էյին կան-
չում։ Կինը կարդում եր. Լանդեմարկի և Բիկսշուտի

միջև, ուժեղ ուժակոծութիւնից հետո բաց էյին
թողնված հեղձուցիչ գաղեր։ Ամբողջ դիրքն անցել է
ժեր ձեռքը... Գրոհները կրկնվել են ապրիլի քսանչոր-
սին և քսանհինգին մեծ հաջողությամբ։ Իսկից դեպի
արևելք գտնվող շրջանում։ Մեր կորուստներն աննշան
են։

Կինը չկարդաց շարունակութիւնը։ Նա ծալեց լրա-
գիրը, թողեց կաֆին։ Նա քայլում եր սևացած ու դո-
ղալով, կարծես թե ինքն եր կուլ տվել գաղը։ Անցորդ-
ները ճանապարհ էյին տալիս նրան, վոմանք ել յեա
էյին նայում։ «Յերեկ այդ կինը վորեւէ մեկին կորցրել
ե պատերազմում, — մտածում էյին նրանք, — եհ, ինչ,
դա սովորական բան ե»։ Ժամանակ առ ժամանակ կինն
զգաստանում եր և կանգ առնում, վորպեսզի չունչ
քաշի։ Այնուհետև նա նորից եր վազում և վազում եր
պարզ չե թե ուր, թվում եր, թե նա հալածվում է
հետապնդողներից և նրան իսկապես հետապնդում են։
Լրագրավաճառներն ու լրագիրները գրավել էյին փո-
ղոցները. դա յերեկոյան լրագրների լույս տեսնելու
ժամն եր։ Կարծես թե կինը սարսափում եր հենց այդ
լրագիրներից։ Նա ամեն անգամ մի կողմ եր ծռում,
յերբ բնդհուպ մոտենում եր լրագիրը ձեռքերին կանդ-
նած մարդկանց։ Հուսահատութիւնը չեր իջնում նրա
գեմքից։ Յեթե մոտիկում գետ լիներ, կինն առանց
տատանվելու կնետվեր կամուրջի վանդակապատի վրա-
յից։ Յերբեք նա իր կյանքում այնպիսի վիշտ չեր զգա-
ցել, ինչպես այդ յերեկոյան ժամին։ Տներում վառվե-
ցին կրակները։

Գլխավոր մուտքի մոտ լապտերի տակ մի մարդ եր
կանգնած լրագիրը ձեռքին։ Կինը առաջ նետվեց փողո-
ցի լայնքով։ Ուղիղ նրա առջև, ողում հայտնվեց ձիու
հարթ մուրձը և ձիասարքի լաքային փայլը։ Փրփուրը
կախվել եր սանձի կզակակալ շղթայից։ Բերանից դո-
ւորչի յեր յեղնում։ Յեվ իսկույն ինչ վոր մեկը թիկուն-
քից բռնեց կնոջը, շրջեց, և բարձրահասակ մարդը նը-
րան յետ բերելով մայթի վրա՝ կշտամբանքով առաց։

— Տիկի՛ն, դա անգղուշութիւնն է:

Կինը բարձրացրեց գլուխը, ձայնը նրան ծանոթ թվաց:

— Ո՛ր,— ասաց մարդն արդեն այլայլված,— Աննի, Աննի, ձեզ ի՞նչ է պատահել, դուք հիվա՞նդ եք:

Աննին կառչեց նրա ձեռքերին:

— Դա չառ լավ է, վոր այդ դուք եք, Վիննի: Տարեք ինձ մի վորեւէ տեղ, վորեւէ տեղ: Յես խելագարվում եմ, Վիննի: Յեթե դուք իմանայիք:

Բուրխարդտը թեւանցուկ տանում էր նրան: Նա տանում էր նրան, վորպես վիրավորի դեպի վիրակապալան-կայանը: Կայանն հեռու յեր: Իրոք Բուրխարդտը տանում էր այդ կնոջն իր տունը: Աննին գնում էր՝ շուրջը նայելով, կրծոտելով շուրթերը: Նա նստեց Բուրխարդտի մեծ բազմոցում և լաց յեղավ: Բուրխարդտը նայում էր նրան՝ վշտից մեղմացած յեռանդուն դեմքին և մտածում, վոր այդ կինը դեռ գեղեցիկ է: Բարեկամութեան պարաքը պատկերացնում էր ոգնել նրան: Նա չոյեց կնոջ ուսերը:

— Աննի,— ասաց նա,— յես ձեզ առաջին անգամ եմ տեսնում արտասովես: Հանգստացեք, Աննի: Մի՞թե Կարլին վորեւէ բան է պատահել: Յես հիմա ձեզ կրերեմ: Ո՞վ է վշտացրել ձեզ:

Նա ջուր բերեց, կինը խստորեն հեռացրեց ջուրը և ուղղվեց: Հետո նրա գլուխը կրկին կախվեց, և հազիվ լսելի ասաց.

— Ինձ համար չառ ծանր է: Ներեցեք ինձ, ինձ համար չափազանց ծանր է, Վիննի...

Արցունքների մի նոր հեղեղ թափվեց նրա ձեռքերին: Բուրխարդտը շրջում էր սենյակում՝ մռայլ նայելով կնոջ յերեսին: Կինը հանեց թաշկինակը և կոխեց բերանը: Նա կոտորում էր մատները: Նրա հուսահատութիւնը ծայր աստիճանի յեր հասել. նա նստած էր փակ աչքերով. թաշկինակը վայր ընկավ:

— Հեռացե՛ք,— ասաց նա: Բուրխարդտը ուսերը թոթվելով, դուրս յելավ սենյակից: Նա գիտեր, թե

ինչպես պետք է սփռիել իր թեթևսովի բարեկամահիներին: Նա գիտեր ինչպես խոսել իր բարեկամների կանանց հետ: Նա կարողանում էր հաճոյանալ նրանց ճաշակներին՝ առանց վոչինչ զոհարելու: Նա հպարտ էր, վոր հաստատ բնավորութիւն ունի: Բայց Աննի ծարերն առանձնահատուկ մարդ էր: Իր կյանքում Բուրխարդտն յերբեք չէր մտածել, վոր Աննին կնստի իր բազմոցին՝ խեղդվելով արցունքներից, ինչպես մի ջղային աղջիկ,— նա՛ սառը, խելոք, հանդիստ Փրատու ծարերը:

Յերբ նա լսեց, վոր Աննին վեր է կացել բազմոցից, վերադարձավ սենյակը: Աննին կանգնած էր սեղանի մոտ:

— Ողեկոյոն չեյի՞ք ունենա,— ասաց նա: Բուրխարդտը բերեց նրան փոքրիկ սրվակը և յերեսսրբիչը: Աննին սրբեց արցունքները և թարմացրեց դեմքը:

— Մի զարմանք, Վիննի,— ասաց նա թախծալի ու պարզ ձայնով,— յես չեմ վործում ժպտալ, վորովհետեւ վոչինչ չի ստացվի, այլևս վոչինչ չի ստացվի: Աննի ծարերը չկա, ինչպես չկա նաև Կարլ ծարերը:

Բուրխարդտը վերցրեց նրա սառն ձեռքը և համբուրեց:

— Յես ձեզ վաղուց գիտեմ, Աննի, բայց այն բոլորից ինչ այժմ կատարվում է, յես վոչինչ չեմ հասկանում,— վոչինչ:

Աննին վերադարձավ դեպի բազմոցը: Նա հատակի վրայից բարձրացրեց թաշկինակը և սկսեց կոկել:

— Դուք կարդացի՞ք յերեկոյան լրագիրը,— հարցրեց Աննին շեշտակի նայելով նրան: Բուրխարդտին զարմացրեց նրա աչքերի մեծութիւնը:

— Ա՛յ,— ասաց նա,— դադերը... Դուք իհարկե գաղափին հարձակումների մասին եք ուզում ասել: Դա պետք է վոր գվարձալի տեսարան լինի, Աննի...

— Զվարճալի տեսարան: Դուք խելագարվել եք... Դուք վոչինչ չգիտեք: Մի մարդ է արել այդ: Համաչ-

խարհային գիտնական, ձեր բարեկամ Կարլ Ֆարերը իր սեփական կամքով դարձավ մարդասպան...

Նա խոսում էր, և նրա ուսերը ցնցվում էին ջղած-գուլթյունից:

— Ասացե՛ք բոլորը, — խնդրեց Բուրխարդտը, — բոլորը. Աննի, դրանով դուք կթեթևանաք...

— Վիննի, դուք գիտե՞ք Կարլին: Չկար մի այլ մարդ, գիտության ավելի նվիրված, քան նա: Յես քիմիկոս եմ, յես նրա ոգնականուհին եյի: Յեվ չկար ինձնից ավելի յերջանիկ մարդ, Վիննի: Ինձ հանդիմանում էյին լրջության, մշտական լրջությանս համար, բայց յես գիտեյի ծիծաղել և ուրախանալ: Մենք գիտեյինք, վոր կյանքում ամեն ինչից բարձր գիտությունն է, և յերբ յես մտնում էյի իմ լաբորատորա-կան խալաթի մեջ, բոլորովին այլ էյի դառնում:

«Այդ յերջանիկ ժամանակներ էյին: Կարլը չըջապատված էր հիանալի ոգնականուհիներով: Նրա գյուտերը հայանի յեն ամբողջ աշխարհին: Յեվ վերջերս յես իմացա, վոր լաբորատորիայի մի մասը վաղուց արդեն դառել է գաղտնի, վորը փակ է մյուս լաբորանտների համար և պահպանվում է ամբողջ պես: Յեվ լաբորատորիայում հայտնվեցին գինվորականներ: Նրանք գալիս էյին, ինչպես իրենց սեփական տունը: Յես կարծում էյի, թե նրանք պատահական փորձեր են կատարում, և հարցրի Կարլին, թե այդ ինչետեղի ունենում: Յեվ նա շփոթվեց, խճճվեց իմ աղնիվ Կարլը, ակսեց ինձ ստել և բացատրել այնպես, վոր ինձ համար պարզ յեղավ՝ գործը վերաբերում է մի լուրջ և մեծ բանի, չե վոր հենց ինքը Կարլը չեր սկսի պատահական հարցերով զբաղվել: Յես ասացի նրան այն ամենը, ինչ մտածում էյի: Յես ասացի, վոր մարդիկ յերկուսով անց են կացնում կյանքը, կիսում են ամեն ինչ, կամ թե նրանք անհայտանում են տարբեր կողմեր: Այդպես է յեղել մեզ հետ մինչև այժմ: Ի՞նչ արած, այդպես է իմ բնավորությունը, Վիննի: Յեվ նա բացեց ինձ այն, ինչի մասին յես կասկածում էյի: Յես իրավունք չունեմ

ձեզ այդ ասելու, Վիննի, դուք պետք է մոռանաք այն, ինչ վոր յես ձեզ ասում եմ, — յեթե այդ մասին իմանան ուրիշները, — ձեզ մեծ անախորժություններ կպատահեն, բայց յես չեմ կարող, չեմ կարող չասել:

Յես իմացա, վոր նա մշակել է թունավոր դաղերի կիրառումը մարտական պարագաներում: Այն բույեյին յես սառած մնացի: Դուք քիմիկոս չեք, դուք անկարող եք ձեզ պատկերացնել այդ գործի դարհուրանքն ու զազրելիությունը: Յերբեք աշխարհում և վոչ մի քիմիկոս չեր համաձայնում այդ անել: Յես իմացա, վոր գործը հեռու յե գնացել, այնչափ հեռու, վոր, ինչպես հիմա գրում են թերթերում «մեծ հաջողություններ են ձեռք բերված»...

Աննին խոսում էր արտասուքներից և հոգնածությունից խռպոտած ձայնով:

— Յես նրան աղաչում էյի հրաժարվել այդ գործին մասնակցելու մտքից: Զինվորը զինվորի դեմ — դա աղնիվ ճակատամարտ է, վորի բախտը վորոշվում է գենքի արվեստով, ուժերի հավասար մրցակցությամբ, անձնական անվեհերությամբ: Յես չգիտեմ, թե ինչո՞ւ համար է գիտավորյալ սարսափելի հարձակումը վոչընչով չպաշտպանված մարդկանց վրա: Նա ինձ ասում էր, վոր անդլիացիք գործադրել են դազը արկերի մեջ, վոր պետք է պատասխանել նրանց՝ հայրենիքի փրկության համար: Յես դրան չեմ հավատում, այդ մասին կողադակեյին մեր թերթերը: Այդ որվանից յես գիշերները չեյի քնում, բայց հավատում էյի, վոր Կարլը վերջին բույեյին կհրաժարվի, կդադնի իր մեջ արիություն՝ չդառնալու հաղթարարների դահիճը, թեթև կերպով դարձած դահիճը, Վիննի, մի մարդ, վոր բոլոր ուսկերից հեռու նստած՝ սառնարյունորեն վոչընչացնում է իր նմաններին, վորպես առնետների: Մի՞թե դրա համար եր նա անցել գիտնականի այնպես փայլուն, այնպես զարմանալի ուղին, վորպեսզի այն լցնի դիակներով, վորովհետև գիտեք, Վիննի, այդպիսի գենքը չի կարելի անպատիժ կերպով աշխարհ հանել:

Դրանումն է նրա անեծքը: Նա ավելի ուժեղ է աշխարհում գոյութուն ունեցող բոլոր գեներերից: Վռչ մի նոնակ չի համեմատվի գաղի հետ: Յեւ գաղերը մահաբեր կոմբինացիաների անթիվ պաշար ունեն: Բոլոր յերկրների քիմիկոսները հայրենասիրությունից կամ ինքնապաշտպանման զգացումից դրդված՝ կսկսեն նույն աշխատանքը: Վիննի, ի՞նչ կլինի մարդկության հետ: Այն մարդը, վոր հնարել է գնդացիքը, հրեշտակ է Կարլի հետ համեմատած: Նա խոսք ավեց, վոր ինքը չի մասնակցելու այդ գործում, և յես յերեք որ ապրում էյի այնպես, կարծես թե հենց նոր էյի ամուսնացել նրա հետ, յերջանիկ, այնքան յերջանիկ, վոր իմ ամբողջ լաբորատորիան ծիծաղում եր ինձ վրա՝ չհասկանալով, թե բանն ինչ է:

«Յեւ այնուհետև նա մեկնեց... Նա գնաց, ինչպես ինքն եր ասում, գիտական գործուղման: Յեւ նա դեռ չի վերադարձել մինչև որս: Շատ ժամանակ է անցել, և նա տակավին չկա: Նա գրություններ է ուղարկում, վոր գործուղումը շուտով կվերջանա: Վորտեղ է, յես չգիտեմ: Յեւ հանկարծ ինձ գաղտնի հայտնում են, լրագրներից դեռ շատ առաջ, գաղալին դրոհի մասին:

«Ինձ պատմեցին մանրամասնություններ, վորոնցից, Վիննի, մաղերս փշրադվեցին: Յես չեյի կարողանում ուտել, կորել եր իմ քունը, յես այլևս չեմ կարողանում նայել մարդկանց աչքերին, յես այլևս չեմ կարողանա Կարլին տեսնել, իսկ առանց նրան յես անկարող եմ ապրել, Վիննի: Ահա և բոլորն: Սա այնպես պարզ է: Նա խախտեց ինձ տված խոսքը: Նշանակում է՝ նա ընտրություն կատարեց: Նշանակում է՝ ամեն ինչ վերջացած է: Ինձ ի՞նչ նրա բացատրությունները: Յես գիտեմ, վոր նա ամեն ինչ կբացատրի: Նա խելոք է — նրանից խելոք քիչ մարդ կա աշխարհում: Յես սպասում էյի լրագրներին, բայց լրագրները լուծվեցին: Յեւ այսօր յերեկոյան թերթերն հաստատեցին ամեն ինչ, ամեն ինչ, և այն ինչ յես չեյի սպասում —

վոր այդ դեռ սկիզբն է սարսափների, միմիայն առաջին փորձերը, սակայն վոչ վերջինները:

— Աննի, յես ձեր հին բարեկամն եմ, — ասաց Բուրխարդտը, — մենք ապրում ենք ծանր ժամանակ: Շատ բան մեր ուժից վեր է: Մենք կռանում ենք պատերազմի ծանրության տակ, բայց, Աննի, դուք ճիշտ չեք. մի տեսակ յերազկոտություն կա ձեր խառնվածքում, զարմանալի զուգորդում խելքի և կանացիության...

— Վիննի, մի՛ կեղծեք, մի՛ փորձեք ինձ սփոփել, յես չեմ շարժվել ինչ վոր հոգեկան հենակներով: Մտածեցեք դուք, Վիննի, չե վոր մինչ մենք նստած ենք այստեղ, նա այնտեղ նորանոր հազարներ է սպանում, նա խեղդում է նրանց, ինչպես խեղդում են բանդիտները՝ կոկորդից բռնելով, վորովհետև քրորը, վորով նա խեղդում է, ջլատում է շնչառությունը:

— Աննի, իսկ յեթե դուք սխալվում եք, — ասաց Բուրխարդտը, — իսկ յեթե դա այնուամենայնիվ նա չէ: Իսկ յեթե նա հանգիստ նստած է մի վորևէ լաբորատորիայում և ամենեին ել չի մտածում և վոչ մի սպանության մասին: Ո՞ւր են ձեր ապացույցները:

Աննին կիտեց հոնքերը: Նա նայում եր Բուրխարդտին համարյա թշնամորեն:

— Ուր են ապացույցները, — նրա այտերը կընձռոտվեցին. աչքի առաջ նա տղեղանում եր, — ապացույցները. հենց այսօր յես կստանամ ապացույցներ:

Աննին վեր կացավ:

— Յես ձեզ չեմ թողնի, — բացականչեց Բուրխարդտը, — վոճրադրություն է ձեզ այդպիսի վիճակում բաց թողնելը: Դուք մինչև տուն չեք հասնի: Դուք ավտոյի տակ կընկնեք: Դուք չեք նայում, թե ուր եք դրնում: Յես ուժով ձեզ կպահեմ, սակայն բաց չեմ թողնի: Կարլը չի ների ինձ, յեթե ձեզ բաց թողնեմ այսօր:

— Յես փոքր աղջիկ չեմ, և տպավորությունների փոփոխումն արդեն վոչ մի դեր չի խաղում: Յես

ձեզ հասկանում եմ, Վիննի: Իհարկե կարիք չկա ձեզ վրա պատասխանատվություն դրել այսօրվա համար: Դուք բարի և հին ընկեր եք յեղել: Շնորհակալություն ձեզանից: Յես արդեն հանգիստ եմ: Յեթե ուզում եք, կարող եք ինձ տուն ուղեկցել: Յես իսկապես հոգնել եմ և ցանկանում եմ հանգստանալ: Ներեցե՛ք արտասուկներիս համար: Յես ինքս ել չգիտեյի, թե կարող եմ այդպես լաց լինել...

Բուրխարդտն ուղեկցեց նրան մինչև տունը: Նա գնում եր ու խոսում աննշան բաների և աննշան մարդկանց մասին, վորպեսզի զվարճացնի Աննիին: Բուրխարդտն թվաց, վոր այդ հաջողվեց իրեն: Նրանք հանդարտ մտան փարերի բնակարանը, և Աննին զանգահարեց ու կարգադրեց թեյ մատուցել: Հետո նա գնաց և փոխեց շորերը: Նրանք թեյ էյին խմում, և Աննին այլևս վոչ մի խոսք չասաց կատարվածի մասին:

Գնալիս՝ Բուրխարդտը թույլտվություն խնդրեց առավուրը հեռախոսով զանգահարել Աննիին:

— Զանգարե՛ք, — ասաց նա, և նրանք հրաժեշտ տվին, կարծես թե վոչինչ չեր պատահել:

Աննին կանգնել եր պատուհանի մոտ և նայում եր, թե ինչպես Բուրխարդտը գնում և փողոցով: Յերբ Բուրխարդտը ծովեց անկյունը, Աննին շտապ հազնվեց և դուրս յեկավ փողոց: Նա կանգնեցրեց ավտոն և ասաց շոֆերին.

— Թագավորական ինստիտուտը:

Ծանր շենքը յուրաքանչյուր լուսավորված պատուհանով զայրացնում եր նրան: Առաջին անգամ նա զարմացավ ողի չորության և միջանցքների անտարբերության վրա: Առաջներում նա այդ չեր նկատել: Փողեյը կանգնած եր նրա առջև՝ ինչպես միշտ զարմացական և հարգալից ժպիտը բերանին:

— Հարգելի տիկին պրոֆեսոր, — սկսեց նա, բայց Աննին ընդհատեց նրան, և Փողեյը մռայլվեց. նա հավաքեց ժպիտը և ուշքը լարեց: Նրա թմկլիկ ձեռքերը թմրկահարում էյին սեղանին:

— Տիկին Աննի, վաղուց և դուք չեք յեղել մեզ մոտ, թույլ տվե՛ք ձեզ աթոռ առաջարկել:

Աննին չնստեց, նա կանգնած եր Փողեյի առջև: Նա բարձր եր Փողեյից, վոչ շատ, բայց և այնպես բարձր եր, Փողեյի աչքերը Աննիի աչքերի տակ էյին գալիս: Աննին նայում եր նրան վերից վար: Դա բնական եր, սակայն մի փոքր վիրավորական եր:

— Փո՛ղեյ, ասացե՛ք ինձ՝ վո՞րտեղ և գտնվում պրոֆեսոր փարերը:

Փողեյը զարմանք ցույց տվեց: Նա թափահարեց դուխը, և նրա աչքերը թռչկոտացին:

— Պրոֆեսոր փարերը գտնվում և Մայնցում, լաբորատորիայում: Մի՞թե դա ձեզ հայտնի չէ, տիկին Աննի:

Աննին նստեց աթոռին: Նրա ձեռքը սահեց սեղանի վրայով և գտավ Փողեյի ձեռքը: Փողեյը նստեց սեղանի մյուս կողմը: Աննին սեղմեց նրա ձեռքը:

— Ձեզ հայտնի՞ յե, Փողեյ, թե նա ուր և մեկնել Մայնցից:

Փողեյը քաշեց ձեռքը սեղանից: Աննին պահեց նրա ձեռքը սեղանի վրա:

— Նա մեկնելու յե Լեվերկուզեն և Խերխստ:

— Դուք հորինում եք տեղնուտե՞ղը, Փողեյ, թե այդչափ լավ եք սերտել հրահանգը:

Փողեյը քաշեց ձեռքը սեղանից, նա նույնիսկ պահեց ձեռքերը դրպանում: Նա նայում և չփոթված:

— Փո՛ղեյ, — ասաց Աննին հասարակ և հանգիստ ձայնով: — Միբեյի Փողեյ, յես գիտեմ, վոր դուք ինձ շատ չեք սիրում, բայց այսօր յես ձեզ միմիայն անախորժություններ պետք և ասեմ — ինչ արած. ասացե՛ք ինձ, վո՞րտեղ և գտնվում իմ ամուսին պրոֆեսոր Կարլ փարերը: Միայն առանց խորամանկությունների, առանց ձեր մշտական զիվանազիտություն, Փողեյ: Յես խնդրում եմ ձեզ:

Փողեյը լռել եր: Նա կարմրեց և սկսեց ծամել չոր-

Թունքները: Աննին նայում եր նրա աչքերի մեջ: Փողե-
լը լուռ եր:

— Փո'ղել, յես հարցնում եմ ձեզ, յեղեք կյանքում
տղամարդ գեթ մի անգամ: Մի'թե դուք դատարկ պա-
հարանի հոգի ունեք, վորտեղից անցնում են կանոնա-
վոր ողային մորիկներ և ուրիշ վոչինչ:

Փողելը լուռ եր: Նա դուրս եր ցցել ցածի շուրթը
և նման եր զայրացած բույլըող շանը:

— Փո'ղել, յես կպատասխանեմ ձեր փոխարեն:
Յես գիտեմ, թե վորտեղ և գտնվում նա: Յես ամեն
բան գիտեմ: Դուք լրագրներ կարդո՞ւմ եք, Փողել, —
յես վախենում եմ, վոր՝ վոչ...

Փողելը վախեցավ, ահա ստվերի նման անցավ նրա
դեմքի վրայով:

— Յես արդեն յերեք որ ե լրագիր չեմ տեսել: Ար-
դեն յերկու որ ե ինչ յես ինստիտուտից դուրս չեմ
յեկել, սնվել եմ բուտերբրոդներով: Հիմա այնպիսի
տենդային ժամանակ ե: Յես չնորհակալ կլինեմ, յեթե
դուք ասեք, թե ինչ կա լրագրներում, տիկին Աննի...

Աննին ասաց դանդաղ, ինչպես վոտանավորը.

— Լրագրներում տպված ե, վոր պրոֆեսոր Փա-
բերը գտնվում ե վոչ թե Մայնցում, թանգադին Փո-
ղել, և վոչ ել Լեվերկուզենում և վոչ Խերխստում —
դուք սխալվեցիք այսօր — նա գտնվում ե Բելգիա-
յում, Լանդեմարկի և Բիկսշուտի մեջտեղը, Իպրից
դեպի արևելք, ահա թե վորտեղ ե գտնվում իմ ամու-
սինը, ճի՞շտ ե այդ, Փողել:

Փողելը նայում եր տանջված աչքերով:

— Շի՞շտ ե այդ, Փողել: Հապա ինչո՞ւ եյիք ծած-
կում ինձանից:

Փողելը կրճտացրեց ատամներով և փակեց աչքե-
րը:

— Այդպես, Փողել, և նա գազային գրոհներ ե
անցկացնում այնտեղ: Գազային գրոհները, Փողել,
մեծ հաջողություն ունեն, դուք այդ պետք ե գիտե-
նաք, ձեզ այդ հետաքրքիր ե գիտենալ: Դուք բաժին

ունեք այդ հաջողության մեջ: Այսուհետև թունավոր
դաղերը կնքված են ձեր անունով: Պահանջեցեք ոտճկի
ավելացում և յերկաթե խաչ: Դուք արժանի յեք:
Ճի՞շտ ե, չե՞, Փողել:

Փողելը կանգնած եր փակ աչքերով: Աննին չուճչ
քաշեց:

— Ինձ այլևս վոչինչ պետք չե ձեզանից: Բարի
գիշեր, Փողել: Կարող եք չուղեկցել: Մնաք բարով և
չատ մի բարկանաք ինձ վրա: Հաղորդեք իմ վողջույնը
պրոֆեսոր Փաբերին, յերբ նա վերադառնա... Մայն-
ցից:

Փողելը կանգնած եր՝ թմբիկի ձեռքերը հենելով
սեղանին, և նրա բերանը ծամածռվում եր: Աննին
դուրս յեկավ ինստիտուտից: Մառը քամին տարուբե-
րում եր դարնանային ճյուղերը: Ամբողջ գիշերը նրա
տրամադրության տակ եր:

Աննին գնում եր համաչափ, դանդաղ քայլերով,
խորը շունչ քաշելով: «Յես զրոսնում եմ ինչպես բան-
տի մեծ բախում», — մտածեց նա և անկարող յեղավ
հասկանալ, թե վորտեղից ծագեց այդ տարրինակ
միտքը: Տանը նա չըջեց բոլոր սենյակները: Կահա-
րանները կանգնած եյին հանդարտ ու խիտ: Նրանք
հանդիմանում եյին Աննիին թեթևամտության համար,
բոլորն արդեն քնած են, հարկ չկա թափառելու սեն-
յակներում:

— Իսկապես վոր, կարիք չկա, — ասաց Աննին: Նա
նահանջում եր մի սենյակից դեպի մյուսը և կանգ ա-
ռում կարինետում: Նա վառեց կանաչ լուծամփոփով
փոքրիկ լամպը: Պրոֆեսոր Փաբերը սեղանի վրայից
նայում եր նրան: Աննին նկարն ապակու կողմով դրեց
սեղանին, նա պահում եր ձեռքը նկարի վրա, կարծես
փնտռում եր զարկերակը, բայց նկարի չըջանակը մե-
տաղից եր, պաղ ու չոր:

Նա անցավ ննջարանը և նստեց մահճակալին: Նրա-
տելիս նա հրեց գիշերային փոքրիկ սեղանը: Սեղանից

վայր ընկավ մի հրաշալի գողտրիկ չչիկ: Աննին չբարձ-
րացրեց այն: Լուսավոր մի լճակ եր փայլում պարկետի
վրա: Շշիկի խցանը կոտրվել եր սրվակի բկի հետ: Չա-
փազանց բարակ սրվակ ե, պետք ե գնել սրվակներ
հաստ ապակուց: Վաղն աղախինը կսկսի փնթփնթալ
կատարված անկարգության համար: Նա միշտ փրնթ-
փրնթում ե Աննիի վրա: Նա չի փնթփնթում միայն
Փարերի վրա:

Աննին հանվեց: Նա կանգնել եր պահարանի առջև՝
մոռառալով, թե ինչու յե բացել այն: Հետո նա
փնտրեց սպիտակ խալաթը, աշխատանքի սպիտակ խա-
լաթը և վճռականորեն ծածկեց պահարանը: Առանց
լույսը վառելու՝ նա անցավ աշխատանքի սենյակը:
Այդ սենյակը մի փոքրիկ լարորատորիա յեր: Անոթնե-
րով պահարաններ, գրքերով պահարաններ, պահարան-
ներ՝ լցված միմիայն ապակյա առարկաներով: Նա
փակեց դուռը: Բակից թափանցում եր լույսը՝ դեղնա-
վուն, քնքուշ, ամենևին չսարսեցնող: «Ինչո՞ւ ուրիշ-
ները վախենում են լուսնյակ գիշերներից»:

Այդ սենյակում ամեն ինչ անգիր հայտնի յե:
Նույնիսկ մութ անկյուններում կարելի յե լույս չվա-
ռել: Այն իրը, վոր նա ձեռքում բռնած ուներ, նման
չեր կոտրված սրվակի և առհասարակ խկի նման չեր
սրվակի: Յերևում եյին յերկիքն ու ծառերը: Վերջին
անգամ յերկրի վրա պատուհանի տակ նշմարվեց պար-
տեղը: Նա բացեց իդանցքը, նստեց հարմար կերպով,
փակեց աչքերը և գլուխը յետ դցեց: Տիրեց լուսթյուն:
Յերկար, շատ յերկար գիշերն եր տիկին Աննիի տրա-
մադրության տակ:

2. ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ

Հատուկ գնացքի կուպեյի հաստ ապակե պատու-
հաններից այն կողմը ուղանում եր գիշերային Գերմա-
նիան: Գնացքը չեր դանդաղեցնում ընթացքը, յերբ
հանդիպում եր զինվորական շարաններով վազոնների,

արկերով բարձած ապրանքատար կազմերի, քնաթա-
թախ հերթապահներով փոքրիկ կայարանների, հսկա-
յական քաղաքների, գործարանների հրաշունչ վուլ-
կանների, քարածխի լեռների, ուղեփակ ձողերի մօտ
կանգ առած գյուղական սայլերի, լուսավոր կայարան-
ների, ուղեկամուրջների, ցցաթմբերի, բլրակների,
մենավոր հետիոտն ճամբորդների, մութ դաշտերում
չրջմուլիկների կամ դասալիքների: Դա հատուկ նշա-
նակման գնացք եր, և կուպեյում ել հատուկ մարդիկ
եյին: Պրոֆեսոր Փարերը նստած եր՝ արձակելով ժի-
լետը և կոշիկները փափուկ մուճակների փոխելով:
Նրա հանդեպ տեղավորվել եր հաղթանդամ կազմված-
քի տեր մի մարդ, կարծես նրա վրա ծախսվել եր մի
այնպիսի նյութ, վորպիսին բնության մեջ այլևս չես
հանդիպի: Կարճ վզի վրա տեղավորված եր ամրա-
պինդ, տակառի պես կլոր գլուխը: Այդ տակառ-գլխի
գոտեկապերն հաջողվել եր քողարկել: Ավելի ճիշտ՝
նրանք ներաճել եյին մսի մեջ: Բահերից լայն ձեռքերով
նա յերբ խոսում եր, թիավարում եր ողբ և քշում այդ
ողբ զրուցակցի վրա: Այդ պատճառով նա աշխատում
եր վորքան կարելի յե դանդաղ շարժել ձեռքերը: Վոս-
կե ատամները, վորոնք փայլում եյին կարճ կտրված
ընչանցքների տակից, կողքերից տաշված վոսկեդրամի
եյին նմանում: Մի խոշոր ադամանդ նայում եր վորդ-
կապի վրայից:

Այդ մարդու ազգանունը մեծ եր, ինչպես և ինքը:
Նա նույնիսկ չտվեց իր անունը: Դա իսկապես չափա-
զանց մեծածավալ կլիներ գիշերային նեղ կուպեյի հա-
մար: Միևնույն ե, պրոֆեսոր Փարերը գիտեր, թե ում
հետ եր խոսում և խոսում եր խիստ, բայց հարգալից:
Ուղորդը շարունակում եր սկսված խոսակցությունը՝
ուշք չդարձնելով վո՛չ գնացքի արագությանը, վո՛չ
ուշ ժամանակին, վո՛չ պատահական վայրին: Թե մեկը,
թե մյուսը, թե յերրորդը՝ նրա համար միանգամայն
սովորական բաներ եյին:

— Յես յերբեմն հետևում եմ վոչ սուրբ մարդկանց ձեռքով գրված պատվիրաններին: Սրբերի ապրանքը հիմա յես լուրջ բանի տեղ չեմ ընդունում: Մի մեծ մարդ արտահայտել է իմ միտքը հետևյալ խոսքերով, վորոնց յես խորապես համաձայն եմ. կայսրութիւնը դա ստամոքսի հարց է: Համաշխարհային կայսրութիւնը — համաշխարհային ստամոքսի հարց է: Այսոր ստամոքսին դիետա յե վերապահված: Արյունաբոժում, բայց դա բավական չէ: Յեթե դուք հեղափոխութիւն չեք ուզում, պետք է իմպերիալիստ դառնաք: Մենք արդեն իմպերիալիստներ ենք, և դա հաղթութեան կեսն է: Յես պնդում եմ այն, վոր մենք պետք է ավարտենք պատերազմը վորքան կարելի յե շուտ: Դրութիւնը դեռևս կատաստրոֆիկ չէ, զինվորները դեռ պատերազմում են, գործարանատերերը լավ շահ են ստանում, բանվորները դեռ լուրմ են, սակայն գեներալները պետք է շտապեն հաղթանակն ապահովել, և ահա թե ինչու: Պետութիւններն ինչպես կբաժանեն աշխարհը — անհայտ է, իսկ թե ինչպես է այն բաժանված կապիտալիստների կողմից — մենք մի փոքր գիտենք: Յեվ վառողի ու դինամիտի միջազգային տրեստը, և յերկաթգծերի միջազգային կարտելը, և ծովային առևտրի միջազգային ընկերութիւնը, և ցինկի միջազգային կոմբինատը, և ընդհանուր ելեքտրական ընկերութիւնը, և նավթի համաշխարհային տրեստը և տասնյակ ուրիշ համաշխարհային միավորումներ մինչև պատերազմն ապրում էին վորպես ինքնուրույն պետութիւններ՝ իրենց մեջ բաժանելով յերկրներն ու ազդեցութեան գոտիները: Այժմ յառաջված է այդ հավասարակշռութիւնը: Վորոչ պայմանագրեր ժամանակավորապես դադարեցված են, մյուսներն ել պայթել են: Յեթե դուք մի փոքր հասկանում եք մեր գործից, հապա կդիտենաք, թե ինչ բան է «Մայր ընկերութիւնը»: Դա համաշխարհային միավորում է, հիմնական ձեռնարկութիւնը. յեթե նրա կողմից վորոչ փոքր յերկրներ տակաւին ձեռք չեն տրված,

կամ, յեթե «Մայր ընկերութիւնն» ուղիներ է փրկողում, ապա նա թուլատրում է աճել դուստր ընկերութիւններին այն հաշվով, վորպեսզի նրանց հիմնական գրամագուլսը չգերազանցի Մայր-ընկերութեան փայտիքական գրամագուլսին: Պարզ է ձեզ, վոր պատերազմական հաղթութիւն լինի, թե չլինի, կապիտալները նորից են վերախմբվելու, անկախ հայրենասիրական կարծիքից: Յեթե ձանձրալի յե, յես կարող եմ խոսել կանանց մասին: Յես կարող եմ նույնիսկ մի բանիսի հետ ել ծանոթացնել, և դուք չեք զղջա...

Ծարերն ասաց.

— Եարունակեցեք, յես նույնպես ձեզ վորոչ բաներ կպատմեմ:

— Լավ, յես շարունակում եմ: Յես իսկական գերմանացի չեմ: Յես կոսմոպոլիտ եմ, սակայն իմ բոլոր արմատներն այստեղ են, Գերմանիայում, և կտրել մի հարկածով այդպիսի խոշոր մի ծառ — հեռու յե իմ կանոններից: Իմ բնավորութեան մարդիկ կոսմոպոլիտներ են: Մենք դիվանագետներից և գեներալներից ուժեղ ենք. յեթե ուզենանք, ամենակարող բանակն ել անգեն կմտա: Հասարակական սխտեմները մեկնաբանողների, փիլիսոփաների և սոցիալիստների հետ մենք մի փոքրիկ կոնֆլիկտ ունենք, վորովհետև մենք պարզապես այլ կերպ ենք հասկանում իրերի դերը տիեզերքում, քան թե նրանք: Բացի այդ, մեր գործում չեզոքութիւն հասկացողութիւնը — բոլորովին պայմանական է: Յես այժմ ընդունում եմ, վոր Կրուպը հայթայթում է արկեր Զրանսիային կամ գինամիտ Անգլիային: Յես գիտեմ, վոր բրիտանական նավատորմից ուղտիքական սարքավորումներն ստանում է գերմանական Յեյս և Հերց Ֆիրմաներից, վոր Վերդենի ամբարանների համար փշալարեր բերված են չվեյցարական սահմանի վրայով «Մագդեբուրգեր Դրատ ունդ Կարելվերկե» ֆիրմայի միջոցով: Յերբ ավելցուկ կա, դա այնքան ել վտանգավոր չէ: Ավելի վերավորական

և, վոր Ամերիկայում մնացած ձեր մեծ ուղիւնոսային նավերը քիչ եր մնում ուժանդակ հաճանավերի վերած-վելին: Այդ նշանակում է հասկանալ դրությունը: Այդ արդեն սխալ է:

«Փրանսիայի պատերազմական դժվարություններն այժմ շատ մեծ են, Անգլիայի Ֆինանսական դոր-ծերը մեծ խառնաշփոթության մեջ են: Ամենից հար-մար հարվածը կարելի չէ հասցնել հիմա: Գաղութա-յին ահագին տիրապետությունների անցումը Գերմա-նիայի ձեռքը, Յեվրոպայի Ֆինանսական և առևտրա-կան դեմքի փոփոխումը մեզ հնարավորություն կտա լիովին և աներևակայելի ջախջախման դեպքում մեր ձեռքը դցել այն հիմնականը, վորը Գերմանիան կը-դարձնի միակ մայր-յերկիրը՝ մնացած բոլոր յերկը-ները փոխադրելով դստեր դրության: Կրկնում եմ՝ Անտանտի կատարյալ կործանման դեպքում, այնպիսի մարդկանց հետ, ինչպիսին են Չախարովը և Արմըս-տերոնգը Անգլիայում կամ Շենյդերը Ֆրանսիայում, համաձայնության գալն այնքան ել դժվար չի լինի: Դրամական շուկան այժմ այնքան ել փայլուն վիճա-կում չէ, և խաղաղության ցանկությունը հեռացվում է միմիայն սպառազինման աճումով, այսինքն՝ նոր հսկայական ճյուղերի առաջացումով թարմ վայրում: Հավատացնում եմ ձեզ, վոր Բերենշտրասսեյի վրա ել հանգիստ շունչ կքաչեն՝ լսելով պատերազմի շուտա-փուլյթ վախճանի, քան անվերջ պատերազմի մասին, թեկուզ և ուղմական հաղթանիչներով: Յես յեղա Ռոտտերդամում և Կոպենհագենում, և բամբակի դոր-ծը վատ է: Շատ վատ է նաև ուտինի հարցը: Մի պրոյեկտ կա՝ սուղանավերով Ամերիկայից կառուչուի փոխադրել, բայց դրանից չափազանց ուժանտիկայի հոտ է փչում: Յես լսել եմ ձեր փորձերի մասին հեղ-ձուցիչ գաղերի հետ: Դա հիանալի կլինի այն դեպ-քում, յեթե մենք հաղթության արագ մոտեցումով արդարացնենք նրանց գործածությունը: Յես ճիշտ եմ ասում:

— Դուք միանգամայն ճիշտ եք ասում, — պա-տասխանեց Փարերը, — նրանք այնտեղ, վերևում, յես չեմ ուզում նրանց տնուններն առել, ռիսալը միայն հետևից են անում: Յեվ յերբ յես ասում եմ, թե ինչ է հարկավոր անել, — նրանք հարդալիր քմծիծաղ են տալիս և պատասխանում, վոր յես պատերազմական ուղեղ չունեմ: Այո՛, իմ ուղեղը դիտնականի ուղեղ է, և յես չգիտեմ, թե վորն է ավելի ծանր: Թեպետ և յես գիտեմ այդ: Մեր թշնամիներն ավելի մոտ են ճշմարտությանը, քան մեր զորավարները: Նրանք ա-սում են՝ պատերազմի յերակներում հալված ածուխն է հոսում, ածուխը — ահա ճակատամարտի առաջին սպարապետը: Նա թեքում է, նա ձեռնվորում է, նա լցնում է հրանոթները: Ածուխը — դա շողենավերն են. ածուխը — դա գնացքներն են: Ի՞նչ բան են գնդացի-րներն ու թնդանոթները: Դա ածուխն է: Արկերը — դա ածուխն է, նրանք պատրաստվում են ածուխից, նը-րանք լցվում են ածուխով: Նրանց ներսում նստած ուղմական ուժը — դա ածուխն է: Պատերազմը — դա մենամարտ է Վեստֆալյան ածխահատի և Կարդիֆի ածխահատի միջև: Ածուխը — դա կյանք է ու մահ: Ածուխը — դա հաղթանակ է: Նրանք հաշի յեն առ-նում այսոր գործող ուժը, բայց նրանք դեռևս չգիտեն այն ուժը, վոր յես եմ հարուցել. դազ ընդդեմ ածու-խի, դազ ընդդեմ նրանց միանային լարման, դազ ընդ-դեմ տկլոր հայրենասիրության տենդի, դազ ընդդեմ քրտնքոտ մսագործների, վորոնք սիրում են բոունց-քամարտը, դազը — դեմոկրատիկ մահ է առանց վորե-վե պաթոսի: Դազը — դա հաղթանակ է: Յեվ այդ ա-պուշները չեն հասկանում, վոր յեթե նրանք մինչև վերջ ինձ հավատային, մեր գվարդիան հիմա բեռնը-վելիս կլիներ Լամանչի նավահանգիստներում, վոր-պեսզի վաղը Դուվրում լիներ: Դրա փոխարեն նրանք զբաղվում են տնայնագործությամբ: Յես չեմ ժըխ-տում անհատական խիղախությունը: Եմդեն, Կենիդա-

բերդ, Մովսէս— հիանալի արկածներ են պատահեկո-
թյան համար, կամ թե անմահ ուրվական— հաճանա-
վերը, այսօր այստեղ են, վաղն այնտեղ, այսօր նը-
րանք զարկում են հակառակորդին Պերուլի ափերում,
իսկ վաղն այդ հաճանալերն ընկղմվում են Յայլկլեն-
դէ մոտերքը: Մեկ հեռագրով ավելի յե լինելու: Հան-
կարծակի հարձակում անդլիական կուրորտների վրա.
կղմինգրների ջարդոցով և լողարանների պայթեց-
մամբ— դա զրոտախնճույք ե եժանագին կերուխումով
և բոժակներ փչբելով: Յեպպելինները Լոնդոնի և Փա-
քիզի վրա— պատերազմի ռեկլամներ են միայն, և վոչ
ավելի: Ինչ վոր քրտնաթոր դյուտարարներ նստել ու
հնարում են ականների, բլինդաթների և դիմախափոր-
ման փոփոխակումներ. մի մարդ միտք ե արել հրա-
վառ յուզով հեգեղել խրամատները, յես տեսա նրան
հորեանցիւրեն, նրան ինձ ցույց տվին: Բուժ դեմք,
ցածր ճակատ, խոնուժպանի բեխեր, դուք հասկա-
նում եք— Ֆրանսիացիներին տապակել յուզի մեջ և
մատուցել գերագույն հրամանատարության սեղանին,
փայլուն միտք ե՝ ծնված պրովինցիալի գլխում:
Նույնպիսի հաջողությամբ կարելի յե ցնցուղով ջրել
Իելլոուտտունյան պարկը: Յեվ նրանք ցնորվել են ինչ
վոր տնայնագործական հնարքների վրա, կարծես թե
պատերազմը յերեսուն տարի յե տևելու: Յես վերջ
տվի այդ ամենին, յերբ ասացի նրանց. հավատացեք
ինձ, հավատացեք գազին: Անգլիան ունի որական մեկ
տոնն քլոր, մեր գործարանները տալիս են մեզ որա-
կան քառասուն տոնն: Նրանք չեյին հավատում, և յերբ
վեց հազար մարդ պառկեց միանգամից, նրանք տարա-
կուտանքով գրավեցին խրամատները. նրանք չեյին
հասկանում, թե դա չըջագարձ ե, թե դա հայտնաբե-
րում ե այնպիսի զենքի, վորի հավասարը չկա: Այդ-
պես մի ժամանակ բթամիտ առպետներն եյին, վորոնց
զարկում եյին թնդանոթներով, իսկ նրանք վոչ մի
կերպ չեյին ուզում բաժանվել իրենց զրահներից: Յես

գեթվարությամբ հաջողեցրի, վոր հիմա ամբողջ Ֆրոն-
տում նրանք գործադրում են գազը: Նրանք չեյին ըշ-
տապում, յերբ հարկավոր ե շտապել: Պետք ե շտա-
պել, վորովհետեւ դժբախտաբար յես միակը չեմ աշ-
խարհում: Գիմիկոսներ դեռ գոյություն ունեն: Իմ
բարեկամներն Անգլիայում և Ֆրանսիայում հաճույ-
քով կընդունեն մարտահրավերը: Մենք պետք ե գիշեր
ու ցերեկ աշխատենք: Մենք պետք ե պաշտպանություն
պատրաստենք ընդդեմ հակառակորդի գազի: Սկսվել
ե վորսորդական շների մրցումը, և մեր առավելու-
թյունն առայժմ վազքի մեջ ե, բայց շուտով այդ շի
լինի: Մենք կընթանանք գլուխ գլխի հետ: Յեվ այն
ժամանակ յուրաքանչյուր գազին մենք պետք ե պա-
տասխանենք գերագաղով, յուրաքանչյուր հակադադին՝
գերահակադաղով: Ամեն ամիս փոխվելու յե պատե-
րազմի դիմակը: Բայց դուք գուցե լավ չեք պատկե-
րացնում, թե ինչ բան ե գազը: Գազը կարելի յե թող-
նել ամպերով, ալիքներով, գազային ծածկույթներով:
Գազը կարելի յե ածել արկերի մեջ, կարելի յե լցնել
ականները, ամեն մի փլատակ, ամեն մի խրամատ,
անտառ կամ փողոց կարելի յե գազային թակարդի
վերածել, մարդկանց կարելի յե հարկադրել ծիծաղել
կամ լաց լինել, կարելի յե քոր ածել տալ, ինչպես
կապիկները, բառաչել, ինչպես դոմեշները, գալար-
վել սձերի նման: Մարդկանց կթվա, վոր նրանք ողոն
են ներչնչում, օակայն դա կլինի ծխածածկույթ դե-
ղին Փոսֆորից: Նրանք կմտնեն այգիները, վորտեղ
ողը բուրում ե գարնանային հյութով, սակայն դա
կլինի բրոմ քացախային թթվուտի ետիլյան յեթեր:
Գլորական նիտրոբենզոլը մարդկանց կթվա անուշա-
հոտություն մոռացված հայրենիքի, հանգստի ու
վայելքների. մի ամբողջ քաղաք բուրելու յե
խորդենու, մանուշակի և անանուխի հոտով, և
այդ քաղաքի ամբողջ կայազորը մեռելներն են
կազմելու: Մենք կազմում ենք քիմիական այգեգոր-

ծուծյուններ: Յես խելագար չեմ: Յես պատերազմական ուղեղ չունեմ— նրանք ճշմարիտ են: Յես գիտնական եմ, վորին ձանձրացրել է դիտումը նախապատմական կովի, վորտեղ սուր բանով խփում են բուժ գլուխներին: Բայց յես պնդում եմ միայն մի բան՝ պետք է շտապել: Քանի դեռ թշնամին ասում է՝ դու խափոռն ածուխն ե, — մենք կարող ենք ապրել: Յեթե վաղը նա կասի՝ գլխավորը դադն ե, — դուք հասկանում եք, թե դրան ինչ է հետևելու: Իսկ շտաբում նստածները տեղափոխում են, տեղափոխում են, տեղափոխում են հազարավոր մարդկանց արևմուտքից արևելք, արևելքից արևմուտք, կարծես բանը միայն նրանումն է, վորպեսզի այդ հազարներին առնեաների պես անընդհատ քչեն մի բնից մյուս բունը:

— Այն բոլորը, ինչ վոր դուք ասացիք, շատ բուրջ են, — ասաց հսկան, — բայց չե վոր դուք հեղաշրջում եք համաշխարհային ամբողջ ռազմական արտադրությունը: Դիտե՞ արդյոք աշխարհը, թե ում է պարտական դրանով...

— Նա իհարկե չպետք է իմանա: Յես կեղծանուն եմ: Չկա վոչ մի պրոֆեսոր Ֆարեր, կա դիտություն, վորը դուրս գալով լաբարատորիայի պատերից՝ մի փոքրիկ փորձ է ձեռնարկել: Իսկում ինձ անվանում էյին կանաչ աղնոցներով մարդ — և այդքանն էլ բավական է: Ճշմարիտ է, հրավառ յուղի սիրահարին խավարի իշխան են կանչում, և դա ճիշտ է, բուռն-Փորխան միշտ համապատասխան անուն է ունեցել:

— Դուք այժմ Բերլին ենք գնում, — հարցրեց հրական:

— Վոչ, յես տուն եմ գնում: Յես մի քիչ հոգնել եմ և մի քիչ կարտեղ եմ լաբարատորիան, կնոջս, բարեկամներին: Ֆրոնտը բավական կեղտոտ է: Յես յերեկ վոջիլ գտա ինձ վրա: Յես դեն գցեցի պիտակեղենս և տաք վաննա ընդունեցի:

Լեյտենանտ Խիտչենսը մի անգամ ևս կարգաց նամակը: Ամեն ինչ կանգնեց ինչպես մշուշում: «Վա՛վրտնիա» նավը, տասերկու հազար տոնն բեռներ ու մեծ տաղ՝ ծակծկված, չոգիով պատած, շաչուն, ջրի մեջ սուզվող և նրա հետ մեկտեղ — այդ շատ գծվար և պատկերացնել — ջրի տակն է անցնում, բեկորների մեջ շնչասպառ և լինում նրան միակ պետքական կինը: Հրետազորային Լեյտենանտը Խիտչենսից դեպի ձախ դուռում եր իր դասակի վրա: Ի՛նչ, Լեյտենանտը գանգատվի Լեյտենանտի՞ն: Այս հրաշալի աշխարհում մնացել են սպաներն ու զինավորները միայն, ուրիշ մարդանմաններ չեն յերևում: «Շատ լավ, Լեյտենանտ Խիտչենս» — ասաց նա իրեն, և նրա աչքերը մթնեցին կարծես հարբեցողության յերեք գիշերից հետո:

Յեվ հենց նույն օրն իսկ փախավ նրա վաշտը: Վաշտը թողեց խրամատները՝ մառախուղը գաղի ալիքի տեղ ընդունելով: Ու յերբ Խիտչենսը նայեց մառախուղին, նրա գլուխը պտտվեց, բայց նա իրեն պահեց և յետ դարձրեց վաշտը, զանգահարեց հարևան տեղամասը և մարտկոցը: Գործը վատ եր. հարևան տեղամասը վոչ խմում եր, վոչ ուտում և վոչ էլ քնում: Մարդիկ պատրաստվում էյին կամ մեռնել կամ փախչել, ավելի չուտ — վերջինը: Չեր յերևում հոգու վոչ մի կայունություն: Սպաները դուռում էյին մարտկոցի վրա, վորպեսզի նա կրակ բանա: Մարտկոցը հեռու յեր կանգնած և իրեն համեմատական անվտանգություն մեջ եր զգում, սակայն պարզ եր, վոր առաջին իսկ խուճապի դեպքում թողնելու յեն հրանոթները:

Մարտափը սավառնում եր ամբողջ ֆրոնտում: Պատահական կրակոցների բռնկումներն ընդունվում էյին վորպես սկիզբ հրանետային գրոհի, ամեն մի ծուխ կամ մառախուղ՝ վորպես գաղի ալիք: Հրային և ոդային ուրվականները թեթև թեթևով ճախրում էյին բոլոր խրամատների վրա:

Սխառնեմը նստել էր բառալիտնի սպաների խորհրդակցութեանը, և բոլոր դեմքերը հարցական նշանի ելին նմանում: Գումարտակի հրամանատարը զիվի-զիայումն էր, և զիվիզիայումն էլ նստել էին վոչ թե մարզիկ, այլ թեզանիքներով ու ժապավենիկներով ինչ վոր եյակներ՝ շիթված ու ճնշված:

— Ձեռք են առնված ամենակարող միջոցներ, — ասաց գումարտակի հրամանատարը՝ ջանալով չծի-ծաղել:

— Միջոցներ են ձեռք առնված, իսկ ինչով պետք է խցկել քիթն ու բերանը, յեթե վաղը նրանք դարձ-յալ գազ բաց թողնեն:

— Անհատական կապոցների թաց մարլալով:

— Անհատական կապոցներն անձեռնմխելի յեն:

— Թաց գուլպաները վոչ պակաս ոգտավեա են:

— Մեռնում են բոլորը միանգամից, թե հաջորդ-որը:

— Անհատականությունն ապահովված է, սիրե-լիս:

— Պատերազմի ավարտման առթիվ առնակատա-րություններին կարելի յե պարել սև ակնոցներով և հենակներով՝ զարդարված Յունիոն Ձեկով և Կապիչի չքանչանով:

— Բարեկոնը կործանվեց, — ասաց Սխառնեմը: Նրա աչքերում գորշ մշուշն էր, վորը նրա վաշտը գազի տեղ ընդունեց — գորշագույն ծովը, պերխկոպն ալիք-ների մեջ և կինը ամերիկյան բացիկից:

Լեյտենանտ Սխառնեմը մեկ օրում ծերացավ տասը տարով: Գուցե նրանից, վոր նա ամեն ժամ մահվան էր պատրաստվում և շարունակ չէր կարողանում վո-րոշել՝ այդ մահն իրեն դեռ պետք է թե վոչ: Հետո նա յերկար ժամեր անցկացրեց ծովում, զնդակնե-րից ու հարձակման թիերից այլանդակված բալլոնի առջև:

Գնդապետը գտավ նրան այդ զրադմուսքի վրա և

զարմացավ իր սպայի խորասույզ հայացքի համար:

— Գուցե սարսափելի խելք քեռայում, Սխառնեմ, — ասաց նա, — այդ ի՞նչի մասին եք փիլիսոփայում:

Այստեղ գնդապետը կոացավ և ճանաչեց մի քիչ առաջ գերմանացիներից խլված հրանետի մնացորդ-ները:

Սխառնեմը սողում էր այդ հրանետի առջև, կար-ծես յերկրագուլթյան ծիսակատարություն անելով մետաղի փչացած կտորին:

— Յես ուզում եմ վերադարձնել նրանց ամենը, — ասաց նա, — թե լավ կրակը և թե լավ գազը, բայց դրանք հարկավոր ե սովորել: Վորոշ բաներ յես ար-դեն ըմբռնել եմ:

— Գովելի գործ ե, — ասաց գնդապետը — և չոք-րորդ օրը Սխառնեմը Լոնդոն էր դնում գորշագույն ծովով, վորտեղ մշուշի մեջ չոգենավի հետեից ընթա-նում էր պերխկոպի նեղ սյունյակը: Նավասենյակում Սխառնեմը ամեն ժամ վեր էր թռչում և անպայման ցանկանում էր լցահանել կոլտը նավասենյակի մութ դռանը կանգնած, վորտեղից նրան վողորում էին հը-րավառ յուղով և նա զգում էր այրվող մազերի հոտը: Նրա բազաթում օրորվում էր գերմանական հրանետը և զեկուցազիր՝ հրանետի նման ապարատ ստեղծելու հնարավորության մասին, մի գործիք, վոր դուրս էր նետելու վոչ թե յուղ, այլ գազ: Գազը պետք էր գրտ-նել, քանի վոր ռազմաճակատը խելագարվում էր ա-հից և վոչ վոք վոչ մի բանի համար չէր կարող յի-րաշխավորել: Սխառնեմը միանգամ ևս ցած իջավ մահճակալից և տեսավ ծովի հատակում պսակած մի կնոջ, վոր յեկել և ճանապարհորդական կոստյումով կանգնել էր նրա շեմքին: Դա ուղղակի նրա ծանոթու-հին էր, վոր ընդհանուր վոչինչ չունեց «Վավիլոնիա-յի» ճամբորդուհու հետ, և սակայն, Սխառնեմը դեպի նրան ուղղեց իր կոյտը, բայց կրակոց չլավեց: Կոյե-տը լցրած չէր: Կինը մոտեցավ նրան և, քանի վոր նա

հենց նոր եր յեղել Փրոնտում, շատ բան գիտեր. նա գիտեր, թե վորչապի հեշտ ե այնտեղ հավատարակըլ ությունը կորցնել և այն ամենը, ինչ կապված ե գրբա հեա:

Յեվ այն ժամանակ իրտչենսը անկապորեն՝ նամակի ստացումից հետո առաջին անգամ՝ պատմեց նրբան, թե ինչ եր իրեն համար այն կինը, վոր մինչև Անգլիա չհասավ: Նա ցանկացավ տախտակամած յերնել թարմ ող շնչելու, բայց նրա ուղեկցուհին արգելեց: Քնքըրեն գրկեց նա իրտչենսին և նստեցրեց իր տեղը: Ուղեկցուհուն ասված եր, վոր նրանց հետևից սուղանավ ե դալիս և կտեսնե՞ն նրանք արդյոք Անգլիան լուսարացին— անհայտ ե: Նրանք յերկար խոսում եյին զանազան բաների մասին և այնպես հողնեցին, վոր ննջեցին նստած: մեջքերով նավասենյակի ցրեցըվող պատերին հենված:

Կինն առաջինը զարթնեց: Լուսանցույցի միջից պարզորեն յերևում եր գորշագույն ծովը: Խիտչենսի ճամպրուկը բացված եր, և իրեղենները գտնվում եյին վայրենի անկանոնության մեջ: Կինը ցանկացավ ավելի հարմարորեն դարսել իրեղենները: Ամենից առաջ նրա ձեռքն ընկան լրագրները, վորոնք գրավեցին նրա ուշադրությունը: Դրանք գերմանական լրագրներ եյին, վոր շտաբի զինվորիայից իր հետ վերցրել եր իրտչենսը, վորովհետև դրանցում, Փրոնտի հատուկ թզթակիցների ուղարկած հաղորդագրությունների մեջ կային մի քանի մանրամասնություններ զազային և հրանետային գրոհների վերաբերյալ: Կինն անտարբեր սահեց աչքերով նեղ սյունյակների և գոթական տողերի վրայով— նա ազատ կարդում եր գերմաներեն: Նա մտածմունքի մեջ ընկավ և լրագիրն այս ու այն կողմն եր շարժում:

«Լուրեր Սերբիայից,— կարդաց նա հողվածի վերնագիրը,— սանիտարական ջոկատով Բելգրադից մինչև Նիշ»: Սերբիայումն եր նրա ծանոթ սպան, և

նա ուշադրությամբ կարդաց մի քանի տող. «Սոսկայի տիֆը մեծ զոհեր ե տանում մեր ճանապարհին: Մենք տանջվում ենք նրանից վոչ պակաս, քան մեր քաղցած ու մերկ հակառակորդը, վորը պարտության խելահեղության մեջ, ձյունապատ սարերի վրայով վազում ե դեպի ծովը: Յերեկ տիֆով հիվանդացավ ավագ քույր Ալիզա Փոն Շտարկեն, և մենք թողինք նրան Կրալեվեցում, տասը մղոնի վրա...»

Կինը հիշեց, վոր իր ծանոթը վոչ մի առնչություն չունի Սերբիայում գործող սանիտարական ջոկատներին, և նստեց լրագիրը: Խիտչենսը քնած եր ամուր սեղմած բերանով, ծերացած ու գորշ, ինչպես ծովը: Յերագում նա հրանետ եր տեսնում: Կինը հողոց հանեց: Շողենավը մտնում եր նավահանգիստ:

4. ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

Արյունով եյին պատած սյուները, վորոնք պահպանում եյին ծղնոտե ծածկը, արյունը փոսեր եր կադմել գետնի վրա, արյունը ծծել եր դեն ածած վիրակապերի կույտը, հարզը, կեղտոտ տախտակները, վորոնց վրա պառկած եյին վիրավորները, արյունը կաթում եր քշտած թևքերով աշխատող մարդկանց ձեռքերից, արյուն կարելի յեր հավաքել բաժակների, գավաթների, չչերի մեջ: Արյունով վողողված հրացաններն ու փայտածողերը դարսված եյին անկյունում. արյունը կանգնել եր դատարկ պատդարակներում, արյուն եր հոսում յուրաքանչյուր մարդուց, վոր կանգնած, պառկած կամ կիսանստած եր լինում յերկու վառվուռն լամպերի միջև: Արյունոտ հետքեր եյին զնում ծածկից դեպի զանազան կողմեր: Արյունն այնքան շատ եր, վոր նրան այլևս չեյին նկատում: Վիրակապության կայանը առաջին կայանն եր պատեբազմից աղատագրվելու համար: Այստեղ կարելի յեր

գոռալ, աղաղակել, կծուտել մատները. հայհոյել, ա-
նիծել՝ չվախենալով իշխանության բղավոցից:

Բժիշկը, վորպես կարող մարտիկ, հարձակվում
էր ամեն մի վիրավորի վրա և մեջքի վրա գցում:
Նրա ոգնականները տեսակավորում էին մարդկանց,
ինչպես ապրանքը: Ձախ կողմում սալջարդ յեղածները
ցնցում էին փայտյա գլուխները՝ վոչ մի խոսք հար-
տասանելով: Աջ կողմում մեռնողները լայնորեն բա-
ցում էին աչքերը և ձեռքերով խփում էին գետնին՝
ջանալով կառչել մի վորեւե բանից հանդեպ այն ան-
դունդի, ուր նրանք ընկնում էին:

Բժիշկը ճխրտում էր, սղմում, կտրում, պոկում
միսը. նա կարիք չէր զգում վոչ սպիրտի, վոչ մոր-
ֆիի, վորպեսզի կարգին պահի իր նյարդերը: Մոտո-
ցիկլի խռիւոցն հասավ նրա ականջներին, բայց վոչ
մի նոր բան չասաց:

Լուսնով լուսավորված գինվորը ձգվել էր նրա
առջև՝ վոտքերն ավելի լայն բացելով, քան այդ կա-
րելի յե ուղղակի ամբողջ հատակով կանգնած մար-
դուն: Կարճ հազը, նման ծխող մարդու հազին, ան-
ընդհատ դուրս էր թռչում նրա բերանից: Նա միայն
մեկ խոսք ասաց, վորը վոչ վոք չհասկացավ:

— Ռախիսազա, — ասաց նա: Ձինվորի կանաչ
բրոնզագույն դեմքն սկսեց սևանալ, ինչպես լամպի ա-
պակին, վոր մրով է պատում: Նա ընկավ մեջքի վրա:
Սանիտարը կռացավ դեպի նա, վեր կացավ, կանչեց
ընկերոջը, և նրանք յերկուսով տարան նրան դեպի
աջ: Հնդիկի գլուխը պառկեց նրա գիշերային ուղեկցի
կրծքին, ճանապարհորդություններից ամենայերկարի
ընթացքում:

— Յերրորդ դեպքն է, — ասաց սանիտարը, և
նրան մոտեցան յերկու մարդ: Նրանք ծնկի իջան հըն-
դիկի առաջ, դեպի նա ուղղեցին ելեքտրական լամպը
և հանեցին դրանցման գրքույկները: Նրանք չոչափե-
ցին վզի յենթամաշկի ուռած յերակները. բացված բե-

րանը լի յեր լորձուքով, փրփրոտ և կանաչավուն:
Նրանք շուռումուռ տվեցին հանգուցյալին, հանեցին
համազգեստն ու գոտին, ձգեցին ձեռքերը կապտած ու
նիհար. այտերն ու քիթը նույնպես կապտել ու նիհա-
րել էին: Նրանք գրքույկներում նշանակում էին բո-
լոր մանրամասնությունները:

— Ուշադրություն դարձրու, — ասաց մեկը, —
լորձնային թաղանթի հիպերեմիա... չթուլնքների
ցիանոզ: Յերեկ յես տեսա նրան: Նա գեկուցում էր
տանում և վողջ-առողջ էր: Նրանք մահանում են վոչ
միանգամից: Դու ի՞նչ ես կարծում: Յես կարծում եմ,
վոր դա նոր գազ է:

— Հիշում ես՝ առավոտվանը աչքերից էր դան-
գատվում: Նա կուրացավ ճաշի ժամանակ և ապուրը
թափեց ծնկների վրա: Յեվ մեռավ կուրացած, իսկ
դրանից առաջ նա յերգում էր:

— Յես այլևս չեմ կարող, յես չեմ կարող, — դո-
ւաց մի մարդ, վոր պառկած էր ամենամութ անկյու-
նում: — Կորե՛ք դուք ձեր զգվելի կայանի հետ մեկ-
տեղ...

— Հաջո՛րդը, — ձայնում էր բժիշկը: Նա ուետին
էր ծամում: Նա կարիք չէր զգում սպիրտի կամ կոկա-
յինի:

Հենվելով անզգա ընկած ընկերոջը՝ մարդը դո-
ւում էր մթության մեջ, կարծես նա կանգնած էր
բապտիստների ամբիոնի վրա և ապաշխարում էր:

— Յես բժիշկ եմ յեղել, յես վիվիսեկտոր եմ յե-
ղել, վերցրել եմ շներին, սափրել նրանց, ձեղքել, քա-
չել եմ դազդահների վրա, յես վողջ-վողջ եմ կտրատել
նրանց:

— Լսի՛ր, մի գնդակ թողեք դրա ճակատին: Թող
լուի:

— Յես քրքրում էյի նրանց փորոտիքը, յես քաղ-
ցով մեռցնում էյի նրանց:

— Լսեցե՛ք: Ե՛յ, դուք, հավաքեցեք ինքներդ ձեզ:
Սատանի բժիշկ, ինչով է պարծենում:

— Յես նրանց ստամոքսն էյի ածում թթվուտներ, յեռացրած ջուր, թուլներ: Յես նրանց միջով ելեք-տըրականություն էյի անցկացնում...

Խուլ հայհոյանքներն ու հառաչանքները վողջունեցին նախկին բժշկի ճառը:

— Յես նրանց վրա նավթ էյի սրսկում և վառում: Աչքերն այրում էյի քացախային թթվուտով...

— Բավական է, կանգնեցրե՛ք այդ մարդուն:

— Բժիշկ, փակեք դրա կոկորդը կոշիկով:

— Յես նրանց փխտեցուցիչ դեղեր էյի տալիս: Յես լիզատուր էյի դնում նրանց մարսողական գործարանները վրա: Յես ինքս այժմ, ինչպես այդ շունն էմ դարձել, և ամեն ինչ վերադարձել ե ինձ մոտ: Մենք բոլորս...

Հրեշային հազը հատակի վրա գլորեց ճառախոսին, և այն ժամանակ բժիշկը թողեց իր նշտարը և գրանցման գրքույկներ ունեցող յերկու հոգու ուղեկցությամբ մոտեցավ նրան:

— Յես վախենում եմ, վոր սա չորրորդն է, — ասաց մատիտը պատրաստի բռնածը:

Ճառախոսը պառկել եր բերանը բաց, և նրա կարմրավուն-մուգ շագանակագույն աչքերը նայում էյին առաստաղից կախ ընկած ծղնոտին, կարծես յերկյուղ կրելով, վոր տանիքը իր գլխին ե ընկնելու: Փրփուրը պատում եր չրթունքները:

Յեվ այն ժամանակ լապտերը լուսավորեց վիրահայտվ ձեռքով և կծուտած չրթունքով մարդուն: Շըրթունքը մարդն ինքն եր կրծոտել: Նա քարացել եր, իր առողջ աջ ձեռքով պահում եր ձախ ձեռքի վիրակապը:

— Ի՞նչպես են գործերը, Խիտչենս, — ասաց բժիշկը: — Արդյոք նորից ի՞նչն ե բերել ձեզ Անգլիայից:

— Ինձ մի մանրամասնիկ եր պակասում և ահա յես գտա այդ ու գրա հետ միատեղ աշխատեցի այդ հրանետի վրա: Ո՛ր, յես ձեզ կասեմ — դա այնքան ել թույլ բան չէ:

Նրա ատամները կրկին ներծծվեցին ստորին չըրթունքը:

— Ինչո՞վ ոգնել ձեզ, Խիտչենս: Հուսով եմ, վոր դուք գազ չեք կուլ տվել: Սկսեք դուք այստեղ փուրչտալ և ձգել վոտքերը: Մորֆի ուզո՞ւմ եք:

Մարդը բացասաբար շարժեց գլուխը: Ատամները կամաց հեռացան իրարից:

— Յես չեմ ուզում: Յես ցանկանում էյի իմանալ: Ո՛ր, — նա դարձյալ բռնեց ձեռքը, — յես ցանկանում էյի իմանալ անունն այն մարդու, վոր բաց թողեց հրանետը մարդկության ոգտի համար: Ո՛ր...

— Դուք զվարճախոս եք մնացել, Խիտչենս, — ասաց բժիշկը: — Արիացե՛ք, արիացե՛ք: Յես ձեզ կուղարկեմ լուսաբացից առաջ: Այժմ ճանապարհը գնդակոծման տակ ե: Յես նույնպես թանգ կվճարեյի, վորպեսզի իմանամ, թե ինչից են նրանք մեռնում: Յերեք որ առաջ ինձ մոտ բենեֆիս եր: Մարդիկ այն աշխարհն էյին ուղեվորվում ամենատարբեր տեղերից. մեկը վայր եր ընկնում գդալը ձեռքին, ճաշի ժամանակ, մյուսը կուրացել եր, հենց վոր պառկել եր մահ-ճակալին, մի քանի հոգի հագում էյին մինչև այն ժամանակ, յերբ մաղձ ու արյուն յերեաց, և հետո նրանք մահացան. մեկն ել վայր եր գլորվել շտաբում հարցաքննության ժամին: Շուտով արյունոտ լազարեթը հավանորեն կանցնի ավանդությունների շարքը: Մարդիկ քաղաքավարի կերպով կմեռնեն՝ առանց չրջապտուր կեղտոտելու. այստեղ կարելի կլինի թալշյա բազմոցներ գնել: Այդ ամենը, Խիտչենս, գերմանական նոր գազի հետևանքն ե: Մի բան կարող եմ ասել. նորությունները մեզ մոտ գալիս են առանց ուշացման: Մի սպա պատմում եր ինձ, վոր նա գնում եր մարտկոցի հետ և շնչում եր վաղորդյան հիանալի ոգով: Բա՛: Նրան իսկապես թակել էյին գլխից — աչքերն սկսեցին կարմրել, և յերեկոյան նա կուրացավ:

Յերկու շաբաթից հետո նրա տեսողությունը վերականգնեց, բայց սիրտը բոլորովին անպետքացել եր:

Նա ընկել էր — նրանք այդպիսի տեղերը գրպաններ
են անվանում — կանգնած դադի խիտ, փոքրիկ ամպի
մեջ: Դեհ, արիացե՛ք: Ուրեմն չե՞ք ուզում մորֆի...

Յերերվող մարդը փրփուրը բերանին բռնել էր
բժշկի թւքից:

— Այդպես, — ասաց բժիշկը, — ահա և համար
հինգերորդը: Ռալֆի, աթոռ տվե՛ք նրան: Թող նա
մահանա կոմֆորտով:

5. SMOKING-ROOM

Սենյակը լի յեր ծխով, սակայն դա ճակատամար-
տերի սուր ծուխը չեր, դա գազ չեր: Դա սիգարների,
ծխախոտների, սիգարետի և ծխամորճի ծուխն էր:
Սենյակը ծառայում էր վորպես Smoking-room,
ծխարան: Յերիտասարդ մարդիկ, համեմատաբար յե-
րիտասարդ մարդիկ նստած էին բաղկաթոռներում,
հյուսած աթոռների, չատերն էլ ուղղակի սեղանների
վրա: Ամեն ներս մտնողի ընդունում էին բարեկամա-
կան, ծաղրական, յերբեմն համարյա դպրոցական բու-
ցական խոսքերով: Բոլոր ռազմաճակատներից վե-
րադարձած քիմիկոսներն ու ֆիզիկոսները, վորոնք
քրանում էին Գաղային ծառայության լաբորատորիա-
ներում և աստվածների տեղ էին ընդունում այնպիսի
մարդկանց, ինչպիսին են՝ լորդ Ռեյլեյը, Վիլյամ
Ռամսեյը, գնդապետ Հարիսոնը, Ուիլյեմ Լոջը — մըր-
ցելով դատում էին իրենց նվաճումների, անհաջողու-
թյունների և պատերազմի փոփոխականության մասին:

— Վերջին անգամ ո՞վ է տեսել Ետվուդին, —
հարցրեց մի թխադեմ քիմիկոս:

— Ետվուդը սպանված է սրանից չորս ամիս առաջ:
Նրա գլուխն էր պոկվել և թաղեցին առանց գլխի. մենք
վոչ մի տեղ չկարողացանք այն գտնել, — պատասխա-
նեցին ծխի քուլաների միջից, վոր պատել էր բազմոցի
շուրջը: — Յես վիրավորվել էի նույն կովում վոսքից:

Յերեք շաբաթ Մյուլլբանկում, միամսյա հանգիստ —
և հետո յես այստեղ եմ:

Խոսակցությունն անցնում էր սենյակով, վորպես
ծովամբրիկների յերամը, հեշտորեն մի տեղից դեպի
մյուսն անցնելով և յերբեմնակի մինչև առաստաղը
հասնելով:

— Ծերունի Դյուլարն հենց այն ժամանակ ուղղակի
ասաց, վոր դա քլոր է: Այդպես էլ յեղավ:

— Ո՞վ կարող էր մտածել, թե լեղակն այդպիսի
դեր է կատարելու:

— Մենք տակնուվրա արինք հագարավոր ներկող
նյութեր: Մենք փորձեր ձեռնարկեցինք բորակածնային
անհիդրիզով: Կուպերը թոքերի բորբոքում ստացավ և
հեռացավ այդ գործից: Ազոտաթթվով թրջած պղնձի
սղոցուքները փոխարինում են ամենալավագույն մի-
ջանցիկ քամուն: Բայց հետո մենք անցանք բրոմին,
խողային բենզոլին, մետիլային յեթերին:

— Մենք աշխատում ենք ինչպես մրցումների ժա-
մանակ: Յեթե յես հանգստանում կամ ժամից ավելի
յեմ ծխում, դա արդեն վոճրադրոծություն է: Իհար-
կե, մեր աշխատանքը կյանքի հարց է: Մենք հետևում
ենք այն ամենին, ինչ վոր տեղի յե ունենում Փրոն-
տում, հետևում ենք վորպես խուզարկուներ դադի պա-
տահական ամպին, անսպասելի դադային արկին: Մենք
քրքրելով վորոնում ենք պատերազմի ծխացող աղբի
մեջ, վորպեսզի հավաքենք ամենատաք կեղտերը: Յես
կարծում եմ, վոր մեզնից մորիլիդացիա յեն արել վոչ
պակաս յերկուհազար հոգուց, և այնուամենայնիվ դեռ
եղի քիչ է:

— Յես արդեն մոռացել եմ, թե ինչ գույնի յեն
աղջիկների մազերը: Մի շաբաթ քլորի մեջ չուռումուռ
գալով՝ յես հոտել եմ, ինչպես դիակը: Յես կորցրել եմ
իմ ճաշակը կյանքի հանդեպ:

— Վորտեղ է լինելու մոտակա հարձակումը, — յե-
րադելով հարցրեց ամենաջահելը և ինքը պատասխա-
նեց՝ չսպասելով հարցի արձագանգին. — յես կարծում

եմ, յեթե հետևել գազային նոնակների վերջին պայ-
թումներին և այդ տեղից հեռանալ յերեք հարյուր կի-
լոմետր դեպի արևմուտք կամ արևելք, դա այնքան էլ
մեծ սխալ չի լինի:

Մի քանիսը ծիծաղեցին:

— Մենք սակայն մինչև այժմ ազատ ժամանակ
չենք գտել հարցնելու, թե ինչո՞ւմն է բանը:

Խարորոյից յեկած քիմիկոսը վեր թռավ աթոռի
վրա:

— Բանը արկերի մեջ է: Մեր ծերունին, ինչպես
յեղավ, ասաց, վոր Գերմանիան — դա Վազների ուպե-
րայի նման մի բան է, վորտեղ պայքարում են չար ու
բարի վոգիները, — այդ յես ինքս եմ լսել Բանգորում,
սեփական ականջներով և վոր նա հավատում է, թե
բարի վոգիները Գերմանիայի հողին յետ կիսլեն գերու-
թյունից — և վոչինչ դուրս չեկավ: Հողին սուզվեց,
ինչպես նա ասաց, արյան ծովը, և մենք գործ ունենք
ռազմական կաստայի հետ, ահա և դրանից է արկերի
տարափը, քառասուն որ ու քառասուն գիշեր, անձրևը
նոնակների, վորոնք մեզ իրավունք է տրված լցնելու
ինչով մենք կարևոր կդառնենք:

— Ծերունին — դա իհարկե Լլոյդ Չորջն է:

— Նո՛ւ, ուրիշ էլ ո՞վ կարող է Վազներին մեջ
գցել:

— Լլոյդ Չոր՝ը, — անվստահ ձայնով ծոր տվեց
ավստրալիական Ֆիզիկոսը, — Անգլիայի չթագադրված
արքան, դիկտատոր Դրակոնի տիպի: Նրա բնավորու-
թյան մեջ մի ինչ վոր բան կա կրոմվելից, իզուր չե
նա ինդեպենդենտ, և Նոքսից նույնպես ինչ վոր բան
կա նրանում — նա բրիտանական պետական մեքենայի
լավագույն յուղ քսողն է:

— Պետք էր կանխել գերմանացիներին, մեզ պետք
էր առաջինն սկսել այս քիմիական պատերազմը: Իսկ
այժմ հարկ է լինում վազել նրանց ամեն արկի հետե-
վից, վորպեսզի հոտառությամբ գլխի ընկնել հետա-
գայի մասին: Թեպետ յես չգիտեմ, թե վորն է լավ —

նստե՞լ խրամատում թե ամեն որ միայնակ գործ ունե-
նալ ֆոսֆենի հետ: Մերոնցից քանիսն արդեն գնացել
են հանգստանալու մինչև են ահեղ դատաստանը:

— Յես կորցրի ձեռքս՝ լինելով միայն Դուբլինում:
Յես պարտական եմ սըր Ռոջեր Կեամենտի սիրալիրու-
թյանը: Ասում են, վոր նրան գնդակահարել են պատ-
գարակի վրա, նա չի կարողացել վտաքի կանգնել, վի-
րավոր է յեղել:

— Իսկի էլ չե: Նա յերեք ժամ խոսել է իր պաշտ-
պանության համար, բայց և այնպես նրան կախել են:
Սակայն ինչ վոր մեկին իսկապես գնդակահարել են
պատգարակի վրա:

— Իմ իրլանդացի ընկերը, յես չգիտեմ, թե վոր-
տեղ է նա, իր ժամանակ այնքան հաճախ կրկնում էր
Ֆենինների աղոթքը, վոր յես հիշում եմ այն ամբողջո-
վին:

Ո՛ր, Տուլ, լսի՛ր մեզ:

Ո՛ր, Տուլ, ազատիր մե՛զ

Անգլիական քաղաքակրթությունից,

Բրիտանական որենքից ու կարգերից,

Անգլո-սաքսոնական կեղծավորությունից և
ազատությունից:

Չորս կողմը ծափահարեցին ու ծիծաղեցին:

Բրիտանիայի տիրապետությունից,
Յերկճեղ ամբակից:

— Վո՛նց չե, — ասացին անկյունում:

Ամեն տարվա ապստամբության
անհրաժեշտությունից:

Պատերազմական ոթեանումից:

Հերի՛ք է: Հերի՛ք է:

Կարծեցյալ դատարաններից,

Բոլոր զուտ անգլիական այլ իրերից...

Բարձրացավ թեթև սուլոց: Ինչ վոր մեկը ծաղ-
րաբար արտասանեց.

Բրիտանիա, Բրիտանիա...

Ո՛ր, յեթե միայն նա կարողանար իմանալ,
Թե ինչպես նրա նենգության համար բոլոր
ժողովուրդները

Նրան անարգում են...

Մի՞թե նա չի

Դաժան պահապանը նրանց բանտի...

— Այդ ո՞վ ե, — հարցրին մի քանի ձայներ, — գեր-
մանակա՞ն ճաչ ե:

— Դա միայն Բայրոնն է: Ճիշտ է, նա զգացվում է
վորպես հնարանություն: Մենք գիտեցել ենք պատե-
րազմ, իշխանություն, պատասխանատվություն, մենք
պատասխանատու յենք մեր տարիների և գործերի հա-
մար:

Կաչե սունապաններով մի մարդ կարուկ վեր կա-
ցավ.

— Իրլանդիան Գերմանիայի հետ դաշնակցած —
դա դավաճանությունն է: Յերկու կարծիք լինել չի կա-
րող: Վաղը նրանք վոտքի կհանեն Հնդկաստանը, ինչ-
պես հանեցին վաղեմի հիմար Դեվետին Աֆրիկայում:
Մենք հարցը դնում ենք պարզորոշ և պատասխանում
ենք պարզորոշ: Յուրաքանչյուր ազգ իր միասիան ունի:
Անգլիացիների միասիանն է — միավորել համաշխարհա-
յին կայսրությունը, վորն ստեղծվում է ուժով և վոչ
թե լայքայի ձեռնոցներ անցկացրած ձեռքերով: Ազա-
տագրվենք դպրոցական հիմարություններից և հաս-
կանանք հետևյալը. յեթե բոլոր ազգերն այսպես թե
այնպես սկսում են կողոպտելուց, հապա դա նշանա-
կում է, վոր ծովահենները կայսրության լավագույն
կառուցողներն են:

«Բարեբախտաբար, ծովահեններ ծնող արյունը
գեռես չի ցամաքել մեղանում: Յերբ այդ տեղի կու-
նենա, Բրիտանիան և Հսկա Մեծ Բրիտանիան կդա-

դարեն գոյություն ունենալուց: Կայսրության կազմա-
կերպման և պաշտպանության ժամանակ չի կարող լի-
նել՝ արդարացի յե կամ վոճրագործությունն է հասկա-
ցողությունը: Կա միայն մեկ իրավունք — ավելի ու-
ժեղի և ավելի ընդունակի իրավունքը: Ուժեղը պետք
է իշխե՛՛ առանց հաշվի առնելու — ցանկանում է
թուլյն այդ բանը, թե վոչ: Ժողովուրդներն ընկնում
են պատերազմի հալոցը և մուրճը ճակատագրի զնդանի
վրա նրանցից կերտում է այն ձևը, վոր նշված է աստ-
ծուց:

«Վերջիվերջո մեր Յունիոն Ջեկն իզուր չե ծառա-
յում մեր աստծուն: Սուրբ Դեվորդը մի՞թե դա առաջին
Տոմմի Ատկինսը չի, իսկ սուրբ Ստեֆանը մի՞թե առա-
ջին Ջեկ Տարը չե: Ներկա պատերազմում, ինչպես
յերբեք, մենք զգում ենք վոչ թե զորաշարժերի և հար-
վածների ուղմական արվեստը, այլ ազգերի տոկու-
նությունը, դիմադրության յերկարատևությունը: Յեվ
մի՞թե այժմ գեներալները կախում չունեն նրանից, թե
ինչ կասենք մենք, — մենք լարորատորիաներում նրա-
տողներս, վորպեսզի ստացվեն հակազգեր պաշտպան-
վելու և դադեր հարձակվելու համար: Լյույզ Ջորջը
խոսում է արկերի տարափի մասին: Իսկ նրանց ո՞վ
կտա լցվածքը: Մենք — և ուրիշ վոչ վոք»:

— Դա սարսափելի յե, — բացականչեց գունատ այ-
տերով, սպիացած թոքով մեկը: — Դա սարսափելի յե,
վոր մեզ է վիճակվել այդ բանը: Վերջիվերջո այդ դա-
դերը վաղուց են գտնված, և գիտնականները նույնիսկ
չեյին ել մտածում դրանք վոչնչացման նպատակի հա-
մար գործադրելու: Դեռևս Բայերը, Կարոն, Լաուտը,
Վիտտին ութսունական թվականներին հիանալիորեն
գիտեյին նրանց հատկությունները և, յեթե կենդանի
լինեյին, յես հավատացած եմ, կտատանվեյին:

— Դու ճշմարիտ չես, — ասաց Իրլանդիայում ձեռ-
քը կորցրածը, — մեզ կատաղություն են պատվաստել:
Մեզ մի գայրույթ է կլանել, այդպիսի գայրույթ աչ-
խարհում չի յեղել գեռես, այն գայրույթը, վորը չի

կարելի կանգնեցնել, վորովհետեւ մենք կանգնած ենք հուսահատության պարտության սահմանում: Ո՞վ գիտե գալիք գերմանական դրոշների ուժը: Յեթե պատերազմի հարցը վորոշեցին բոլոր յերկրների բանվորներն ու սոցիալիստները միայն, կամ միայն գիտնականները, նրանք գուցե այլ կերպ լուծեյին: Սակայն մեզանից խլված է տարրեր յեւրի իրավունքը: Վերցրու Խիտչենսին: Նա յերբ հնարեց իր զարմանալի գաղանհատը, վոր հրաշալի արդյունքներ է տալիս: Վոչ այն ժամանակ, յերբ նա հանդիստ նստել էր խրամատում և յերբեմն-յերբեմն կրակում էր, այլ այն ժամանակ, յերբ ամենասիրելի մարդը կորավ գերմանական սուզանավից և նա գտավ իր մեջ վայրենի զայրույթ, այնքան պայծառ, վոր նրա մեջ, ինչպես լճում, կարողացաւ ամբողջ յերկրի հնարավոր կորստի մասին, և սկսեց վրեժ լուծել հենց նույն գնեքով: Այդպես է գործը:

— Գուցե և այդպես է, սակայն նայիր, Վանցենտ. մեր ընկերներից քանիսն են մնացել Ֆրանսիայում: Յես հաշվել եմ: Մինչև այժմ չեն վերադարձել տասնչորսը: Տասնչորս յերիտասարդ տաղանդավոր մարդիկ մասմաս են յեղել, վորպես թավշյա խաղալիքներ և մենք նույնիսկ չգիտենք, թե ով է նրանցով խաղացել: Ներանք այլևս չկան: Մենք յերբեք չենք գտնի նրանց չիրիմները: Յեվ կարող է հասնել այնպիսի տարի, այնպիսի ուր, յերբ մենք պիտի ափսոսանք դրա համար: Մտածել պատերազմի մասին, վորպես մի սխալմունքի:

— Ո՞վ չի համաձայն, վոր պատերազմը փաթաթեցին մեր վզին:

— Այդ ասում է սրբ Եղիարդ Գրեյը:

— Դա պարզ է յուրաքանչյուրին:

— Ինձ համար դա պարզ չէ:

— Յերբ դու կհոտոտես նոր Փոսդեն կամ դեֆինիլ-բլորարսին, այլ կերպ կմտածես...

— Դադարեցրե՛ք հիմար խոսակցությունը: Գընդապետ Հարրիսոնն է գալիս: Նա չպետք է լսի նման խոսքեր: Այդ կվիրավորեր նրան:

Պատուհանում պառկած էր սերբիական յերկինքը. բրդոտ լեռները, բրդոտ, ինչպես շները, վոր խմբերով վազվզում են փոքրիկ քաղաքում:

— Սա այն աղջիկն է, վոր յետ էր մնացել Շարալլի ջոկատից, — հարցրեց բժիշկը՝ ածելին մի կողմը դնելով և յերեսսրբիչի ծայրը տաք ջրով թրջելով:

— Այո, նրանից հետո իրեր են մնացել, մի քիչ սպիտակեղեն, յերկու չոր, ձիով ճանապարհորդելու կոստյում: Շատ իրեղեններ նա բաժանեց Նիշում, նկարների այլքում:

— Յույց տվեք...

Բժիշկ կրանցն անփուլթ թերթում էր այլքումը: Սապոնի փրփուրը վրձինից ընկավ այլքումի թղթի վրա. նա մատով սրբեց այն և մատը քսեց զգեստի ծայրին: Նա անփուլթ թերթում էր այլքումը:

— Մոզայի ուղղությունն է, — ասաց նա, — բայց հարկ է լինելու ազգականներին ուղարկել: Նլի ի՞նչ կա:

— Աղոթարան: Ողեկոլոն: Վորքան և տարորինակ է՝ յերկու փաթեթ ծխախոտ: Կելլերմանի «Տոննել»-ը և Համսուն:

— Ողեկոլոնը յես կվերցնեմ: Իմաստ չկա ուղարկելու: Ծխախոտը կարող էք դուք վերցնել, յես չեմ ծխում, գրքերն այրեցեք, իրեղեններն ախտահանեցեք...

— Մնացել է նաև մի նամակ...

— Նամակ: Ո՞ւմ է հասցեյագրված:

— Հասցե ամենեվին չկա: Մաքուր ծրար է:

— Հիանալի յե, — անտարբեր ասաց կրանցը և նայեց ցածր պատուհանից: Պատուհանում պառկած էր սերբիական յերկինքը, բրդոտ լեռները, բրդոտ, ինչպես շները, վոր խմբերով վազվզում են փոքրիկ քաղաքում: Պատուհանում մենակությունն էր պառկած: Բժիշկը վերցրեց նամակը: Նա սկսեց բարձրաձայն.

«Կար-չկար մի աղջիկ: Այդ աղջիկը սիրում էր աշխարհում...»

Նա կանգ առավ:

— Յես կարծում եմ մնացածը կարելի չէ չկարգալ:

— Յես ել նույնն եմ կարծում:

Կրանցը ծալեց նամակը և նայեց սպիրտով կաշին, վորը վարվում էր ծաղրող բաց մանիշակագույն բոցով: Նա անկյունի կողմով մեկնեց նամակը և բոցը հեշտությամբ վեր բարձրացավ վորպես սանդուղքի վրայով: Մոխիրը թափվեց: Բժիշկը նայեց հայելու մեջ և հարցրեց.

— Ելի ի՞նչ:

— Ել վոչինչ, պարոն բժիշկ:

— Դուք կարող եք գնալ, Ֆրանց: Նա, իդեպ, այդ աղջիկը շա՞տ սիրեկաններ ուներ:

— Ներեցեք, պարոն բժիշկ...

— Յես հարցնում եմ՝ դուք ի՞նչպես եք կարծում:

— Յես կարծում եմ՝ չատ:

— Յես ել նույնն եմ կարծում: Դեհ, գնացեք, Ֆրանց, ծխախոտը կարող եք վերցնել:

7. ԲԻԾ

Յերբ պրոֆեսոր Ֆաբերը վտաք գրեց իր ինստիտուտի չեմքը, մնացած ամբողջ աշխարհը դադարեցնրա համար գոյություն ունենալուց: Թեկուզ այն նպատակները, վորոնց համար նա ինստիտուտ էր գալիս, ուղղակի շարունակությունն ունեյին խուլ պատերով կտրված այն աշխարհում — այստեղ նրանք տեսիլքի եյին վերածվում և յենթարկվում էյին խորհրդավոր պրոցեսների որենքներին, վորոնց հրամայողը ինքն էր և իր ասխատենտները: Աննին... բայց Աննին այլևս չկար: Աննին մեռել էր, իսկ բարեկամները, սիրուհիները, սարսափելի յե ասել, ինքը պետությունը, — ամեն ինչ անհետանում էր Ֆաբերի գլխից, յերբ նա հաղնում-

էր հաստ խալաթը, անադմուկ մուծակները և ռետինե ձեռնոցները:

Տունը նմանում էր կուսակրոնների հատուկ միաբանության մի վանքի: Այնտեղ առանձին խուցերում նստել էյին ճգնալորները, անխախտ լուության և կենտրոնացման մեջ: Յերբեմն այդ լուությունը խախտվում էր, կարծես թե սատանան մղձաճքների պահարաններից ողափոխիչի միջով վանք էր խուժել: Այդպես մեկ անգամ առավոտը դղրդյունը ցնցեց վողջ տուներ: Ապակիները թափվեցին, ինչպես փչացած տերևներ, ռետկաթիվները խառնվեցին, հետազոտողներից վոմանք ցած թռան նստարաններից և մի պատն ել ձեղքվածք տվեց:

Հեռավոր, մութ վարագուրած սենյակում գորշ կարմրավուն մշուշ էր լողում:

Վոչինչ չէր կարելի տեսնել: Վոչ լրագրները, վոչ առանձնապես հետաքրքրվող ամենագետները չիմացան, թե ինչ պատահեց այդ վարագուրած, տաք և զարհուրելի սենյակում: Մշուշը ցրեցին, և հատակին մնաց խանձուղից ել սև պրոֆեսոր Վեստերը: Նա Ֆաբերի աջ ձեռքն էր: Սենյակը կարգի բերին, և մի նոր մարդ նստեց այնտեղ՝ շարունակելու հանդուցյալի աշխատանքը, սակայն Ֆաբերն ամբողջ օրը, ուր ել վոր չնայեր՝ տաքացնում էյին արդյոք ծծումբը Վյուրցի սրվակներում, — քլոր բերող խողովակի ծայրին, թորանոթի բերանին, լվացած չչիլի ապակու վրա, կաթիլային ձագարի կողերին, ջերմաչափի սնդիկի սյան վրա նա տեսնում էր մի սև բիծ: Դա մի քանի օր իրար հետևից հետապնդում էր նրան: Բիծը չէր կարող խղճի խայթ անվանվել: Բիծը նախազգացումների շարքին չէր դասվում: Ֆաբերն ազատ էր նախապաշարումներից: Բայց յերբ նա իր գլանակի ծայրին յերևան հանեց այդ բիծը, — նա մտահոգվեց: Կարող է պատահել, վոր նա հոգնե՞լ է:

Նա չըջեց բոլոր լաբորատորիաները: Ներքեի հարկում նստած էյին այն ասխատենտները, վորոնք աշխատում էյին մարտական գազերի միացումների նոր տե-

սակներն վրա: Մզվածքի պահարանները փոխադրում էյին գազերի գործընթացումները դեպի վերևի հարկը, ուր նստած էյին այն ասիստենտները, վորոնք աշխատում էյին ներքևի հարկում նորագյուտ մարտական գազերի միացումների դեմ հակադադերի նոր տեսակների վրա: Այդ հանդիպական սիստեմն անկասկած և կատարյալ հարմարություն եր ներկայացնում: Այդ բանին հասան վոչ միանգամից:

Մզվածքի պահարանների հողմերը, ասքեստիտով յուզած սեղանների խշշացող անհանդստությունը, սընդիկե լամպերի տաք անդորրությունը, Գեմպսոնի սառն ապարատները ողի նոսրացման համար, յուզային նասոսների թեթև ճրթճրթոցը, աշխատակիցների սրատես աչքերը՝ կողմնացույցի նետերի նման մի կողմ ուղղված, — այդ բոլորը մի փոքր թուլացրին սև բիծը՝ հազիվ նշմարելի, գորշ դարձնելով այն, բայց վաղը նա նորից կարող եր աճել: Պրոֆեսոր Փարերն իր պատասխանատու կյանքը չեր կարող կապել պունկտիբից վերցրած չնչին նշանին:

Այն ժամանակ նա սկսեց բծախնդիր լինել: Գազը, ջուրը, ելեքտրականությունը — լարորատորիական հավասարակշռության այդ միասնական յերբորդությունը կարգին եր: Գազը վազում եր խողովակներով և այրվում բարձր բարակ սյունյակներով՝ ի նախանձ կրակապաշտների, ջուրը գործում եր նասոսների մեջ, աղմկում անոթներում և զվարճանում, իսկ ելեքտրականությունը վառվում եր գոր ու գիշեր:

Այն ժամանակ նա անցավ տեղական նշանակության իրերին: Յերկու սեղան դատարկ էյին: Նրանք առորյա տեսք ունեյին, բայց ինչպես թունավոր ծառ, այնպես ել նրանց անկարելի յեր մոտենալ անպատիժ: Նրանց վրա իպրիտ եր թափված, վոր ծծվել եր փայտի մեջ, բնակալել եր սեղաններում և սպառնում եր: Սեղանները կանգնած էյին՝ քլորի կրով վողողված, և նրանցում դանդաղ մահանում եր աննկատելի և սուր վտանգը:

Այդ սեղանների նկատմամբ կարելի յեր բծախնդիր լինել: Կարելի յեր բծախնդիր լինել այն բանի համար, վոր ասիստենտ Փոգելը վիրակապ ուներ ձեռքին՝ խոցված քլորական արսենով, վոր սատկել են իպրիտային փորձերի համար հատկացված յերկու ճաղարները, — սակայն գորչ կետը ավելի աղոտանում եր և չեր անհետանում:

Այն ժամանակ Փարերը նստեց և սկսեց աչքի անցնել վերջին հետազոտումների գրանցումները: Նա գիտեր այդ, նա արդեն նայել եր հետևանքները, բայց նրա միտքը սավառնում եր այդ յերկար տետրակների վրա, վորոնք լի էյին գրված ֆորմուլներով՝ անհասկանալի հասարակ մարդկանց համար:

Յեվ այն ժամանակ, — կարծես այն աշխարհից, վորից նա բաժանված եր պատերով, բնավորության կամքով և դեպի իր գործը, միմիայն դեպի գործն ունեցած սիրով, — պետության, բարեկամների, սիրուհիների աշխարհից — Աննին այլևս չկար — մի միտք յեկավ, վորի կենտրոնում գորչ բիծն եր: Յեթե կործանվեր նրա ինստիտուտը, — միենույն ե, թե ինչպես՝ հակառակորդի ողաջույի ումբից, նոր գտնված գազի կատաղությունից, ինչպես կործանվեց պրոֆեսոր Վեստերը, դավաճանությունից կամ անբարյացահամությունից, կայծակից, հրդեհից, դուռ պատահականությունից, — ինչով պետք ե հեռանալ ավերակներից պրոֆեսոր Փարերը դեպի այն մարդիկ, վորոնք նրա հետ վոչ մի առնչություն չունեյին:

Յեվ այն ժամանակ նա հստակացավ, թե ինչու իրեն հեշտ ե լսել ամենորյա իր վոչնչացրած հաղարտվոր մարդկանց մասին: Նա կհամաձայներ բարեկամաբար ապրել կապիկների և կատունների հետ, բայց վոչ մարդկանց: Պրոֆեսոր Փարերը — մեկն ե քչերից, վորոնք մենակության իրավունք ունեն աշխարհում: Յեվ նա հասկացավ նաև, վոր ստում ե ամեն մի հասարակական յերույթում, հողվածների, ճտերի և խոսակ-

ցումթյուններն մեջ: Նրա անտարբերությունն յերևան է գալիս առանձին ուժով, և յերբ պրոֆեսոր Բուրխարդտը հարցրեց նրան, «Ո՞վ է պատասխանատու լինելու այս պատերազմի համար», — նա ցատկոմով առաջ. «Պատասխան կտա պարտվողը»:

Նա իրեն չէր փոխի վոչ մի հռչակավոր դորավարի, դրոշի կամ ինժեների հետ: Բոլոր ռազմաճակատների գլխից բարձր նա վարում է իր առանձին հսկա և մահացու պայքարը — նա հարգում է միմիայն այն փոքրաթիվ, իրեն հավասար համաշխարհային քիմիկոսներին, վոր թշնամի լարորատորիաների նույնպիսի անդորրության մեջ կասեցնում են նրա հարվածները նույնպիսի մահացու սեղանների առջև, վոր իսպրիտով են վողորված, այրված ասիստենտների շրջանում, կակոզիլի և ֆոսգենի սքսիդի պայթյունների մեջ:

Բոլոր դրոշներից նա առանձնացնում է Ֆլորեբին նրա համար, վոր դա ասել է. «Աշխարհը պետք է կառավարեն գիտնական մանդարինները, այդ է միակարգարացի իշխանությունը»: Այդ նախադասության համար Ֆարերը ներում է նրա ֆրանսիական ծագումը և այն, վոր նա իր վեպերում շատ է զբաղվել կանանցով: Նրանք չարժեն դրան: Նրանք կամ ձանձրալի յեն կամ անբարոյական: Նրանք ընդհանուր վոչինչ չունեն գիտության վեհ միայնության հետ: Աննին բացառություն էր կազմում: Աննին այլևս չկա: Դրա մասին չարժե հիշել:

Այդպես էր մտածում պրոֆեսոր Ֆարերը, սակայն գորշ բիծը չէր անհետանում: Աննահանջ կացել էր այդ բիծը, վորպես աչքն անտեսանելի հսկողի: Այն ժամանակ նա կանչեց Ֆոգելին և նրա հետ անցավ աշխատանքի փոքրիկ կարինետը, վորտեղ նրանք խորհրդակցություններ էյին ունենում, վորտեղ լուծվում էյին փոքրիկ թյուրիմացությունները, վորտեղ նա ընդունում էր շտաբի ներկայացուցիչներին, վորտեղ կատակում էր պրոֆեսոր Վեստերը վերջին անգամ

մահից առաջ: Ֆարերը նայեց խոսակցին: Գորշ բիծն աղոտանում էր մեջտեղը նրա ճակատի, վորից վերև սկսվում էր ճաղատությունը՝ առատորեն լուսավորված ելեքտրական արևով:

Կար մի գիտնական, շտաբից դուրս մի գիտնական, վոչ պետքական գիտնական, վատ գիտնական, վոր հրաժարվեց աշխատել թունավոր գազերի արտադրության ինստիտուտում: Նա կամ ապուշ էր կամ սոցիալիստ: Նա դրա համար կարող էր նստել բանտում, աշխարհում վոչինչ չէր փոխվի, գիտության մեջ — նույնպես:

Յեվ Ֆարերը քմծիծաղ տվեց: Գորշ բիծը նմանում էր այդ գիտնականին, մի հոլի, չափահաս մարդու վոտքերի արանքում բաց թողած մանկական հոլի: Ճզմել այն — վոչ մի ջանք չէր պահանջում, բայց հոլը չափից դուրս փոքր էր ու ճկուն: Վազել նրա հետևից — ամոթ էր չափահաս մարդու համար: Ասիստենտը նայում էր իսպրիտի մեջ սողոսկած ճագարի աչքերով:

— Յիանաթթվուտը չի լինի, Ֆոգել, դուք այդ գիտեք այն ձևով, ինչպես նա կա հիմի: Մահացության տոկոսը չնչին է: Մենք թանգագին նյութը զուր տեղը փոշի յենք դարձնում դաշտերում: Կոնցենտրացիան, վոր մենք տալիս ենք, մարդուն չի սպանում, նա մարդուն ուղարկում է վոչ թե գերեզման, այլ սանատորիում: Դրանումն է ամբողջ տարբերությունը:

Ֆոգելը հավաքեց ինքն իրեն: Հնազանդ և ուշագիւր Ֆոգելը կարող էր խորամուխ լինել գիտական փաստի եյության և վոչ թե մարդկային ապրումների հետևանքների մեջ: Նրան չէր հետաքրքրում, թե ի՞նչըն է ավելի լավ — գերեզմանը, թե սանատորիումը: Թունավորող նյութն ինչպես հարկն է չի ներդրածում, և դրանում մեղավոր է նա՝ Ֆոգելը: Սակայն նա վրձնեց դիմադրել:

— Ուսցը լցված է հարկավոր կոնցենտրացիայով: Յես փորձեցի ճագարների և կատուների վրա:

— Ի՞նչ դուրս յեկավ, — հարցրեց Ֆարերը:
— Նրանք սատկեցին, — բարձրաձայն առաջ ֆո-
գելը, — ներարկման ժամանակ ևս մահն անմիջա-
կան է:

— Մինչև հետևանքը վո՞րքան ժամանակ կարող
ենք շարունակել այդ փորձերը:

— Ֆրոնտից մենք ամեն շարաթ տեղեկություն-
ներ ենք ստանում: Յեթե այսօր ամսի տասնհինգն է
և փորձի յենթակա առաջին խումբն անցնի այն շրջա-
նը, ուր յենթադրվում է գրոհը...

— Դուք փորձը դնում եք շտաբի ճաշակի կախ-
ման տակ: Կնշանակե՞ հավիտենականության կանցնի:

— Պարոն պրոֆեսոր, այլ հնար...

— Այլ հնար կա...

Փոգելը դեպի անկյուն եր նայում. թեթև դող
անցավ նրա վոտքի վրայով: Նման միտքն — ուղղակի
հիմարություն է: Ֆարերն այսօր սովորականից ան-
հաջող է կատակում:

Հեռախոսը զանգ տվեց: Փոգելը վերցրեց հե-
ռախոսափողը, հետո այն ծածկեց ձեռքի ափով և ա-
ռաջ.

— Ձեզ ուզում ե տեսնել անհետաձգելի մասնա-
վոր գործով մայոր Փոն-Շտարկեն:

— Ո՞վ է դա, Փոգել:

— Կարծեմ դա հրանետի հնարողն է:

— Ա՛: Ֆրանսիացիներին տապակողը: Նորին մե-
ծության խոհանոցի հերթապահ խոհարարը: Առաջեք
նրան, Փոգել, վոր պրոֆեսոր Ֆարերը ռազմաճակատ
է գնացել:

— Լավ... Դուք լսո՞ւմ եք: Պրոֆեսոր Ֆարերը
ռազմաճակատ է գնացել: Ի՞նչ: Դուք տեղեկություն-
ներ ունեք: Տեղեկությունները ճիշտ չեն: Այո՛...
Այո՛... Չգիտեմ: Խնդրեմ:

— Պարոն պրոֆեսոր, յես հնար գիտեմ, բայց դա
առնչություն չունի գործին:

— Ձեր հնարը...

— Խուցը մարդ մտնի:

— Միանգամայն ճիշտ է:

Հեռախոսի փողը կախված էր մնացել թելից: Ֆո-
գելը մոռացել էր կեռից կախել:

8. ԽՈՒՅԸ

— Պարոն պրոֆեսոր, դուք լսո՞ւմ եք ինձ:

— Այո, Փոգել:

Սպիտակ սալերով ծածկված յերկար միջանցքը
գնում էր դեպի անսահմանություն:

— Խուցը մտնել մարդուն չի կարելի:

— Ինչո՞ւ, Փոգել:

Փոգելը քրտնեց: Նա համարյա վազում էր մի-
ջանցքով, և հետո նա ցածրահասակ էր Ֆարերից: Խո-
սելիս նա ստիպված էր թաթերի վրա բարձրանալ:

— Մարդը կմեռնի խցում: Կոնցենտրացիան մա-
հացու յե...

— Իսկ յես ասում եմ՝ վո՛չ, Փոգել... Յեվ յես
այդ կապացուցեմ:

Փոգելն առաջին անգամ ինստիտուտային իր յեր-
կար պրակտիկայի ընթացքում չփոթված նայում է
պատերին: Պատերը հարթ են և խիստ պաշտոնական
կերպով ցավալիցում են նրան: Նա բարձրանում է թա-
թերի վրա: Նրա ազամախնձորը ոձիքից դուրս է
պրծնում: Փոգելը դառնում է այլանդակ՝ յերկար
գլխով և մոզեսի իրանով:

— Ռազմագերիի կարելի՞ յե, պարոն պրոֆեսոր:
Ֆարերն հանկարծակի կանգ է առնում:

— Դուք կարծեմ ասացիք՝ ռազմագերիի:

— Յես ասացի՝ մարդու, վոր վոչինչ չունի կորց-
նելու: Դատապարտյալի, կամ խելագարի, հաշման-
դամի... Յերբ կյանքը բեռ է...

Նրանք շարունակում էին արագորեն հաղթահարել միջանցք միջանցքի հետևից:

— Յես վոչինչ չունեմ կորցնելու, — ասում է Փարերը, — և հետո դուք ինձ գիտեք: Փողեկ, ի՞նչ բան է ցիանաթթվուտը:

«Ըհը՛, պրոֆեսոր Փարերը դարձյալ կատակել է ուզում»: Նո՛ւ, ի՞նչ կա վոր, Փողելը ձեռքերը հանում է զրպաններից, ինչպես աշակերտը դասի ժամանակ:

— Ցիանաթթվուտը: Ցիանաթթվուտը շարունակ անվանել են ցիանական ջրածնի ջրային լուծույթը: Ցիանական աղերը տալիս են...

— Շնորհակալություն ձեզ, Փողել: Այժմ հաշվեք մինչև հարյուր, և կհանգստանաք վերջնականապես: Մենք յեկանք:

Ի՞նչ եր ուզում ապացուցել պրոֆեսոր Փարերը՝ մտնելով խոցը, վորը ցիանաթթվուտի դուրըչիներով լցված, անհայտ կոնցետրացիայով, բայց ըստ Փողելի — բավականաչափ հագեցած էր նրա համար, վորպեսզի տեղնուտեղն սպանի ամեն մի շնչավոր բան, վոր կշփվի նրան: Բայց այդպես եր կարծում Փողելը: Պրոֆեսոր Փարերը վոչինչ չեր ուզում ապացուցել: Նա ուզում եր ազատվել փոքրիկ դորշ բծից, վոր աննահանջ կանգնած եր նրա առջև, ազատվել ինչպիսի պատասխանատվությունից ուզում է լինի: Ռուաներն, որինակ այդպիսի դեպքերում վերցնում էին նազանը. ներսը դնում մի զնդակ և պտտեցնում թմբուկը, հետո ատրճանակի փողը բերանն էին առնում և ձգանը թողնում: Յեթե կրակոց չեր լավում, մարդը տեղից վեր եր կենում փոքր ինչ որորվելով և յերկար հիշում եր մետաղի համը բերանում: Ճապոնացիք, որինակ, այդպիսի դեպքում իրենց վրայից հանում էին զենքը ու ավելորդ հագուստը և մերկ ձեռքերով, առջևում հարձակվողներից ել հեռու, մազկցում էին Պորտ—Արտուրի ապառաժոտ ամբուլթյունները:

Պրոֆեսոր Փարերը կանգնել եր ցիանաթթվուտի դուրըչիով լի խցում: Նա գիտեր, թե ինչպես է գալիս մահը, յեթե նա չեր սխալվել: Մահը կսեղմի յերկայնաճիղ ուղեղի կենտրոնները, մարմինը կդադարի արյան միջից թթվածին դուրս քաշել, նա կճոճվի, հորանջելով, վոտքերը կբռնվեն, շնչառությունն ավելի վաղ կմեռնի, քան, կանգ կառնի սիրտը: Արյան սոսկալի փոսում, վոր կկարմրի, ինչպես կինաբար, սիրտը կզարկը, յերբ վերջին ցնցումը կսեղմի կոկորդը:

Յեւ պրոֆեսոր Փարերի դիակը ծածկված կլինի բաց կարմրագույն բծերով, ինչպես խեղկատակի դուրս գալու զգեստը: Խեղճ Փարեր: Մահը կարող եր վողբերգորեն դարդարել այդպիսի խոչոր կարեւորության դիակը, իսկ նա նրան հավասարեցնում է ցանկացած դժբախտութիւնի հետ:

Նա կանգնած եր՝ կորցնելով ժամանակի մասին ունեցած գաղափարը: Ժամանակը անհետացավ, յերբ նա անցավ այն շեմքը, վորով անցնում էին ճազարները, շները և կատունները միայն:

Նա սպասում եր վախճանին: Նա սպասում եր մկանների մահացու ցնցումների, վորպես թեթեւություն: Նա չեր լսում սրտին, սպասում եր շնչադուլության, վորպես կործանման առաջին նախադարձ պետին: Մանր ալիքի մեծ աղմուկ անցավ նրա գիտակցության միջով: Պրոֆեսոր Փարերին մնացել է ապրելու մի քանի վայրկյան: Այնքան յերկարում ե— յին նրանք, վոր կարելի յեր վերապրել ամբողջ համաշխարհային պատմությունը, հասնել մինչև մեծ պատերազմը, վորոնելով գտնել ինստիտուտը, առանձնացած, խուլ սենյակը և դուրս բերել Փարերին թմբուլթյունից:

Ասում են՝ յեղել են դեպքեր, յերբ թունավորվածները կարողացել են անցնել բակը, գրկել կնոջը և տրամվայ նստել, վորպեսզի մեռնեն մարդկանց առաջ: Բայց չե վոր նա՝ Փարերն ասում եր, թե սինիլային

ԹԹՎՈՒՄ, վորն առաջարկում է Յոզեֆը, ուղարկում է միայն սանատորիում:

Նա զգաց, թե ինչպես յեղունգները սեղմած բրուտնեցքներում մխրձվում են ձեռքի ափերի մեջ, ինչպես դողդողում է ափանջը, ինչպես չորացել է սաամոքսը և լխկլխկում է կաշվե գուլլի նման, վոր պարանոց բաց է թողած Փարերի ներսը, ինչպես այդ պարանի ծայրը փքվում է բերանում: Լեզուն աճում էր, և նրա անհարթութունը բռնել էր ամբողջ բերանը: Վոտքի ջլերը Փարերին թվում էր կապույտ թեւերի հյուսվածք: Նրա կարճ բեխերը, լայն ու տափակ, խոնտավացել էյին: Զգացողութուններն անցնում էյին նրա միջով, վորպես անցորդներ, վորոնք վերադառնում էյին փնտրելու մոռացված իրերն հյուրանոցում, ուր նրանք մի ժամանակ իջեանել էյին: Նրան տակնուվրա էյին անում այդ զգացողութունները և ցավ պատճառում բորբոքվին վոչ այնտեղ, վորտեղ նա սպասում էր:

Մի՞թե այդ վայրկյանները դեռևս չեն վերջացել: Կամ ահա՝ հենց դա՞ յե մահ կոչվում: Այն ժամանակ, ուրեմն, սեացած Վեստերը գեռ կարող էր խելքով ըստուգել մահացու սխալը՝ մտքում գծադրելով փոքրիկ Փորմուլը, յերբ արդեն նրա դիակը դուրս էյին տանում գորշակարմիր մշուշից: Չէ վոր սիրտը և ուղեղը ապրում են չնչառության ընդհատումից հետո յել: Նա մտաբերում էր ցիանաթթվի Փորմուլը, վորպես նրդովք. չորսըլորական արսենը չի թողնում ցիանաթթվին քայքայվելու: Առաստաղի տակով խուլ աղմուկ անցավ, կարծես թե քամին պոկում է վրանը: Խլորոֆորմը չի թողնում վրանը քայքայելու: Աղմուկը շարունակվեց: Սենյակում փոթորիկ է սկսվում: Զորսըլորական անագ, անագը պակասեցնում է ցնդունութունը: Փոթորիկը դեպի պատը նետեց Փարերին: Սիրտը չի դարկում: Լեզուն սկսել է փոքրանալ: Ծնկները ծալվում են, կարծես բեռ է կախված նրանց վրա: Ականջները խշխշում են: Լոկ մի ակնթարթ

պրոֆեսոր Ֆարերը կորցրեց գիտակցութունը: Նա իրեն գտավ պատի մոտ՝ կպչուն, ինչպես մեղրածուրը: Վո՛չ, կպչուն վոչ թե պատն էր, կպչուն էր ձեռքը: Գորշականաչ կայծակները ծախում էյին ողբ: Ինչպես խաբում են գրողներն ու նկարիչները՝ նկարելով մահը ավարտված պատկերի ձևով, ճշգրիտ շարժումների պլանում: Վոչ մի ճշտութուն—խավար, թուլացում, գիտակցության լուռ և դանդաղ մարելը: Նա ճոճվում էր: Նա յերկարացրեց ձեռքը, ձեռքը բռնեց ինչ վոր և քաշեց առաջ: Փարերը բացեց աչքերը: Նրա առջև կանգնած էր Յոզեֆը: Վերջինիս լայն ճակատին, վորից վեր բարձրանում էր սկավոզ ճաղատությունը, երկտրականութունն էր խաղում: Վոչ մի գորշ բիծ չէր խանդարում Յոզեֆյան ճակատի ուժգին սպիտակութունը:

Յոզեֆը քարշ էր տալիս նրան միջանցքով՝ լուռ բացահանչություններ հանելով: Յոզեֆը ուրախանում էր ինչպես արջը, վոր թաթն է ծծում: Նա ներս քաշեց նրան սենյակը, պառկեցրեց բազմոցի վրա, նստեց դիմացը՝ մեջքով ծածկելով պատրաստած շշիկների, կապոցների, անոթների գեղարկոյը: Միմիայն մկրատներն ու բինտերը նա չկարողացավ ծածկել, և դա առաջին բանն էր, վոր տեսավ Փարերը այն աշխարհից վերադառնալուց հետո:

Փարերը խմում էր տաք ջուրը կոնյակով: Նա նուտել էր՝ ոձիքը, պիջակը և անդրափարտիկն արձակած: Կոխ տալով Փարերի արձակած կոչիկների թեւերը՝ նրա գլխավերևն հոգում էր Յոզեֆը:

Փոքրիկ թեյամանն ուրախ յեռում էր: Յոզեֆը վերցրեց կոնյակը, ուղեց տաք ջուր ավելացնել Փարերին, կանգ առավ և տխրությամբ ասաց.

— Դուք ինձ խայտառակեցիք ամբողջ կյանքում:

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

1. ՓՈՔՐԻԿ ԱՆԱՆՈՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յերկաթե խաչ, մայորի աստիճան, «մեռյալ գըլուխ» ձախ թեքի վրա— նշանն անմահ ուսման, խավարի իշխանի ծանր տիտղոսը և պարզ դիտակցություն՝ նրա հրանետար չարդարացրեց իրեն։ Նա չի այրի պատերազմը։ Այդպիսի յեղրակացության ես գալիս չորրորդ տարում։ Վո՛րքան զուր ակնկալիքներ։ Հրանետար նշանակում է ամեն բան, ինչ ցանկալի յե. վեհ հոգի, խիզախություն, արիություն, արհամարհանք դեպի մահը, բայց դեռ չի նշանակում վերջնական հաղթանակ։ Լավ կլինե՞ր մինչև պատերազմի վերջը չգալ ուղղամահատից։ Մինչև պատերազմի վերջը... Իսկ յե՞րբ է նրա վերջը։

Ինչպես ֆելդմարշալ Շլիֆֆենը մեռնելիս, մահվան զառանցանքի մեջ կրկնում էր՝ «ամրացրե՛ք աջ թեք», այդպես նա կարող եր՝ մեռնելիս գոչել «հրանետներ, միայն հրանետներ»,—սակայն ամեն ինչ այլ կերպ եր վճռված։ Մի ուրիշ բախտավոր մեկը, յեթե կարելի յե նրան բախտավոր համարել, քաղեց նրա դավինիները, յեթե կարելի յե այդ դավինի անվանել, և այդ մարդուն անվանում էյին՝ պրոֆեսոր Ֆարեր։ Մի անգամ— դա վաղուց էր— Շտարկեն գնաց նրա մոտ, վորպեսզի յերես առ յերես ստուգե իր հակառակորդի ուժը, և Ֆարերը չուզեց նրան տեսնել։ Այն ժամանակ

նա նստեց մի նոր նախագծի առաջ, հասարակ, գրավիչ և ոգտակար։ Նախագիծը քննվել էր շտաբի անհամար բաժիններում, և յերբ նա պատասխան ստացավ, արյունն սկսեց բաղխել Շտարկեյի ծեր սրտում։

Նրանք մերժել էյին նրա փայլուն նոր նախագիծը։ Տեսնում եք արդյոք, նրանց մոտ, ամբողջ Գերմանիայում յուղ չի բավականանում այդ բանի համար, սովառնակները— այնպիսի ամենազոր գեներալ, ինչպես նա յե կարծում։ Սովառնակներից հրավառ յուղով վողոգել հակառակորդին— դա բարդ յերեակայություն է։ Իսկ մի՞թե հրանետար յերեակայություն չէր, վորի անզուսպ աճը կյանքի կոչեց ինքը՝ Շտարկեն։

— Մենք նյութերի պաշար չունենք,— ասում էր նրան մի փայլուն շաղակրատ, վոր հիանում էր իր ձայնի հնչյունով։— Դուք չգիտեք, թե գերմանական բանակը, որինակ, վորքան բամբակ է այրում։ Որական նա այրում է հազար տոննից ավելի։ Դուք մտածեցե՞ք միայն՝ տասներկու սանտիմետրանոց թնդանոթի յերեսուն ձիգը կլանում է չորսհարյուր ֆունտ բամբակ։ Մեզ մոտ ամսական վեցհարյուր տոնն արսեն գնում է այն միլիոն արկերի համար, վորը մենք բաց ենք թողնում Ֆրոնտին։ Ձե վոր չի կարելի փոփոխել թնդանոթների և հրացանների վողջ սխառմը։ Արկերն ամենից հեշտ են յենթարկվում փոփոխության, և այն ելներքին կազմվածքի կողմից։ Ձեր հրանետար լավ է դիրքային տեղական կռվում, հարվածային գրոհներում, բայց նրանից շատ բան սպասել չի կարելի, առավել ևս, վոր նա անակնկալությամբ չի զարմացնում։

— Դուք,— ասում էր այդ շար ու նախանձուտ մարդը,— դուք չափազանց շատ նյութ եք ծախսում։ Դուք լցնում եք հարյուր լիտր յուղը Գրոֆի մի մեծ ապարատի մեջ, դուք միջին Վեքսից անում եք տասնութ ձիգ, վորը գործում են քսանհինգ մետրի վրա։ Մի՞թե այդպես կարելի յե։ Յես յեղել եմ Եպարծի

դադաթիւն, — դուք գիտեք այդ, հիշում եք, թե այն-
տեղ ինչպիսի բեռնոնե գնդացիւրային բնէր և բլինդաթ-
նէր եյին կանգնեցւած, — յետ վաղուց ե չեյի յեղել այն
կողմերը, անցյալ ամսին ընկա այնտեղ: Գազաթը չկա,
նա համասարեցւած ե հողի հետ, յերկաթալարի կտոր-
ները, բեռնոնի անկյունները, բեռնային հատիկն ու
խիճը, և վոսկորներն ինչ քանակությամբ ուզեք: Այդ
արել են խաչենոսի ականանետներն ու հրասանդները:
Այդ դա աշխատանք ե: Յերեք հազար ականներ կրա-
կում եյին միանգամից: Խաչենոսը նրանց կատարելու-
թյան ե հասցրել: Ականը լցւում ե գազով, մեկ ներ-
չնչումից մարդ մեռնում ե: Դա-առաջինը, իսկ յերկ-
րորդն այն ե, վոր դազային ալիքներն ու արկերը փո-
խարինել են ամեն ինչ: Ամեն որ, ամեն ժամ մենք սար-
սափելի կորուստներ ենք կրում: Մարդիկ կուրանում
են, և խլանում, և մահանում՝ վոչ մի տեղ իրենց ա-
պահով չզգալով: Տասը կիլոմետր դեպի խորքը գնում
են գազային ալիքները: Յեւ մենք պատասխանում ենք
նույն բանով: Դադ գազի փոխարեն: Ամենախոր թի-
կունքում ծառերն այրվել են, խոտն այրվել ե. չորս-
դին — անապատ ու սպանդ:

— Իսկ դուք գիտեք, — ասաց Շտարկեն, — Վոր
պրոֆեսոր Փարերն մերժեց ինձ ընդունել, յերբ յես
նրա մոտ եյի գնացել: Ճշմարիտ ե, դա վաղուց ե յե-
ղել:

— Յես չգիտեմ նրա մերժման պատճառը, սակայն
գիտեմ, վոր դա միակ մարդն ե, վորի հետեից ամբողջ
բանակը մի խոսք ե կրկնում՝ գազ, գազ, գազ: Դրա-
նից, ինչպես յեզները դանակի տակ, ամբողջ դիվի-
զիաներ են գլորվում: Մարդիկ քնում են հակադադե-
րով: Զանգերը որական չորս անգամ գազային տաղ-
նապ են դարկում: Ներեցեք ինձ, յես պետք ե ընդհա-
տեմ խոսակցությունը, ինձ նպաստում են:

Յեւ նա գնաց, ինքնազոհ և հանգիստ շտաբիստը:
Շտարկեն վերադարձաւ տուն: Շտարկեն յերկար կանդ-

նած եր մտածմունքի մեջ, մեջքով դեպի պատուհանը:
Լայն մեջքն անհասկանալի յե, ինչպես փակւած դուռ:
Նրա ալեւոր գլուխն անշարժ ե: Այդպես ե կանգնելու
Շտարկեն արձանի վրա: Այդպես ե նա պատկերանա-
լու մարմարի կամ բրոնզի վրա:

Շտարկեն քարե աչքերով նայում ե մոխրամանին:
Մոխրամանը չինւած եր անգլիական արկի կտորներից:
Շատ դիմացկուն մոխրաման: Շատ հանգիստ մոխրա-
ման: Դա յերբեք հարցեր չի տալիս: Դա յերբեք չի
պատասխանում հարցերին:

2. ՄԵԾ ԱՆԱԽՈՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Դուք գիտեք՝ ինչ վոր մի անգամ յես ասացի մի
սպայի, վոր դուք միակ մարդն եք, վորի հետեից ամ-
բողջ բանակը կրկնում ե ձեր մի խոսքը՝ գազ, գազ,
գազ: Հրետանավորներն անց են կացել իսկական քիմիա-
կան գիտություն: Յեւ այնքան հասարակ ե, ճշմարիտ
չե՞: Անշարժ խափանիչ կրակ, — դեղին խաչ, — մանա-
նեխի գազ: Կանաչ խաչ — ֆոզգեն: Կապույտ խաչ —
արսեն: Միայն մշտական լարվածությունից, սուր
զրգիւից ե առաջ յեկել մարդկանց հոգնածությունը:
Արեւմտյան ռազմաճակատը խրովիլակ ե դարձել:
Մարդիկ ասում են, վոր այնտեղ վողջ մնալ չի կարելի:
Կամ կվիրավորվես, կամ կթունաւորվես, կամ կսպան-
վես: Ճիշտ ե, կարելի յե գերի ընկնել, բայց դա ել
վոչ միշտ կարող ես տեսնիկապես հաջողեցնել: Արեւել-
յան ռազմաճակատից տեղափոխելիս զնդերում դասա-
լքություն ե նկատվել: Փախչում են գլխավորապես ել-
զասցիններն ու լեհերը: Ընդհանուր հոգնածությունն
սկնհայտ ե...

Փարերը նստել եր շտաբիստի հետ խորհրդակցու-
թյունների սենյակում: Նրանք կոֆե եյին խմում անգ-
լիացիներից խլված ռազմական ալարի պաքսիմատով:
Որը համարյա ձմեռային եր: Փողոցում ցուրտ եր և

սայթաքուն: Սենյակում տաքանում եր ելեքտրական վառարանը, և շտաբային սպան նստել եր վոտը վոտ-քին դրած, ինչպես միշտ, սովորական ու սանձարձակ, թեպետ նրանք խոսում եյին կարեւորագույն նշանակութ-յուն ունեցող հարցերի մասին: Ճիշտ է, մեծ իրա-դարձությունները հաշվի չեն առնում տեղն ու յեղանա-կը: Մեկ վոր յեկավ նրանց ժամանակը, վոչինչ չի կարող կանգնեցնել նրանց, իսկ շտաբայինները բոլոր ժամանակներում և բոլոր ժողովուրդների մոտ միա-տեսակ են լինելու: Նրա հեղինակությունն անդրդվելի-յե:

— Ի՞նչ է հոգնածությունը, — ասաց Պարերը: — Դա պարզապես որդանիքմի ինքնաթուռավորումն է մի առանձին թույնով, վոր ստացվում է սպիտակուցային նյութի քայքայման ժամանակ: Հոգնածությունը կա-րելի չէ պատվաստել, ինչպես ծաղիկ հիվանդությու-նը: Հոգնածությունն ինձ չի անհանգստացնում: Ինձ անհանգստացնում են հակազագերը: Մոտերս յես փոր-ձեցի նոր կաշվե դիմակը, բոլոր յերեք տեսակներն ել...

Շտաբիստը ցած դրեց գավաթը: Ռազմաճակատում իր յեղած լինելու հիշողությունը կենդանի կերպով կանգնեց նրա գլխում: Պարերը չվացրեց: Չարմանալի յեր, վոր այդպիսի մեծ մարդը չվացնում է, ինչպես յերեխա:

— Յեթե անգլիացիք սկսեն կապույտ խաչով կրա-կել, հոգնածությունը կանցնի: Հակազագերը կապույտ խաչն իրենց միջով անց են կացնում:

Սպան գունատվեց: Պարերը ցած դրեց իր գավաթը և չարունակեց:

— Յեթե անգլիացիք գործիմեջ կզենեն արսենական միացումներ, մենք հարկադրված կլինենք մեր հակա-զազը մոտեցնել անգլիականին: Անգլիացիները գործա-դրում են բրդից և բամբակից չինած քամոցներ մեր գունավոր խաչերի դեմ, սակայն այդ տիպի հակազազը

ճնշում է կոկորդը և շուտափույթ շնչահեղձություն է առաջացնում: Մենք կվերցնենք հակազազի այլ տեսա-կը: Դա միմեծ տուփ կլինի, կախված կրծքից, ուտինե խողովակով: Ռետին մենք չունենք: Մենք գործի մեջ ենք դնում կաշին: Բայց խողովակների պատրաստումը կաշուց բավական բարդ է: Իսկ մեզ հարկավոր են մի-լիոնավոր խողովակներ: Ի՞նչ անել հապա: Յես տեղե-կություններ եմ հավաքել: Ռետինի պաշարները չնչին են: Վորտե՞ղով է անցնում այժմ ռազմաճակատի գիծը:

— Ընդհանուր գծերով ռազմաճակատն գնում է Արրասից դեպի Լաֆեր — Ռեյմս — Վերդեն: Դժբախ-տաբար, մենք վաղուց կորցրել ենք Սուսսոնը: Ձիգֆ-րիդի գիծը ձեղքվում է: Ամբողջ հուլիսը Կրիմգիլդի և Ուոլդինգի դիրքերի վրա յե: Ճակատամարտը չի թու-լանում:

— Յես կասկածում եմ նաև մի կետում, — Պարերը խոսում եր հանգիստ, ինչպես դասախոսության ժա-մանակ: — Փորձեք ստուգել հեյլբոյինի պաշարները, քլորային կրով այդ տուփերը, վորոնք մենք գործա-դրում ենք մանանեխի գազի դեմ: Հեյլբոյինի ի՞նչպիսի քանակություն է գտնվում բանակի պարենավորման համար: Իմ մեջ կասկած կա, վոր այդ ել հերիք չի: Յես նույնիսկ գիտեմ, վոր մի քանի զորաբանակներ հեյլբոյինը փոխարինում են մարզանի թթու կալիու-մով, բայց դա այդպես չի կարելի թողնել:

Շտաբիստը վեր կացավ:

— Յես գնում եմ վաղը: Ձեր ղեկուցումն յես իս-կույն կհանձնեմ անձամբ: Դուք կտեղեկանաք յերեք ուրից հետո: Դուք կստանաք տեղեկանքի պատճենը:

Պարերը զանգահարեց Փոգելին: Փոգելն յեկավ, ինչպես միշտ, փայլելով սկավող ճաղատությամբ: Այդ որսատրե շատանում եր, բայց ինքը Փոգելը չեր կորց-նում վոչ իր փայլը և վոչ ծավալը:

Յերեք ուրից հետո Պարերին մի հեռագիր բերին,

արդեն ծածկադիր և միանգամայն դադարեց, և նա կարդում էր այն այնպես յերկար, վոր չէր պատասխանում Փոզելի վոչ մի հազոցներին: Փարերը հեռագիրը թազցրեց զրպանում, մի քանի րոպեյից հետո հանեց այն, չիեց քթի վերևի մասը և այդ ժամանակ նայեց Փոզելին:

— Ներեցեք, Փոզել, դուք ինչ վոր բա՞ն ասացիք ինձ:

— Յես վոչինչ չասացի, պարոն պրոֆեսոր:

Փարերը մեկնեց նրան հեռագիրը, Փոզելը դադարեցավ, վոր Փարերը տասը րոպե կարդում էր յերեք հափերձ տող. «տեղեկացնում եմ, վոր յերրորդ, առաջին, յոթերորդ, տասնյոթերորդ և վեցերորդ բանակներում ամբողջ քլորային կիրը բաժանված է դորքին: Բլորային կրի պաշարներ ալլես չկան»:

Փոզելը հեռագիրը կարգաց կիսաձայն:

Պրոֆեսորը նայում էր Փոզելին նույնչափ սուր հայացքով, ինչպես միշտ, սակայն գիշատիչության այն չեղտով, վորից հետո, գիտեր Փոզելը, պրոֆեսորը կամ կզայրանա, կամ անհաջող կատակներ կանի: Յեվ նա ճիշտ էր:

— Փոզել, դուք վո՞ր յերկիրն եք ընտրում, յերբ գնում եք հանգստանալու: Կամ՝ վոչ — ձեզ վո՞ր յերկիրն է բոլոր մյուսներից ավելի քաշում գեպի իրեն:

— Ինձ քաշում է Սիամը, — ասաց Փոզելը, — սպիտակ արջեր, բայազերաներ և վագրեր: — Նա գիմափում էր կատակին:

— Դուք կարող եք հավաքել ճամպրուկները և մեկնել Սիամ, Փոզել, սպիտակ արջի վրա բայազերայի հետ միասին սլանալ վագրի հետևից: Այդ հանգիստ կլինի...

Կատակը դուր չեկավ, ինչպես միշտ: Փոզելը նույնիսկ չժպտաց:

Ռուդի Շրեկֆուսը վարժեցրած միջատի աննախանձելի կյանք էր վարում: Նա սողում էր ծխապատ դաշտերով, ավերված խրամատների անցումներով, սա-
ղայն ամենից վատթարը — արկերից առաջացած փոսերն եյին: Նա ատում էր դրանք ամենից ավելի: Յեբ-
կու որ նա ապրեց փոսի մեջ, չըջապատված ծխի ծանր ամպերով և կայծակների պայթյուններով: Նա փոփոխում էր հակադազերը, գենքը, նա կորցնում էր ընկերներին, իսկ գլխավորը, — նա սողում էր, ինչպես վարժեցրած բզեզ: Ժամանակ առ ժամանակ նա հրամաններ էր տալիս, սուլում էր, կրակում, ընկածներին բռնում մառազների ծայրով, բայց նրան վոչ հաճախ թուլյա-
տրվում էր վոտքի յեղնել:

Յերբմն նրա առջևով տեսիլներ եյին անցնում. կանաչ դաշտեր, ահագին կապույտ յերկինք, լայն սպիտակ ճանապարհ, նա կռիվ է մտնում, գնում է ճանապարհով ուրախ, ինչպես յերիտասարդ աստված, վոչ մի վտանգ սարսափելի չէ նրան, նա գլուխ չի թեքում գնդակների տակ, իսկ արկերի վոռնացող խմբապարը միայն բարձրացնում է նրան գեպի հանդիսավոր վրաստահություն: Հետո նա սկսեց թեքել գլուխը, ինչպես նորակոչիկ, հետո նա սկսեց թագնվել յեղևտներում, ծածկարաններ փնտռել: Հիմա նա լուկ վարժեցրած բզեզ է, վոր լողում է վորոտուն փոշում, ուր ամեն ինչ չորացած ձավարի աղունի յեր վերածվել: Նա քնում է այժմ չմտածելով, վոր գերի կվերցնեն, վոր սապի պայթյունը նրան հողի հետ կխառնի, վոր դադը կպատի քնածին. նա խորն է քնում մեծ հողնածության պատ-
ճառով:

Յերբ նա արթնանում է, փոփոխություն չի նկատում: Միայն գազերը փոխում են տեսքը և ներկվածքը: Նա տեսնում է թունավորված մարդկանց բաց մա-
նիչակազույն մորթով, արծաթե դեմքերով, ձեռքերին

և յերեսին վարդի պես կարմիր բծերով. վիրավորների վռնոց և դալիս փոսերից, կարծես վռնում են փշա-
ցած վենտիլյատորները: Այդպես անցնում է վեց կամ
ութ ու: Այնուհետև նրան տեղափոխում են թիկունք
հանգստի, դեպի քանդված գյուղերը, նոր դիրքերը և
նա թավալվում է ինչ վոր մեկի ջարդված անկողնում
և ուտում է՝ չմտածելով ուտելիքի մասին:

Այնուհետև նա կրկին սողում է ծխոտ դաշտի վրա-
յով: Նա նույնիսկ չգիտե, թե ինչպիսի պեյզաժ է
չորս կողմը: Նրան թվում է, թե ամբողջ ժամանակ
նրա առջև ողն են բարձրանում ծանր պատեր և անվերջ
քանդվում են, այնպես վոր հողը դռում է ժամերով:

Քամեյլոնի կանաչ դունչի նման աճել եր նրա
մոռլթը: Հակազդը մշտական անեծք եր դարձել: Ա-
մենքը գոռում են գաղալին դիսցիպլինի մասին: Վոր-
պես վարժեցրած բզեզ սողում է Շրեկֆուսը յերկաթա-
լարի պատերի միջով՝ բթամտորեն նայելով լողացող
ծխին, վորի հեռեկից դալիս են թշնամիները:

Յերկինքը բացվում է անսպասելիորեն: Նա լի յե
աղմուկով: Աղմկում են տասնյակ սավառնակներ:
Նրանք գնում են այնպիսի արագությամբ, կարծես
նրանց լարել են մի այլ մոլորակի վրա և նրանք պետք
է պատռեն գետինը, անցնեն նրա միջով: Նրանց թևերն
ավելի մոտիկից են յերևում: Շրեկֆուսը յերեսով ընկ-
նում է գետին: Սավառնակները նետեր են ձգում: Նե-
տերը բութ կերպով դիպչում են սաղավարտներին,
հրանոթների վահանին, մեխվում են տախտակների
վրա և փափկորեն ծակում են մարդուն:

Սավառնակները գնդացիրային ցնցուղներով ջրում
են ծխի բաց մանիչակագույն քուլաները: Նրանք ուռ-
բեր են նետում, վորոնք պայթում են չնչակտուր հեռ-
ցով — նրանք անցնում են, նրանց փոխարինելու յե
գալիս նոր խափանիչ կրակը:

Շրեկֆուսին պատում է հրեշային տխրություն
այդ որերի և գիշերների մեջ, վորոնք վերածվել են մսի

խանութների, ուր թավալվում են չհավաքված մար-
միններ, իսկ մսագործները շարունակ հարբած են հոգ-
նածությունից և արյան հոտից, բլուրների մեջ, վոր
նմանում են աղբահորերի, ուր արևի տակ նեխվում են
արտասովոր չափի տականքներ, բութ մոռլթներով
կենդանիների մեջ և կանաչ դիմակներով. սառ, ձկան
աչքերով մարդկանց մեջ, ածուխի, մոխրի և վոսկոր-
ների այդ կույտերի մեջ, վորոնց վրա ծածանվում են
ծխում խոնավացած փալասները, վոր դրոշակ են կոչ-
վում:

Հետո նրան պատում է հուսահատությունը, նա չի
կարողանում կրակել, ներվային սարսափելի լարու-
մից նրա ձայնը կորչում է: Յերը նա նայում է, գետնի
վրա տեսնում է կարմիր կամ կանաչ մեծ բծեր: Սա-
կայն դա հենց չի վերաբերում նրա հիվանդագին դրու-
թյան: Դա փորձնական հրաձգության արկերի բծեր
են: Թնդանոթները գործում են՝ քրախք մտած: Ամ-
բողջ յերկրից կմնան, ինչպես լուսնի վրա, դատարկ
փոսեր: Լա՛վ պեյզաժ է դալիք սերնդի համար: Բայց
Շրեկֆուսը չի ուզում թշնամուն հանձնել և այդ փոսե-
րը, վորոնք նա ատում է: Նրա սիրտն է խառնում, ա-
մեն անգամ յերբ նա սողում է, սողում է փոսի նեխ-
ված պատերով շարունակ ցած ու ցած, և հողը թափ-
վում է, և ականջները խշշում, իսկ փոսի ծայրին
կանգնած է գորշակարմիր մշուշը, վորից արյունը
գլուխն է խփում և դողում են վոտքերը:

Վեցերորդ կամ ութերորդ որը նա պառկած է հան-
գրստատեղում, և հեռվում նրանից առաջ կծկվում են
ու լուծվում ծխածածկութի ալիքները: Ու հանկարծ
կողքից սկսում են կրակել և առանձին կրակոցները
սարսափելի յեն, ավելի սարսափելի ճակատամարտի
բազմաձայն մոնչյունից: Ի՞նչ պատահեց: Շրեկֆուսը
դուրս է յեկնում դեպի ճանապարհը՝ ձեռքով փակելով
աչքերն արևից: Շուրջը թաղնվում են մարդիկ, չը-
հագնված, չփոթված, թիկունքում հանգստացող մար-

գիւղ, վորոնց վրա իրավունք չունեն կրակելու — նրանք հանգստանում են, նրանք ճակատամարտից դուրս են յեկել, նրանք ուզում են չնչել մաքուր ողով և ման գալ յերկու վտտի վրա:

Յեւ այն ժամանակ նա տեսնում է տանկը: Սև, ամրակող, լուռ աղմուկով մեքենան պտտվում է և ժամանակ առ ժամանակ ծխով ծածկվում: Նա կրակում է ընտրովի: Պայթուցիկ գնդակների սպիտակ բռնկումները զարկվում են նրա կողերին: Սակայն ինչո՞ւ այդ խելահեղ տանկը միայնակ է: Վո՞րտեղ են մյուսները: Նրա ղեկավարը խելքը թուցրել է, այդչափ հեռու գնալով, կորցրել է ուղղութեան պատկերացումը: Նա ևս վայրենի հոգնածութեան պատճառով չափ ու սահմանից անցել է: Տանկը շուռ է գալիս Շրեկֆուլտի կողմը: Տանկը կանգնել է ջարդված թփերի մեջ, կարծես թե փնչացնելով: Նրան գնդակոծում են, ինչպես փղին շուրջկալի ժամանակ: Նրան միայն կնճիթ է պակասում:

Շրեկֆուլտն ընկնում է գետին, վորովհետև տանկը սպիտակ ամպ ուղարկեց նրա կողմը: Ուր վոր տներից գենը վեր է բարձրանում հողը և ճաքճքում են տանիքները: Յասում է պատում Շրեկֆուլտին: Նա պատրաստ է վազելու այդ սև աշտարակի մոտ, բռունցքներով խիելու նրան, չանգռել յեղունդներով, թքել նրա վրա: Տանկի տանիքի վրա նա տեսնում է բիդոններ, կապկաված բիդոնների շարքեր: Տանկը հեռավոր զրոսանքի յե պատրաստվել, յեթե բենզինի այդքան պաշար է տանում: Շրեկֆուլտը խից հրացանը հարևան գինվորից: Նա կանչում է. «Գնդակներ, հրձիգ գնդակներ»:

Հրձիգ գնդակներ վոչ վոքի մոտ չկա: Այն ժամանակ նա կանչում է նորից. «Ջարկե՛ք բիդոններին, զարկե՛ք բենզինին»:

Անտանելի հրաձգություն է բացվում: Հեռադիտակի միջից Շրեկֆուլտը տեսնում է, թե ինչպես ծակվում են բիդոնները, ինչպես բենզինը հրեչի ուտերով հոսում

է ցած, նա հավանորեն ծորում է ներս, ի՞նչ է կատարվում այնտեղ մարդկանց հետ: Տանկն սկսում է պտտվել: Բենզինն արդեն հոսում է առվակներով: Յեւ այդ ժամանակ բերում են հրձիգ գնդակները:

Տանկի վերևը բորբոքվում է թուխ կապտավուն բոցը, թեթև և թափանցիկ: Տանկն առաջ է նետվում և կանգ առնում՝ աղյուսի կույտի մեջ խրվելով: Պայթում է մեծ բիդոնը: Բոցն առանց կայծերի տարածվում է մեքենայի սև կողերով: Մարդիկ կրակում են առանց դադարի: Տանկի միջից գետնի վրա յեն թռչում յերեք մարդ: Նրանք վեր են բարձրացնում ձեռքերը: Նրանց դեմքերից բենզին է հոսում, նրանց այտերը բոսոր ու շերտավոր են մրից ու կեղտից, հեղձուցիչ գոլորչացումներից, շրթները ճաքճքվել են: Նրանց հագուստը կեղտոտ է ու քրտնքոտ: Յերևի առջևին սպա յե: Նա քիչ է բան հասկանում, հազիվ է վոտքի վրա կանգնում: Յեթե նա խոսել կարողանար, կասեր, վոր մարդկային դիմացկունութեան ել սահման կա: Գերլարված մետաղը ճաքվում է, ինչպես գրաֆիտ: Գա՞նի ժամ են անցկացրել նրանք սողացող տուփում, վառարանի տաքութեան մեջ՝ չհամարձակվելով դուրս հանել:

Սվինները հորիզոնադիր բռնած՝ դեպի նրանց են վազում մարդիկ: Յեթե չխանգարեն նրանց, ապա նրանք կապանեն այդ յերեքին, վորոնք խլել են դրանցից վաստակած կարճ հանգստի իրավունքը: Տանկիստները կանգնած են, յերեքվելով, վեր բարձրացրած ձեռքերով: Շրեկֆուլտը նետվում է նրանց շրջապատող ամբոխի մեջ:

— Յե՛տ, — գոռում է նա: — Հանդարտ, տղանե՛ր, դեպի յետ: — Վոմանք փորձում են տանկի ներսը մտնել, բայց ինչ վոր մեկն հարվածում է հրացանի կոթով և գետին է գլորում տանկիստներից մեկին, ամենափոքրին: Այն ժամանակ տանկի հրամանատարն առում է. «Խմե՛լ»:

Յեւ Շրեկֆուլտը տեսնում է, վոր նա վիրավորված

ե: Նրա ձեռքը վիրակապ է փաթաթած: Հետո նա տեսնում է, վոր գերու ձեռքի ժամացույցը կանգնել է: Առանց գիտենալու թե ինչու, նա ասում է բարձրաձայն. «Հինգից քառորդ անց է»:

Սպան ձեռքով շփում է մազերը և պոկում է ինչ վոր մրի կույտը:

— Խմել,— կրկնում է նա և ավելացնում.— և քնել:

4. ԿԱՐԾԵՍ ԹԵ՝ ԱՅՈ

Դա իսկապես գազերի տիրապետություն էր: Ինչպես արաբական հեքյաթի չարաբաստիկ չչից մի անգամ առաջացել էր զգվելի գեմքով և ամենակարող ուժով գեր, այնպես էլ Փարերյան լաբորատորիայի մըզվածքային պահարաններից դուրս ելին յեղնում տեսիլներ, վորոնք ծառայում էյին նրա յերկրի բանակներին և հանկարծ չլսված ուժով դարձել էյին նրանց ընդդեմ:

Այդ՝ գործում էյին հեղձուցիչ նյութերը, թունավոր նյութերը, արտասվաբեր նյութերը, գրգռիչ նյութերը, պալարական նյութերը: Նրանց համառությունը գերազանցում էր ամենալավագույն մարտիկի համառությունից: Մանանեխի գազն առվակներով հոսում էր քաղաքների փողոցներով, քլորային անազը ծխածածկույթի պղտոր լեզուներով պատել էր հորիզոնը, ետիլյան յեթերն ուղեկցում էր ձեռքի նռնակների բեկորներին, քլորպիլիդները խրամատային աղանների հետ միասին խոստում էր բլինդաթների անցքերը, քլորն առաջացնում էր թոքերի կայծակնաբեր բորբոքում:

Գազերը խաղողի նման անցնում էյին մոռյլ հընձանները և հեղուկ, խտացրած դրությամբ լցնում էյին արկերը: Յերբեմն զոհվում էյին վոչ նրանք, ում դեմ նշանակված էյին այդ գազերը, այլ նրանք, ովքեր պատրաստել էյին:

Գազերը, վորոնք ուտում էյին պոզպատն ու յեր-

կաթը, ծծվում էյին ծառի, կաշվի, գործվածքի, վորոնք շարաթներով պահպանում էյին թունոտությունը, մարդկանց ստիպում էյին ջղաձգարար բռնել հակադադի դիմակը և սարսափից սառած աչքերով ու լայնացած սրտով, ժամերով մահվան սպասել: Այն ժամանակ դալիա եր դիֆենիլքլորարսինը, վորպես մրբիկ ամենաբարակ ավազահատիկների, վորոնք հեշտությամբ վազում են անխային տուփի սև ծակոտիներով: Մարդկանց սիրտն սկսում էր խառնել, քիթն ու կոկորդը պայթում էր դժոխային փռչուցից — մարդիկ պոկում էյին հակադադը, և նրանց դիմավորում էր իպրիտի սխտորային հոտը կամ ֆոսգենի մոռյլ շնչառությունը:

Սպիտակ, կանաչ, գորշ կարմիր, սև, կապույտ և դեղին ծխի մեջ հարյուր յերեսուն հինգ որ անընդհատ մարտնչում էր վեց միլիոն մարդ: Ավազամրբիկը մի տեղից մյուսն է տեղափոխում անապատի ավազաբլուրները: Այդ ճակատամարտը չափից դուրս գերազանցեց ավազամրբիկին: Նա փոխեց վողջ բնությունը, յերկրի բաղադրությունը, նա փոխեց թռչունների թռիչքն անգամ, թռչունները մի կողմ քաշվեցին՝ թռչնելով դարեվոր ուղին, իսկ ծեծված, դիակների հետ խառնված, արյունոտ, դատարկ յերկիրը հրաժարվում էր վորեւե բան ծնել:

Կողմերը կոպում են արդեն անհավասար պայմաններում: Յեւմի կողմը դանդաղորեն մասերի բեկվելով՝ սկսեց նահանջը: Նրա վերևում ձախրում էյին հազարավոր սավառակներ բոլոր սխտեմների ռազմական անուններով: Այդ գնում էյին Նյուպորները, Վիկկերաները, Խավելադները, Բրիստոլները, Կերտիսները, Սպադները, վորպեսզի վերևից ջախջախեն հեռացող, ջղաձգորեն պաշտպանվող թշնամուն:

Արդեն ձմեռը մանր, սառն, կաշուն ձավարով ծածկել էր ճակատամարտի դաշտերը, արդեն յերեսուն դիվիզիա պատրաստվում էյին խփելու Մայնցի նոր ճանապարհով, արդեն տասներկու գաշակից բանակներ՝ թիկունքում ունենալով միլիոնավոր պահեստ՝ պատ-

բաստովում եյին իրենցից առաջ գազային հեղեղ ուղարկել զերմանացիների վերջին զիրքերը, յերբ մի մառախլապատ յերեկո, ռազմաճակատից հեռու, մի քաղաքում, ուր թույլ կերպով հասնում եր մեծ թնդա-նոթաձողության ձայնը, — ալեհեր մի մարդ, հոգնածությունից կանաչած, հենվելով քարտեղի վրա՝ ասաց մի ուրիշ ուժասպառ, արճիճե դեմքով մարդու.

— Կարծես թե մենք տանուլ տվինք պատերազմը:

Յեւ արճիճե դեմքով մարդը պատասխանեց.

— Կարծես թե՝ այո:

Նոյեմբերի յոթին, յերեկոյան ժամը ութին ցեխոտ, սառած պահակները Լա-Կապելից յերկու կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, առաջին Ֆրանսիական բանակի յերեսունմեկերորդ կորպուսի տեղավորության պահպանության շրջանում նկատեցին բանադնացիների սպիտակ դրոշը: Նրանք ավտոմորթիլին հրամայեցին կանգնել:

5. ՆՈՅԵՄԲԵՐ

Մեխերով ամրացված ծանր կոշիկներն անհանդիստ կերպով կոխկրտում եյին նոր յեկած ձյունը: Նրբափողոցն ամբլի խիտ լցվում եր ուտերով, վոմանք պոկված ուտադիրներով: Յածր պարսպի տակ, յերկաթե դռան առջև կանգնել եր կարմրատակած մի մարդ, վոր ապարդյուն թափահարում եր թևերը: Նրա ամեն մի խոսքն անբավականություն եր առաջացնում:

— Ընկերներ, յես կրկնում եմ՝ այստեղ վոչինչ չկա: Սա պահեստ ե: Պաշարեղենի ռազմական պահեստ: Դիսցիպլինա, ընկերներ...

Դա լավ խոսք չեր: Այդ խոսքը քիչ առաջ պայթեց, կարծես այնտեղ, Մաասի վրա պատերազմին վերջ տվող մի նոնակ զարկեց հենց այդ խոսքին:

— Մենք տեսել ենք դիսցիպլինան, հերիք ե:

— Ո՞ւմ համար ես պահում այդ բարիքը:

— Մենք յերկրորդ օրն ե բան չենք կերել: Ամեն-

քը զանազան կողմեր են փախչում: Տրանսպորտը քայ-քայված ե:

— Այնտեղ պահեստում հաց ու պահածոներ կան:

— Դրա հետ ինչ խոսել...

— Առաջ, ընկերներ, մենք արդեն պահեստներ ենք քարուքանդ արել, մենք գիտենք, թե ինչ ե լինում այնտեղ:

— Ամեն ինչ կայգերը չի խժռելու...

— Նա արդեն Հոլլանդիայումն ե: Մի՛ անհանգրստանա, նա իրեն տաք ե զգում:

— Հապա սոա՛ջ:

Մարդուն քչեցին դռներից: Հրացանի կոթերի թանձր հարվածները դուռը խախտեցին: Հետո յերեւոյ բանալին, դուռը բացվեց: Ամբոխը, — դա հենց դիսցիպլինայից, զորանոցից, պատերազմից ազատագրված, գրգռված, ազատ ամբոխն եր, հրացաններով, կարճ թրերով, ատրացաններով, մաուզերներով, ձեռքի նոնակներով զինված, — տարածվեց բազում: Բակը մեծ եր: Նա ամբլի շուտ նմանում եր հրապարակի:

Յանկապատում, ծածկի տակ կանգնած եյին դորշ բաքեր, անհասկանալի բանկաներ, թիթեղյա չճեր, դորշ ապարատներ, բարձր, ուտինով պատած կաշեփողերով: Այդ բաքերից տասնյակներ կային, նրանք կանգնած եյին ինչպես արտասովոր կենդանիներ ախոռում, կնճիթները դետին թողած: Ուտելիք վո՛չինչ այդ բազում: Յանկապատած տարածությունների մեջ մի հատիկ չեր կարելի գտնել: Ամբոխը քարչ եր գալիս խլացուցիչ հայհոյելով: Նրնա Աստենը նիհար, սե չի-նելի մեջ, նոնակներ կախ տված, դուրս վազեց սալարկած բակի մեջտեղը:

— Ընկերներ, — դուռաց նա: — Մեզ խաբում եյին այս բոլոր տարիները: Մեզ կատաղություն եյին պատվաստում: Բոլոր միջոցներով աշխատում եյին մեզ վոչնչացնել: Այստեղ հաց չկա, այո, խկապես այստեղ չկա այդ: Բայց այստեղ կա մի ինչ վոր այլ բան: Դիտե՞ք դուք արդյոք, թե այդ ինչ իրեր են: Դրանք հրա-

նեաներ են ու դադանեաներ են, պահեստի հրանետներ, հենց այն, վորոնցով մեզ այրում եյին, ինչպէս չների-
անգլիացիներն իրենցն ընդորինակեցին ահա այս
կարիճներից: Սակայն այս կարիճներն ավելի վաղ
սկսեցին: Ընկերներ, դրանց հետ յես առանձին հա-
շիվներ ունեմ: Դեպի յե՛տ, ընկերներ, զգուշացե՛ք:

Նա թափահարեց նռնակը՝ գոտիկից պոկած: Մար-
դիկ նետովեցին դեպի փողոց տանող դուռը, պահվեցին
քարերի յետև, վոմանք յերեսնիվայր ընկան դետին:
Ռազմաճակատի փորձը թելադրում էր ամեն մեկին,
թե ինչ անել: Կարմիր բոցը լուսավորեց բակը, և կո-
տրտվող բալլոնների ձայնն անցավ անկյունից-ան-
կյուն: Նրանք ձգեց յերկրորդ նռնակը: Ինչ վոր մեկը
քարե պարսպի վրայից բաց թողեց դարձյալ մի քանի
հատ: Նռնակները պայթում եյին՝ կտորտանքի վերա-
ծելով դատարկ ամանները:

Ծուխը վոլորվում էր հոլի նման: Տաք յերկաթե
հոտ էր գալիս: Վորոչ ցանկապատեր սկսեցին այրվել:
Կրակը գնալով բարձրանում էր վեր՝ լուսավորելով
հրանետների ջարդված կույտը:

Մարդիկ հեռացան: Բակն ամայացավ: Միայնակ
բոցը բարձրանում էր ծառերի հետևից, և այդ ժամա-
նակ բակն յեկավ Շտարկեն: Նրա առջև հրդեհի բոցով
լուսավորված, բակի հարթ քարերին ընկել էր մոռաց-
ված մի գլխարկ: Գլխարկի վրա իջնում էր ձյունը:

Շտարկեն դատարկ հայացքով շրջեց ջարդոտված
բալոնները:

Դրանք մահանում եյին միայնակ, մոռացված,
ծակծկված կողքերով, պոկված կաշիփողերով, դուրս
ընկած տակերով: Միևնույն ե, մի որ հետո այստեղ
կլինեն Փրանսիացիները:

Ինչ վոր մեկը դիպավ նրա թևքին: Նա զգվանքով
յետ նայեց: Նրա կողքից մի զինվոր անցավ՝ սափրված
մերկ գլխով, տենդոտ յերեսով, չսափրված, առանց
ուսնոցների:

— Հայրիկ, — ասաց նա՝ ուշք չզարձնելով Շտար-

կեյի վրա, — Թող մի անցնեմ: — Յեվ հանկարծ նա
տեսավ, վոր իր առջև սպա յե կանգնած: Նա նայեց
աչքերը սևեռելով, կարծես լարելով տեսողությունը,
և հանկարծ վճռականորեն շուռ յեկավ, աչք ամեց բա-
կը, գտավ գլխարկը, վերցրեց այն, գլխին քաշեց և
հեռացավ քանդած ոճիքով, բաց բերանով չնչարգել-
վածի պես ձյունը կուլ տալով:

— Վոջլոտ սրիկա, — ասաց Շտարկեն:

6. ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Յերբ Նապոլեոնը դահլնկեց յեղավ և կնքվեց Վի-
ենայի խաղաղության դաշնագիրը, բոլորը պարում
եյին: Ինչպէս պատմաբաններն են հաղորդում, կայսրը
պարում էր, թագավորները պարում եյին, Մետտերնի-
խը պարում էր, լորդ Կեստլրին պարում էր: Միայն
իշխան Թալեյրանը չէր պարում, և այն ել նրա հա-
մար, վոր կաղ էր:

Ընդարձակ սենյակում, վորի մասին է խոսքը,
կարմրափայտից շինված պատմական կահույքով և
վոսկե զարդարանքներով, զանազանագույն պատմական
հիշողություններով, տաքուկ ու առանձնացած սենյա-
կում փորձում եյին պարել բավական աշխուժ մի պար,
սարսափելի պար: Նրանք վազվզում եյին կարմրավուն
սեղանի շուրջը, պահարանների մոտով, վորոնք զար-
մացած դիտում եյին նրանց, վազում եյին յերկու ծա-
նըր, անդակազմ, վոչ բարձրահասակ մարդ և հնդուհա-
վային դյուրաբորբոքությամբ կշկշում եյին:

— Հասկացե՛ք, մարչալ, — կշկշում էր սերթուկով
մարդը. — պատերազմն ավարտված է, ավարտված է:
Դուք կգնաք Սպա, գերմանացիների մոտ, գինադադա-
րի...

Մարչալը թափահարում էր թևերը:

— Յես չեմ գնա Սպա: Գանի՞ անգամ ասել ձեզ:
Յես հաշտություն չեմ ուզում: Թող գնա ով ուզում է:
Կոխն ավարտված չե: Այդ բոլորը ինտրիգներ են:
Նրանք ինձից դուրացան հաղթությունը: Յերբ յես հար-

վածի համար պահում եմ հարյուր դիվիզիա, յերբ յես պետք է անցնեմ Հռենոսը, մտնեմ Բերլին, նետվեմ դեպի Լեհաստան, անմիջապես վոչնչացնեմ բայլչեիկներին, այդ բույնը, վորտեղից գարչահոտություն է տարածվում ամբողջ Յեվրոպայում, վոնդեմ գերմանացիներին Ռուսաստանից, Ռումինիայից, — փոխանակ կովելու, նրանք բանակցողներ են ուղարկում: Դա չուլերություն է, իսկ դուք ասում եք՝ գնացեք Սպա: Յես լսել չեմ ուզում, յես խորչում եմ:

— Մարչալ, յեթե մենք հետևենք ձեզ, ապա ամբողջ Յեվրոպան կմղենք նոր պատերազմի, քառսի, սոսկումի գիրկը: Պատերազմն ավարտված է: Բոլորը հանգիստ են ուզում: Այսուհետև մենք՝ սերթուկներով մարդիկս պետք է պաշտպան կանգնենք արդարությանը: Մարչալ, ամենքն ել կստանան ըստ արժանավույն: Ամենաքոստ գյուղացին, վորից գերմանացիները խլել են մի կով, կստանան յերկուսը: Մենք նրանց կստիպենք, վորպեսզի բոլոր տները, վորոնք քանդվել են նրանց ձեռքով, վերաշինվեն այն պլաններով, ինչպես վոր կառուցված են յեղել առաջին անգամ: Մենք նրանց տկլոր բաց կթողնենք, մենք նրանց կթողնենք ողբ... Սակայն պատերազմն այնուամենայնիվ վերջացած է: Թնդանութների այդ ամբողջ վորոտը — յերեկվանից սկսած արդեն պատմություն է: Դուք կգնաք Սպա, դուք կտանեք մեր գրավոր պայմանները:

— Յես փոստարկղ չեմ՝ տանելու ձեր պայմանները...

— Մարչալ, դուք հիստերիկ կին չեք: Յես հիշում եմ, վոր խոսում եմ Ֆրանսիայի հերոսի հետ: Դուք զոհաբերում եյիք ձեր կյանքն այնտեղ, ռազմաճակատում, իսկ մի՞թե մենք թիկունքում քիչ ենք աշխատել: Յես ինքս հրաշալի կերպով հիշում եմ, թե ինչպես չքանչանների ժապավենիկներն ամբացնում եյի իպրիտից կուրացած բանվորների կրծքին... Այո՛, այո՛:

— Ա՛յ: Դուք ժապավենիկներ եյիք ամբացնում, իսկ

յես, յես քանի տարի արյուն եմ պղտորել, ամեն ժամ դողացել յուրաքանչյուր ճակատամարտի համար, չեմ կարողացել քնել, շաբաթներով չեմ կարողացել ուտել, իսկ յերբ վեց դիվիզիոններ իրենց սվինը դեպի Փարիզ ուղղեցին, վո՞րտեղ կլինեյիք դուք, յեթե չլինեյի յես: Յեվ դուք ուզում եք, վոր յես գնամ գերմանացիներին մոտ... Յես նրանց չեմ կարող տեսնել, յես կարող եմ նրանց վոչնչացնել միայն: Հասկանում եք — վոչնչացնել:

— Յես հասկանում եմ ձեր գգացումները, մարչալ, բայց պատերազմը վերջացած է: Մենք միայնակ չենք: Դաշնակիցները պատերազմը վերջացած են համարում: Հրանոթները պետք է լռեն: Նրանց թուլատրություն է տալ վերջին վողջույնն ի պատիվ հաշտության, վոր մենք կկարողանանք կնքել: Այսօր հրաչքի որ է. թղթե ֆրանկը հավասարվել է վոսկե ֆրանկին: Մենք, պետական մարդիկս վորոչ բան հասկանում ենք դրանում, սակայն Սպա պետք է վոր գնաք դուք: Հաղթողին է պատկանում հաղթվողից սուրն ընդունելու պատիվը: Դուք կգնաք Սպա, դուք սեղան կնստեք գերմանական լիազորների հետ...

— Յես կնստեմ, այո՛, յես կնստեմ, բայց նրանք չպետք է նստեն: Յես նրանց կանգնած կպահեմ, կանգնած, ձիդ թողած ձեռքերով: Յես պետք է խոսեմ, իսկ նրանք պետք է լսեն ու լռեն, վոչ մի խոսք, յես նրանց թույլ չեմ տա վոչ մի խոսք: Յեվ հետո յես համհարգին կհրամայեմ գրիչ տալ նրանց, վորպեսզի առանց ուշացնելու ստորագրեն իմ պայմանները:

— Միանգամայն ճիշտ է: Նրանք պետք է կանգնեն, նրանք պետք է լռեն: Արեք նրանց հետ, ինչ ուզում եք, սակայն դուք հենց իսկույն կգնաք Սպա: Մենք աղաչում ենք ձեզ, մարչալ: Յերկիրը յերբեք այդ չի մոռանա: Իսկ նրանք թող կանգնեն, թող ժամերով կանգնեն: Դա արդեն կարևոր չէ: Ամենագլխավորը՝ պատերազմը շահված է և մենք հաղթել ենք: Նու, ի՞նչ կասեք, մարչալ:

— Սատանան ձեզ հետ: Յես գնում եմ Սպա:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

1. ԱՊՈՒՆՏ

Դա իսկապես հեքիաթային պատուհան էր: Պանի-
րի ձվաձև շրջանները քնքուշ, թափանցիկ արցունք
էյին ցողում: Կալքասները կանաչով դարդարված՝
պառկել էյին արծաթե կեղեվում, գրավչորեն ծալելով
յուզոտ իրանները: Բարակ յերչիկները կախված էյին
ծաղկե-չղթայի նման: Խավյարը՝ սև ու կարմիր՝ չող-
չողում էր սառույցով պատած տակառիկների մեջ. սա-
ռույցի վրա ընկած էյին աչուներ պատկերացնող դեղին
և կարմիր տերևներ: Յուզի սյուները կամար էյին
կազմել, վորի միջով սողում էյին հսկայական ծովա-
յին խեցեգետինները՝ փափուկ, վարդակարմիր մսով լի
խորդուրորդ մկրատներով: Բազեր, սագեր, հավեր,
պաշտետներ, ստրասբուրգյան կարկանդակներ, պիկու-
լի, սունկեր, կիտրոններ խռնված էյին չորս դին, բայց
այդ գաստրոնոմիական հանրապետության նախագահը
իհարկե հանդիսանում էր ապուխտը: Ապուխտը գերա-
զանցում էր ամենայերազող տանտիկնոջ յերեակայու-
թյունը: Ապուխտը հաղթել էր գաստրոնոմին: Հենց
ապուխտն էր, վոր կանգնեցնում էր անցորդներին: Նա
գրավում էր կենտրոնական տեղը, վորն իրավամբ նրան
էր պատկանում:

Երջապատված բարակ՝ յուզի կաթիլներով ծած-
կրված՝ չազանակագույն, փափուկ, հիանալի կաշվով,
փաթաթված ճարպի ճյունափայլ, թավշյա ողակով՝
դրված էր թաց, կարծես բերանն ընկնելու պատրաստ,

վարդագույն, ինչպես Ֆլամինգոն, աշխարհում յեղա-
կի ապուխտը:

Սպիտակ ջղերը, վոր կարծես նկարված լինէյին
լավագույն վարպետի ձեռքով, անզուգականորեն շեշ-
տում էյին վարդագույն մսի թարմությունն ու հմայ-
քը: Թվում էր, թե նրանից յերևում էր հրապուրիչ
ջերմությունն ու բուրմունք և անցնում էր հայելու
հաստ ապակու միջով և անցորդների քիթը մտնելով՝
անմիջապես նրանց յերեսը դարձնում էր դեպի պա-
տուհանը: Յեվ իրոք, միայն հազվագյուտ անցորդը
կանգ չէր առնի՝ աղամայից հիանալով դաշթակղեցու-
ցիչ տեսարանով: Յեվ արդեն իրոք հազվագյուտ ան-
ցորդը կրացեր դուռը և խանութ կմտներ, վորովհետե
այդ մսի դինը հավասար էր նրա փառահեղությանը:

Արդեն բավական ժամանակ էր, ինչ աչքն ապուխ-
տից չհեռացնելով՝ կանգնած էր նեղ վերարկույով և
մինչև աչքերը քաշած ծղնոտե գլխարկով: Նա միայն
ապուխտին էր նայում: Հանդիսատեսները փոփոխվում
էյին պատուհանների մոտ և անցնում էյին առաջ, իսկ
նա կանգնել ու դիտում էր: Ժամանակ առ ժամանակ նա
նույնիսկ դուրս էր գցում լեզվի ծայրը, քսում չորս-
ցած շրթուներին, անգամ ինչ վոր շարժումներ ա-
նում ձեռքով և փոխընդփոխ բարձրացնում վոտքերը,
կարծես սկսում էր չարլստոն պարել ի պատիվ այդ
զարմանալի ապուխտի, սակայն լեզուն թաղնվում էր,
ձեռքերը գրպաններն էյին ընկնում, վոտքերը հանգըս-
տանում, նոր մարդիկ էյին մոտենում նայելու, իսկ նա
չարունակ նայում էր առանց պոկ գալու:

Յերբեմն նա վորձ էր անում հեռանալու, բայց ան-
նկատելի ուժը նրան վերադարձնում էր իր նախկին
տեղը: Այն ժամանակ նա հանում էր պապիրոսը: Յեր-
կար ծխում էր այն, կարծես մտքով յելք փնտրելով
դրությունից, սակայն պապիրոսը մոտենում էր վախ-
ճանին, ծուխը հալվում էր, իսկ ապուխտը մնում: Այն
ժամանակ, նա աննկատելիորեն սկսում էր լիզել չըր-
թուները և փայլատակել աչքերը: Բոպեններով նա

անկասկած մոռանում եր, վոր ինքը բաց է կողմնակի գիտող աչքին:

Նա բռնեց իրեն վրա սեւեռած մի չար հայացք և նայեց հերթական անծանոթին չթաքցվող թշնամությամբ: Սալտարդեա շարժով վիզը փաթաթած այդ անծանոթի դեմքից, նրա գրգռիչ աչքերից և բանվորի կոստյումից նա հասկացավ, վոր այդ մարդը նկատել է նրա հիվանդագին հետաքրքրությունը ապուխտի հանդեպ և պատրաստ է ծաղրելու:

Վիզն այդպիսի խելահեղ գույնի շարժով փաթաթած մարդու հետ նա չէր ուզում վռչինչ ընդհանուր ունենալ: Նա շուռ յեկավ և հանեց ծխախոտը: Մարդը մոտեցավ և կանգնեց ընդհուպ: Յեւ յերբ նա, պապիրոսը ծխելով, աչքերը կրկին սեւեռեց ապուխտին, շարժով մարդն ասաց.

— Նայես, չնայես, աչքերով չես կշտանա:

Ծղնոտե գլխարկով մարդը յետ դարձավ և, վորքան ել ցավալի լիներ, թուեց պատուհանը և դանդաղ հեռացավ՝ ձեռքերը գրպանը կոխելով:

— Ձեռքերը գրպանում կարելի չէ պահել ինչքան կամենաք, — ասաց բանվորը նրա յետևից:

Ծղնոտե գլխարկով մարդը վերադարձավ: Մի՞թե նա ազատ չէ կանգնելու և նայելու: Դրա համար բանտը չեն դնում և փող չեն վերցնում: Յեւ նա կանգնեց բանվորի կողքին, և նրա աչքերը դարձյալ կայծկլտացին: Բանվորը նայում եր ապուխտին, և վարդագույն միսը դրված եր նրա առջև իր ամեն մի սպիտակ ջիլով, յուզի ամեն մի կաթիլով: Նա թքեց:

— Այ հենց սա յե կրիզիսը: Դա քեզ համար չի և վոչ ել ինձ համար, ընկեր: Բա ո՞ւմ համար է դա:

Ծղնոտե գլխարկով մարդը վճռեց, վոր այդ արդեն չափից անց է: Նա վերջնականապես թողեց պատուհանը և արագ հեռացավ, վորպեսզի այլևս չվերադառնա: Շարժով մարդը գնաց յերեք քայլ և սկսեց գրպանները քրքրել: Նրա ստամոքսը դատարկ եր, ինչպես չիշը, վորի մեջ խաղում է քամին: Վերջապես նա գտավ այն,

ինչ վորոնում եր: Դա մի պնդողակ եր՝ աշխատանքից վաղուց դուրս յեկած, մաշված յեղրերով, բայց ծանր քաշով: Նա ստուգելու համար ձեռքի մեջ փորձեց պընդողակի քաշը, անցավ դեպի սալահատակը և յետ նայեց: Ավտոմոբիլների հեղեղը հենց նոր բաց եր թողել անցորդներին և շարունակում եր խշշալ ասֆալտի վորքայով: Պնդողակը սուր, կարճ ձիչով դիպավ հայելանման ապակու մեջտեղը: Այդ մարդը, կարող է պատահել, ռազմաճակատում մի ժամանակ նռնակավոր եր յեղել: Վստահությունը, վորով նա նետեց պնդողակը, հայտնաբերում եր պնդողակից ավելի ծանր իրերի ծանոթ փորձված մի ձեռք: Ապակին ցաքուցրիվ չեղավ: Նա ծածկվեց ճեղքվածքների ահադին ճաճանչով, վորոնց ամեն կտրվածքը բազմագույն լամպերի լույսի տակ փայլելում եր շատ ինքնուրույն կերպով: Ապուխտի վերևը բռնել եր բազմաթիվ ճեղքվածքների փայլը:

Գործակատարները կանգնել էյին փողոցում պատուհանի առաջ և թափահարում էյին պսպղուն թևոցներով ձեռքերը: Ջյունի պես սպիտակ խալաթներում նրանք հիշեցնում էյին թովիչներին, վորոնցից փախել եր վողին: Վոչ վոք չգիտեր, թե այդ ինչպես եր պատահել:

— Անցյալ շաբաթ ել նույնը կատարվեց:

— Հյուսիսային ռայոնում նրանք յերեք որ առաջ մի խանութ էյին ջարդուփշուր արել:

— Պետք է ձեռք առնել միջոցներ:

Ամբոխի միջից լողաց վոստիկանի լաքած կեպի գլխարկը:

Շարժով մարդն արդեն հեռու յեր: Նա գնում եր արագ և յետ չէր նայում: Նրա հանդեպ ավելի հաճախ ու հաճախ սկսեցին յերևալ լաքած կեպիները: Յերբե ու հաճախ սկսեցին յերևալ լաքած կեպիները: Յերբեմըն նրանք կանգնած էյին լինում խմբերով և խորհրդակցում էյին: Առջևում հավանորեն տեղի յեր ունենում վոչ այնքան սովորական մի բան: Փոքրիկ հրապարակի անկյունում շարժով մարդը կանգ առավ: Հրապարակը գրավված եր ցույցով: Մարդը դիտեց շար-

քերը: Դրանք թռչուններ եյին նրա թռիչքի: Դրանք՝
գործադուրկները գնում եյին բարձրացրած պլակատնե-
րով, վորոնց նա թողեց անուշադիր: Նա առաջին ան-
գամ չէր տեսնում դրանք և գիտեր, թե այնտեղ ինչ է
գրված: Նա գիտեր նաև, թե ինչպես են ճոճուում պլա-
կատի ձողերը, յերբ վոստիկանները կոտորում են դը-
րանք, նա գիտեր նույնիսկ, թե ինչպիսի հետք է թող-
նում ռետինի մահակն ուսերին և մեջքին: Վոստիկան-
ները սեղմում եյին ցուցարարներին կողքերից: Յուցա-
րարները շարժվում եյին հանդարտ ու մուսյլ, կարծես
թե ուժ եյին հավաքում: Բոլոր դեմքերի վրա թերա-
սնումն էր դրոշմն եր դրել: Յեվ ելեքարահան լույսի
սպիտակության մեջ վոմանք թուլությունից փակում
եյին աչքերը: Վոստիկանները գնում եյին բոլոր կող-
մերից, վորպես ուղեկցորդներ, ասես նրանք գերել ե-
յին այդ թշնամի բանակը և տանում եյին յերկաթալա-
րի յետևը, դեպի խոր թիկունքը: Անցորդներից քչերն
եյին կանգնում: Նրանք արդեն ընտելացել եյին: Շար-
քերում կանանցից վոմանք տանում եյին յերեսաներին՝
ձեռքից բռնած: Թափորի մեջտեղում ինչ վոր մեկը
գոռաց, չէր կարելի վորոչել, թե ինչ գոռացին: Հետո
վորոչ շարժում առաջացավ, կարծես քար ընկավ ամ-
բոխի մեջ, և բոլորն իրարից հարցնում եյին, թե ուր
ընկավ: Այնուհետև լավեցին մի քանի ձայներ, մար-
դիկ սկսեցին յերգել խուլոտ, բայց վստահ ձայներով:
Շարժով մարդը լսում եր ժպտալով: Ասես նրան ուրա-
խացնում եյին:

In der Welt muss das Proletärheer
dienen nur dem Profit...

— Կարծես թե հենց այդպես է, — ասաց մարդը:
Վոստիկանները բարձրացրին ու իջեցրին մահակ-
ները: Յերգին ձայնակցեցին կողքից: Այդ յերգը հո-
սում եր ամբոխի վրայից՝ պլակատները մի ինչ վոր
դողի մասնելով: Պլակատները գունատվում եյին յերգի
խոսքերի առաջ, վորոնք զարկվում եյին նրանց վերևից:

Doch in unserer UdSSR
klingt uns ein neues Lied,
klingt von unserer gewaltigen Kraft,
der sozialistischen Planwirtschaft.

Առջևի շարքերն անակնկալ կերպով ձեղքեցին վոս-
տիկանական շղթան: Աղաղակ բարձրացավ: Ամբոխն
հիշեցնում եր մի թանձր շիլա, վորի մեջ գդալով խառ-
նում են վոչ այնքան քաշվելով: Աղաղակի և անկարգ
աղմուկի մեջ մի քանի առողջ կոկորդներ շարունակե-
ցին տանել յերգի հրե գիծը:

Won unserem Willen zum Sieg!
zum Sieg!..

Առջևի շարքերը խուժեցին այն փողոցը, ուր ու-
զում եյին: Լաքած կեպիները վերախմբավորվում ե-
յին: Պլակատները ծածանվում եյին արդեն վորպես
դրոշակներ: Կարելի յեր արդեն կռվել այդ ձողերի և
այդ կտորի համար՝ պաշտպանելով նրանց անձեռնմխե-
լիությունը:

— Նրանք կ'կրակեն, — բացականչեց մի կին:

— Նու, նու, — ասաց շարժով մարդը, — նրանք
այդ կարող են:

Mögen die Kapitalisten auch schreien,
das soll unsre Parole seien
in der Sowjetrepublik...

Յերգում եր արդեն մի ձայն, և հազիվ նա լիերջա-
ցրեց, յերբ տասնյակ ձայներ յերգակցեցին և տարուն
հանգեցրը:

Ran! ran alte Mann ran!
mit dem traktor, ran mit Bahn und Krahn!
ran! ran alle Mann ran!
an dem Fünfjahresplan! *)

*) Ամբողջ աշխարհում պրոլետարական բանակը պետք է
ծառայի միայն շահի համար, իսկ մեր ԽՍՀՄ մի նոր յերգ է
հնչում մեզ, հնչում է մեր սոցիալիստական պլանային տըն-

Սուլիշները սուլացին փողոցով գնդակի արագությամբ: Պլակատները տատանվեցին և դեպի ցած իջան: Վաստիկանները նետվեցին ամբոխի մեջ:

Շարֆով մարդը ran! ran! alle Mann ran - կանչով վայր գլորեց լաքած փայլը, և տուրուլմրոցը բռնեց վողջ հրապարակը:

Պատուհաններից նայում եյին մարդիկ: Խանութները փակվում եյին չլաված արագությամբ:

Ռետինե մահակները աշխատում եյին մեջքերի վերա: Չոր ճոճոռում եյին պլակատների ջարդվող փայտածոցերը: Անկյունում սեղմված անցորդները թաղնրվում եյին նրբանցքներում: Կարմրակապույտ ալտերով լայնաթիկունք մի ծերուկ արհամարհական կերպով ձեռնափայտը թխթխկացնում եր մայթին:

— Դու լսեցի՞ր այդ յերգը, — ասաց նա: — Այո, մեր ժամանակ Գերմանիան այլ եր:

— Մեզանում, Ոտտո, — պատասխանեց բարձրահասակ, բակենբարդներով մի ծերունի, — դու մոռացել ես, կար կարգապահության Գերմանիա: Յեկ, սակայն, փորձենք անցնել: Մենք ուշանում ենք մեր ժողովին: Հո չենք սպասելու, թե սա յերբ ե վերջանալու:

— Սա կվերջանա ավելի շուտ, քան դու կարծում ես: Միայն թե վերևում մեր ծերուկը թող վորևե բան հասկանա:

2. ԻՈՂԱՆ ԿՈՒՔԻՇ

Ոտտո Ֆոն-Շտարկեն հենվելով իր սև ձեռնափայտի վրա՝ ուշ վերադառնում եր տուն: Այդ բանը նրա հետ պատահում եր վոչ այնքան հաճախ, սակայն այ-

տեսության կարող ուժի, դեպի հաղթանակն ունեցած մեր կամքի մասին: Թող դոռան կապիտալիստները, Խորհրդային Միությունում մեր նշանաբանը պետք է լինի. առաջ, առաջ, շարունակ առաջ տրակտորներով, ճանապարհներով, ամբարձիչ կոունկներով առաջ, առաջ, շարունակ առաջ, դեպի հրեզամյա պլանը:

սոր հրաշալի յերեկո յեր, հուշերի յերեկո, նրա մերձավոր ընկերներին՝ պատերազմի վետերանների նիստը:

Տասնվեց տարի առաջ նրանք իրենց ուժերի ծաղկման շրջանում մտան հրե ծովը, և նա նրանց չալտեց ամայի ամիր, վորպես վառված, այլանդակված, վիրավորված, զայրացած հաշմանդամների: Իհարկե, կարելի չե թագցնել մեռելներին, վոմանց ուղղակի հողի մեջ, մյուսներին փառահեղ մավզոլետներում, իհարկե, կարելի չե փողոցից հավաքել հաշմանդամներին, խցկել նրանց արհեստանոցները, անկյունները, ուր վոչ մի ուժ նրանց գտնել չի կարող. իհարկե, կարելի չե գրել հիշատակարաններ՝ ապացուցելով, թե դու պարտաված չես, թե դա սխալմունք է, վոր յեթե նավատորմիդը չապստամբվեր, չքայքայվեր թիկունքը, ուր ապականում եյին մորթեպաշտ քաղաքացիականներն ու սոցիալիստները, անտեղի կերպով չմիջամտեր Ամերիկան, — ամեն ինչ այլ կերպ կլիներ: Բայց ո՞ւր թագցնեն վողոցների այդ մասսաներին, այդ սոված բանվորներին, վորոնք դուրս են յեկել հորերից, շախտերից, նկուղներից, գործարաններից, վորոնք որ ու գիշեր ադաղակում են իրենց կարիքի մասին, ո՞ւր թագցնել աղքատությունը, վոր ամեն մի անկյունից չոռւմ է ահագին աչքերը և ձգում է մտրակի նման նիհար ձեռքը: Յերեկոն, ճշմարիտ է, լի չե փառավոր հիշողություններով: Մեծ բանակների ղեկավարների նկարները լսում եյին արժանավայել ճառեր, անգամ կենացները հիշեցնում եյին կայսրության լավագույն ժամանակները, սակայն մայր Շտրեֆկուսի դադաղի պես նեղ սենյակները տեղավորում եյին միմիայն յերեկվա Գերմանիան, Գերմանիան, վորի մասին լսել չեյին ուզում այդ ամբոխները, վորոնք վայրենի յերգեր եյին յերգում ուր վոր աշխարհի ծայրին կախված բարբարոս յերկրի մասին:

Այդ անհասկանալի չե նրան ամենից ավելի: Ի՞նչ պես կարելի չե չզգալ իրեն գերմանացի, ամենից առաջ գերմանացի, իսկ նրանք ամենից առաջ գոռոգոռում են

յեղբայրութեան մասին, ինչպէս իրենք են ասում, բո-
լոր յերկրներին աշխատավորներին հետ:

Այդպէս դատելով ու ձեռնափայտը թրխկացնելով
Շտարկեն բուլվարով գնում եր դեպի հեռավոր փողոցի
իր խաղաղ բնակարանը: Պատերազմի թոշակավորին
այնքան ել հեշտ չէ ապրելը այս խառնաշփոթ որերին:
Ճշմարիտ է, վորոշ բան ունի նա բանկում, սակայն
Շտարկեն յերբեք աղքատ չի յեղել:

Զախ կողմում, ծառի տակ նստարանի վրա անկաս-
կած մի մարդ եր քնած: Շտարկեն կանգ առավ նստա-
րանի առջև: Նա կանգնել եր քնածի գլխավերևը և նա-
յում եր: Ի՞նչ եր ուզում նա կարդալ հոգնած ու վայ-
րենի դեմքի վրա: Փակված աչքերը նմանում էին փը-
լատակ փոսերի, վորոնց մեջ կարելի չէ տեղավորել մի
մի թանգարանային թալեր և թալերները կխեղդվէին
այդ փոսերի խավարում: Ի՞նչ եր ասում նրան այդ
չարօր, վոր փաթաթած եր նիհար վզին և ներս եր ծալ
ված՝ հնամաշ, մի ահագին կոճակով կոճկված բաճկո-
նի տակ ի՞նչ կարող էին նրան պատմել տրորված կո-
չիկներն այդ մարդու. գուցե նա գտել է դրանք աղքա-
նոցում: Պակասում եր միայն, վորպեսզի նա իր կոչիկ-
ները կապկպեր թոկով, սակայն թվում է, թե նա մոտ
որերն ստիպված կլինի այդ անելու:

Քնածը նույնիսկ չէր ել տեսնում, վոր լապտերի
լույսն ընկնում եր ուղիղ նրա դեմքին: Բայց քնել նա
կարող եր՝ առանց վախենալու գրպանների համար,
քանի վոր դրանք ազատ էին կյանքի այնպիսի ման-
րութից, վորպիսին փողերն են:

Շտարկեն հոգոց հանեց և իր ձեռնափայտի գլուխը
սեղմեց ճակատին: Այդպէս նա կանգնած եր՝ ուսում-
նասիրելով քնածին և չգիտես թե ինչ խորհելով: Պառ-
կած մարդու մի ձեռքը գրպանն եր կոխած, մյուսը
կախ եր ընկել նստարանից, և թեքը պատուված եր ար-
մուռնից վերև: Շտարկեն նայեց շուրջը: Ամեն ինչ խա-
ղաղ եր: Նա կռացավ դեպի ձեռքը: Արմուռնի մոտ կար
մի սպի, կարծես յերկու կեռիկներ խրվել էին մոխ

մեջ և ուժով ցած ձգվել՝ ձեռքի վրա առաջացնելով գո-
մեշի պողերին նմանող մի նկար: Սպին բաց մանիշա-
կադույն եր, հնացած, կաշին նրա մոտ թառամած և
մոխրագույն: Լապտերը լուսավորում եր քնածի գլխա-
վերևը, ինչպէս բեմի վրա:

Շտարկեն ձեռնափայտով դիպավ քնածին: Սա չէր
զարթնում: Շտարկեն ձեռնափայտով թթեակի խփեց
նրա ուսին: Քնածը մեկեն նստեց և բաց արավ աչքե-
րը. աչքերը վոչինչ չէին տեսնում: Նա ամբողջ մի րո-
պե տրորեց նրանց, հետո վտտեքերը բոլորովին վայր
թողեց նստարանից, ուղղեց գլխարկը և թքեց:

— Իսկ յես կարծեցի, թե այդ չուպոնն*) և, — ա-
սաց նա:

Շտարկեն մի քայլ յետ գնաց:

— Ի՞նչ սատանայութեամբ դուք առանց թխկոցի
մտաք իմ ննջարանը, հորեղբայր:

— Յես արթնացրի ձեզ, — ուշադրություն չդարձ-
նելով նրա խոսքերին՝ ասաց Շտարկեն, — վորպեսզի
հարցնեմ — թե ի՞նչպէս կլերարեմք դուք այն բանին,
վոր գիշերեք տանիքի տակ:

— Այդ պիտի մտածել, — հոգոց հանելուց հետո
ասաց մարդը՝ չարօր փաթաթելով, — յես ծննդյան
տղա չեմ, վորպեսզի դուք ինձ տոնածառի տակը տա-
նեք:

— Յես ձեզ ամենալուրջ կերպով առաջարկում եմ
գիշերելու տեղ և ընթրիք:

Մարդը վեր կացավ և սարսափելի խոխոցով տա-
րածեց ձեռքերը: Նա հազաց, նորից նստեց և նայեց
Շտարկեյին, կարծես կասկածելով նրա գոյութեան
մեջ:

— Դու ո՞ւմ ես ուզում կարկատել, ծերուկ, — հարց-
րեց նա: — Դուցե քեզ փոքրիկ տղաներ են պե՞տք. ապա
յես ծեր եմ և իմ բոռնիքները դեռ գործում են:

— Յես ձեր կոպիտ լեզուն չեմ հասկանում: Յես

*) Շուպոն — Գերմանական վոստիկանների արհամարհական
անունը:

վերջին անգամ առաջարկում եմ ձեզ ընթրիք և գիշերելու տեղ: Ընթրիքի ժամանակ մենք կխոսենք:

— Դու ուզում ես խոսելու բան տալ ինձ, — ասաց մարդը, — յեթե հեռու չե, հասկա գնանք: Իսկ դու չե՞ս վախենում ինձ հետ գնալ:

— Յես հին գինվոր եմ, — ասաց Շտարկեն:

— Լավ ցուրտ ե, — մոմուց շարֆով մարդը, — հուսով եմ, վոր քեզ վորեւե բան կլինի՞ տաքանալու:

Շտարկեն չպատասխանեց: Նա գնում եր, ձեռնափայտը թրխկացնելով, և նրա կողքից քայլում եր բարձրահասակ մարդը՝ ձեռքերը գրպանները դրած:

Նրանք մտան Շտարկեյի բնակարանը: Շտարկեն բերեց սառը միս, կարտոֆիլի սալատ և թեյ: Կարմիր գինու վոչ լիքը շիշն յերեաց սեղանի վրա: Շարֆով մարդը հրավերի չեւ սպասում: Յեփած միսը սուղվում եր նրա կողորդում, կարծես թե ընկնում եր տակառի մեջ: Ուտելով ամբողջ սալատը, նա հացով սրբեց ափսեն և այդ բոլորի վրայից խմեց գինին: Թեյից նա հրաժարվեց: Նա նստել եր նայելով Շտարկեյին՝ ամենեւին չգննելով սենյակները: Նա նայում եր Շտարկեյին, ասես սպասում եր, վոր նա իսկույն աչքակապույթյուններ ցույց կտա:

Շտարկեն սպասում եր, վոր իր հյուրը չնորհակալություն հՀայտնի ընթրիքի համար: Հյուրը վոչինչ չասաց: Նա մատները ք. եց շարվարին և հորանջեց: Այնուհետև սկսեց ատամները մաքրել լուցկու ծայրով: Մարդը հանեց շարֆը, դրեց իր ծնկին, այնպես վոր շարֆի ծայրերը կախվեցին հատակին: Նա սիգար ծրխեց, և նրա աչքերը կորավեցին կապույտ ծխի մեջ: Նա վողողեց բերանը սիգարի ծխով: Այն ժամանակ Շտարկեն ասաց հանգիստ, դու—յի անցնելով:

— Իսկ այժմ Իոհանն Կուբիչ, դու կպատմես ինձ, թե ինչպես մինչ այն նստարանը, վորտեղից յես քեզ բարձրացրի այստեղ...

Մարդը սիգարը դրեց պնակի վրա և ծիծաղեց վոչ լավ:

— Այ յես չեյի կարծում, թե կճաչեմ վոստիկանապան բյուրոյում:

— Այտեղ վոստիկանական բյուրո չե, — պատասխանեց նրա ծիծաղից գրգռված Շտարկեն— բայց յեթե ավելի ուշադիր նայես ինձ, ապա կհիշես ավելի հաճելի մի բան, քան այստեղ գիշերը: Յես Շտարկեն եմ, յերբեմնի հրչեջավազը, իսկ դու վորդին ես իմ շտեյգեր Լյուդվիգ Կուբիչի, վոր կործանվեց հրում: Յես քեզ ձեռքերի վրա յեմ կրել, յերբ դու տակավին սողալ չեյիր իմանում: Յերբ դու մեծացար, վայր դուրվեցիր բացվող մեծ սանդուղքից, վորի վրա սիրում եյիր բարձրանալ: Քո ամբողջ կյանքում մնացել ե այն պահին, վոր գտնվում ե ձախ թևի արմունկից ցած: Այդպե՞ս ե արդյոք:

— Յեթե դու հիմա միանգամից չասեյիր ամեն ինչ, ապա յես քեզ կընդունեյի վորպես մի վորովայնախոսի, կամ, ինչպես են կոչում նրանց, ովքեր դուշակում են հեռավորության վրա: Այո, յես հենց Իոհանն Կուբիչն եմ— այդ այդպես ե: Վորոչ տեղեր կան նաև փաստաթղթեր:

— Դու կարծեմ յեղել ես պատերազմում:

— Անշուշտ, և ո՞վ չի յեղել պատերազմում: Ամբողջ բանակը կազմված եր մեզանից, միայն թե սկրդբում, յերբ հաղթանակներ եյին լինում, սկետերը մեզ մարդ չեյին հաշվում, այլ ինչ վոր մեխանիզմներ հրանոթի նման: Վեր կաց, փորիր, կրակիր, պառկիր: Չհամարձակվես մտածել: Վեր կաց, փորիր, պառկիր: Մարդիկ հայտնվեցին հետո, տառնութին: Դու յերեվի իսկի չեյիր մտածել, թե քո զինվորների գլխում կա մի արկղ, վորում կա ինչ վոր մարդկային բան: Առհասարակ մեր բախտը չեւ բերում: Իմ հասակակից սերնդին առանձնապես: Իմ բանը մանկությունից արդեն վատ եր: Սկզբում սանդուղքը, սալարդը գլխից և այլն: Հետո վորովայնի տիֆ. բժիշկներն ասում եյին՝ մի՛ ծանրա-

բեռնեք նրա վերեւի հարկը, գիտություններով մի՛ բարձեք, նա չի դիմանա, և ինձ տվին փականագործի արհեստանոցը: Նու, ուղղաճակատում յետ հոտ քաշեցի զանազան զագեր— իմ կարծիքով, մարդիկ, ինչպես համարներ ցիրկում, շաբաթը մի նոր զագ եյին հնարում— ինձ վրա թափում եյին ամեն տեսակի կեղտոտություններ, մի անգամ նույնիսկ յետ մեջքիս վրա ափանհետից ստացա ավտորալիական կապիկով մի բանկա...

Նա ներս քաշեց սիգարի ծուխը, նայեց Շտարկեյին և գլուխը շարժեց.

— Յերբեք չեյի ճանաչի: Դու այնպես ես փոխվել, հորեղբայր, վոր կյանքումս քեզ չեյի ճանաչի: Ծերացել ես դու: Յերևում ե, վոր պատերազմն ամենքին գեղեցիկ չի յերևում:

— Խոսիր միայն քո մասին և ինձ հորեղբայր մի՛ կանչիր:

— Կարելի չե և իմ մասին: Բայց պատերազմում յես իմացա, թե ինչը՝ ինչի՞ց ե: Ինձ ծեծով կրթեցին: Յեզ հետո հեղափոխությունը, վոմանք ինձ բան սովորեցրին:

— Լավ եյին քո ուսուցիչները: Իսկ այդ ո՞վ եր քեզ լուսավորել:

— Իմ առաջին ուսուցիչը դարբին եր— Պետեր Բրայերը — լավ դարբին եր, հիանալի դարբին, աստված տա՝ ամենքն ել այդպիսին լինեն, նա ինձ բացատրեց տիրոջ և բանվորի, պետության և հեղափոխության, աշխատանքի և շահագործման տարբերությունը: Գիտական խոսքեր են բոլորը:

— Հույս ունեմ, վոր նրա համար ճարվեց մի լավ թոկ, այդ քո դարբնի համար:

Կուրիչը յերկար հազում եր: Նա միանգամից չափազանց շատ սիգարի ծուխ եր ներս առել: Նա նստել եր համարյա տարածված, և շարժը քարշ եր դալիս նրա ծնկներից:

— Բրայերն հիմա կոմունիստ ե: Իմ յերկրորդ ու-

սուցիչն եր փականագործ Տոմբեն, սպանված պատերազմի վերջին սրը, ինչպես ցավալի յե, իսկ նա մի հերոս եր, նա նռնակի պատրույգից վառում եր ծխախոտը, նախ քան կնետեր նռնակը: Նա կարող եր յերկուսին ճակատներով իրար դարկել, ինչպես բնկույզներ: Յերրորդը մի սքանչելի տղա յեր: Մեռավ հեղափոխության ժամանակ Բավարիայում — Պաուլ Զելտ: Ինձ պատմեցին, թե ինչպես ե նա մեռել: Նա դուրս ե յեկել Ժողովրդական Կոմիտեների Խորհրդից ամբողջովին ուժերերով պատած, սայթաքել և սանդուղքի վրա, ընկել, և բոլոր ուժերը պայթել են: Վորոտն այնպիսին ե յեղել, վոր թաղում բոլոր խանութները փակվել են: Այ նրանք են ինձ խելք սովորեցրել: Կար դարձյալ մեկը: Երեստ Աստենը, պատժական վաշտից, ուսանող, ապստամբեցնում եր վաշտը, նրա հետ յես ամենից շատ մնացի: Մենք յեկանք Բերլին և գրավեցինք ռայխստագը: Կեղտոտ, ինքդ գիտես, ուղղաճակատից: Մեզ այդպես ել կոչում եյին՝ «վոջլոտ ջոկատ»: Նո՛ւ, վոջլիներ մեզ մոտ բավական շատ եյին:

Շտարկեն կանգնեցրեց նրան: Նրա բաց մանիշակադույն ալտերն ուռել եյին, աչքերը վազում եյին առաստաղի վրայով: Շտարկեն մտաբերում եր:

— Աստեն, Աստեն, Երեստ Աստեն — յես հիշում եմ, թե այդ ինչպես եր: Այո, դա իմ յեղբորաղջկա սիրականն եր: Մենք նրան ընդունում եյինք անդլիական լրտեսի տեղ, վորը Ալիդայի միջոցով ուզում եր հասնել մինչև իմ հրանետը: Նրան մի անգամ փողոցում տեսել եյին մի անդլիացու հետ, վոր հաղորդակից եր հետախուզությանը, մենք ել նրան պահեցինք պատժական վաշտում: Յես այդ լավ եմ հիշում, այո՛, այո՛: Վերսե՞ղ ե նա այժմ:

— Մենք նրա հետ սպարտակյաններ եյինք, կովում եյինք բարիկադների վրա, իսկ այժմ նա բանտումն ե, ծեծել ե ինչ վոր մի մայրի, — սատանան գիտե, մի ինչ վոր հիմար աղզանունով, Շրանկ, Շրունկ... Շրեկ-

Ֆուռ, — կարծեմ, — իր պարտականութիւնները կատարման ժամանակ: Նու, նրան եւ պատժեցին:

— Ի՞նչ ես դու մտածում անել, դժբախտ մարդ:

— Հայտնի չի, թե ով ե ավելի — դժբախտ: Յես անտարբեր եմ դեպի հարստութիւնը, իսկ նրանք, ովքեր անտարբեր չեն, շուտով կզղջան: Ինչպէս վոր մի անգամ մեկն անաց կիրակնորյա դպրոցում. հարստութիւնը ծովային ջրի պէս մի բան ե — քանի շատ ես խմում, այնքան ավելի յես ուզում: Իսկ ինձ քչում են ամեն տեղից, ինձ գործ չեն տալիս քաղաքականութեան համար, թեպետ, ասում են, հիմա նույնիսկ ինժեներներն անգործ են: Իմ մեկ բարեկամը մտածեց, մտածեց և թռավ գնաց Խորհրդային Միութիւն բայլչեիկների մոտ: Վոչինչ, գրում ե, լավ աղերք են:

Շտարկեն յեւրով և անցկացավ սենյակով: Կուրիշը միայն այժմ սկսեց իր շուրջը նայել, բայց բավական անտարբեր:

— Կուրիշ, — ասաց Շտարկեն, — բանվորները պետք ե աշխատեն, կառավարողները պետք ե կառավարեն: Պետական առևտրական ուղմական խելքը և արհեստավորի խելքը — տարբեր բաներ են: Նայի՛ր ինձ, Կուրիշ, յես անց եմ կացրել ազնիւ կյանք ու ապրում եմ լիութեան մեջ, և կարող եմ նայել մարդկանց աչքերին և չքնել շան պէս, ուր վոր պատահի: Յեմ ինձ վոչ վոք բանտով չի սպառնում: Մի՞թե իմ խաղաղ և համեստ բնակարանը տեսնելիս քեզանում չի զարթնում վոչ մի ցանկութիւն, թեկուզ ծածուկ միտք՝ ունենալ այսպիսի հանգիստ անկիւն: Մի՞թե քեզ վոչ մի նախանձ չի բռնում, վոր յես քնում եմ մաքուր, տաք անկողնում, լավ տան մեջ, ուր տաք ե և հարմար:

Կուրիշը չվացրեց:

— Հորեղբայր, ինձ վոչ մի նախանձ չի բռնում: Մենք բոլորս շուտով կքնենք տաք անկողնում և տաք տան մեջ:

— Այդ ովքե՞ր են — մենք:

— Դե մենք բոլորս, ով քնում ե նստարանների

վրա, գիշերվա ապաստարաններում, հին խողովակների մեջ, նկուղներում, ամեն տեսակի զջլովածներ, նրանք, ովքեր յերեք որով չեն խոռում:

— Այդ ի՞նչ հրաշք ես յերազում դու, Իոհանն Կուրիշ:

— Դե ի՞նչ յերազ: Դա ուղղակի հեղափոխութիւն կլինի: Վոչ այն, վորն իզուր անցավ, այլ իսկական մերը, կարմիր հեղափոխութիւնը: Ախր հո չի կարող այսպէս անվերջ շարունակվել: Յես եւ գրադետ եմ և բավականաչափ շփվել եմ կոմունիստների հետ, և լրագրներ եւ յերեմն կարդում եմ և գիտեմ, վոր այժմ մենք՝ գործազուրկներս Գերմանիայում վեց միլիոն ենք, իսկ մեր հարստութիւնն ամենանշանակալիցն ե: Ասում են՝ մենք դաշնակիցներին պարտք ենք յուրաքանչյուրը յերկու հազարական դոլլար: Նու, յեթե արդեն ինձ գնահատել են այդպիսի դումարով, կարո՞ղ եմ արդյոք յես կորչել: Պարզ ե — յերբեք: Աշխատանք մեզ չեն տալիս: Նույնիսկ մի դարձվածք կա, թե՛ Գերմանիայում ամեն բոպե մայրական արգանդից դուրս ե գալիս մեկ շուպո և յերկու գործազուրկ: Բայց այնուամենայնիւ յերկու գործազուրկը մի կերպ կհաղթահարեն մի շուպոյի:

Շտարկեն նստեց՝ ձեռքերը կրծքին խաչելով:

— Այդպէս, Իոհանն Կուրիշ, յես ուշադրութեամբ լսում եմ բոլորը, վոր դու ինչ ասում ես: Ուրեմն հին Գերմանիան, հին հայրենիքը — վոչինչ ե քեզ համար:

— Փոքրիկ պատկերի յե նման, — ասաց Կուրիշը՝ յերկրորդ սիգարը վերցնելով: — Մանկութեան ժամանակ դպրոցում մեզ տալիս եյին այդպիսի գրքեր, բայց մենք չեյինք կարդում, այնտեղ դրված եր լինում միշտ միևնույն բանի մասին — և դրոշակն եւ նույնն եր և արծիւն եւ նույնը: Կարմիր Գերմանիան — այդա ուրիշ բան ե: Իոհանն Կուրիշը կաշխատի մի բան անել նրա համար, իսկ հին Գերմանիան — դա ինչպէս մի ապուխտ լինի: Յես այսօր մի հրաշալի ապուխտ տեսա: Գնել այն չի կարելի, փող չկա, ճգնաժամ ե:

Պետք է ամփոփորելով զնալ այն ապուխտի հետեից:

Շտարկեն մտառանջ կնճռոտում եր ճակատը: Նա իր տաք ափով չիում եր ծունկը և նայում սալտոի դատարկ ափսեյին, կարծես այնտեղ ուզում եր կարգալ Գերմանիայի ապագան:

— Դու մոռացել ես մի բան, Կուբիչ, վոր կառա-
վարության մոտ կա ուժ նրա համար, վորպեսզի ճզմի
այնպիսիներին, ինչպես դու յես:

— Դու գուցե զազերն ես ակնարկում... Յեւ
տանկեր կան այնտեղ: Բայց մենք այդ բոլորը տեսել
ենք ֆրոնտում: Այս փողոցի ծայրում գտնվում է Կուբ-
ցի գործարանը: Այնտեղ կա մի բարձր աշտարակ:
Լուրեր են պտտում, վոր աշտարակում նորագույն թու-
նավոր դադ են արտադրում: Դե ամեն մեկին դադ չի
բավականացնի: Ռազմաճակատում ինձ նույնպես խեղ-
դում էյին, սակայն և այնպես յես կենդանի յեմ: Ի-
հարկե մենք կպակասեցնենք մարդկանց Գերմանիա-
յում, վոմանց կըճատելու կարիք կլինի: Դա անկա-
կած է: Ախր պետք է վորեւե մեկը պատասխանի նրա
համար, վոր Կուբիչը տարիներ շարունակ շան նման
թավալվում եր կեղտի մեջ, վոր ամբողջ կյանքում կո-
չիկներով տալիս էյին նրա հետույքին և դցում մեկ
այս կողմ, մեկ այն կողմ: Մեզ տալիս են աղբաջուրը,
լափելու, խսկ իրենք ապուխտ են ուտում: Յես այդ ա-
պուխտը յերկար եմ հիշելու: Նու, վոչինչ, յես մի
լավ պնդողակով ջարդուխշուր արինրանց լուսամուտը:

Շտարկեն խստաբար վեր կացավ աթոռից, Կուբիչը
նույնպես յելավ և շարֆն սկսեց փաթաթել վզի շուրջը:

— Կնշանակե, դու կարմիր ես, ատող պետական
կարգը, կարգին հասարակությունը, չհավատացող
վոչ մի սուրբ բանի...

— Կարծես այդ այդպես է, — ասաց Կուբիչը՝ շա-
րունակելով փաթաթել շարֆը:

— Ի՞նչպես դու յեկար ինձ մոտ և կերար իմ հացը:

— Հացը քոնը չի, հորեղբայր: Ի՞նչ է նշանակում՝
քո հացը: Հացն ամբողջ աշխարհում միայն այն է,

վոր աշխատավորական է: Դա բանվորն է յեփել: Մի-
թե այդ դու յես յեփել: Դու այստեղ վոչ մի իր ինքդ
չես չիտել, այնպես չէ՞:

— Դու ամենամեծ սրիկան ես, — ասաց Շտար-
կեն, — և ինձնից հերիք ե: Հուսով եմ, վոր այս բոլոր
ստածից հետո դու դիշերելու տեղ գտնելու պահանջ
չես անի այս տանը:

— Յես այդպես ել գիտեյի, — ասաց Կուբիչը, —
վոր դու ինձ դուրս կանես: Ծիծաղելի կլիներ, յեթե
վոր դու ինձ գիջեյի քո անկողինը:

Շտարկեն արդեն կանգնած եր նախասենյակում:

Կուբիչը վերցրեց յերրորդ սիգարը և հեռացավ՝
դուռը չփակելով և յետ չնայելով:

3. ՊՐՈՓԵՍՈՐ ՖԱԲԵՐԸ ՈՒՍԵՐՆ Ե ԹՈԹՎՈՒՄ

Պրոֆեսոր Ֆաբերը նստել եր ճապոնական եկրանի
առջև, և լրագրների չեղջը թափալվում եր նրա վրա-
քերի տակ: Մեծ, կապտա-գորշագույն դամփուր ծուլո-
րեն հորանջում եր անկյունում: Սեղանի վրա կանգնած
եր Իրմայի նկարը զինվորական կոստյումով, ողա-
չուական սաղավարտի նմանող գլխարկով:

Լուսանկարն հանված եր Բոտալիայում, Գարդի լճի
վրա, խաղաղ այգիների ու խաղաղ ջրերի մեջ:

Բարալիկ աղախինը, վոր նմանում է կինեմատոգ-
րաֆիական ստատիստուհու, բռնել է արծաթե մա-
տուցարանը, մատուցարանի վրա տոմս է դրված: Իր-
ման ցրված կարգում է. Ոտտո ֆոն Շտարկե, պաշտո-
նաթող մայոր:

Իրման թոթվում է ուսերը.

— Ո՞վ է այդ Շտարկեն, դու չգիտե՞ս, Կարլ:

— Կյանքումս առաջին անգամ եմ լսում այդ աղ-
գանունը:

— Նա ուզում է տեսնել ձեզ, պարոն պրոֆեսոր, —
ասում է աղախինը:

— Նրան անցկացրեք ասանճասենյակ, յես իս-
կույն դուրս կգամ:

Փարեհն անցնելով լրագրների վրայով՝ շոյում է դամբուռի ականջների մեջտեղը, ակնոցները թաղցնում պատյանի մեջ և գնում դեպի առանձնասենյակը: Նրբանք նստում են, և սենյակում հետզհետե սկսվում է զգացվել ուշադրության լարվածութուն:

Շտարկեն դնում է իր սրողագրայով բռնված բաց մանիշակագույն ձեռքը ծնկի վրա և սկսում է հազալ, հազալուց հետո նա ձեռք է տալիս իր կրծքին, այն տեղը, ուր յերևում է սպիտակ-սև ժապավենիկը: Դա պետք է խիզախություն տա նրան:

— Ինձ կանչում են Ոստո Փոն Շտարկե: Այժմ յես ծեր եմ: Իմ հասուն տարիներում, պատերազմից առաջ յես հնարեցի հրանետը: Յես այն կատարելագործեցի կովի ժամանակ և մեծ աղետներ պատճառեցի: Յես կարծում եյի, թե իմ հրանետը կվճռի պատերազմը, բայց այստեղ հայտնվեցիք դուք: Դուք, մի մարդ եք, վոր բացել եք մարդկությանը, թե ինչ բան է ուղմական դադը: Դուք, համարձակվում եմ ասել, վորպես մի նկարիչ, լցված գիտական ուժով, ինչպես ուզում, այնպես ել ներկում եյիք պատերազմի դեմքը, իսկ յես մնացի յերաշտահավի նման, վոր չկարողացավ վառել ծովը: Սակայն պատերազմի ծովն ունի իր մակընթացություններն ու տեղափոխությունները: Մակընթացությունը կործանեց ինձ և ձեզ: Նա կործանեց Գերմանիային: Յես յեկել եմ ձեզ մոտ վոչ նրա համար, վոր պետքի ասեմ միայն այդ: Դուք մի մարդ եք, վոր գեռ շատ անգամներ ոգնության կգա իր յերկրին:

Փարեհը ընդհատում է նրան.

— Չմոռանաք, իմ բարեկամ, վոր գոյություն ունի վերսալյան դաշնագրի հարյուր յոթանասուն մեկերորդ հոդվածը: Դադերի արտադրությունն այդ հոդվածով ընդմիշտ արգելվում է Գերմանիայում: Մենք դործ ենք ածում քիմիական նոնակներ, և այն ել ամենից անմեղները, բանվորական ցույցերը ցրելու ժամանակ: Յեվ միմիայն: Յեվ միմիայն:

Շտարկեն սղմում է սրողագրայով բռնված բուռնցքները:

— Պարոն պրոֆեսոր, դաշնագրերը գրվում են մարդկանց ձեռքով: Դաշնագրերը վոչնչացվում են մարդկանց ձեռքով: Ի՞նչ ենք տեսնում այժմ Գերմանիայում: Քաոս և հեղափոխության նախորդակ: Յես հին զինվոր եմ, յես գիտեմ պատերազմը և այն, վոր հաջորդեց նրան: Յես շատ բաներ հասկանում եմ կես խոսքից: Յես յեկա, վորպեսզի միայն հարցնեմ ձեզնից: ասացեք, պարոն պրոֆեսոր, չե վոր այդ գեռ բոլորը չե...

Փարեհը ուռցնում է ալյուրը:

— Ի՞նչ եք ուզում ասել, թե՛ «այդ գեռ բոլորը չե»: Դուք ի՞նչ եք յենթադրում ասելով՝ «այդ գեռ բոլորը չե»:

— Յես յենթադրում եմ ձեր պատասխանը: Յես կրկնում եմ՝ յես նախանձում եյի ձեզ, կային բոպեններ, յերբ յես ատում եյի ձեզ, դուք խլեցիք ինձնից իմ փառքը, սակայն ձեր հաղթանակն այնքան մեծ եր, վոր հաղթվողն սկսեց հարգել ձեզ, հպարտանալ ձեզնով, — կասեմ այսպես՝ հին Գերմանիան, վոր բաբախում է ինձանում, հարցնում է ձեզ — հարություն կառնի՞ նա, թե վոչ:

— Պարոն մայոր: Մի անգամ յես դուրս յելա իմ լաբորատորիայից, վորպեսզի մարդկանց ապացուցեմ գիտության իսկական ուժը: Դատելով ձեր խոսքերից՝ յես ապացուցեցի: Կգա՞ արդյոք մի այդպիսի այլ մոմենտ — յես չգիտեմ, յես ինքս ել ջահել չեմ:

— Պարոն պրոֆեսոր, յես չեմ հավատում ձեզ: Կուրցի դործարանի աշտարակը — ախր դա այսօրվա որն է...

Փարեհը հենվում է բազկաթուռի մեջքին: Նա դեմոգոգ է:

— Պարոն պրոֆեսորը կարծում է, թե ինքը քաղաքականությունից դուրս է: Բայց նրա գիտությունն սպասարկում էր գերմանական ծառայությանը, նա նը-

պատում եր գերմանական բանակների հաղթանակին: Դուք ինձ չեք ապացուցի, թե դուք գերմանացի չեք: Յես միմիայն ուզում եմ իմանալ, թե դուք ի՞նչպիսի գերմանացի յեք: գերմանացի յերրորդ կայսրության, թե՞, սարսափելի յե ասել, ծիծաղելի յե ասել — խորհրդային Գերմանիայի: Կամ՝ դուք լվանում եք ձեզ ձեռքերը:

Փարերն ուսերն ե թոթվում:

— Դուք հրաժարվում եք պատասխանել: Այն դեպքում ասացեք այնուամենայնիվ՝ ո՞ւմ ե սպառնում Կուրցի գործարանի աշտարակը:

Փարերը յերկրորդ անգամ թոթվում ե ուսերը:

— Նա սպառնում ե սահմանափակ ուղեղի տեր մարդկանց:

4. ՀԱՐՈՒՍՏ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

— Ինձ ասացին, վոր դուք շատ հիվանդ եք, վոր ձեզ դժվար ե խոսելը: Յես ինձ թույլ չեմ տա հոգնեցնել ձեզ: Բայց յես այնքան յերկար փնտրում եյի ամբողջ յերկրում, վոր այսոր անկարող եմ հեռանալ՝ առանց արտահայտելու այն, ինչի համար վոր յես այստեղ եմ:

Նա խոսում եր բացահայտ ակցենտով: Գորշ կոստյումը, գորշ մազերը, գորշ յերեսը նեղ շրթունքներով ե գորշ աչքերը հիանալի կերպով քողարկում եյին նրան: Չեք կարելի դուշակել վոչ նրա մասնագիտությունը, վոչ նրա մտադրությունները: Չախ ձեռքի ձեռնոցը նա չեք հանել, ձեռքը ձեռնոցի հետ միասին նա գրել եր գրպանը: Շտարկեն ամուր կպել եր բարձր, փափուկ թիկնաթուփին: Նա չասաց վոչ մի խոսք: Նա միայն գլխով արեց, ե անձանոթը նստեց:

— Իմ անունը վոչ մի դեր չի խաղում: Նա վաչինչ չի բացում: Յեթե յես ասեմ, վոր մի ժամանակ ինձ կանչում եյին Խիտչենս, իսկ հետո Ստոկ, իսկ հետո Լավուա, իսկ հետո նորից Խիտչենս, ապա դուք կթեր-

թեք իմ կենսագրության մի քանի եջերը: Բավական ե ձեզ իմանալ, վոր յես հատկապես ձեզ եյի փնտրում:

Անձանոթը կռացավ ե յերկար զննում եր Շտարկենի մութ կերպարանքը, վոր կարծես թաղված եր թիկնաթուփում:

— Ուրեմն սա՞ յե հենց Խավարի իշխանը: Ահա թե վորպիսին ե նա, հռչակավոր Խավարի իշխանը, վորին յես նվիրեցի իմ ձախ ձեռքը, — նա գրպանից հանեց ձեռքը ե ափով զարկեց սեղանին: Գորշ մահուկը խլացրեց պրոտեզի թեթե ձայնը:—

«Հազար իննհարյուր տասնհինգ թվին ձեր հրանետար ե հեղձուցիչ գազերն այնպիսի խուճապ գցեցին մեզ վրա, վոր մարդիկ վախից խելագարվում եյին: Դուք չողովեցիք ձեր անակնկալ հնարավորություններից ե միջոց տվիք մեր գլուխներին սառչելու վախից: Յես յերբեք չեմ զբաղվել ուղղակի ռազմական արհեստով: Այն որվանից, յերբ յես ձանաչեցի ձեր հրանետար, իմ մեջ հաստատվեց պատերազմի վոգին: Կատաղությունը պահպանում եր ինձ, վորպես խցանե գոտին խեղդվողին: Յես խեղդվում եյի դժվարությունների մեջ, բայց ե այնպես իմ առաջին դյուտերը հաջողություն ունեցան — ծիծաղելի յե ասել, յես թաղում եյի գետնի մեջ նավթի բիզոնները ե կրակում եյի ջրի բիզոններով, վորոնք գազով եյին լցված: Այդ ժամանակվանից յես աշխատում եյի, ինչպես հիվանդությամբ բռնված: Յես չեմ խոսի այն մասին, ինչ վոր դուք հրաշալիորեն գիտեք: Խիտչենսի հրանետերը ե զազանետերը քիչ դառն ըոպեններ չեն պատճառել ձեզ: Յերբ յես աշխատանքի սկզբում սովորում եյի ռազմաճակատի փորձի հիման վրա, ինձ հյուրասիրեցին ձեր հրանետից համեմատաբար սիրալիր կերպով — յես զրկվեցի մի ձեռքից: Այն ժամանակ յես ինձ խոսք տվի իմանալ անունն այն մարդու, վորին յես պարտական եմ նրանով, վոր վարակվեցի պատերազմի տենդով, ամբողջ տարիներ ինձ կրծող խելագար տենդով: Սկզբում յես իմացա, վոր ձեզ կոչում են Խավարի իշխան, օա-

կայն դա բանաստեղծական բնորոշում եր, վոչ ավելի: Այնուհետև յես իմացա, վոր ձեզ կոչում են Ոտտո Փոն: Շտարկե, և յես ասացի ինձ. յես կվնտրեմ այդ մարդուն վոչ նրա համար, վորպեսզի վիրավորեմ նրան, վոչ նրա համար, վորպեսզի սպանեմ նրան, այլ նրա համար, վորպեսզի ասեմ նրան, վոր նա հերոս ե»:

Շտարկեն լուռ եր:

— Յես կորցրի սիրուհուս, պատերազմը դարձավ իմ սիրուհին, յես— սպորտսմենս զրկվեցի բոլոր խաղերից, առանց ձեռքի չկա սպորտսմեն, պատերազմը դարձավ իմ սպորտը: Յես— փիլիսոփայության գոլտորս, այժմ յերբ մեռել ե փիլիսոփայությունը, հըրձվում եմ պատերազմի փիլիսոփայությամբ: Մեր ժամանակը— անընդհատ ռազմական ընդհարումների ժամանակ ե: Յես կասեմ ձեզ, վոր տասը տարի, վորոնք անցան Փրանսիայում յեղած պատերազմից հետո, յես սակավ եյի կովից դուրս դալիս, իսկ յեթե դուրս եյի դալիս, հապա դնում եյի լաբորատորիան, վորպեսզի այնտեղից կրկին վերադառնամ կով: Վո՞րտեղ եմ յես պատերազմել: Վերցրեք վերջին տարիների պատերազմները և դուք կտեսնեք, վոր դրանք այնքան ել քիչ չեն: Բայց այդ բոլոր պատերազմները— ամառային գիշերվա յերազներ են հանդես այն նոր պատերազմի, վորն ընդգրկելու յե աշխարհը: Բոլոր յերկրներում նոր պատերազմի համար աճել ե թնդանութային միսը: Կապիտալիստները և գիտնականները պատերազմ կզնան, վո՞մանք—վախենալով պրոլետարիատի մահացու աճից, մյուսները— զանազան խառն գղացումներից դըրված: Դեմոկրատիայի պրոֆիտութենական չինովնիկները կրթագմացնեն պրոպագանդայի սոուսը: Պատերազմը կըլուծի բոլոր ճգնաժամերը, կսպանի գործադրկությունը, պատերազմը կսպանի յերկաթ և պողպատ, պրդինձ և քարածուխ, նավթ և բորակածին, թուղթ և կաշի, պահածոներ և յուղ, կենդանիներ և մարդիկ, վորոնք պատրաստ են ամեն բանի:

Շտարկեն լուռ եր:

— Մենք բաց կթողնենք ծուխ, բազմազույն ծուխը Փանտաստիկ շորերով կպարուրի յերկիրը: Յեմ այդ ծխի մեջ տեղի կունենան ամենամեծազույն ընդհարումները, քաջարիների արյունը նորից կվերահենդանացնի համաշխարհային կյանքի վոսկե յերակները և չտեսնված բարգավաճում կբերի հաղթողներին, բաց կթողնվեն գազեր, վորոնք ամբողջ բանական կվերածեն քրքջացող հրեշների, նրանք կքրքջան ժամերով, և վոչ մի արվեստ աշխարհում չի տա դրանից ավելի վողբերդական ու կատարյալ տեսարան: Մենք բաց կըթողնենք մեքենաներ, վորոնք կանցնեն ամեն մի արդելը, ամֆիբիա մեքենաներ, վորոնք կթռչեն ամպերի տակ, կսուզվեն ծովի հատակը, դուրս կգան ամիը և կզրոհեն դեպի քաղաքները: Առանց առաջնորդների մեքենաներ, վորոնք ղեկավարվելու յեն հեռավորության վրա: Սակայն, պատերազմելով, մենք չպետք ե մոռանանք, վոր այսօրվա թշնամին— վաղվա զնորդն ե, մենք այդ չպետք ե մոռանանք:

«Մեր թունավոր գազերը ներս կթափանցեն ամեն մի գեմակի միջով, վոչ մի հանգչելու չենթարկվող ֆոսֆորային ումբերը վառեն միսը մինչ վոսկորները, մենք կհեղեղենք, յեթե հարկավոր լինի, այրվող ֆոսֆորով քաղաքներն ու ճանապարհները, կթունավորենք ջրմուղներն ու ջրհորները, զնդացիրային կրակը կտեղա յերկնքի տակ, վոր կխավարի հազարավոր սավառակներից, վորոնք պաշտպանվելու յեն հեռահար հրետանիով»:

Շտարկեն լուռ եր:

— Յեթե դուք իմանայիք, թե աշխարհում վորքան մարդիկ ծարավի յեն նոր համաշխարհային պատերազմի: Տիրող դասակարգերի ավելացող եներգիան յելք ե փնտրում, վատնիչ եներգիան յերիտասարդության, վորը չգիտե ինչ ե պատերազմը, վորը լեցուն ե մոտիկ անցյալից վերցրած գրքային հիշողություններով և պատմվածքներով: Նույնիսկ կանայք յերազում են պա-

տերազմի մասին— կանայք սիրում են արյունը, և մարտական սպայի արյունոտ սրտամուկությունները չարունակ հուզելու յեն նրանց սիրտը: Բայց յես պետք է իզուր նստեյի մուկ խրամատում՝ սպասելով սնայակերի պատահական գնդակին կամ նախաջրհեղյան ալկանի կտորին, յեթե չլինեյին ռազմական միտքը շարժող մարդիկ: Յես յեղա պրոֆեսոր Ֆարերի մոտ, վորպեսզի շնորհակալություն հայտնեմ այն դյուտի համար, վոր շուտ է տվել մարդկության պատմությունը, սակայն նա ինձ չհասկացավ կամ չուզեց հասկանալ: Դուք հին գինվոր եք, հասարակ և պինդ ռազմիկ, իմ ուսուցիչը հրանետային գործում, և յես ուրախ եմ, վոր տեսնում եմ ձեզ, այնքան դժմարությամբ փնտրածին:

Շտարկեն լուռ եր:

— Ո՞ւր հետ ենք պատերազմելու, կհարցնեք դուք: Վո՞րտեղ է այն գինազաշտը, վորն արժանի յե այդպիսի մեծ գործի: Յես կտեսմ ձեզ՝ ամբողջ աշխարհը, ուր վոր կա պրոլետարիատ: Վոչ այն, վորն աշխատում է մեզ համար, վոչ այն, վորն ուտելու յե մեր պրոպագանդի սոուսը, վոչ այն, վոր մենք գնում ենք, վոչ այն, վոր կվախենա և պետք է պատերազմական բեռներ բառնա, — այլ այն պրոլետարիատը, վոր ատելությամբ գինված է դեպի մեզ և սպասելիքով նայում է միայն մի կողմ, Խորհրդային Ռուսաստանի կողմը: Աշխարհը գիտեցել է պատերազմներ վիշապի հետ, կիսալուսնի հետ, կայսրության առյուծների և արծիվների հետ, այժմ նա կռվելու յե մուրճ ու մանգաղի հետ: Ամենուր, վորտեղ կհայտնվեն այդ նշանները, կռիվ կլինի. ամեն մի մարդ, վոր ձեռք կբարձրացնի նրանց համար, — մեր թշնամին է: Ահա թե ինչու մեր մեծ արշավանքը պետք է համախմբի ամբողջ աշխարհի ռազմիկներին: Բանից յերեաց, վոր մենք դեռ ջահել ենք, վոր ծովահենների արյունը, ինչպես ասում եր իմ ընկերը, դեռ չի ցամաքել մեր յերակներում, իսկ կայսրությունը սպիտակ ձեռնոցներով չեն կառուցում:

Ձեր յերկիրը հեղափոխության նախորդակին է, մենք կզանք ձեզ ողնության: Ձեզ հարկավոր է ասել մի բան, սիրելի սրբ Ոստո, — վոր մենք այլևս թշնամի չենք ձեզ հետ: Մենք արնակից բարեկամներ ենք՝ ծրնված այն ճակատամարտերում, վորոնք նորոգելու յեն քաղաքակրթությունը:

Շտարկեն լուռ եր:

— Յես ասացի ձեզ, թե ինչո՞ւ յեմ յեկել: Յես ամբողջ հոգով վողջունում եմ ձեզ: Աշխարհը կրկին կարիք է գզում հոգով և մարմնով ուժեղ ու ամուր մարդկանց: Յես, ինչպես ձեր Նոսկեն, պատրաստ եմ կրկնելու. «յես հպարտանում եմ, վոր ինձ անվանում են՝ արյունոտ շուն Նոսկե» — յես ուրախ կլինեյի լսել ձեզանից, վոր դուք կասեք. «յես հպարտանում եմ, վոր ինձ անվանում են Խավարի իշխան»:

Շտարկեն լուռ եր:

— Լոնդոնում մոտերս յես յեղա մի բանկետում, ուր մեծ գերմանացին, գեներալ Լեյտտով-Ֆորբեկը, արևելյան Աֆրիկայի պաշտպանը, և մեծ անգլիացին, գեներալ Սմուտսը, արևելյան Աֆրիկայի նվաճողը, մարդիկ տարիներ շարունակ մարտնչած իրար հետ, յեղբայրաբար սեղմում եյին ձեռքերը և դաշն կնքում: Այդ եմ ցանկանում յես նաև ձեզանից: Յես թույլտվություն եմ խնդրում սեղմելու ձեր փառապան՝ ձեռքը ամբողջ սրտով:

Հյուրը վեր կացավ և մոտեցավ Շտարկեյին: Շտարկեյի յերեսը արյունով եր լցված: Ճակատը հին բրոնզից ել ավելի մուգ եր: Սակայն նա մնում եր անշարժ իր կանգնած դադաղի նմանող թիկնաթուղում: Հյուրը կծեց բարակ շրթունքները և կուցավ նրա դեմքին հենց մոտիկ: Հետո նա աչքերը շրջեց Շտարկեյի ձեռքերին և կապվ նրանց իր աջ ձեռքով: Նա ցնցվեց և յետ քաշվեց թիկնաթուղից:

— Կաթված, — չծածկելով սարսափը ասաց նա: — Անեծք, ինչո՞ւ չնախադգուչացրին ինձ: Վո՞րպիսի դժբախտություն, սրբ: Այդ անկարելի յե, յես չեմ

համարում, հապա ինչ անել: Բայց դա կաթմած է անտարակույս, այո,— ասաց նա՝ նորից կուցավ դեպի Շտարկեն.— դուք ինձ լսո՞ւմ եյիք:

Շտարկեն դրական շարժեց գլուխը:

— Բայց այնուամենայնիվ դա կաթմած է:

Շտարկեն գլխով շարժում արեց: Անգլիացին հենվեց սեղանին, և պրոտեզը բարձրաձայն ու տհաճորեն ճրթճրթաց վողջ սենյակում:

5. Ի՞նչ ԵՆՔ ԱՐԵՆԱՆ ԵՆՔ ԱՅՍՈՐ

Պրոֆեսոր Փաբերը թեթև, ինչպես պատանի, անցավ սենյակով:

— Ի՞նչ ենք արել մենք այսօր, սիրելի Իրմա:

Իրման, թարմ և ուրախ, կանգնած էր նրա առջև, նա գիտեր, վոր նա հիանում է նրանով, վոր իր յուրաքանչյուր շարժումը նրան ուրախություն է պատճառում, վոր այլ կերպ լինել չի կարող:

— Այսօր մենք լսում եյինք ազնիվ, բարի Բեթհովենին,— ասաց նա,— ինձ ձանձրացրին ջաղերը: Վաղը կետտին գնում եմ Մերան, և յես պետք է նրան ուղեկցեմ: Ի՞նչ նորություններ քեզ մոտ, իմ սիրելի:

— Յես հանդիպեցի Բուրխարդտին: Յես վաղուց է չեյի տեսել նրան: Նա դարձյալ նույնն է: Նա գծվում է իր ֆաշիստական ջանքերի մեջ: Նրանք յեկող տարվա սկզբին տոնելու յեն գերմանական կայսրության վաթսուներեկը:

Իրման աղոթողի նման ծալեց ձեռքերը ճապոնական եկրանի առջև, կարծես ասեղնագործված «իրամարզին խնդրում եր թռչել:

— Գերմանական կայսրության... Մի՞թե այդպիսին գոյություն ունի:

Փաբերը ժպտաց և մեղմորեն շոյեց նրա այտը:

— Խոսիր նրա հետ: Նա գիտե միայն, վոր տոնելու յես առաջին Վերսալը. Վերսալը յոթանասուն մեկ թվականի, պետք է թնդանոթներ կրակեն և ճառեր արտասանեն, նա ջարդուբարդ է անելու Փրանսիան և Ռուսաստանը, քանի վոր տրագիկաները չեն մեռնում,

իսկ ոգում յերբորդ կայսրություն հոտ է գալիս, կսկըսեն կրիսոլիններ կրել...

— Այ անսպասելի բան,— բացականչեց Իրման հանելով անուշահոտ պապիրոսները, բայց արդյոք այդ խոսքերը վերաբերում եյին Փաբերի հաղորդումին թե ներս յեկող Փոգելին, վորը վողջումում էր դեռ չեմքից, անհայտ մնաց:

Փոգելը մոտենում էր փոքր ինչ պարային քայլով, և նրա՝ դիպլոմատի դեմքը փոփոխեց մի շարք արտահայտություններ, մինչև վոր նա հասավ ճապոնական եկրանին:

— Պրոֆեսոր Փոգել,— ասաց Փաբերը,— շատ ուրախ եմ ձեզ տեսնել: Նստեցեք: Դուք վո՞րտեղ եյիք կորել...

— Յես Մայնցում և Լեվերկուզենումն եյի, մտա Հերհաստ— ամեն ինչ կարգին է, միայն,— նա խորհրդավոր նայեց Իրմային,— զանազան լուրեր են պտըտվում Կուլբցի գործարանի մասին, անհրաժեշտ է այնտեղ վորոշ բաներ վերապլանավորել:

— Մեզ մոտ լուրերով են սալարկում փողոցը,— ասաց Փաբերը: Կատակել ամբողջ կյանքում նա չեր մոռանում: Փոգելը նայում էր նրան նվիրված և խոր աչքերով: Գամփուր մոտեցավ և իր սրածայր դունչը դրեց նրա ծնկներին: Գամփուր սիրում էր դիպլոմատներին, նրանք առանձին հոտ ունեյին, նրանք բուրում եյին վոչ այնպես, ինչպես բոլոր մարդիկ:

— Յես մտա մի գործով, պրոֆեսոր,— ասաց Փոգելը,— դարձյալ այդ բայլչեիկները...

— Փոգել, այնքան եք ֆաշիստ դարձել, վոր կյանքի բոլոր դեպքերում կրկնում եք «բայլչեիկներ» խոսքը: Բայլչեիկ— վոչ ավելի քան յակորինություն է՝ բազմապատկած շարտիզմով և ջրախառնած գերմանահրեական փիլիսոփայությունը: Բարբարոս ազգերի համար— դա բանալի յե դեպի կուլտուրան, մեզ համար դա, հավանորեն, հրե խոսքեր են պատի վրա և

մշտական կերակուր լրագրների համար: Սակայն նրանց գիտնականները— միանգամայն տեղյակ մարդիկ են: Յես հանդիպել եմ մի քանիսին: Նրանք գերազանց գիտնականներ են: Դուք ի՞նչ եք ուզում ասել, Ֆոգել:

— Ահա հենց դրա համար ել յեկել եմ ձեզ մոտ, պարոն չլոֆեսոր: Վոչ հեռու, քան յերեք ու առաջ լրագրներում գետեղված եր մի հաղորդում Մոսկվայից, վոր այնտեղ մահապատժի յեն յենթարկել մի քանի տասնյակ ախպես կոչված վնասարարներ և նրանց շարքում կան գիտնականներ:

— Սիրելի Ֆոգել, չի կարելի գնդակահարել գիտությունը, վորջ յեվրոպական կուլտուրան պահվում է գիտնականների շնորհիվ: Նրանց գնդակահարել կարող են միմիայն վայրենիներ:

— Ավա՛ղ, այդ աղպես ե: Նրանք գնդակահարում են իրենց գիտնականներին, վորպես հասարակ կոչկակարների:

— Սիրելի Իրմա, դու պատկերացնում ես՝ յերբ մեզանում Չեկան հաղթանակի և դա սպանելու ինձ ու Ֆոգելին, դու ի՞նչ ես անելու: Նրանք քեզ կխնայեն, դու գեղեցիկ ես, դու կոմիսար կլինես...

— Կա՛րլ, — բացականչեց Իրման, — յես չեմ ուրում քո կատակները, դու այդ գիտես, և հետո յես չեմ հավատում, թե մեզ պետք է սպանեն, դու մի վորեւեւ բան կմտածես— և ամեն ինչ կփոխվի, ինչպես այն պատերազմում:

Փաբերն ուղղեց ակնոցները: Ակնոցներով նա նման եր չինացու:

— Մենք Ֆոգելի հետ կթռչենք լուսնի վրա... Ուրեմն ինչո՞ւմն է բանը, Ֆոգել:

Ֆոգելը գնաց գեպի դուռը և վերցրեց մտներու ժամանակ աթոռի վրա դրված կարմիր պորտֆելը: Նա զգուշաբար հանեց հաստ թղթի մի մեծ թերթ՝ չորս տակ ծալված՝ և բացեց Փաբերի առջև:

— Սա բողոք է գնդակահարման դեմ, — ասաց նա,

— հանուն մարդասիրության մենք պետք է բողոքենք: Յես հավաքում եմ գերմանական գիտնականների ստորագրությունները, և վորոչ մարդիկ արդեն կան:

Փաբերն ստորագրություններն եր կարդում: Նա կնճռոտվեց՝ կարդալով տեքստը:

— Մի քանի տասնյակ մարդիկ, — դու մտածիր, իմ մանկիկ Իրմա, մտածիր, — սպանել մի քանի տասնյակ մարդկանց— դրա համար պետք է սատանայի հողի ունենալ: Նրանք իսկապես վոր համառ են, ինչպես կայծքար: Դրանք միակողմանի մտքերի մարդիկ են: Պատմությունը գիտե վայրենի համառության որինակներ: Հիշենք թեկուզ Գամբետտային: Պատանի հասակում նրան հայրն ուղարկել եր հորաքրոջ մոտ, մի խուլ ընկած տեղ: Նա գրում է հորը. «Տար ինձ ախտեղից, յես չեմ ուզում ախտեղ ապրել»: Հայրը գրում է նրան, վորպեսզի նա լուի և մնա: Նա պատասխանում է. «Տար ինձ—կամ թե չե՛ յես կհանեմ աչքս»: Հայրը գրում է. մի՛ հիմարանա և մնա: Նա պատասխանում է. «Յես հանել եմ իմ մեկ աչքը և կհանեմ յերկրորդը, յեթե դու չտանես ինձ ախտեղից»: Նրան տարան չտալով: Ռուսաստանը — դա անվերջ Գամբետտաներ են, և նրանց մեկ աչքն արդեն հավանաբար չկա: Տվեք ինձ, Ֆոգել, ստորագրեմ: Ինձ նույնիսկ դուր ե գալիս պրիմիտիվ խելքի համառությունը: Սակայն Յեվրոպան պետք է ունենա իր ազդեցություն մասը, այլապես այդ հորդան կհարձակվի մեզ վրա, իսկ յես, ճշմարիտն ասած, ամիսոսում եմ իմ լաբարատորիաները: Յես նրանց մեջ եմ անցրել իմ վորջ կյանքը: Դուք զրչածայր ունե՞ք: Այդպես: Շնորհակալություն, Ֆոգել: Սա կըջամաքի իսկույն:




Թարգմ.՝ Ա. Դուրբանյան
Սրբադրիչ՝ Ս. Շահբազյան

Գլավլիտի լիազոր՝ Խ—9319. Հրատ. 4145.
Պատվեր 907. Տիրաժ 3000.
Թուղթ 62×94. Տպագրական 12 մամուլ.
Մեկ մամուլում 38.400 նիշ. Հեղինակային 11,5 մամ.
Հանձնված է արագըրության 26 հունիսի 1937 թ.
Ստորագրված է տպագրության 2 դեկտեմբերի 1937 թ. .
ԳԻՆԸ 2—90

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ. ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65





ԳԻՆԸ 2 ՌՈՒՔ. 90 ՎՈՂ.

НИК.ТИХОНОВ

ВОИНА

Армен. ГИЗ

ՀՀ Ազգային գրադարան



NL0327007

